ԷՆԱԹՈՒԼԱՀ ՌԷՋԱ

ԱՋԱՐԲԱՅՋԱՆ ԵՒ ԱՌԱՆ

(ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱԼԲԱՆԻԱ)

902.7
Ռ-28
հ

ԷՆԱԵԹՈԼԼԱՀ ՌԷՋԱ

ԱՋԱՐԲԱՅՋԱՆ ԵՒ ԱՌԱՆ (ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱԼԲԱՆԻԱ)

5606

ԵՐԵՒԱՆ, «ՓԻՆԻԿ», 1994

Պարսկերէն բնագրից թարգմանութիւնը՝ իրավագիտութեան դոկտոր
Երուանդ Փափազեան

Մասնագիտական խմբագրութիւնը՝ արեւելագիտութեան դոկտոր
Գէւորգ Նալբանդեան

Ձեւաւորումը՝ Խորէն Յակոբեան
Հրատարակչութեան խմբագիր՝ Ռուբէն Ղազարեան
Հրատարակչութեան խորհրդական՝ Անդրանիկ Չալգուշեան
Սրբագրութիւնը՝ Էվելինա Սեդրակեան

© Էնաեթոլլահ Ռէզա, Իրան, 1982թ.
© Երուանդ Փափազեան, թարգմանութիւնը, Փարիզ, 1994թ.
© «Փիւնիկ» հրատարակչատուն,
հայերէն առաջին հրատարակութիւնը, Երեւան, 1994թ.

ISBN 5-8079-0925-9

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ 4
ԳԻՐՔՍ ԳՐԵԼՈՒ ՇԱՐԺԱՌԻԹԸ 5
ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԹԱՐԳՄԱՆՉԻ ՄԱՍԻՆ 6
ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿՈՂՄԻՑ 7
ՆԱԽԱԲԱՆ 8

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ 12
Ազարբայջան եւ Կովկասեան Ալբանիա անունները հին դարերում.

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ 19
Կովկասեան Ալբանիա անուան մէջ առաջացած փոփոխութիւնները.

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ 26
Կովկասեան Ալբանիոյ եւ Ազարբայջանի աշխարհագրական սահմանները

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ 46
Պանթիւրքիստների կարծիքը թիւրքերի մասին

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ 83
Կովկասեան Ալբանիոյ ժողովրդի ցեղն ու լեզուն.

ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ 98
Ազարբայջանի ժողովրդի ցեղն ու լեզուն

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՄԱՍ 127
Թիւրքերի գաղթը եւ թիւրքերէն լեզուի Ազարբայջան թափանցումը.

ՈՒԹԵՐՈՐԴ ՄԱՍ 149
Ինչպէս Ազարբայջան անունը դրուեց Առանի վրայ.

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Էնաեթոլլահ Ռէզան ծնուել է 1920 թուին, Ռէշտ քաղաքում, ուր եւ սկսել է իր ուսումնառութիւնը. յետոյ, շարունակելով Թեհրանում, 1943 թուին աւարտել է համալսարանական կուրսը: Քաղաքական գործունէութեան պատճառով, նա մի շրջան անց է կացրել բանտում եւ աքսորավայրում եւ, ի վերջոյ, 1946 թուին հարկադրաբար թողել է հայրենիքն ու փոխադրուել Խորհրդային Միութիւն:

Խորհրդային երկրում նախ ուսանել է կոմունիստական կուսակցութեան բարձրագոյն դպրոցի հասարակական գիտութիւնների բաժնում ու յետոյ շարունակել է իր ուսումը փիլիսոփայութեան գծով, որի դասընթացը վերջացրել է 1956 թուին: Մի շրջան Բագուում եւ Մոսկուայում թարգմանութեամբ զբաղուելուց յետոյ, 1957 թուի Օգոստոսից անցել է Չինաստանի ժողովրդական Հանրապետութիւն, ուր մնացել է մինչեւ 1959 Հոկտեմբեր ամիսը եւ զբաղուել գիտական հետազօտութեամբ ու թարգմանչական աշխատանքով: 1959 թ. վերադարձել է Մոսկուա եւ մինչեւ 1967 թ. զբաղուել է նոյն գործով: Իսկ 1967ից մինչեւ 1968ի Մարտ ամիսը ապրել է Փարիզում, ուր նոյնպէս կատարել է գիտահետազօտական աշխատանքներ, որից յետոյ վերադարձել է հայրենիք:

Էնաեթոլլահ Ռէզան Իրանագիտութեան եւ հասարակական գիտելիքների ասպարէզում ունի մի շարք աշխատութիւններ, որոնց շարքին են. «Մովսէս Խորենացին, Սասանեան դարաշրջանի պատմագիր», «Ադարբայգանի մասին», «Ազարբայջան եւ Առան», «Իրանը եւ թուրքերը Սասանեան ժամանակաշրջանում», «Կոմունիզմը եւ դեմոկրատիան», «Մարքսիզմը եւ մարդու օտարումը»:

Նա միաժամանակ կատարել է Իրանագիտութեան եւ հասարակական գիտելիքների շուրջ գրուած գործերի բազմաթիւ թարգմանութիւններ, որոնց շարքին են. «Ուրարտու», «Սասանեան Իրանի քաղաքակրթութիւնը», «Իրանական անունների ստուգաբանութիւն», «Նոր դասակարգ», «Խորհրդային ղեկավարներին», «Ստալինի մահուան գաղտնիքները»: Գիտահետազօտական աշխատանքներին զուգահեռ Է. Ռէզան զբաղուել է նաեւ դասախօսական աշխատանքներով, իր երկրի համալսարաններում հանդէս գալով փիլիսոփայութեան, հասարակական գիտութիւնների եւ Իրանեան քաղաքակրթութեան ու մշակոյթի պատմութեան վերաբերեալ դասախօսութիւններով:

ԳԻՐՔՍ ԳՐԵԼՈՒ ՇԱՐԺԱՌԻԹԸ

Տարիների բացակայութիւնից յետոյ, երբ 1969 թուին հայրենիք վերադարձայ, մի յօդուած գրեցի՝ «Մի քանի խօսք Ադարբայգանի մասին» վերտառութեամբ, որը նախ հրատարակուեց «Բարրասիհայէ թարիխի» հանդէսում, իսկ քիչ յետոյ նոյն յօդուածը, թեթեւ փոփոխութիւններով, լոյս տեսաւ որպէս առանձին գործ եւ ապա տպագրուեց «Թամաշա» ամսագրի մէջ:

1980 թուականին, գիտնական բարեկամս, Դր. Հիւսէյն Հադիդին, յօդուածս կարդալուց յետոյ ինձ խրախուսեց, որ այս նիւթի շուրջ մի գիրք գրեմ: Ինքս էլ, երկար տարիներ ի վեր, ցանկութիւն ունէի նոյն հարցի վերաբերեալ մի աշխատութիւն պատրաստել, ուստի ժամանակիս մի զգալի մասը յատկացրեցի թուրքերի պատմութեան եւ այդ ցեղի Իրանի հետ ունեցած առնչութիւնների ուսումնասիրութեան, եւ աշխատանքիս արդիւնքը եղաւ մի գիրք՝ «Իրանը եւ թուրքերը Սասանեան ժամանակաշրջանում» վերնագրով, որը դեռեւս տպագրութեան եւ հրատարակութեան չի յանձնուել: Դասախօսական աշխատանքից ազատուելուց յետոյ, երբ ժամանակ ընձեռուեց, հնարաւոր դարձաւ ներկայ աշխատութիւնը եւս գրել եւ աւարտել: Հակառակ հեղինակի սահմանափակ կարողութեան, յոյս ունեմ, որ գիրքս յարգելի ընթերցողի կողմից բարի ընդունելութեան կարժանանայ:

Եւ վերջապէս, շնորհակալութիւն յայտնելով սիրելի բարեկամիս, Դր. Հիւսէյն Հադիդիին, նրան եմ ձօնում այս համեստ աշխատութիւնը:

Էնաեթոլլահ Ռէզա

Իրավաբանութեան դոկտոր Երուանդ Փափազեանը իրանահայ ճանաչուած մտաւորականներից է: Իր մասնագիտական արդիւնաւէտ աշխատանքին զուգահեռ 1960-ական թուականներից նա զգալի դեր է ունեցել տեղի հայ ազգային-հասարակական կեանքում, միաժամանակ հանդէս գալով նաեւ գրական, յատկապէս թարգմանչական գործունէութեամբ: Նրա թարգմանութեամբ հայ ընթերցողին է տրամադրուել արաբ անուանի բանաստեղծ Խալիլ Ջիբրանի «Մարգարէն» մեծարժէք խոհա-փիլիսոփայական գեղարուեստական ստեղծագործութիւնը, հնդիկ աշխարհահռչակ բանաստեղծ փիլիսոփա, Ռաբինդրանաթ Թագորի «Գիթանջալի» պոեմը եւ այլ գործեր: Պարսիկ ընթերցողի համար հետաքրքիր անակնկալ էր հայ գրականութեան գոհարներից մէկի՝ Մկրտիչ Արմէնի «Հեղնար աղբիւրի» պարսկերէն թարգմանութիւնը, որը բարձր գնահատուեց իրանական գրական շրջանակներում, հիմք հանդիսանալով կինոսցենարի: Երուանդ Փափազեանը մերթ ընդ մերթ ընթացիկ մամուլում հանդէս է գալիս նաեւ այլ թարգմանութիւններով եւ ուշագրաւ գրախօսական յօդուածներով: Ծանօթ լինելով հարազատ ժողովրդի ընթերցող զանգուածների հետաքրքրութեանը մեր պատմութեան առանձին շրջանների եւ յատկապէս արցախեան հարցի մասին այլազգի պատմաբանների տեսակէտների նկատմամբ, նա սիրով ձեռնամուխ եղաւ նաեւ պարսիկ ճանաչուած պատմաբան Էնաեթոլլահ Ռէզայի վերջերս լոյս տեսած սոյն արժէքաւոր թարգմանութեանը, որ կատարուած է մեծ հմտութեամբ եւ գիտական բարձր մակարդակով:

Պրոֆեսոր Գ.Մ. Նալբանդեան

Այս թարգմանութիւնը պարունակում է պարսկերէն հրատարակութեան լրիւ բովանդակութիւնը: Բացարձակապէս ոչ մի յապաւում եւ ոչ մի յաւելում:

Պարսկերէն բնագիրը ունի շատ պարզ ու անպաճոյճ լեզու, ուստի հայերէն թարգմանութիւնը եւս այդպէս է ստացուել: Լեզուական գեղեցկութեան համար որեւէ ճիգ չի կատարուել:

Այս աշխատանքով նպատակ ունենք ոչ միայն հայ ընթերցողին ծանօթացնել Աղուանքի մասին պարսիկ գիտնականի ունեցած տեսակէտների հետ, այլ նաեւ նիւթը պատրաստել յաջորդիւ ֆրանսերէնի եւ անգլերէնի թարգմանելու համար: Ուստի, մեր թարգմանութեան մէջ, միշտ ջանք ենք արել իւրաքանչիւր նախադասութիւնը շարադրել այնպէս, որ միւս թարգմանիչների աշխատանքը չդժուարանայ եւ, միաժամանակ, յաջորդ թարգմանութիւններն էլ պարսկերէն բնագրից չհեռանան:

Նոյն նկատառումով, ճիգ չենք խնայել գտնելու անձնաւորութիւնների, ցեղերի ու վայրերի ճշգրիտ հայերէն անունները, կամ դրանց լատինական անուանումները: Անունների տառադարձութիւնը կատարել ենք ըստ արեւելահայ արտասանութեան:

Անունների ուղղագրութիւնը ստուգել ենք, միշտ դիմելով մէկ կամ մի քանի վստահելի հրատարակութիւնների, ինչպէս՝ ՀՍ Հանրագիտարանին, Հայ ժողովրդի Պատմութիւն բազմահատոր աշխատութեան, Լեզուաբանական բառարանին, Ս. Տ. Երեմեանի Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»ի, Երեւան 1963, Հ. Առաքելեանի Հանրագիտական բառարանին, Թիֆլիս, 1915, եւ այլն:

Եր. Փափազեան

Փարիզ 1991

ՆԱԽԱԲԱՆ

1918 թուականի Յունիս ամսին, Մուսաւաթ կուսակցութեան պարագլուխները Կովկասում մի պետութիւն ստեղծեցին եւ իրենց իշխանութեան երքոյ գտնուող երկրի մի մասը անուանեցին «Ազերբայջանի Հանրապետութիւն»*:

Մուսաւաթ կուսակցութիւնը, որի իսկական անունը «Իսլամական Դեմոկրատական Մուսաւաթ Կուսակցութիւն» էր, 1911 թուին կազմուեց Բագու քաղաքի մէջ: Այս Կուսակցութեան նպատակն էր հաստատել մէկ մեծ եւ հացեալ իսլամական երկիր՝ Փոքր Ասիոյ թուրքերի առաջնորդութեան երքոյ: Յիշեալ կուսակցութիւնը, որ առաջնորդւում էր «պանթիւրքիստ»ների քաղաքականութեամբ եւ հետեւում էր աշխարհի բոլոր թրքախօսներից «մէկ ազգի» մէջ «միութիւն» ստեղծելու գաղափարին, 1917 թուականի Յունիս ամսին միացաւ «Ֆեդերալիստների Թիւրքական Կուսակցութեան» եւ յիշեալ կուսակցութեան հետ միացեալ համաժողով կազմակերպեց: 1917 թուի Նոյեմբերին Կովկասի Մուսաւաթական կուսակցականների առաջին համաժողովը տեղի ունեցաւ, եւ այնուհետեւ կուսակցութիւնը կոչուեց «Ֆեդերալիստ-Մուսաւաթականների Թիւրքական Դեմոկրատական Կուսակցութիւն»:

Յիշեալ կուսակցութիւնը, 1918 թուի Յունիս ամսին, Կովկասի մի մասի անկախութիւնը յայտարարեց «Ազերբայջանի անկախ Հանրապետութիւն» անուան տակ, մինչդեռ այդ երկրամասի անունը երբէք Ազերբայջան չէր կոչուել:

Շուրջ երկու տարի յետոյ, երբ 1920 թուականի Ապրիլ 28 ին, Մուսաւաթական կառավարութիւնը տապալուեց եւ վերջ գտաւ, բոլշեւիկները գրաւեցին Կովկասը եւ այդ տարածքը վերստին կցեցին Ռուսական հողին: Այդ համանակներում Խորհրդային Ռուսաստանի կառավարութիւնը սկսեց իշխել

---

* Թէև պարսկերէնի մէջ Ազարբայջան անունը հաւասարապէս գործածւում է թէ Իրանի հիւսիսարևմտեան նահանգի (իմա պատմական Ատրպատականի) և թէ Սովետական Ադրբեջանի համար, սակայն պատկանեալ շրջանը զատորոշելու նպատակով, Սովետական Ադրբեջանն անկարկելիս շրջանը անուանել ենք Ազէրբայջան և բնակիչներին էլ Ազէրբայջանցի, իսկ Արաքսի հարաւում գտնուող տարածքն անկարկելիս շրջանը կոչել ենք իր իսկական անունով, իմա Ազարբայջան, և բնակիչներին էլ Ազարբայջանցի: Բոլոր այլ ձևի անուանումները, ինչպէս՝ Ադարբայգան, Ատուրպատիկան, Ատրպատական և այլն, համապատասխանում են Իրանեան տարածքին, իմա Ազարբայջանին: Ծ. Թ.

Կովկասի հողային տարածքների վրայ, ու թէեւ Խորհրդային Ռուսաստանի նոր կառավարութիւնը դեռեւս այդ օրերին «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւն» անուանումը իր երկրի վրայ չէր դրել, Ազէրբայջան անունը շարունակեց պահել Կովկասի մի մասի վրայ: Որոշ ժամանակից յետոյ «Ազէրբայջանի Հանրապետութիւն»ը կոչուեց «Ազէրբայջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն»:

Այն օրերին, Կովկասի մի մասի վրայ «Ազէրբայջան» անուն դնելը շատ խօսակցութիւնների առիթ տուեց, եւ Իրանում, մասնաւորաբար Ազարբայջանում, մեծ թուով հայրենասէրների, ի շարս դրանց, Ազարբայջանի Դեմոկրատների Խմբակցութեան, ինչպէս՝ երջանկայիշատակներ Շէյխ Մուհամմադ Խիաբանիին, Իսմայիլ Ամիրխիզիին, Ահմադ Քասրաւի Թաբրիզիին եւ շատ ուրիշների բողոքի առիթ տուեց: Այս առարկութիւնը հասաւ մինչեւ այն աստիճան, որ մի խումբ մարդիկ, հետեւելով հանգուցեալ Իսմայիլ Ամիրխիզիին եւ Շէյխ Մուհամմադ Խիաբանիին, որոշեցին փոխել Ազարբայջանի անունը: Այս մասին ակնարկութիւն կլինի իր տեղում:

Այսօր, աւելի քան վաթսուն տարիներ են անցել այն օրերից: Այն ժամանակուայ լաւատեղեակ քաղաքական դէմքերից գուցէ ողջ մնացած մէկը չլինի: Տարիները անցան, եւ այս պատահարը մոռացութեան յանձնուեց: Ներկայումս գուցէ շատ քչերը գիտեն, որ Կովկասի թրքախօսների երկիրը անցեալում մի այլ անուն ունէր, եւ ոչ Ազէրբայջան, եւ որ նա երբէք Ազէրբայջան չէր կոչւում:

Կովկասի մի բաժնի վրայ «Ազէրբայջան» անունը դնելով, մի նոր գաղափար եւս առաջ քաշուեց, ըստ որի, իբր թէ «Ազէրբայջանը երկու մասի բաժանուած մի երկիր է, որի մի մասը Արաքսի հիւսիսում, իսկ միւս մասը նրա հարաւում է գտնւում»: Նախ Կովկասում ու յետոյ Իրանում մի քանի բանաստեղծներ եւ գրողներ սկսեցին այս «անջատում»ի համար ողբալ եւ իրենց բախտից ու ճակատագրից գանգատուել: Շատ ժամանակ չանցած, նոր բառեր երեւան եկան, ինչպէս՝ «Հիւսիսային Ազէրբայջան» — (իմա Կովկասի թրքախօսների երկիրը) — եւ «Հարաւային Ազարբայջան» — (պատմական եւ իրական Ազարբայջանը): Խորհրդային մի շարք պատմաբաններ եւ հեղինակներ իրենց գրքերում եւ այլ գրուածքներում այս կեղծուած ու անճիշտ անունների գործածութիւնը այն աստիճանի հասցրին, որ մեր նոր սերունդն էլ ճիշտ ճանապարհից շեղուեց եւ իրադարձութեան ճշմարտութիւնից հեռու եւ անտեղեակ մնաց:

Ուստի, ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում յիշեալ անուանումներից եւ արտայայտութիւններից մի քանի օրինակներ, որոնք տպագրուել են խորհրդային հեղինակների գործերում եւ իրանցի թարգմանիչների կողմից թարգմանուել են պարսկերէնի.

«Արշակունեաց տոհմի ճիւղերից հաստատուած էին նաեւ Իբերիայում — (Արեւելեան Վրաստան) — եւ Ալբանիայում[1] — (Հիւսիսային Ազէրբայջան, որի ներկայիս իրաւակարգը Խորհրդային է)[2]:

«Երկու պետութիւնների միջեւ եղած վէճը վերաբերում էր Հայաստանին, Իբերիային — (Վրաստան) — եւ Ալբանիային — (Ազէրբայջանի մի մասը)»[3]:

«Բահրամը, արեւելեան շրջանում իր գրաւած տիրութիւններից վերադառնալիս, անցաւ Ալբանիայից — (Հիւսիսային Ազէրբայջան)»[4]:

«.... Ալբանիայում — (Հիւսիսային Ազէրբայջան) — իրապէս մազքութներ.... գոյութիւն ունէին...»[5]:

«Արեւելեան Հայաստանի եւ Հիւսիսային Ազէրբայջանի կցումը Ռուսաստանին յառաջադիմական բնոյթ ունէր»[6]:

Ինչպես ընթերցողը անդրադարձաւ, նախ Կովկասի մի մասը «Ազէրբայջան» անունը ստացաւ, ու յետոյ «Հիւսիսային Ազէրբայջան» եւ «Հարաւային Ազէրբայջան» արտայայտութիւնները գոյութեան կոչուեցին:

Անշուշտ սրանով բանը չաւարտուեց. քիչ անց, խորհրդային հեղինակները յայտարարեցին, որ Ազէրբայջանը երբեւէ Իրանի մէկ նահանգը չի եղել, այլ «ժամանակաւորապէս եւ, որպէս հետեւանք իրանցիների աշխարհակալական ռազմավարութիւնների, նուաճուած է եղել նրանց կողմից»[7]: Մինչդեռ պատմութեան բովանդակ տարածքի մէկ ծայրից միւսը եւ հին ու նոր պատմագիրներից որեւէ մէկի աշխատութեան մէջ նման «աշխարհատիրական զօրաշարժերի» մասին յիշատակութիւն չի եղել:

Իրանցիները ներկայացուեցին որպէս «զաւթիչներ», որպէսզի այդ ձեւով ցարական Ռուսիոյ բանակը «օժանդակող» եւ «փրկարար» ներկայացուի[8], մինչ Լենինը քանիցս Ռուսական ցարիզմը անուանել է «այլ ազգերի նկատմամբ բռնակալ» եւ ցարական Ռուսաստանը «ժողովուրդների բանտ»[9]:

Տողերիս հեղինակը նպատակ չունի քաղաքական խնդիրների մէջ մուտք գործել, ուստի, հնարաւոր չափով, այս նիւթի վրայ աչք փակելով, իր խօսքը սահմանափակում է Ազարբայջանին եւ «Ազէրբայջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն» անունը կրող եւ Արաքս գետի հիւսիսում տարածուած երկրամասի աշխարհագրական եւ պատմական խնդիրներին վերաբերող հարցերով:

Յուսանք, որ այս համառօտ աշխատութիւնը կօժանդակի մի շարք անորոշութիւնների պարզաբանման գործին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] «Ալբանիա» կամ «Կովկասեան Ալբանիա» անունների շուրջ գալիք էջերի մէջ պիտի խօսենք:

[2] Ն. Վ. Պիգուլեւսկայա, Ա. Իւ. Եակոբովսկի, Ի. Պ. Պետրուշեւսկի, Լ. Վ. Ստրոյեւա, Ա. Մ. Բլենիցկի. «Իրանի պատմութիւնը հնագոյն ժամանակներից մինչեւ 18րդ դարի վերջը», թարգմանեց Քարիմ Քեշաւարզ, Թեհրան, Հասարակական ուսումնասիրութիւնների եւ հետազօտութիւնների Հաստատութեան հրատարակութիւններից, 1967, առաջին հատոր, էջ 59:

[3] Նոյն տեղում, էջ 77:

[4] Նոյն տեղում, էջ 101:

[5] Ի. Մ. Դիակոնով, Մարերի պատմութիւնը, թարգմանեց Քարիմ Քեշաւարզ, Թեհրան, Բոնգահէ Թարջոմէ վա Նաշրէ Քեթաբ, 1966, էջ 304:

[6] Աբդուլլաեօֆ, Ֆաթհուլլահ, Մի անկիւն Իրանի պատմութիւնից — մի անկիւն Ռուսաստանի եւ Իրանի յարաբերութիւններից եւ Անգլիոյ քաղաքականութիւնը 19րդ դարում. թարգմանեց Ղուլամհիւսէյն Մաթին, Թեհրան, էջ 192:

[7] Նոյն տեղում, էջ 120:

[8] Նոյն տեղում, էջ 191:

[9] Վ.Ի. Լենին, Ընտիր երկեր, 2 հատորով, հատոր առաջին, երկրորդ բաժին, Օտար լեզուներով հրատարակութիւնների Հաստատութիւն, պարսկերէն թարգմանութիւն, Մոսկուա, 1952, էջ 385, 389, 477, 478, 479:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԱԶԱՐԲԱՅՋԱՆ ԵՎ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱԼԲԱՆԻԱ ԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

Այն երկրամասը, որ աւելի քան վաթսուն տարի առաջ նախ կոչուեց «Ազէրբայջանի Հանրապետութիւն» ու յետոյ էլ «Ազէրբայջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն» անուանուեց, հին ժամանակներում «Ալբանիա» էր կոչւում: Հնադարեան պատմագիրներն ու աշխարհագրագէտները այս խնդրի շուրջ շատ նիւթեր են գրի առել եւ Ալբանիան զանազանել են Ազարբայջանից՝ «Ատուրպատեն»ից:

Խնդիրը պարզելու համար նախ տեսնենք, թէ Ազարբայջան անունը որտեղից է առաջացել:

Սկզբում ընթերցողին կներկայացնենք մեծահամբաւ գիտնական, հանգուցեալ Ահմադ Քասրաւի Թաբրիզիի գրուածքը Ազարբայջան անուան մասին:

Նա, Ազարբայջան անուան քննարկման ընթացքին, այսպէս է գրում.

«Այս անունը, դեռեւս երկու հազար տարի առաջ, Իրանի ամենայայտնի աշխարհագրական անուններից մէկն էր եւ, իւրաքանչիւր ժամանակաշրջանում, զուգորդւում էր մի շարք կարեւոր պատմական դէպքերի հետ...

«Ազարբայջան», «Ադարբայգան» եւ «Ադարբադգան», այս երեք տարբերակներով, ծանօթ են պարսկերէն գրքերի մէջ: Ֆիրդուսին իր բանաստեղծութեան մէջ «Ադարաբադգան» է գրել՝

«Մէկ ամբողջ ամիս Ադարաբադգանում,
Կանգ էին առել շահերն ու ազատականները»:

Արաբները «Ազարբէյջան» էին անուանում, իսկ հայկական գրքերի մէջ գրել են «Ադրբէջան» եւ «Ատրպատական» տարբերակներով: Հին պահլաւական գրքերի մէջ «Աթուրպատական» է....»

«Ադարբայգան» անունի ծագման մասին հռչակաւոր յոյն աշխարհագրագէտ Ստրաբոնի գրածը թէ՛ լաւագոյնն է եւ թէ՛ ամենաճշգրիտը: Ըստ նրա, երբ Աքեմենեան կայսրութեան ժամանակաշրջանը հասաւ իր վախճանին, եւ Ալեքսանդր Մակեդոնացին[1] տիրացաւ Իրանին, «Աթուրփաթ» կոչուող մի զօրապետ ըմբոստացաւ Ադարբայգանում եւ չթողեց որ այդ տարածքը, որ Մարաստան երկրի մի մասն էր եւ «Փոքր Մեդիա» էր կոչւում, ընկնի յոյների տիրապետութեան տակ ու, այնուհետեւ, այդ երկրամասը կոչուեց «Աթուրփաթգան»[2]:

Իբնի Ֆաղիը Ազարբայջան անունը համարում է Բիւրասպի որդի Ազարբադի անունից վերցուած[3]:

Հանգուցեալ Քասրաւին, «Աթուրփաթ» անունը ստուգաբանելով, «Աթուր» բառն էլ համարում է նոյն ինքը «Ազար», իմա՛ կրակ» բառը, իսկ «փաթ» բառն էլ, որ վերջում «փադ» կամ «բադ» ձեւով է երեւան եկել, գտնում է, որ ունի «պահապան» իմաստը[4]: Մինչեւ Սասանեանների դարաշրջանի վախճանը, այս անունը տարածուած է եղել Իրանում: Ինչպէս, օրինակ, մի հռչակաւոր մոգպետ կոչւում էր «Ազարբադ Մարասփանդան» կամ «Ազարբադ Միհրասփանդան»: Յիշեալ անձնաւորութիւնը Շապուհ II Սասանեան արքայի նախարարներից եւ Աւեստայի մեկնաբաններից էր: Այս բրմապետի անունը գրուած է նաեւ «Աթրբադ Մանսարսփանդան» ձեւով[5]: Մի ուրիշ իմաստասէր եւ գիտնական էլ «Ազարբադ Զարադաստան» էր կոչւում եւ ապրում էր Սասանեան արքայից արքայ Վահրամ V-ի — Բահրամ Գուր — օրօք[6]:

«Քան» բառը, որ յետագայում «գան» դարձաւ, եւ որը հայոց լեզուի մէջ «Ք»-ի եւ «Գ»-ի միջեւ է արտասանւում, մի վերջածանց է, որ շատ յաճախ է հանդիպում Իրանի գիւղերի եւ քաղաքների անունների վերջում: Օրինակ. Արդաքան, Հիրքան — (Գորգան) —, Բիլքան — (Բիլկան) —, Դիլմաքան — (Դիլմական) — Բազարգան, Արզանքան — (Արզանջան, Արսանջան) —, Զանգան — (Զանջան) — Շահգան — (Շահջան) —, Շադքան եւ այլն[7]:

Այսպիսով, այն երկիրը, որ «Աթուրփաթ» անուանումը ստացաւ, նախ «Աթուրփաթգան» եւ յետագայում «Ազարբադգան» եւ «Ազարբայգան» անունը ունեցաւ: Որովհետեւ արաբները անկարող էին «գ» տառը արտասանել, «գ»-ն փոխուեց «ջ» տառին, եւ յիշեալ երկիրը կոչուեց «Ազարբէյջան», ուստի «Ազարբայգան» անունը արտասանուեց «Ազարբայջան», որը մինչեւ օրս էլ գործածութեան մէջ է:

Կարող է հարց առաջանալ, թէ ինչո՞ւ «Ազարբադգան»-ը «Ազարբայգան» դարձաւ, եւ «դ» տառը իր տեղը «յե» ձայնաւորին տուեց:

Ահմադ Քասրաւին, վերլուծելով այս խնդիրը, պարզաբանել է այդ հարցը եւ այսպէս է արտայայտուել.

«Ազարբայջանում յաճախ «դ»-ն «յե» է դառնում, ինչպէս օրինակ մենք այդ տեսնում ենք հէնց Ազարբայջան տեղանունի մէջ, որ նախապէս «Աթուրփադգան» է եղել, ինչպէս նաեւ «Մաեան» բառի մէջ, որը անտարակոյս «Մադան» է եղել[8]:

Ինչպէս նախապէս ակնարկեցինք, Ազարբայջանի հողային տարածքը, որ մի մասն էր «Մեծ Մեդիա» երկրի, կոչւում էր «Փոքր Մեդիա» կամ «Փոքրիկ Մարաստան»: Բայց «Աթուրփաթ» անուան յաւելումից յետոյ էլ նրա հինաւուրց «Մադ» անունը մէկ անգամով չվերացաւ: Ուստի հնադարեան պատմագիրների եւ աշխարհագրագէտների գործերում կոչւում էր «Մեդիա Աթ-

րուփաթէն», որը յունական ձեւն էր «Մադ Աթուրփաթգան» անուանումի: Այս անունը գործածւում էր երբեմն «Մադ Աթրուփաթէն» եւ երբեմն էլ «Աթրուփաթէն» ձեւերով:

Ռուս մեծ արեւելագէտ, ակադեմիկոս Վասիլի Վլադիմիրովիչ Բարտոլդը Ազարբայջան անուան շուրջ այսպէս է գրում.

«Նախքան Ալեքսանդր Մակեդոնացու արշաւանքը, Իրանեան Ազարբայջանը անբաժան մասն էր Մարերի երկրի եւ չունէր կառավարման առանձին մի կառոյց: Գաւգամելայի[9] ճակատամարտի ժամանակ Աթրուփաթը բովանդակ Մարաստանի սատրապն էր[10].... Ալեքսանդրից յետոյ էլ Մարաստանի մի մասը Աթրուփաթի տիրապետութեան տակ էր գտնւում եւ «Փոքր Մեդիա» էր կոչւում, իսկ յետագայում Աթրուփաթ անունը աւելացրեցին նրա վրայ: Յոյները այս երկիրը անուանում էին «Աթուրփաթէն», իսկ հայերը «Աթրփաթգան», եւ հէնց այստեղից է առաջացել Ազարբայջան անունը»[11]:

Երկրորդ դարի պատմագիր Արիաոնը, Ալեքսանդր Մակեդոնացու Իրանի վրայ արշաւելու մասին խօսելիս, առանձին յիշատակում է Կովկասեան Ալբանիան եւ Ազարբայջանը, եւ վերջինս անուանում է «Մադ Աթրոփաթէն»[12]:

Յովսէփոս Փլաւիոսը, երրորդ դարի մի այլ պատմագիր, «Մադ Աթրոփաթէն»ի մասին խօսելիս, այդ տարածքը ներկայացնում է որպէս մի բազմամարդ երկիր[13]:

Արաքս գետի հիւսիսում տարածուող այն երկիրը, որ այժմ կոչւում է «Ազէրբայջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն», անցեալում մի ուրիշ անուն է ունեցել, Ազէրբայջանից մի այլ անուն: Հին ժամանակներում այդ երկիրը կոչւում էր «Ալբանիա»: Հնադարեան պատմագիրներն ու աշխարհագրագէտները այս մասին շատ նիւթեր են գրի առել եւ «Ալբանիա» երկիրը ճանաչել են որպէս Ազարբայջանից, իմա՛ Աթրուփաթէնից տարբեր մի երկիր:

Պոլիբիոսը, որ ծնուել էր մեր թուագրութիւնից 205 տարի առաջ, տեղեկութիւններ է հաղորդում Կովկասեան Ալբանիայի եւ նրա մերձակայ երկրների մասին: Նա շարադրել է ընդհանուր թուով 40 գրքերից բաղկացած մի պատմութիւն, որից ամբողջութեամբ մեզ հասել են միայն առաջին հինգ հատորները, իսկ միւս գրքերից առանձին գլուխներ են պահպանուել: Արեւելեան Կովկասի մասին խօսելիս նա այսպէս է գրում.

«Աթրոփաթէն եւ Ալբանիա երկրների միջեւ ապրում են այլ ազգեր, ինչպէս կադուսիացիներ[14] եւ ուրիշներ»[15]:

Պոլիբիոսի գրածից կարելի է պարզ կերպով ըմբռնել երկու բան: Նախ այն, որ Ալբանիա երկիրը Ազարբայջանից տարբեր մի երկիր էր: Երկրորդն

էլ այն, որ Ալբանիան որոշ մասերում անմիջապէս հարեւան չէր Ազարբայջանին, եւ որ այս երկու երկրների միջեւ այլ ազգեր էին ապրում: Ուշագրաւ կէտն այն է, որ կադուսիացիներ - թալիշները - այժմ էլ բնակվում են Ազարբայջանի եւ «Ազէրբայջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն» կոչուող երկրների միջեւ գոյութիւն ունեցող տարածութեան վրայ: Սրանք Գիլանի, Թալիշի բնակիչներն են՝ Խորհրդային երկրում գտնուող Թալիշ հողային տարածքում բնակուողները, ի շարս դրանց Աստարայում եւ Լենքորանում ապրողները, որոնց լեզուն եւ մշակոյթը նրանց զանազանում է այսպէս կոչուած «Խորհրդային Ազէրբայջան»ի թրքախօսներից:

Դիոդորոս Սիկիլիացին, մ.թ.ա. առաջին դարում ապրող այդ պատմագիրը, որ մեծ չափով օգտուել է Քսենոֆոնի աշխատութիւններից, անձամբ ճամփորդել է եւրոպական եւ ասիական բազմաթիւ երկրներ եւ գրի է առել մի պատմութիւն, 40 մասերից բաղկացած, ներառեալ հնագոյն շրջաններից սկսեալ մինչեւ Կեսարի պատերազմները. բայց այդ ժողովածուից միայն առաջին բաժնից մինչեւ 5րդ բաժինը, ու նաեւ 11րդ եւ 12րդ բաժիններն են պահպանուել: Դիոդորոսը, հիմնուելով Կտեսիասի գրածների վրայ, յիշատակում է Ալբանիայի նահանգը եւ Խազարի նահանգը՝ «Կասպիան», ինչպէս նաեւ Խազարի պարիսպը՝ «Կովկասի Դարբանդ»ը, համարել է Ալբանիան բաղկացնող շրջաններից[16]:

Մեր թուագրութիւնից առաջ ապրող պատմագիրների եւ աշխարհագրագէտների գրուածքների մէջ Ստրաբոնի աշխատութիւնը Կովկասի եւ նրա ժողովուրդների մասին, այլ գրուածքների համեմատութեամբ, աւելի շատ մանրամասնութիւններ է պարունակում: Ստրաբոնը ծնուել էր Փոքր Ասիայում, մ.թ.ա. 63 թուին: Նրա «Աշխարհագրութիւն» գիրքը, որ բաղկացած է 17 բաժիններից, գրեթէ պահպանուել է լրիւ եւ անթերի: Ստրաբոնը իր գրքի 11րդ գլխում, օգտուելով Թէոփանէս Միտիլենացու գրութիւններից, շատ արժէքաւոր տեղեկութիւններ է հաղորդում «Կովկասեան Ալբանիայի» վերաբերեալ: Նա ասում է.

«Ալբանիան մի երկիր է, որ Կովկասեան լեռների հարաւից մինչեւ Կուր գետը եւ Կասպից ծովից մինչեւ Ալազանի գետն է տարածւում, իսկ հարաւից սահմանւում է Մադ Աթրուփաթէնի երկրով»[17]: Այս գրուածքից մի բան է բացայայտւում, այն որ Կովկասեան Ալբանիան» Աթրուփաթէն» կամ Ադարբայգան չէր կոչւում եւ նրա հետ միացած չէր: Ալբանիա անունը եւ այդ երկրի սահմանները եւս բնորոշուած են Ստրաբոնի գրութեան մէջ: Նաեւ, Ստրաբոնը «Աթրուփաթէն»ը ճանաչում է որպէս Մարաստանի մի մասը եւ Ադարբայգանը անուանում է «Մադ Աթրուփաթէն»: Իսկ առաւել կարեւորն

այն է, որ նա իր գրութեան մէջ Ազարբայջանի ժողովրդին ներկայացնում է որպէս իրանցիներ եւ նրանց լեզուն էլ պարսկերէն[18]:

Երկրորդ դարի աշխարհագրագէտ Դիոնիսոսը Կասպից ծովի եւ նրա ափերին հաստատուած ցեղերի մասին խօսելիս այսպէս է գրում. «Կասպից ծովի ափերին ապրում են սակեր, հոներ, խազարներ, ալբաններ եւ այլ ազգեր»[19]:

Արիանոսը, խօսելով Ալեքսանդր Մակեդոնացու արշաւանքների մասին, յիշում է Ալբանիա եւ Ադարբայգան երկրները միմեանցից անջատ կերպով, եւ Ադարբայգանը անուանում է «Մադ Աթրուփաթէն»[20]:

Առաջին դարի մեծ աշխարհագրագէտ եւ պատմագիր Պլինիոսը իր «Բնական պատմութիւն» գրքի մէջ, որ բաղկացած է 37 մասերից, Կովկասեան Ալբանիայի մասին այսպէս է գրում.

«Ալբանները ապրում են Կուր գետի շրջակայքում տարածուող դաշտերում, եւ Ալազան գետը նրանց բաժանում է իբերներից, իմա՛ վրացիներից»[21]:

Այս գրութիւնը շատ մօտ է Ստրաբոնի արտայայտածին, եւ բոլոր այս աշխատութիւններից բացայայտւում է, որ Կովկասեան Ալբանիան Ադարբայգանից անջատ մի երկիր էր: Այս գրքի յաջորդական մասերում, խնդիրը էլ աւելի պարզաբանելու նպատակով, պիտի պարզորոշենք այս երկու երկրներից իւրաքանչիւրի սահմանները՝ հիմնուելով բազմաթիւ վաւերագրերի եւ փաստաթղթերի վրայ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Սա նոյն Ալեքսանդր Մակեդոնացին է. հնադարեան գրուածքներում նրան Ալեքսանդրի փոխարէն սխալմամբ Ալսեքանդր էին անուանում եւ կոչում էին «Ալսեքանդր գաջասթաք», այսինքն՝ նզովեալ: Թւում է, թէ Իսքանդար անուան սխալ արտասանութիւնը գալիս է շատ հին դարաշրջանից:

[2] «Քարւանդ-է Քասրաւի», աշխատասիրեց Եահեա Զոքա, Թեհրան 1977, էջ 313-314:

[3] Իբնի-Ֆակիհ, Աբուբաքր Ահմադ, բին Մուհամմադ, բին Իսհակ Համադանի, «Ալբոլդան»ի համառօտ թարգմանութիւն, Իրանին վերաբերեալ մասը, թարգմանեց Հ. Մասուդ, Բոնեադէ Ֆարհանգէ Իրան-ի հրատարակութիւն, Թեհրան 1970, էջ 126:

[4] Տես ծանօթ. 2, էջ 315-316:

[5] Դեհխոդա, Ալի Աքբար, Լողաթնամէ, Ա. Աբուսաադ, Թեհրան 1946, էջ 36:

[6] Նոյն տեղում, էջ 54:

[7] Յաւելեալ տեղեկութեան համար դիմել «Քարւանդ-է Քասրաւի» — 78 յօդուածներ եւ զրոյցներ Ահմադ Քասրաւիից — աշխատասիրեց Եահեա Զոքա, Թեհրան, 1977, էջ 316:

[8] Տես ծանօթ. 7, էջ 356:

[9] Գաւգամելան գտնւում է Պիւմադուս գետի եզերքին, Էրբիլ եւ Մոսուլ քաղաքների մօտ, ուր տեղի ունեցաւ Դարեհ III-ի եւ Ալեքսանդր Մակեդոնացու երրորդ ճակատամարտը:

[10] *Սատրապ* բառը յունական ձեւն է պարսկական *խաշթրափ* բառի, որը նաեւ գործածւում է խաշթարփաւան ձեւով: *Խաշթար*, որ է *շահր*, իմա՛ քաղաք, եւ *խաշթարփաւան*, որ է *շահրբան*, քաղաքապան կամ քաղաքապետ իմաստով: Արաբական գրութիւնների մէջ *խաշթրափ* բառը հանդիպում է նաեւ «շահրաբ» ձեւով: Խաշթրափ կամ սատրապը նահանգապետ կամ իշխանն էր Աքեմենեան կայսրութեան մի մեծ մասի: Մեծն Դարեհը Աքեմենեան կայսրութեան ենթակայ իրանական եւ ոչ իրանական հողային տարածքները բաժանել էր 23 նահանգի եւ իւրաքանչիւրի համար նշանակել էր մէկ խաշթարփաւան, իմա՛ սատրապ:

[11] Бартольд В. В., Сочинения, т. II, ч. I, Москва, изд. Восточной литературы, 1963, стр. 775-776.

[12] Այսուհետեւ Бартольд, Сочинения.

[13] Arriani, Anabasis, resognovit C. Abicht, Lips., 1886.
Josephi Flavii, De bel., VII, 7,4.

[14] Կադուսիացիները մի ժողովուրդ էին, որ այժմ «թալիշ» են կոչւում: Յաւելեալ տեղեկութիւնների համար դիմել ծանօթ. 2, էջ 283-288:

[15] Polibii, Historiae, rec. Fr. Hulstsch Vol. I-IV, Berol. Weidam., 1888-1892.

[16] Diodori, Bibliotheca historica., rec. Frid Vogel, Vol. I-III, Lips., Teubn, 1888-1893.

[17] Strabonis, Geographica, rec. Commentario crit.instr. G. Kramer, Vol. I-III, Berol. 1884-1892.

[18] Նոյն տեղում:

[19] Geographi Graeci Minores. E codicibus recognovit Carolus Mullerus, II, Paris, 1882.

[20] Տես ծանօթ. 12:

[21] C. Plinii Secundi, Naturalis historia, D. Detlefsen recens uit, vol. I-II, Berol. 1866-1882.

5666



Աղուանի քարտէզը, 387-706թթ.: Վերցուած է Հայկական Մեծ Հանրագիտարանից, 1967-ի տպագրութիւն, Երեւան, հատոր առաջին, էջ 264:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱԼԲԱՆԻԱ ԱՆՈՒԱՆ ՄԵՋ ԱՌԱՋԱՑԱԾ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Կովկասեան Ալբանիա» անունը աշխարհագրագէտների աշխատութիւններում գործածուել է զանազան ձեւերով, որը եւ առաջացրել է ենթադրութիւններ ու կռահումներ՝ պատճառելով մի շարք դժվարութիւններ: Ինչպէս նախապէս ասուեց, յոյն եւ բիւզանդացի պատմագիրներն ու աշխարհագրագէտները այդ երկիրը անուանում էին «Ալբանիա»: Հայազգի պատմաբանների եւ աշխարհագրագէտների մօտ «Ալբանիա» անունը գործածւում է «Աղուան» — (Աղուանք) — եւ «Ալւան» — (Ալւանք) — ձեւերով: Իսկ պատմաբանների եւ աշխարհագրագէտների մօտ այս անունը «Ալբան» եւ «Առռան» ձեւերով է յիշատակուել: Որոշ գրուածքների մէջ «Ալբան» եւ «Ալան» անունները միասին են յիշատակւում, այնպէս որ մի շարք հետազօտողների մօտ այն միտքն է առաջացել, որ իբր թէ այս երկու անունները մէկ են: Մինչդեռ որեւէ կասկածից հեռու է, որ այս երկու անունները մէկ չեն, եւ ստորեւ մենք դեռ կանդրադառնանք այս հարցին:

Արաբների կողմից «Կովկասեան Ալբանիա» երկրի համար «Ալբան» եւ «Առռան» անունների գործածութեան մասին հանգ. Ահմադ Քասրաւիի եւ ռուս գիտնական արեւելագէտ, պրոֆ. Բարտոլդի տեսակէտները շատ մօտ են միմեանց:

Հանգ. Ահմադ Քասրաւին գրում է, որ «Արան»ը հռոմէացիների կողմից «Ալբանիա» էր կոչւում, իսկ հայերի կողմից «Աղուան» կամ «Ալւան»[1]: Քասրաւին այն կարծիքին է, որ «Արաբները աղաւաղել են պարսկական անունը եւ այդ երկիրը կոչել «Ալբան» եւ «Առռան», ու մինչ պարսկերէնում այդ անունը «Արան» էր, արաբերէն լեզուի մէջ «Առռան» հնչուեց»[2]:

Պրոֆ. Բարտոլդը եւս այս կարծիքին նմանող մի տեսակէտ է արտայայտել եւ այսպէս է գրել.

«Առռան» անունը, որ արաբների կողմից յաճախ «Ալբան» է գրւում, այն անունն է, որով արաբները կոչում էին հինաւուրց «Ալբանիան»: Այս անունը հայերէնի մէջ գրւում է «Ալւանք»[3]:

Տողերիս հեղինակի կարծիքով, «Արան» եւ «Ալբանիա» բառերը կարող են նոյն անուան երկու տարբեր հնչումները լինել: «Արան» անունը Կովկասից դուրս, նաեւ Իրանի այլ վայրերում էլ գործածութիւն ունի:

Ներկայիս անգամ, Քաշանում մի շրջան այս նոյն անունով կոչւում է Արան: Գուցէ «Արան»ը պարսկերէն արտասանութիւնն է «Ալբանիա»

անուան: Այն, ինչ որոշ չափով ամրապնդում է այս ենթադրութիւնը, Կովկասում յայտնաբերուած սեպագրութիւնների գոյութիւնն է: Այդ բեւեռագրութիւնների յունարէն տեքստերում յիշեալ երկրի անունը «Ալբանիա» է գրուած, իսկ պարթեւական տեքստերում «Արդան» է նշուած:

Կովկասի Նոխայի շրջանի «Բեօիւք Դաքան» աւանում մի գրութիւն է յայտնաբերուել, գրուած հին յունարէն լեզուով ու գրութեամբ, որը, ինչպէս ենթադրւում է, մեր թուագրութեան երկրորդ դարին է պատկանում: Այդ գրութեան մէջ յիշատակութիւն կայ «Ալբանիա»ի մասին»[4]:

Սասանեան արքայից արքայ Յազկերտ I-ի — 241-270 — արձանագրութեան մէջ եւս Աթուրփաթգան, Հայաստան եւ Բաղասական երկրի անուններից յետոյ գալիս է նաեւ Ալբանիա անունը[5]:

Խորհրդային ուսումնասիրողներից մէկը՝ Իղրար Ալիեւը, «Կովկասեան Ալբանիայի հնադարեան պատմութեան վերաբերող աղբիւրների եւ հիմունքների շուրջ» վերտառութեամբ իր աշխատութեան մէջ, Կովկասեան Ալբանիան յիշատակելուց յետոյ, այսպէս է գրում.

«Պարթեւական աղբիւրների մէջ Կովկասի արեւելքը «Արդան» է կոչւում, իսկ յունական աղբիւրների մէջ «Ալբանիա» ձեւի տակ է յիշւում: Թւում է, թէ «Արդան» անունը, որ մեր թուագրութիւնից երեք դար առաջ է տրուել Կովկասեան Ալբանիային, պատկանում է Ալբանիայի հարաւային հարեւաններին: Այս շատ հին պատմական անունը շատ մօտ է Առռան կոչումին, որը արաբ աշխարհագրագէտները տուել են Ալբանիա երկրին»[6]:

Պրոֆ. Բարտոլդը այն կարծիքին է, որ յոյն հեղինակները յետագայում Ալբանիա անունը դարձրել են «Արիանիեյ» Arianiey եւ այդ երկրի բնակիչներին, որոնք շատ հին ժամանակներից «Ալբանոյ» Albanoi էին կոչւում, անուանել են «Արեանոյ» Arianoi[7]:

Քասրաւին գտնում է, որ «Արան» բառը Ազարբայջանի եւ Հայաստանի ժողովուրդների, ինչպէս նաեւ Արանի ժողովրդի լեզուով արեւադարձային եղանակ ունեցող կամ ձմեռանոցի իմաստ ունի, եւ համոզուած է, որ այժմ եւս այս բառը պահւում է, ու դեռեւս Ազարբայջանի եւ Արանի թրքախօսները տաք կլիմայ ունեցող շրջաններին «արանլուղ» են անուանում[8]:

Բայց Քասրաւին «Արան» անուան ծագումը արեւադարձային իմաստից անհաւանական է համարում, եւ այն կարծիքին է, որ «Արան»ը «Ար» բառից է առաջացել, որը «Իյր» մեծ տոհմի, կամ նոյն ինքը արիական ցեղի մի այլ անունն է[9]:

Ըստ պրոֆ. Մարկուարտի, Ալբանիա անունը, որ հանդիպում է հնադարեան յունական եւ հին հայկական գրութիւնների մէջ, նոյն Առռան անունն է, որ արաբական աղբիւրներում է յիշատակւում, ինչպէս նաեւ «Բանի» անունը, որ հանդիպում է վրացական աղբիւրներում[10]:

Արան անունը յիշատակուած է նաեւ Մովսէս Խորենացու գրութիւնների մէջ: Նա այսպէս է գրում.

«Պարթեւական ծագում ունեցող Հայաստանի արքայ Վաղարշակի թագաւորութեան շրջանում Տրդատ I-ը եւ նրա եղբայր Վոլոգէսը իշխում էին Ալբանիոյ վրայ»[11]:

Պատմագիրների եւ աշխարհագրագէտների մի շարք գրութիւնների մէջ Ալրան եւ «Ալան» անունները միասին են յիշւում, եւ այդպիսով կասկած են առաջացնում, թէ արդեօք այդ երկու անուանումները նոյնը չեն: Գուցէ այս մտահոգութիւնը ծնունդ է առնում տարբեր աղբիւրներում հանդիպող «Ալբան» եւ «Ալան» անունների նմանութիւնից: Ժամանակակից մի խումբ ուսումնասիրողներ եւս «Արան» եւ «Ալան»ը համարում են նոյն երկրի անուանումները: Տողերիս հեղինակն էլ մի որոշ ժամանակ գտնւում էր այս անորոշութեան մէջ ու այս տեսակէտի ազդեցութեան տակ, ուստի յարմար կլինի այս կէտին անդրադառնալ եւ, հնարաւորութեան սահմաններում, այս անորոշութիւնը փարատել:

Քասրաւին Արանի ժողովրդին համարում է իրանեան տոհմին պատկանող մի ազգութիւն եւ համոզուած է, որ Արանի առաջին բնիկները «Ալ» կամ «Ար» էին կոչւում, որը «Իյր» ցեղի մի այլ անուանումն է[12]:

Պրոֆ. Բարտոլդը «Արան»ն ու «Ալան»ը միմեանցից անջատ ու զատորոշ է կարծում: Նա ալաններին համարում է իրանեան ցեղից, մինչդեռ հետեւելով ռուս մեծ գիտնական եւ լեզուաբան Մառին, նա արաններին համարում է յաբեթական ցեղերին պատկանող ազգերից: Ի միջի այլոց, Բարտոլդը տոհմային եւ ցեղական տեսակէտից Ազարբայջանի ժողովրդին ըստ ամենայնի եւ լիովին առանձին է համարում Ալբանիոյ ժողովրդից, եւ Արաքս գետը նկատի է ունենում ոչ միայն որպէս բնութեան ստեղծած սահման, այլ նաեւ տոհմային եւ ցեղագրական սահման: Խօսելով Ազարբայջանի մասին, նա այսպէս է գրում.

«Արաքս գետը, որ ներկայիս իրանեան Ազարբայջանը անջատում է Կովկասից, հին օրերին համարւում էր տոհմային եւ ցեղագրական որոշակի սահման իրանեան Մարաստանի տարածքի եւ Ալբանիոյ հողային տարածքի միջեւ: Ըստ Ն. Մառի գրութեան, Ալբանիոյ ժողովուրդը յաբեթական ցեղերին էր պատկանում»[13]:

Պրոֆ. Բարտոլդի գրածից պարզւում է, որ Ազարբայջանի ժողովուրդը եղել է իրանեան Մարաստանի ցեղերից, իսկ Կովկասեան Ալբանիոյ ժողո-

վուրդը՝ յաբեթական ցեղերից: Ինչ վերաբերում է ալաններին, այստեղ նրա տեսակէտը տարբեր է. պրոֆ. Բարտոլդը համոզուած է, որ «Ալանները իրանեան անուանի տոհմերից մէկն են»[14]:

Սովետական մեծ Հանրագիտարանի մէջ էլ այսպէս է գրուած. «Ալանները իրանալեզու ցեղերից են»[15]: Ոմանք ալաններին համարում են սարմատների ցեղերից, որոնք պատկանում էին իրանեան տոհմին: Սարմատները ընդգրկում էին մի շարք խմբակցութիւններ, որոնք բնակւում էին Եւրոպայի եւ Ասիայի դաշտերի ընդարձակ հողային տարածքներում: Սարմատների երկիրը արեւելքում սկսւում էր Արալ լճից եւ արեւմուտքում վերջ էր գտնում մեր օրերի Ռումինիայի եւ Հունգարիայի հողային տարածքներով: Սարմատները, ահարկու եւ կործանիչ հարուածներ հասցնելով սակերին, առաջացան մինչեւ Բոսֆորի նեղուցը, մինչեւ Կովկաս եւ մինչեւ Առաջաւոր Ասիայի տարածքները, ու մարտնչեցին Հռոմի կայսրութեան եւ պարթեւների իշխանութեան դէմ, եւ բնակուեցին մի շարք նոր հողատարածքների վրայ: Սարմատների դերը եւրոպական եւ ասիական տափաստաններում, Սեւ ծովի հիւսիսում եւ ընդհանրապէս արեւելեան Եւրոպայում բնակուող ցեղերի պատմութեան մէջ շատ մեծ կարեւորութիւն ունի: Յիշեալ տարածքներում, մեր թուագրութիւնից առաջուայ վերջին դարերից մինչեւ մեր թուագրութեան չորրորդ դարը կոչւում է Սարմատեան դարաշրջան[16]:

Սարմատները մ.թ.ա. առաջին դարում սակերին քշեցին, հեռացրին Սեւ ծովի հիւսիսային ափերից: Քիչ-քիչ այդ տարածքը կոչուեց «Սարմատիա» — (Սարմաթիյյէ) — եւ հռոմէական հրամանատարութեան ռազմական քարտէզներում եւս Սարմատիա երկրի անունը տեղ գտաւ[17]:

Սարմատ ցեղերը ընդգրկում են Ռոկսոլան (Roksolan), Ալան, Սիրաք (Sirak), Աօրս (Aors) եւ այլ խմբերը, որոնցից ռոկսոլանները եւ ալանները սարմատ ցեղերի կարեւորագոյնն են եւ գտնւում են այդ ցեղերի գագաթնակէտի վրայ[18]:

Ալանները, իրենց զօրաշարժերի ընթացքին, առաջացել էին նաեւ մինչեւ Իսպանիա եւ Հիւսիսային Աֆրիկա[19]:

Իսլամ պատմագիրների եւ աշխարհագրագէտների աշխատութիւններում Ալան անունը երբեմն գործածւում է Ալռան եւ Առռան ձեւերի տակ: Ինչպէս երեւում է, այս անունները կասկածի տեղիք են տալիս, բայց մի խումբ այլ հեղինակներ, ինչպէս Աբուդուլաֆը եւ Եակութ Համաւին, այս անուանումը գրել են «Ալլան» ձեւի տակ:

Ալանը տարբեր է Առան-ից: Ալանների երկիրը գտնւում էր հիւսիսային Կովկասում եւ Դարիալի կիրճով էր վերջ գտնում: Կովկասի հռչակաւոր

Դարբանդի հիւսիսային շրջաններից մի մասը մեր թուագրութեան 13րդ դարում պատկանում էր ալաններին:

Ալան անունը հռոմէական գրուածքներում Ալանի — Alani — ձեւի տակ է նշուած: Ալանները իրենք իրենց ու նաեւ իրենց երկիրը անուանում են «Իրոն», որը մեծ նմանութիւն ունի Իրան անուան հետ: Այս երկրամասի ժողովրդի միւս անունը «Աս» է, վրացիները ալաններին անուանում էին «Օս» — Os — եւ ռուսները «Եաս» — yas: Այժմ ռուսերէն լեզուով ալանների երկիրն ու ժողովուրդը կոչւում է «Օսեթ» —Oset: Պրոֆ. Բարտոլդը գտնում է, որ «օսեթ» անունը ծնունդ է առել «Աս» անունից: Նա այն կարծիքին է, որ միջին դարերում եւրոպացի աշխարհաշրջիկները «Աս»երին «օսեթ» էին անուանում: Այս առնչութեամբ նա այսպէս է գրում.

«Թւում է, թէ «Աս» — As — անունը, որով կոչւում էին այս հնադարեան երկրի հինաւուրց բնակիչները, ներկայի «Օսեթ» անուան ակունքն է[20]:

Պրոֆ. Բարտոլդը, մի այլ տեղում, այսպիսի կարծիք է յայտնում. «Չինական առաջին աշխարհաշրջիկների զբօսաշրջութեան օրերից, մ. թ. ա. երկրորդ դարից սկսեալ, չինացիք «եան-ցայ» (Ian-tsay) երկրի անուան ծանօթ էին: Այս երկիրը վերջերում ճանաչուեց «Ալանիա» անունով, որը աօրս-ների «aors» կամ ալանների երկիրն է»[21]:

Մեր թուագրութեան 372 թուականին հոները պարտութեան մատնեցին ալաններին: Ըստ մեր ունեցած տեղեկութիւնների, ալանների երկիրը 8րդ եւ 9րդ դարերում խազարների խաքանութեան տիրապետութեան մի մասն էր կազմում: Իսկ 9րդ դարում Բիւզանդիայի հետ խազարների ունեցած արտաքին յարաբերութիւնների մէջ ալանները կարեւոր դեր են կատարել:

Այս երկրի ժողովրդի կրօնի եւ հնադարեան սովորոյթների մասին բաւականաչափ տեղեկութիւններ չունենք: Թւում է թէ, 10րդ դարում, քրիստոնեայ կրօնը տարածուած էր ալանների մօտ: 13րդ դարի գրութիւններից եւս պարզւում է, որ ալան ժողովրդի մի մասը քրիստոնեայ կրօնի հետեւորդ էր, իսկ 14րդ դարում գրուած աշխատութիւններից պարզւում է, որ ալանների երկրում իսլամը ընդունելութիւն էր գտել: Իբն-ի Բաթութան, որ հիջրեթի 8րդ դարում — (14-րդ դար) — էր ապրում, յիշում է «Էթել» — (Վոլգա) — գետի ափին գտնուող «Սերա» քաղաքի բնակիչ աս-երին եւ նրանց մահմեդական է համարում[22]:

1238 եւ 1239 տարիներին ալանները մոնղոլ եւ թաթար ցեղերի կողմից ահարկու հարուածների ենթարկուեցին, եւ այդ երկրի ժողովուրդը, որ հիւսիսային Կովկասի քաղաքակրթութեան եւ մշակութային զարգացման մէջ աչքառու դեր էր ունեցել, մեծ աւերների ու կորստի ենթարկուեց: Հիւսիսա-

յին Կովկասում գտնուող «Հիւսիսային Օսեթիայի» ժամանակակից բնակիչները իրականում ալանների — (սարմատների) — մնացորդներն են, եւ այդ ժողովրդի լեզուն էլ իրանական լեզուների ճիւղերից է:

Տողերիս հեղինակը անհրաժեշտ համարեց, անորոշութիւնների փարատման համար, անդրադառնալ «Ալան» անուան, որը երբեմն շփոթութիւն է ստեղծում «Արան» անունի հետ: Ալանների երկրի մերօրեայ անունը «Հիւսիսային Օսեթիայի Խորհրդային Ինքնավար Հանրապետութիւնն» է, որը գտնւում է Կովկասեան մեծ լեռնաշղթայի հիւսիսային փէշերում, եւ նրա գլխաւոր քաղաքը ներկայումս «Վլադիկավկազ» կոչուող քաղաքն է[23]:

Իսկ Առանը այն անունն է, որով արաբները անուանում էին Կովկասեան Ալբանիան, այնպէս որ Ալանն ու Ալբանիան միշտ էլ միմեանցից անջատ եւ տարբեր են եղել: Այս երկու երկրների ժողովուրդներն էլ միմեանցից տարբեր են եղել եւ իրարից անջատ լեզուներ են ունեցել[24]: Ինչպէս ասուեց, Առանի ժողովրդի լեզուն յաբեթական կոչուող լեզուների մի ճիւղն է, իսկ ալանների լեզուն իրանական լեզուների ճիւղերից է:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] «Քարւանդ-է Քասրաւի» — ժողովածու Ահմադ Քասրաւու 78 յօդուածների եւ զրոյցների — աշխատասիրեց Եահեա Զոքա, Թեհրան, 1977, էջ 368:

[2] «Մակալաթ-է Քասրաւի», առաջին հրատարակութիւն, կազմեց՝ Եահեա Զոքա, Թեհրան, 1948, էջ 117:

[3] Bartold V. V., Sochineniia, Tom III, izdatelstvo Nauka, Moskva, 1965, str. 334.

[4] Latyshev, V. V., «Zametki o Kavkazskikh nadpisiakh», «izv.imper. arkheol Komis»., SPb., 1904, vyp. Io, str. 103-105.

[5] Sprengling. Third Century Iran (Sapor and Kartir), Chicago, 1953, p. 73.

[6] Вопросы истории Кавказской Альбании, ред. И. Алиев, Баку, 1962, стр. 18-19.

[7] Տես ծանօթ. 3, Նոյն էջում:

[8] Տես ծանօթ. 1, էջ 368-69:

[9] Քասրաւի, Ահմադ, «Շահրիարան-է Գոմնամ», երկրորդ հրատարակութիւն, Թեհրան, 1956, էջ 264:

[10] Տես ծանօթ. 6, էջ 22:

[11] Տես ծանօթ. 6, էջ 22:

[12] Տես ծանօթ. 9, Նոյն էջում:

[13] Бартольд В. В. Նշուած աշխատութիւնը, հ II. բաժ. I, էջ 775.

[14] Նոյն տեղում, էջ 866:

[15] БСЭ. м. I, Москва, 1970, стр. 381.

[16] Хазанов А. М. Очерки военного дела сарматов, Москва, изд. «Наука», 1971, стр. 3.

[17] БСЭ. Т. 22, Москва, 1975, стр. 599.

[18] Նոյն տեղում:

[19] Նոյն տեղում:

[20] Տես ծանօթ. 13, էջ 866:

[21] Նոյն տեղում, էջ 550:

[21ա] - Բնագրում սխալմամբ՝ «19-րդ դարում».

[22] Ռեհլաթ, բին Բաթութա, Իբնի Բաթութայի ճանապարհորդութեան գիրքը, թարգմ. Դր. Մոհամմադ Ալի Մովահհէդ, առաջին հատոր, Թեհրան, Բոնգահ-է Թարջոմէ վա Նաշր-է Քեթաբ, 1966, էջ 402-403:

[23] БСЭ, Т. 23, Москва, 1976, стр. 150-151.

[24] Նոյն տեղում, հատոր 2, Մոսկուա, 1970, էջ 255:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱԼԲԱՆԻՈՅ ԵՒ ԱԶԱՐԲԱՅՋԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Բազմաթիւ պատմագիրներ եւ աշխարհագրագէտներ Ալբանիոյ հողային տարածքի սահմանները համարել են, հիւսիսից եւ հիւսիս-արեւմուտքից՝ ալանների եւ սարմատների երկիրը, արեւմուտքից՝ Իբերիան (Վրաստան) եւ Հայաստանը, արեւելքից՝ Կասպից ծովը, իսկ հարաւից՝ Կուր[1] եւ Արաքս գետերը: Այժմ պիտի ջանանք, հնարաւորութեան սահմաններում, այս առնչութեամբ ներկայացնել մի շարք սկզբնաղբիւրներ:

Առաջին դարի աշխարհագրագէտ Պլինիոսը այսպէս է գրում.

«Ալբանացիները բնակւում են Կուր գետի երկու կողմերում տարածուող դաշտավայրում, եւ Ալազան գետը[2] նրանց անջատում է իբերիացիներից — (վրացիներից):

Իսկ յիշելով Կովկասեան Ալբանիոյ քաղաքների անունները, նա գրում է. «Ալբանիոյ կարեւորագոյն քաղաքը Կապաղակ[3] է կոչւում»[4]: Պլինիոսը նոյն նիւթի շուրջ գրելիս, երբ յիշում է Ալբանիոյ գետերը, յիշատակում է նաեւ Կուր գետը[5]:

Հռչակաւոր աշխարհագրագէտ Ստրաբոնը, որ ապրում էր շուրջ երկու հազար տարի առաջ, պարթեւների տիրապետութեան օրերին, Կովկասեան Ալբանիան յիշում է որպէս անջատ մի երկիր եւ Ալբանիոյ հարաւային սահմանները համարում է «Մադ Աթրուփաթեն» — (Ադարբայգան) — եւ այս առնչութեամբ այսպէս է գրում.

«Ալբանիան մի երկիր է, որ տարածւում է Կովկասեան լեռնաշղթայի հարաւից մինչեւ Կուր գետը եւ Կասպից ծովից մինչեւ Ալազան գետը, իսկ հարաւից սահմանուած է Մադ Աթրուփաթենով»[6]:

Նա, իր գրքի 11րդ բաժնում, մանրամասնօրէն խօսում է Կովկասեան Ալբանիոյ աշխարհագրութեան եւ այդ երկրի երկրագործութեան եւ անասնապահութեան, ինչպէս նաեւ զօրքի, լեզուի, կրօնի, նրա ժողովրդի սովորութիւնների եւ աւանդութեանց ու նրանց պաշտամունքի վայրերի մասին[7]:

Սասանեան շրջանի հայ պատմագիր եւ աշխարհագրագէտ Մովսէս Խորենացին իր Պատմութեան գրքի մէջ, որ բաղկացած է երեք մասերից, խօսում է նաեւ Ալբանիոյ մասին՝ անուանելով այն «Աղուանից դաշտ», որտեղ իշխում էր — «Առան» — անունով կողմնակալը՝ Սիսական տեղից[8]:

Անանիա Շիրակացին, 7րդ դարի աշխարհագրագէտը, Հայաստանի մօտիկ հարեւանների մասին խօսելիս յիշում է Իբերիան (Վրաստան) եւ Ալբանիան: Լուրջ կերպով ենթադրւում է, որ նա իր աշխատութիւնը պատրաստելիս օգտուել է տեղական աղբիւրներից: Շիրակացին գրել է Կովկասեան Ալբանիոյ հիւսիսային սահմանների, ինչպէս նաեւ Կասպից ծովի հիւսիս-արեւմուտքում ապրող ցեղերի մասին, նա յիշատակում է «Կամբեճան» անունը, որը յունական եւ հռոմէական գրութիւններում գործածւում է «Կամբիսինա» ձեւի տակ[9], ինչպէս նաեւ «Շաբէ» եւ «Շաքաշ» անունները, որը յունական եւ հռոմէական աղբիւրներում «Սաքասենա» է գրուած[10]:

Հռչակաւոր պատմագիր եւ «Աղուանից Պատմութիւն» արժէքաւոր գրքի հեղինակ Մովսէս Կաղանկատուացին, որ ապրում էր 10րդ դարում, հետաքրքրական տեղեկութիւններ է տալիս Իրանի եւ Հռոմի կռիւների, ինչպէս նաեւ խազարների՝ Կովկասի վրայ կատարած յարձակման մասին: Խօսելով Կովկասեան Ալբանիոյ մասին, նրա սահմանները ներկայացնում է, սկսեալ Իբերրայից — (Վրաստան) — մինչեւ հոների պարիսպը — (Կովկասի Դարբանդ) — եւ մինչեւ Արաքս գետը[11]: Նկարագրելով խազարների յարձակումը Կովկասի վրայ (7րդ դարում), նա գրում է «Նրա, — (Յուստինիանոս II) — Բիւզանդիոյ կայսեր իշխանութեան առաջին տարում, հիւսիսային ցեղերը, որ խազար էին կոչւում, գրաւեցին Հայաստանը, Իբերիան եւ Ալբանիան, եւ ճակատամարտի մէջ, որը տեղի ունեցաւ հայկական թուագրութեան 133 թուի Սահմի ամսի 10ին, — (Յունիս) — սպանեցին Հայաստանի, Իբերիոյ եւ Ալբանիոյ իշխաններին[12]:

Դրանից յետոյ հոները արշաւեցին Ալբանիոյ վրայ եւ առաջացան մինչեւ Կուր գետը[13]:

Յիշուած նիւթերից պարզ կերպով յայտնւում է, որ Ալբանիան մի առանձին տարածք էր, անջատ Ազարբայջանից, եւ որը գտնւում էր Կովկասում՝ Առանի, Իբերիայի եւ Հայաստանի հարեւանութեան մէջ:

Յետիսլամական շրջանի իրանցի եւ արաբ աշխարհագրագէտներից, աշխարհաշրջիկներից եւ պատմագիրներից մնացած բազմաթիւ փաստաթղթեր են մեզ հասել Ազարբայջանի եւ Կովկասեան Ալբանիոյ աշխարհագրական սահմանների մասին: Նաեւ ռուս եւ խորհրդային պատմաբաններն էլ շատ պարզորոշ տեսակէտներ ունեն այս առնչութեամբ, որոնք պիտի ներկայացնենք ընթերցողների ուշադրութեան:

Մարաստանի Ալջիբալ նահանգի դիւանատան քարտուղար Իբնի-ի Խորդադ-Բեհը, որ մահացաւ հիջրեթի 300 (913) թ., Առանի եւ Ադարբայգանի մասին խօսելիս նրանց յիշատակում է զատ-զատ, իսկ Ազարբայջանի քա-

ղաքների եւ աւանների մասին խօսելիս յիշում է այն քաղաքները, որ գտնւում են Արաքս գետի հարաւում: Նա, առանձնապէս յիշելով Առան, Թիֆլիս, Պարտաւ — (Բարդա՛ա) — Բելուկան — (Բայլական) — Կապաղակ եւ Շիրւան անունները, աւելացնում է, որ «Առան, Ջուրզան — (Վրաստան) — եւ Սիսական նահանգները խազարների տիրապետութիւններից էին, որ Անուշիրւանը գրաւեց ու տիրացաւ»[14]:

«Ալբուլդան» հռչակաւոր աշխատութեան հեղինակ Իբն-ի Ֆակիհը, որ իր գիրքը գրել է հիջրեթի երրորդ դարի վերջերին — (900 թ.), Հայաստանի տարածքը բաժանել է 4 մասի եւ անուանել. «Առաջին, Երկրորդ, Երրորդ եւ Չորրորդ Արմինիա». նա Առանը համարում էր Առաջին Արմինիայի մասերից, իսկ Պարտաւ, Բելուկան, Կապաղակ, Շիրւան, Շաբրան, Շաքէ, Շամքոր — (Շամխոր) — եւ Բալասաջանը — (Բաղասական) — համարում է Առանի քաղաքներից[15]: Նա գրում է. «Առանը Արմինիայի առաջին հողային կալուածն է եւ չորս հազար գիւղեր ունի»[16]:

Իբն-ի Ֆակիհը Ազարբայջանի սահմանը մի կողմից որոշում է Արաքս գետը, միւս կողմից՝ Զենջանի սահմանը, եւ Դեյլամիստանի, Թարամ — Թարոմ — եւ Գիլանիշրջակայքը: Ազարբայջանի քաղաքների վերաբերեալ նրա տուած բացատրութիւնները հաստատում են այդ երկրի եւ Առանի միմեանցից անջատ լինելը: Ըստ Իբն-ի Ֆակիհի, Բերկրի, Սալմաստ, Մուկան — Մուղան — Խոյ, Վարսան — Վարդան—[17] — Մարաղա, Նէյրիզ, Թաւրիզ, Շափուրխասթ, Բարզէ, Խունէ, Միանէ, Մարանդ, Խոյ, Քուլսերէ եւ Բարզանդ քաղաքները համարում է Ազարբայջանի քաղաքներ[18]:

Նա գրում է. «Ազարբայջանի սահմանը Արմինիայի տարածքում հասնում է մինչեւ Բաս — (Արաքս) — եւ Քոր — (Կուր) — երկու գետերը: Արաքս գետի ակունքը Կալիկալայում — (Կարին) — է, իսկ յետոյ անցնում է Առանից, ուր նրան է խառնւում Առանի գետը: Յաջորդաբար նա անցնում է Վարսանից եւ հասնում երկու գետերի հանդիպման կէտին ու այսպիսով միանում Կուր գետին: Այս երկու գետերի միջեւ գտնւում է Բայլական քաղաքը: Յետոյ, այս երկու գետերը հոսում ու թափւում են Գորգանի ծովը»[19]:

Ինչպէս տեսնում ենք, Իբն-ի Ֆակիհը Արաքս գետը համարում է Ազարբայջանի սահմանը, ու այսպիսով պարզւում է, որ Արաքսի հիւսիսը մինչեւ հիջրեթի 3րդ դարը (10րդ դ.) Ազարբայջան չի կոչուել: Ու ինչպէս պիտի տեսնենք, այնուհետեւ էլ երբեւէ Ազարբայջան անունը Առանի վրայ չի դրուել:

Հիջրեթի 4րդ դարի առաջին կէսին — (շուրջ 950 թիւ) — գրուած «Սուրաթ-իլ-Արզ» գրքի հեղինակ Իբն-ի Հաուկալը բազմիցս խօսում է Առանի եւ Ազարբայջանի մասին եւ այդ երկու երկրները համարում է միմեանցից անջատ: Կասպից ծովի մասին խօսելիս գրում է, որ այդ ծովը «արեւմուտքից

Առանով, Սարիրի շրջակայքով, Խազարի քաղաքներով եւ ղուզերի անապատի մի մասով» է շրջապատուած[20]:

Իբն-ի Հաուկալը ներկայացրել է նաեւ երեք երկրների՝ Հայաստանի, Ազարբայջանի եւ Առանի մի քարտէզ, ուր Արաքս գետը բերւում է որպէս Ազարբայջանի եւ Առանի միջեւ գտնուող սահման: Նա այս մասին գրում է. «Ալրան գաւառի հարաւային սահմանը Բաս —Արաքս — գետն է, եւ նրա ափին գտնւում է Վարսան քաղաքը»[21]:

Իբն-ի Հաուկալը, Առանի քաղաքները թուելիս, յիշատակում է Պարտաւ[22], Ջանզէ — (Գանձակ) —[23] Շամքոր— (Շամխոր) —[24] Թիֆլիս, Բարտիզ, Շմախիյյէ — (Շամախի) — Շրուան[25] Շաբրան, Կապաղակ եւ Շաքէ անունները, իսկ Ազարբայջանի քաղաքների թուարկելիս յիշատակում է Արդաբիլ, Դախարկան- (Դեհխարկան) -Թաւրիզ, Սալամաստ, Խոյ, Բերկրի, Ուրմիա — (Օրումիյյէ) — Մարաղա, Ուշնուէ — (Ուշնովիյյէ) — Միյանաջ — (Միյանէ) — Մարանդ, Բարզանդ եւ այլ քաղաքներ[26]:

Իբն-ի Հաուկալը Առանի իշխաններին համարում է Ազարբայջանի արքաներին ենթակայ եւ հարկատու: Նա իր գրքում այսպէս է գրում.

«Այս իշխանները ամէն տարի Ազարբայջանի արքաներին վճարում էին որոշուած մի տուրք եւ այլ պիտոյքներ: Իւրաքանչիւր իշխան ենթարկւում էր իր շահին եւ իրեն պատկանող տուրքը վճարում առանց ընդմիջումի եւ առանց առարկութեան: Իբն-ի Աբի Սաջը երբեմն փոքր մի բան էլ ընդունում էր որպէս նուէր: Սակայն, երբ այս երկիրը գրաւուեց մարզպան բին Մոհամմադ Մուսաֆիրր կոչուող եւ Սէլար — (կամ Սալար) — անունով հռչակուածի կողմից, նա հաստատեց մատեաններ եւ օրէնքներ եւ լաւագոյնս գանձեց տուրքերն ու մնացորդները»[27]:

Հռչակաւոր գիտնական եւ ճանապարհորդ Աբու Աբդուլլահ Բաշարի Մուկադդասին իր «Ահսան ալ թակասիմ ֆի մա՛ արէֆաթ էլ ակալիմ» գրքում, որ գրել է հիջրեթի 4րդ դարի երկրորդ կէսում — (շուրջ 1000 թուին) — Իրանի հողային տարածքը բաժանել է ութ երկրամասերի եւ Ազարբայջանը յիշատակել է Առանից անջատ եւ առանձին: Այս գիտնականը Ազարբայջանը, Առանը եւ Հայաստանը միմեանցից անջատ է համարում, իսկ Առանի մասին այսպէս է գրում.

«Առանը կղզու նման մի երկիր է, որ գտնւում է Կասպից ծովի եւ Արաքս գետի միջեւ: Նահրալ Մալէք — (Կուր) — գետը նրան կտրում է երկայնքից: Նրա կենտրոնը Պարտաւն է, եւ նրա այլ քաղաքները հետեւեալներն են. Թիֆլիս, Կալա՛ա, Խանան, Շամքոր — (Շամխոր) — Ջանզէ — (Գանձակ) — Բարտիզ, Շամախի, Շիրւան, Բաքույէ — (Բագու) — Շաբրան, Դէրբենդ, Կապաղակ, Շաքէ եւ Մալազկերտ — (Բալաշկերտ) »[28]:



Ազարբայջանի, Առանի և Հայաստանի քարտէզը, Հիջրեթի չորրորդ դարում - շուրջ 950 թիւ- փոխառութիւն Սուրաթ-իլ-Արզ գրքից, գործ Իբն-ի Հաւկալի, թարգմանութիւն Դր.Ջաաֆար Շոարի, Բոնեադ-է Ֆարհանգ-է Իրան հրատարակութիւն, 1966թ., էջ 82:

Իսթախրին՝ հիջրեթի 3րդ եւ 4րդ դարերի (850-934 թթ.) ճանապարհորդը, Ազարբայջանի եւ Առանի մասին խօսելիս նրանց յիշատակում է առանձին: Նա իր գրքում մի գլուխ ունի, որ կոչւում է «Արմինիայի, Առանի եւ Ազարբէյջանի կերպարը»: Նա եւս, Մուկադդաս-ի, Իբն-ի Հաուկալի եւ Իբն-ի Ֆակիհի նման, Առանը անջատ է համարում Ազարբայջանից եւ Առանի քաղաքները այսպէս է յիշատակում. «Բայլական, Վարսան, Բարտիզ, — (Բարզանգ) — Շամախի, Շիրւան, Ապխազէ, Շաբրան, Կապաղակ, Շաքէ, Գանձակ, Շամքոր»[29]:

Նա այս գրքում Պարտաւը համարում է Առանի մայրաքաղաքը, իսկ Արդաբիլը որպէս Ազարբայջանի կենտրոնը[30]: Նա եւս Կասպից ծովի արեւմտեան կողմը անուանում է Առան[31]:

Եակութ Համաւին (1178-1229) իր «Մոջամ ալ Բուլդան» գրքի մէջ Առանի մասին գրում է.

«Առանը մի իրանական անուն է, մի լայնատարած երկիր՝ բազմաթիւ քաղաքներով, որոնցից մէկը Զանզա է կոչւում. սա այն քաղաքն է, որ մարդիկ Գանձակ են անուանում. ինչպէս նաեւ Պարտաւ, Շամքոր եւ Բայլական:

Ազարբայջանի եւ Առանի միջեւ մի գետ կայ, որը Արաքս է կոչւում: Այն, ինչ այդ գետի հիւսիսում եւ արեւմուտքում է գտնւում, պատկանում է Առանին, իսկ ինչ որ նրա հարաւում է գտնւում, Ազարբայջանին է պատկանում»[32]:

Այս գրուածքից բացորոշ կերպով կարելի է եզրակացնել, որ Ազարբայջանը գտնւում է Արաքսի հարաւում, իսկ Առանը հիւսիսում, եւ այսպիսով պարզւում է, որ Առանի երկիրը Ազարբայջան անունը չունէր:

Աբուլ Ֆադան, որ հիջրեթի 732ին է մահացել — (1354 թիւ) —, իր «Թակվիմ ալ Բուլդան» գրքի մէջ յստակ կերպով գրում է, որ «Առանը» մի հոչակաւոր հողատարածք է, որը Ազարբայջանի հետ սահմանակից է»[33]:

Առանի եւ Ազարբայջանի միմեանցից անջատ լինելու մասին նա այսպէս է գրում.

«Հայաստանը, Առանը եւ Ազարբայջանը երեք մեծ երկրներ են, միմեանցից անջատ, որոնց աշխարհագէտները մէկ քարտէզի մէջ են ներկայացնում»[34]:

Համդուլլահ Մուստոֆի Ղազվինին (1281-1349 թթ.) իր «Նիւզհաթ ալ կուլուբ» գրքի երրորդ գլխի մէջ Ազարբայջանի քաղաքները այսպէս է յիշատակում.

«Թաւրիզ, Ուջան, Թասուջ, Արդաբիլ, Խալխալ, Դարմարզին, Շահրուդ, Մէշքին, Անար, Արջակ, Ահար, Թաքլիֆէ, Խիաւ, Դարաւարդ, Կալէ Քահրան,



Ազարբայջանի, Առանի եւ Հայաստանի քարտէզը, արտատպուած Մասալիք վա Մամալիք գրքից, հեղինակ Աբու Իսհակ Իբրահիմ Իսթախրի, աշխատասիրութեամբ Իրաջ Աֆշարի,Բոնգահ-է Թարջոմէ վա Նաշր-է Քեթաբ, 1968թ. էջ.154:

Քալիբար, Գիլան ֆասլուն, Մարդան կում, Նովզար, Խոյ, Սալմաստ, Ուրմիա, Ուշնուէ, Սարաւ — (Սարաբ) — Միանաջ — (Միանէ) — Գարմրուդ, Մարաղա, Դեհխարկան — (Դեհխարգան եւ կամ Դեհխորգան) — Նիլան, Մարանդ, Դիզմար, Զանջան — (Զանգան) — Զունուզ, Ազատ եւ Մաբույէ — (Մակու) —»[35]:

Ինչպէս տեսնում ենք, յիշեալ բոլոր քաղաքներն էլ Արաքսի հարաւումն են գտնւում, եւ սա մի պարզ փաստ է այն բանին, որ Արաքսը Ազարբայջան եւ Առան երկրների միջեւ գտնուող տարածութիւնն ու սահմանն էր: Նոյն հեղինակը Առանի մասին խօսելիս Արաքս եւ Կուր գետերի միջեւ գտնուող մասը անուանել է Առան, իսկ Կուր գետից այն կողմը անուանել է Շիրւան[36]:

Վերոյիշեալ բոլոր անուանի ճանապարհորդների ու հեղինակների վկայութիւնները հաստատում են, որ Առանը մի երկիր էր՝ բոլորովին առանձին եւ անջատ Ազարբայջանից, եւ որ անցեալում երբէք Ազարբայջան անունը Առանի վրայ չի դրուել:

Մինչեւ հիջրեթի 7րդ եւ 8րդ դարերը — (13րդ եւ 14րդ դարերը) —, Առան անունը շատ յաճախ է յիշատակւում, իսկ հետագայ դարերում աւելի քիչ է խօսւում Առանի մասին:

Լենկ Թեմուրի արշաւանքների մանրամասները գրելիս, ինչպէս նաեւ Աղ-կոյունլուների եւ Կարա-կոյունլուների տիրապետութեան շրջանի պատմութեան մէջ, աւելի սակաւ ենք հանդիպում Առան տեղանուան. միմիայն Ղարաբաղի մասին խօսելիս այն անուանում են «Ղարաբաղ Առան»[37]:

Իսկանդար Բէկ Մունշին, որ Սեֆեւիների շրջանում էր ապրում, երկու կամ երեք անգամ յիշում է Առան անունը: Նա Առանն ու Շիրւանը համարում է Ազարբայջանից անջատ: Իսկանդար Բէկը իր «Ալամարայէ Աբբասի» գրքում յիշատակում է «Ազարբայջանի, Շիրւանի եւ Վրաստանի Առանի գիւղաքաղաքները»[38]:

«Բուրհանէ Կաթէ» բառգրքի մէջ, որ գրուել է հիջրեթի 1062 (1652), Արաքս անունը այսպէս է.

«Արաքս — (գրւում եւ արտասանւում է Արաս) — հռչակաւոր մի գետի անունն է, որ Թիֆլիսի եզերքից է անցնում եւ հոսում է Ազարբայջանի եւ Առանի միջեւ»[39]:

Գուցէ աշխարհագրական տեսակէտից Արաքսի հունը մի քիչ անճիշտ է եւ խառն, սակայն մի բան անվիճելի է, որ յիշեալ գրքի հեղինակը եւս, անցեալի այլ հեղինակների նման, այդ գետը համարել է Ազարբայջանի եւ Առանի միջեւ գտնուող սահմանազատիչ գիծն ու մարզը եւ միմիայն Արաքսի հարաւային ափին գտնուող երկիրն է Ազարբայջան անուանել:

Բոլոր այս աղբիւրները, ինչպէս նաեւ բազմաթիւ այլ փաստաթղթեր ու վաւերագրեր բացորոշ ապացոյցներն են այն բանի, որ Առանի եւ Շիրւանի հողատարածքները միշտ էլ Ադարբայգանից անջատ են եղել, եւ որ երբէք Ազարբայջան անունը Առանի վրայ չի դրուել:

Հնադարեան եւ իսլամական դարաշրջանների պատմագիրների եւ աշխարհագրագէտների փաստարկումները, Ազարբայջանի աշխարհագրական վայրի մասին, ընթերցողների ուշադրութեանը ներկայացնելուց յետոյ, այժմ պիտի ջանանք՝ այս նիւթի շուրջ ռուս գիտնականների եւ խորհրդային հետազօտողների փաստարկներն ու դիտողութիւնները ներկայացնել:

Ռուս պատմաբան Եանովսկին, որ 19րդ դարում էր ապրում, իր աշխատութեան մէջ, որ կոչւում է «Հին դարերի Կովկասեան Ալբանիոյ մասին» եւ որը լոյս է տեսել 19րդ դարի առաջին կէսի վերջերին, հիմնուելով հնադարեան պատմագիրների եւ աշխարհագրագէտների գործերի վրայ, այսպէս է գրում.

«Հին դարերի Ալբանիան գտնւում էր Ալազանի, Շաքէի եւ Շիրւանի տափաստանում»[40]:

Նա, հիմնուելով Պտղոմէոսի գրուածքի վրայ, Ալբանիոյ հիւսիսային գետը անուանել է Սումգայիթ գետ, որ հոսում է Ապշերոն թերակղզում[41]:

Եանովսկին, խօսելով Կովկասեան Ալբանիոյ գետերի մասին եւ յենուելով հին պատմագիրների եւ աշխարհագրագէտների գործերի վրայ, գրում է. «Կովկասեան Ալբանիոյ գետերը, ըստ հնադարեան գրուածքների, թափւում են Կուր գետի, եւ ոչ թէ Կասպից ծովի մէջ[42]:

Անցեալի մի այլ ռուս պատմաբան Շոպենը, հիմնուելով հին պատմագիրների, մասնաւորաբար հայ պատմագիրների վրայ, համոզուած է, որ Կովկասեան Ալբանիոյ տերիտորիան գտնւում էր Կուր գետի աջ եւ ձախ ափերին, ու նաեւ Կասպից ծովի ափին:

Ռուս ականաւոր գիտնական եւ հետազօտող Դորնը, Կովկասեան Ալբանիոյ մասին իր կարծիքը արտայայտելիս, այսպէս է գրում.

«Ալբանիան սահմանափակուած էր սարմատների երկրով — (Կերաւնեան լեռներ) —, Իբերիա — (Վրաստան) — երկրով, Ալազան գետով, Հայաստանով, Արաքս եւ Կուր գետերի միաւորման կէտով ու Կասպից ծովով, եւ ներառում էր Շաքէն, Շիրւանը եւ հարաւային Դաղիստանից մինչեւ Դերբենդ»[43]:

Կովկասցի գիտնական Ի. Ալիեւը, Դորնի աշխատութեան մասին կարծիք յայտնելիս, այսպէս է արտայայտւում. «Դորնը ընդհանրապէս ճիշտ ձեւով է յիշում Ալբանիա երկիրը»[44]:

Հայ պատմաբան Բարխուդարեանը իր «Պատմութիւն Աղուանից» աշխատութեան մէջ, որ տպագրուել է 1902 թ. Վաղարշապատում, ասում է, որ «Կովկասեան Ալբանիան արեւելքից սահմանագծուած էր Կասպից ծովի ափերով եւ Արաքս գետով, հիւսիսում վերջ էր գտնում Դերբենդով, արեւմուտքում Ալազանի, Խունակերտ (Ղունարակերտ) եւ Զորագետ (Dzoraget) գետերով, իսկ հարաւում Արցախի լեռներով եւ Գարգար գետով, մինչեւ նրա եւ Արաքս գետի հանդիպման կէտը»[45]:

Բարխուդարեանի կարծիքով, Հայաստանում Արշակունիների թագաւորութեան ժամանակ, Կուր գետը Ալբանիոյ հարաւային սահմանն էր, բայց 5րդ դարում Ալբանիան իր հողային տարածքին միացրեց նաեւ Ուտիքն ու Արցախը[46]:

Մարկուարտը, գրելով Իրանի սահմանների մասին եւ յենուելով Թէոփանէս Միտիլինեցու գրածի վրայ, այսպէս է արտայայտուել.

«Առանը պարունակում էր Շիրւանի կալուածները, Կապաղակը (Kabala), Շաքէն եւ Մուղանը, եւ գտնւում էր Կուր եւ Արաքս գետերի միջեւ. այդ երկրի մեծ քաղաքը Պարտաւն էր[47]:

Ըստ ռուս անուանի գիտնական Բարտոլդի, Առանը նոյն ինքը Ալբանիան է, որը սկսած Դերբենդից տարածւում էր մինչեւ Թիֆլիս, եւ նրա հարաւ ու հարաւ-արեւմտեան սահմանները աւարտւում էին Արաքս գետով, յատկապէս ընդգծելով, որ

«Ալբանիան հին դարերում եւ մինչեւ անգամ, երբ յետագայում Առան կոչուեց, այն երկիրն էր, որ հիւսիս-արեւելքում Դերբենդի շրջանից տարածւում էր մինչեւ Թիֆլիս քաղաքը արեւմուտքում եւ մինչեւ Արաքս գետը հարաւ եւ հարաւ-արեւմուտքում: Յետագայում նորագոյն հեղինակները Շիրւանի եւ Ազարբայջանի միջեւ գտնուող երկիրը Առան անուանեցին: Եակութը, Մոջամ ալ-Բուլդանի մէջ, երկու գետերի՝ Կուր եւ Արաքսի միջեւ գտնուող տարածութիւնն էր Առան անուանել[48]:

Իսկ Առանի մայրաքաղաքի մասին նա այսպէս է գրում. «Պարտաւ քաղաքը, ուր տեղափոխուեց Առանի մայրաքաղաքը, 6րդ դարում գտնւում էր Թարթար գետի եզերքին[49]:

Կրիմսկին Կովկասեան Ալբանիոյ սահմանների մասին այսպէս է գրում.

«Ալբանիոյ հողային տարածքը Կուր գետի աջ եւ ձախ ափերից եւ Իբերիայից — (Վրաստան) — տարածւում էր մինչեւ Կասպից ծովը: Գետի երկու կողմերում էլ ապրում էին ալբանացիներ: Յետագայում, Ալբանիան կամ Աղուանքը Առան կոչուեց: Այդ երկիրը, Դերբենդից մինչեւ Վրաստան, տարածւում էր Կուր գետի երկու կողմերը, իսկ յետագայում Առանը միմիայն Կուր գետի աջ եզերքին տարածուեց՝ ներառելով Կուր եւ Արաքս գետերի միջեւ գտնուող տարածքը[50]:

Կրիմսկին Կապաղակը համարում է Ալբանիոյ հնագոյն քաղաքներից մէկը[51]:

Պրոֆ. Բարտոլդը Առանի եւ Ազարբայջանի սահմանների մասին այսպէս է գրում.

«Արաքս գետը, որ ներկայիս իրանեան Ազարբայջանը անջատում է Կովկասից, հնադարեան շրջաններում տոհմային եւ ցեղային տեսակէտից վճռական սահման էր իրանական երկիր Մարաստանի եւ Ալբանիա երկրների միջեւ, եւ ըստ Ն. Մառի, այնտեղի ցեղերը յաբեթական ծագում ունէին[52]:

Շարունակելով իր խօսքը, նա գրում է.«Ազարբայջանի եւ Ալբանիոյ միջեւ եղած տոհմային եւ ցեղային տարբերութիւնները մինչեւ անգամ իսլամական շրջանում էլ չվերացան[53]:

Պրոֆ. Բարտոլդի գրածից կարելի է հեշտութեամբ եզրակացնել, որ Ալբանիա երկիրը ոչ միայն Փոքր Միդիայից (Ազարբայջան) անջատ էր, այլ նաեւ այն, որ այդ երկու երկրների ժողովուրդներն էլ նոյն ցեղին չէին պատկանում: Ազարբայջանի ժողովուրդը իրանական ցեղի մարեր էին, մինչ Կովկասեան Ալբանիոյ մարդիկ, ըստ ակադեմիկոս Մառի յայտնած կարծիքին, յաբեթական ցեղերից էին: Մենք քիչ յետոյ կտեսնենք, որ այդ երկու երկրների ժողովրդի լեզուն եւ կրօնն էլ նոյնը չէին:

Երեմեանը իր «Մովսէս Կաղանկատուացի» յօդուածի մէջ խօսում է Ալբանիոյ Վարազ-Տրդատ պարթեւ արքայազնի կատարած ճամփորդութեան եւ խազարների Ալփ-Իլիթեր (Alp Ilitver) խաքանի պալատը այցելելու մասին եւ գրում, որ «Նա այս ճամփորդութիւնը կատարեց, անցնելով Փարթաւէ — Պարտաւ-ից մինչեւ մեր օրերի Մախաչկալա տարածութիւնը կտրելով[54]:

Այս կէտը հաստատում է Կրիմսկու եւ Բարտոլդի տեսակէտները, ըստ որի Պարտաւը Կովկասեան Ալբանիոյ ամենահին քաղաքներից մէկը եւ նրա մայրաքաղաքն էին համարում:

Խորհրդային մի այլ ուսումնասիրող Եամպոլսկին իր յօդուածի մէջ բացարձակ կերպով գրեց, որ «Ալբանիան (Առանը) գտնւում էր Աթրուփաթէնի (Ազարբայջանի) հիւսիսում, եւ յիշեալ երկրների միջեւ գտնուող սահմանագիծը Կուր եւ Արաքս գետերն էին[55]:

Թէեւ Եամպոլսկին իր յօդուածը գրել է Ազարբայջանը Կովկասին կցելու քարոզչութեան թէժ շրջանում, ու թէեւ նա, հակառակ Բարտոլդին, լծուեց այդ քարոզչութեան աշխատանքին, այդուհանդերձ պարտաւորուեց մի շարք ճշմարտութիւններ արտայայտել եւ Արաքս գետը ճանաչել որպէս երկու երկրների՝ Ազարբայջանի եւ Առանի սահմանագիծը:

Բոլոր այս աղբիւրները եւ շատ այլ փաստաթղթեր եւ վաւերագրեր պարզորոշ կերպով փաստում են, որ Կովկասեան Ալբանիա երկիրը, այլ խօսքով Առանը եւ Շիւրանը, միշտ էլ Ազարբայջանից անջատ են եղել, եւ որ անցեալում ոչ մի ժամանակ Առանը Ազարբայջան չի կոչուել:

Եթէ քննութեան ենթարկենք Իրանի Արտաքին Մինիստրութեան եւ ցարական Ռուսիոյ փաստաթղթերն ու վաւերագրերը, ինչպէս նաեւ Ռուսաստանում մինչեւ 1918 թիւը գրուած գրքերը, պարզ կերպով կտեսնենք, որ Առան երկիրը եւ Շիրւանը երբէք Ազարբայջան անունը չեն ունեցել, այլ երբեմն պարզապէս Առան եւ Շիրւան, իսկ երբեմն էլ Կովկաս են կոչուել:

Խնդիրը պարզաբանելու համար նշենք մի փաստաթուղթ, որը 1917 թուի Հոկտեմբերեան յեղափոխութիւնից առաջ տպագրուել է Ռուսաստանում: Այս փաստաթուղթը ցարական Ռուսաստանի կայսրութեան վաւերագրերից է, որից տողերիս հեղինակը օգտուել է: Միաժամանակ այդ փաստաթուղթը ընթերցողների ուշադրութեան է ներկայացւում նոյնութեամբ եւ իր ռուսերէն բնագրով, որպէսզի ոչ մի կասկածի ու տարակուսանքի տեղիք չտայ:

Ռուսական Հանրագիտարանում, որի տպագրութիւնն ու հրապարակումը սկսեց 1890 թուին եւ լոյս տեսաւ Ռուսական կայսրութեան մայրաքաղաք Սանկտ-Պետերբուրգում եւ Գերմանիոյ Լայպցիգ քաղաքում, «Ալբանիա» յօդուածի տակ այսպէս է գրուած.

«Ալբանիա. անունն է մի հնադարեան երկրի, որը գտնւում է Կովկասի արեւելեան եւ հարաւային մասում, Սեւ ծովի (Pontus Euxinus) եւ Կասպից ծովի միջեւ, Հայաստանի հիւսիսում, եւ Կիւրոս —Կուր— գետը նրա սահմանն էր: Այդ երկրի բնակիչները ներկայի Շիրւանի եւ հարաւային Դաղստանի ժողովուրդն է[56]:

Յիշեալ Հանրագիտարանում նաեւ ասուած է, որ «ալբանները Հռոմի իշխանութեանն էին ենթարկւում[57]:

Նոյն Հանրագիտարանի 13րդ հատորում Կովկասի աշխարհագրական լայնքն ու երկայնքը պարզորոշ կերպով ցոյց է տրուած եւ ասուած է, որ այդ համարւում է 46,5 հիւսիսային լայնութեան եւ 38,5 աստիճանի միջեւ: Այդ Հանրագիտարանի էջերի մէջ բացարձակ կերպով գրուած է, որ «Այս տարածքը (Կովկասը) հարաւում Արաքս գետով վերջ է գտնում[58]»:

Նոյն հատորում յիշւում են Կովկասի եւ Անդրկովկասի քաղաքների հոյլը, որ բաժանուած էր 12 նահանգների: Այդ նահանգները հետեւեալներն են.

«Ստաւրոպոլ, Թերեք, Կուբան, Սեւ ծովի շրջան, Քութայիս, Թիֆլիս, Երեւան, Բագու, Ելիզաւետպոլ — (Գանձակ) — Դաղստան, Կարս, Զաքաթալա[59]:



ЭНЦИКЛОПЕДИЧЕСКІЙ СЛОВАРЬ,

ПРОФЕССОРА К. Г. АНДРЕЕВСКАГО.

ТОМЪ I.

А—Алтай.

ИЗДАТЕЛИ: Ф. А. Брокгаузъ (Лейпцигъ). И. А. Ефронъ (С.-Петербургъ).

С.-ПЕТЕРБУРГЪ.

1890.

359

Албанія. Это имя носила в древних сказ. включая часть нынешней, заключавшую в... на Кавказе, между Черным морем (Понтом Евксинским) и Каспийским морем, от Сарыт от Армении (границу ее которой составляла река Кирос), пятнадцать Куры. Обитатели этой страны, составлявшие пре... славянское племя, называемому Шарданг ... Дагестанцев, называвшихся у древних... Они люди весьма простых нравов и честного характера, а отлич... от этих, как первобытных... грузин или лухи и ингушинцы. По большей части, это были пешцы, вероятно, туранского племени. Историческую роль она играла лишь случайно, во время похода Пирея против Аркеанов (56 до Р. Х.), когда вся страна, составлявшая союз 11 племен или управлявшихся собственных... властительных князей, во главе которых стоял царь, была временно вынуждена признать над собой верховную власть Рима.

818—819

Кавказскій край.

Кавказскій край представляетъ обширную страну, расположенную (между 46° и 35° ... ... данныя о народонаселении и статистическія сведенія губерній, областей и округовъ Кавказскаго края приведутся въ нижеслѣдующихъ таблицахъ:

	Площадь въ кв. верстахъ	Населеніе (1889 г.)	Населеніе на 1 кв. верстѣ
Губерніи Кавказскія:			
Ставропольская губ.	52251	595166	11,4
Терская обл.	61016	778393	12,7
Кубанская »	82099	1551319	18,7
Дагестанская обл.	6124	361179	59
Закавказье:			
Кутаисская губ.	32046	1015940	32,8
Тифлисская »	25641	1064431	39,7
Елисаветпольская »	24149	703511	28,8
Бакинская »	34530	762528	22,4
Елисаветпольск. »	28773	795969	30,6
Тифлисская обл.	26147	609380	23,3
Карсская обл.	16361	214471	13,1
Закатальскій окр.	9544	74444	9,11
Кавказскій край	414139	8858486	20,2

Արտատպուած Ռուսական Մեծ Հանրագիտարանից, առաջին հատոր, Սանկտ-Պետերբուրգ, 1890թ. էջ 359:



ЭНЦИКЛОПЕДИЧЕСКІЙ СЛОВАРЬ.

ТОМЪ XIII.

Имидоэфиры—Историческая школа.

ИЗДАТЕЛИ: Ф. А. Брокгаузъ (Лейпцигъ). И. А. Ефронъ (С.-Петербургъ).

С.-ПЕТЕРБУРГЪ.

1894.

212-213

Азербейджанъ, или Азербейджанъ ... ...

Այս գլխի տակ ոչ մի յիշատակութիւն չկայ «Ազարբայջան» անուան շուրջ. նաեւ այդ երկրում ապրող «ազարբայջանցի» ժողովրդի մասին եւս ակնարկ անգամ չկայ, այլ այդ բովանդակ հրատարակութեան մէջ Կովկասի թրքախօսները «թաթար» են անուանւում: Նաեւ յիշեալ Հանրագիտարանի մէջ Առան անունը չի յիշւում, սակայն կայ յիշատակութիւն Շիրւանի մասին:

Եթէ Արաքս գետի հիւսիսում «Ազարբայջան» անունով մի երկրամաս գոյութիւն ունեցած լինէր, անկասկած այս Հանրագիտարանի հատորների մէջ եւս նրա անունը կյիշուէր: Սակայն ամենադոյզն ակնարկն անգամ չկայ, որ Արաքսի հիւսիսում «Ազարբայջան» անունով մի երկիր է եղել:

Նոյն Հանրագիտարանի առաջին հատորի մէջ «Ազարբայջան» անուան տակ այսպէս է գրուած.

«Ազարբայջան կամ Ադրբէյջան — Ատրի, իմա՛ կրակի երկիր, պահլաւերէնով Աթուրփեթգան, հայերէնով Ատրպատական — Իրանի հիւսիս-արեւմտեան հարուստ եւ ճարտարարուեստական նահանգն է: Ազարբայջանը հարաւից սահմանուած է Իրանի Քիւրդիստանով — (Արդիալի նահանգ) — եւ Արաղ-է Աջամ-ով — (Մարաստան) —, արեւմուտքում թուրքական Քիւրդիստանով եւ թուրքա-Հայաստանով[60], իսկ հիւսիսում ռուսական Հայաստանով եւ Կովկասի հարաւով, որը Արաքս գետը անջատում է նրանից, իսկ արեւելքում Գիլան նահանգով, Կասպից ծովի ափին .... Ազարբայջանի տարածքը 104,840 քառակուսի կիլոմետր է ..... 17րդ դարում օսմանեան թիւրքերը մեծ վնասներ հասցրեցին Ազարբայջանին: Որպէս Իրանի փոխարքայանիստ վայր, — (ինչպէս Աբբաս Միրզան) — Ազարբայջանը, լինելով սահմանամերձ նահանգ, շատ մեծ կարեւորութիւն ունի[61]:

Ներկայացուած նիւթերից մի քանիսը արժանի են առաւել ուշադրութեան.

1 — Առաջին կէտը Կովկասի աշխարհագրական երկայնութեան եւ լայնութեան հետ է առնչւում, որը տարբերւում է Ազարբայջանի աշխարհագրական երկայնութիւնից եւ լայնութիւնից: Եթէ դիմենք Սովետական նոր Հանրագիտարանին եւ կից քարտէզին, որը սխալմամբ Ազէրբայջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւն է կոչուել, կպարզուի, որ այդ հողատարածքի հարաւը համընկնում է նոյն 38,5 աստիճան հիւսիսային լայնութեան հետ, որը համապատասխանում է Ռուսական կայսրութեան Հանրագիտարանի ներկայացրած աշխարհագրական լայնութեան հետ[62]: Միակ տարբերութիւնը այն է, որ ցարական Ռուսաստանի օրօք Արաքսի հիւսիսում եւ Կովկասի հարաւում գտնուող հողային տարածքը Ազարբայջան չէր կոչւում:

2 — Ռուսական կայսրութեան շրջանում հրատարակուած Հանրագիտարանի մէջ երբէք «Իրանի Ազարբայջան» կամ «Ռուսական Ազարբայջան» անուանումները տեղ չեն գտել, ինչպէս արուել է «Տաճկական Հայաստան» եւ «Ռուսական Հայաստան» երկրամասերի նկատմամբ: Խօսքը գնում է միայն մէկ «Ազարբայջան»ի մասին եւ այն էլ «Իրանի Ազարբայջան»ի մասին է:

3 — Ըստ Ռուսական կայսրութեան շրջանին հրատարակուած Հանրագիտարանի, Ազարբայջանի հողային տարածքը հիւսիսում սահմանափակւում էր Արաքս գետով: Այսպիսով պարզւում է, որ միւս կողմը, այլ խօսքով Արաքսի հիւսիսը, Ազարբայջան չէր:

4 — Չորրորդ կէտը հիմնուած է թուերի վրայ, ուստի աւելի պարզ է ու ճշգրիտ եւ վերաբերում է Ազարբայջանի ընդհանուր մակերեսին: Ցարական Ռուսաստանի Հանրագիտարանում Ազարբայջանի տարածութիւնը 104,840 քառակուսի կիլոմետր է նշանակուած, եւ մենք պիտի տեսնենք, թէ որ չափով մեզ կմօտեցնի իրականութեան:

Խնդիրը պարզելու համար նախ սկսենք քննել Սովետական Աշխարհագրական Հանրագիտարանը, որի հրատարակումը Խորհրդային Միութեան մայրաքաղաք Մոսկուայում սկսեց 1960 թուին: Յիշեալ Աշխարհագրական Հանրագիտարանի առաջին հատորում ներկայիս «Սովետական Ազէրբայջան» եւ երբեմն էլ «Հիւսիսային Ազէրբայջան» կոչուող երկրամասի մակերեսը 86,600 քառակուսի կիլոմետր է գրուած[63]: Նոյն էջում իրանական Ազարբայջանի մակերեսը 100,000 քառակուսի կիլոմետրից աւելին է նշանակուած[64]:

Եթէ երբեւէ Արաքս գետի հիւսիսը «Ազարբայջան» կոչուած լինէր, այդ պարագային ցարական Ռուսաստանի Հանրագիտարանում, որը հրատարակուել է 19րդ դարի վերջերին, Ազարբայջանի ընդհանուր մակերեսը շուրջ 190,000 քառակուսի կիլոմետր պիտի նշանակուած լինէր: Ի՞նչ է պատճառը, որ Ազարբայջանի մակերեսը, որը ճանաչուած էր ռուս Ցարական պետութեան եւ երկրի գիտական շրջանակների եւ ուսումնասիրութեանց հաստատութիւնների կողմից, համապատասխանում է իրական Ազարբայջանի — Իրանեան Ազարբայջանի— մակերեսի հետ: Արդեօք հէնց այս կէտը ցոյց չի տալիս, որ յետագայում, ինչպէս որ պիտի տեսնենք, ուրիշները յափշտակել են «Ազարբայջան» անունը եւ Արաքս գետի հիւսիսում գտնուող մի երկրամասի վրայ են դրել:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Հանգուցեալ Քասարեին Քոր կոչուող երկու գետերը, մէկը Ֆարսում եւ միւսը Կովկասում, «Քուր» է անուանում եւ համոզուած է, որ այս երկու գետերը Կիւրոս Մեծի անունով կոչւում են «Քուր»: Նա Կիւրոս անունն էլ համարում է «Կիւր» անուան յունական ձեւը: Բայց սովետական գիտնական պրոֆ. Աբաեւը նոյն կարծիքին չէ: — Տես պրոֆ. Վ. Ի. Աբաեւի յօդուածը «Իրանական անձնական անունների ստուգաբանութիւնը» վերտառութեամբ եւ գրքիս հեղինակի թարգմանութեամբ (Բարրասիհայէ Թարիխի հանդէս, 12րդ տարի, թիւ 3, էջ 211-244): Ի դէպ, հին Յունաստանում Կուր գետի ափին գտնուող քաղաքը «Կուրոպոլիս» էին անուանում: Տողերիս հեղինակը ուզում է նշել, որ Կուր գետը Վրաստանում անցնում է Թիֆլիս քաղաքից, եւ վրացիները այդ գետը կոչում են «Կուրո» (Kuro): Պրոֆ. Աբաեւը համոզուած է, որ վրացիները այդ անունը վերցրել են օսեթական «Կիւր» (Kuro) անունից, եւ քանի որ վրացիների մօտ օտար բառերը ընդհանրապէս վերջանում են «Օ» հնչիւնով, ուստի այս անունը եւս ստացել է «Կիւրո» (Kuro) ձեւը: Այնինչ ցոյց է տալիս, որ այս գետը Կիւրոս անունի հետ է շաղկապուած եղել, այն է, որ մի շարք իսլամական շրջանի աշխարհագրագէտներ, ի շարս դրանց Աբու Աբդալլահ Բաշարի Մուկադդասին, այս գետը անուանել են «Նահր ալ Մալէք», իմա՛ Արքայի գետ:

[2] Ալազան — Ալազանի — անունն է մի գետի, որ անցնելով Վրաստանից եւ Կովկասեան Ալբանիայից Առան՝ թափւում է Կուր գետի մէջ:

[3] Կապաղակը մի հնադարեան քաղաք է, որ իսլամական շրջանի հեղինակների գործերում, ի միջի այլոց Իբնի Ֆակիհի «Ալբուդան» եւ Իբնի-Խորդադբեհի «Ալմասալիք վալ Մամալիք» եւ այլ գործերում «Կիպլա» է գրուած: Պտղոմեոսը նրան Խբլա» է անուանել, եւ թւում է, որ «Կիպլա» անունը առնուած է «Խբլա» բառից:

[4] Plinii Secundi naturalis historia, D. Detlefsen recens uit, vol. 1-2, Berol., 1866-1882.

[5] Նոյն տեղում:

[6] В. Н. Левиатов, Азербайджан с V в. д. н э. по III в. н. э., «Изд. АН Азербайджанской ССР, 1950, № 1.

[7] Strabonis, Geographica, rec. Commentario crit inst. G.Kramer, vol. 1-3, Berol, 1844-1852.

[8] М. Хоренский, История Армении, пер. Н. О. Эмина, Москва, 1893, стр. 58.

[9] Շաքէ, Շաքաշ եւ Սաքասենա, Կովկասում գտնուող «Շաքի» քաղաքի անուան երեք տարբեր արտասանութիւններն են: Այժմ, մերժելով այդ քաղաքի վաղեմի անունը, նրան Նուխա են կոչում:

[10] Анании Ширакаци, Армянская география VII в. СПб, 1877.

[11] М. Каганкатваци, История Агван, пер. К. Патканова, СПб., 1861, стр. 257.

[12] Ю. Кулаковский, История Византии, т.3, Киев, 1915, стр. 145-148.

[13] Տես ծանօթ. 11, էջ 154:

[14] Իբն-ի Խորդադբեհ, Աբուլկասիմ Ուբեյդուլլահ բին Աբդուլլահ, «Ալմասալիք վալ-Մամալիք», էջ 118-120:

[15] Իբնի-Ֆակիհ, Աբուբաքր Ահմադ, բին-Մուհամմադ, բին-Իսհակ Համադանի, «Ալբուլդան»ի համառօտ թարգմանութիւն, Իրանին վերաբերեալ մասը, թարգմանեց Հ. Մասուդ, Բոնեադէ Ֆարհանգէ Իրանի հրատարակութիւն, Թեհրան 1970, էջ 129-130:

[16] Նոյն տեղում, էջ 134:

[17] Վարսանը արաբացուած ձեւն է պարթեւական Վարդան անուան, որը հայերէնի մէջ «Վարդան» է դարձել: Վարսանը Վարդան կամ «Վարդանակերտ» քաղաքի անունն է, որ, ըստ երեւոյթին, Սասանեան շրջանի հայ ազնուական Վարդան Մամիկոնեանի անունն է կրում:

[18] Տես ծանօթ. 15, էջ 128:

[19] Նոյն տեղում, էջ 139:

[20] Իբն-ի Հաուկալ, Սուրաթ-իլ, Արզ, թարգման. Դր. Ջաաֆար Շոար, Բոնեադ-է Ֆարհանգէ Իրանի հրատարակութիւն, Թեհրան 1966, էջ 128:

[21] Նոյն տեղում, էջ 82:

[22] Պարտաւ. այս անունը որոշ գրուածքներում, ինչպէս եակութ Համաւիի, Իբն-ի Հաուկալի եւ մի քանի ուրիշների գործերում գրուած է Բարզաէ, այլ գրուածքներում, ինչպէս Շարաֆնամէ եւ այլն, գործածւում է Բարդաա ձեւի տակ, եւ որոշ բանաստեղծների եւ գրողների մօտ, ի շարս դրանց, Նիզամու Խամսէի եւ Հուդուդ ալ Ալամի մէջ Բարդա է գրուած: Մարկուարտը իր Իրանշահր գրքի մէջ գրում է, որ Բարդա բառը Պարթեւ — Պահլաւ — անուան արաբացուած ձեւն է: Այս քաղաքը որոշ ժամանակ Առանի կենտրոնն էր: Ասում են, թէ անցեալում այս քաղաքը Հորում էր կոչւում: Բալազորին գրում է, որ յիշեալ քաղաքը Սասանեան արքայ Կօբադ — իմա՛ Կաւատ — առաջինի օրերին է կառուցուել, իսկ այսօր Կովկասի ժողովուրդների մօտ «Բարդէ» — իմա՛ ստրուկ — է արտասանւում: Որոշ բառարաններում Բարդա անունը «Բարդէ դան» է գրուած եւ ասւում է, որ այդ քաղաքում ստրուկների շուկայ է եղել:

[23] Ջանզէ տեղանունը Գանձակ եւ Գանջէ բառերի արաբացուած ձեւն է: Այս անունով վայրեր Իրանում շատ կան: Մի գիւղ Մեշեդի շրջանում, նաեւ մի ուրիշը Գիլանում, Բուդբարի շրջանում, այդ անունն ունեն: Որոշ ուսումնասիրողներ Աֆղանիստանի Ղազնէ անունն էլ համարում են Գանջէի այլ տարբերակը: Առանում եւ Ազարբայջանում եւս նոյն անունով երկու քաղաքներ կան: Դրանցից մէկը մի սուրբ վայր է, որ Ատր Կուշասպի ատրուշանի վայրն էր եղել, իսկ միւսը մի քաղաք է այդ անունով, որ գտնւում է Առանում:

[24] Այս անունը հին գրութիւնների մէջ Շամքուր է գրուած, բայց տեղի բնակիչները այդ վայրը «Շամխոր» են կոչում, ու այժմ էլ այս նոյն անունն ունի:

[25] Շէրւանը Առանում գտնուող մի քաղաքի անունն է, որը ասում են, թէ Խոսրով Անուշիրւանի հրամանով է հիմնուել: Յետագայում մի աւելի մեծ տարածք կոչուեց այդ անունով, եւ նրա տիրակալները Շիրանշահ տիտղոսը ստացան: Ոմանք այս երկրամասը անուանել են Շիրւան, բայց ըստ երեւոյթին, Շէրւանը աւելի ճիշտ պիտի լինի: Իսֆահանի մօտակայքում եւս այս անունով մի գաւառ գոյութիւն ունի, ինչպէս նաեւ Ղուչանում, ուր մի գաւառ կայ Շիրւան անունով:

[26] Տես ծանօթ. 20, էջ 81-100:

[27] Նոյն տեղում, էջ 95:

[28] Շամս-Էդ-դին Աբու Աբդալլահ Մուհամմադ բին Աբուբաքր Ալբանա Ալ-Շամի Ալմուկադդասի Ալմաարուֆ բէլ-Բաշար, Ահսան Ալթակասիմ ֆի Մաարէֆաթ-էլ-Ալիմ, Լեյդեն, 1906, էջ 259:

[29] Աբու-Իսհակ Իբրահիմ Իսթախրի, Մասալիք վա Մամալիք, պարսկերէն թարգմանութիւնը՝ հիջր. 5-6 դար, աշխատասիրեց Իրաջ Աֆշար, Բոնգահէ Թարջոմէ վա Նաշրէ Քեթաբ, Թեհրան 1968, էջ 158:

[30] Նոյն տեղում:

[31] Նոյն տեղում, էջ 176:

[32] Եակութ Համաւի, Մոոջամ ալ-Բուլդան, Լայպցիգ, 1866, էջ 183:

[33] Իմադ-իդ-Դին Իսմաիլ բին Մուհամմադ բին Օմար, Ալ-Մաարուֆ բէ Աբուլ-Ֆադա, Թակվիմ ալ Բուլդան, էջ 386:

[34] Նոյն տեղում, էջ 386:

[35] Համդուլլահ Մուսթոֆի, Նիւզհաթ-ուլ Կուլուբ, աշխատ. Դր. Մոհամմադ Դաբիր-Սիակի, Թեհրան, 1957, էջ 85 եւ 102:

[36] Նոյն տեղում, էջ 91-92:

[37] Տեսնել Մաթլա-ուլ-Սաադէյն, հեղ. Սամար կանդի:

[38] Տեսնել Թարիխէ Ալամարայէ Աբբասի, հեղ. Իսկանդար-բէկ Թորքեման-Մունշի, էջ 1-16:

[39] Մուհամմադ Հիւսէյն բին-Խալաֆ Թաբրիզի, ծածկանունով Բուրհան, Բուրհանէ Կաթի, աշխատ. հանգ. Դր. Մուհամմադ Մուին, առաջին հատոր, երկրորդ տպագրութիւն, Թեհրան 1963, էջ 41:

[40] Яновский А, древней Кавказской Альбании, журнал министр. народного просвещения за 1862 г. СПБ, ч. 2. стр. 97-136, 161-203.

[41] Նոյն տեղում:

[42] Նոյն տեղում:

[43] Dorn B., Kapsii (O pokhodakh drevnikh russkikh V Tabaristan) SPb, 187

[44] «Вопросу истории Кавказской Альбании» Играр-Алиев, изд. АН Аз ССР, Баку, 1962, стр. 21.

[45] Բարխուդարեան Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 9:

[46] Նոյն տեղում:

[47] Marquart J., Eransahr nach Geographie des Ps Moses Xorenac'i, Berlin, 1901.

[48] Бартольд В. В. Соч. т. III стр. 334.

[49] Նոյն տեղում:

[50] Кримский А. Е. Страницы из истории Северного или Кавказского Азербайджана (Класическая Албания) V часть Б. Ф. Ольденвурга, Москва, 1934, стр. 289.

[51] Նոյն տեղում, էջ 305:

[52] Бартольд В. В., Сочинения, т. II, ч. 1, стр. 775.

[53] Նոյն տեղում, էջ 777:

[54] Еремян С. Т., Торговые пути Закавказия, ВДИ, 1939, № 1, стр. 79, 97.

[55] Емполский З. И. К вопросу об одноименность древнейшего

населения Атропатену и Албании, 1954 Тр. института истории и философии. 1954, т. 4, стр. 100, 108.

[56] «Энциклопедический словарь», под редакциай проф. И. Е. Андреевского, т. I, СПБ, 1890, стр. 359.

[57] Նոյն տեղում:

[58] Նոյն տեղում, հ. XIII, էջ 818-819:

[59] Նոյն տեղում, էջ 819:

[60] Հայաստանի մի մասը գտնւում է Թիւրքիոյ տարածքում, ի շարս դրանց Կարս եւ Արդահան քաղաքները, բայց 1915ի հայկական ընդհանուր կոտորածից յետոյ այդ շրջանները բնիկ ժողովրդից պարպուեց, եւ հայերից շատերը պարտաւորուեցին արտագաղթել եւ թողնել իրենց հայրենիքը: Այս պատճառով, յիշեալ Հանրագիտարանում տեսնում ենք «Տաճկական Հայաստան — Օսմանեան» խորագիրը:

[61] Տե՛ս ծանօթ. 56, էջ 212-13:

[62] БСЭ, т. I, стр. 248.

[63] «Краткая географическая энциклопедия», Москва, 1960, стр. 38.

[64] Նոյն տեղում:

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

ՊԱՆԹԻՒՐՔԻՍՏՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ ԹԻՒՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Քսաներորդ դարի սկիզբներից Օսմանեան երկրում՝ Թիւրքիայում, սկսեց զօրանալ «պանթիւրքիստական» գաղափարախօսութիւնը: Սկզբում մի խումբ թիւրքեր փորձեցին «պանիսլամիզմ»ը լծել «պանթիւրքիզմ»ի ծառայութեան, եւ այսպիսով թիւրքերի տիրապետութիւնը հաստատել Միջին եւ Մերձաւոր Արեւելքի իսլամական երկրների մէկ ծայրից միւսը: Սրանք մի կողմից ճառում ու բարբառում էին իսլամական միասնականութեան մասին, իսկ միւս կողմից քարոզչութիւն անում «պանթիւրքիզմ»ի եւ նրա բաղկացուցիչ տարրերից «պանթուրանիզմ»ի մասին:

Որպէսզի պարզուի, թէ ինչ էր «պանթիւրքիստների» նպատակը, հարկ է, որ ընթերցողների ուշադրութեան յանձնենք «Իթթիհադ վէ Թարակկի» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի որոշումնագրի մի բաժինը, որ բացայայտում է «պանիսլամիզմի» օգտագործումն ու պանթիւրքիզմին ծառայեցնելը:

«Իթթիհադ վէ Թարակկի» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի 1911 թուականի որոշումնագրի մէջ խօսւում է Օսմանեան կայսրութիւնը Իսլամական կայսրութեան վերածելու մասին, եւ այլ, ոչ մահմեդական ազգերի կողմից ազգային կազմակերպութիւններ հիմնելու իրաւունքը մերժւում է: Յիշեալ կուսակցութեան կենտրոնական կոմիտէն պահանջեց, որ թիւրքերէն լեզուն տարածուի «Իսլամական Կայսրութեան» բովանդակ տարածքում եւ այն յայտարարեց որպէս անհրաժեշտ պայմանը թիւրքական տիրապետութեան հաստատման եւ միւս ազգերի կերպարանափոխութեան համար: Այս որոշումնագրի մէջ եղած միակ կէտը, որ ինչ-որ չափով անորոշ է մնում, «մահմեդականներ» բառն է: Եթէ վերցնենք «մահմեդականներ» բառը եւ նրա տեղը դնենք «թիւրքեր» բառը, խնդիրը լիովին եւ կատարելապէս կը պարզուի:

Յիշեալ որոշումնագրի մէջ այսպէս է գրուած.

«Կայսրութիւնը — իմա՛ Օսմանեան կայսրութիւնը (Ծ.հ.) — պիտի փոխուի Իսլամական կայսրութեան, եւ ուրիշ ոչ մի ազգի իրաւունք պիտի չտրուի մասնաւոր ազգային կազմակերպութիւններ հիմնելու ..... թիւրքերէն լեզուի տարածումը լաւագոյն միջոցն է մահմեդականների տիրապետութեան ամրապնդման եւ այլ ազգերի փոխակերպութեան համար»[1]:

Ակամայից երկու հարցեր են ծագում.

1. Ինչո՞ւ է թիւրքերէն լեզուի տարածումը մահմեդականների տիրապետութեան հաստատման լավագոյն միջոցը:

2. Այլ ազգերը ուրիշ ո՞ր ցեղի կամ ազգի մէջ պիտի ձուլուեն:

Առաջին հարցի նկատմամբ, եթէ մահմեդականների տիրապետութեան ամրապնդումն է նպատակը, այլեւս ինչ կարիք կայ թիւրքերէն լեզուին, մինչ խնդրոյ առարկայ շրջանի մահմեդականների մեծամասնութիւնը արաբերէն է խօսում: Այս իսկ պատճառով, տողերիս գրողը այն կարծիքին է, որ եթէ «մահմեդականներ» բառը փոխարինենք «թիւրքեր» բառով, նախադասութիւնը հետեւեալ ձեւը կստանայ. Թիւրքերէն լեզուի տարածումը թիւրքերի տիրապետութեան ամրապնդման համար լաւագոյն միջոցն է:

Ինչ վերաբերում է երկրորդ հարցին, պիտի իմանալ, որ ազգային փոխակերպութիւնը միշտ էլ կատարւում է մէկ կամ մի քանի ազգերի մի այլ ազգի մէջ ձուլուելով: Ուստի, ինչպէս ասացինք, եթէ «թիւրքեր» բառով փոխարինենք «մահմեդականներ» բառը, եւ «թիւրքերէն լեզուի տարածումն»էլ մեր մտքերի մէջ պահենք, խնդիրը կպարզուի եւ կյայտնաբերուի, որ նպատակը այլ ազգերին «թիւրք ազգ»ի մէջ ձուլելն էր:

Ինչպէս տեսնում ենք, «Օսմանեան թիւրքերի» երկրում «պանիսլամիզմը» կոչուած էր որպէս միջոց ծառայելու «պանթիւրքիզմին», բայց յիշեալ կայսրութեան տկարութեան շրջանում պանիսլամիզմի գաղափարախօսութիւնը քիչ-քիչ անջատուեց պանթիւրքիզմից:

Երիտասարդ Թիւրքերը եւ նրանց քեմալիստ հետեւորդները, որոնք ենթարկւում էին Մուստաֆա Քեմալին, որը հռչակուեց «Աթաթիւրք», իմա՛ Թիւրքերի Հայրը, կոչոմով, իսլամական միութիւնը իրենց նպատակին յարմար չդատելով, ընտրեցին «Բովանդակ աշխարհի թիւրքերի միութեան» ճամփան, եւ այս ընթացքով, քաղաքական ճիգերից բացի, սկսեցին «գիտական եւ ուսումնասիրական» ջանքեր թափել թրքախօս ցեղերի եւ ազգերի պատմութիւնն ու անցեալը որպէս մէկ միասուր ներկայացնելու ճանապարհին: Այս առնչութեամբ, պատմութեան խնդիրների մէջ մի շարք փոփոխութիւններ եւ շեղումներ առաջարկուեցին, եւ ի շարս դրանց.

1 — Ասիոյ եւ Եւրոպայի հողային տարածքներում ապրող թրքախօսները, իբր թէ, մի այլ վայրից չեն քօչել դէպի այդ շրջանները, այլ, իբր թէ, նրանք այդ երկրամասերի հիմնական բնիկներն են եղել:

2 — Այս անճիշտ տեսակէտը հաստատելու համար ուրիշ միջոց չկար, բացի այն, որ յիշեալ երկրամասերի հնադարեան ցեղերը ներկայացուեն որպէս թիւրքերի պապերն ու նախնիքը:

3 — Այս նպատակը իրագործելու համար հարկ եղաւ Արեւելքի եւ մասնաւորաբար Առաջաւոր Ասիոյ հին ցեղերի տոհմական բնոյթն ո լեզուն ժխտումի ենթարկել եւ, այսպէս ասած է «վերանայել»:

Եթէ մի թեթեւ քննենք Զիա Գեոկալփի աշխատանքը, որի հեղինակը պանթիւրքիզմի հռչակաւոր տեսաբաններից է, այդ պարագային փոքր եւ մեծ պանթիւրքիստների երթուղին եւ նրանց նպատակակէտերը կլուսաբանուեն:

Նա իր «Թրքագիտութեան հիմունքները» կոչուող աշխատութեան մէջ այսպէս է գրում.

«Որոշ գիտնականներ աշխատում են արհեստական ձեւերով թիւրքերին, եւ մասնաւորաբար Միջին Ասիայում, Վոլգա գետի ափերին, Սիբիրում եւ Փոքր Ասիայում բնակուող թիւրքերին ներկայացնել որպէս միմեանցից անջատ ու առանձին ցեղեր, իսկ նրանց համարել տարբեր ազգութիւններ ու ցեղեր: Մեր նպատակն է հարիւր միլիոն թիւրքերին միաւորել մէկ միացեալ ազգի մէջ[2]:

Այլ տեսաբաններ եւ պատմագիրներ, ինչպէս Գիւն Ալթայը, եւս թիւրքերին Արեւելքի ամենահնագոյն եւ ամենավաղեմի ազգերից են համարում, եւ այն կարծիքին են, որ թիւրքերը մեր թուագրութիւնից շուրջ հինգ հազար տարի առաջ Միջին Ասիայից եկել են դէպի իրենց ներկայ բնակութեան վայրերը:

Թիւրքիոյ պատմութեանը նուիրուած երկրորդ համագումարում, կազմակերպուած յիշեալ երկրի պատմաբանների կողմից, զեկուցողների մեծամասնութիւնը յայտարարեց, որ «Թիւրքերը եղել են աշխարհի քաղաքակրթութեան առաջին ջահակիրները[3]:

Այս կարծիքը փաստելու նպատակով, թիւրք պատմաբանները մի քանի կէտեր առաջ քաշեցին, որոնք, պատմութեան տեսակէտից, ցայժմ ոչ փաստարկուել են եւ ոչ էլ հաստատուել:

— Առաջին. այն, որ Միջին Ասիոյ հողային տարածքները համարել են թիւրքերի վաղնջական բնակավայրը:

— Երկրորդ. այն, որ թիւրքերին «Թուրան»ի եւ «թուրանցիների» հետ նոյնն են համարել:

— Երրորդ. այն, որ Առաջաւոր Ասիոյ շատ վաղեմի ցեղերին, եւ ի շարս դրանց, էլամցիներին, շումերներին, խուռռիներին, կուտիներին, կասսիտներին, միտանիներին, խեթերին, ուրարտացիներին, շուբերացիներին եւ, ի վերջոյ, մարերին համարել են թիւրքական ցեղեր:

Տողերիս հեղինակը պիտի փորձի համառօտ կերպով պարզաբանել վերոյիշեալ կէտերը, որոնք թիւրք պատմաբանների կողմից տարուել են դէպի անորոշութիւն եւ մթութիւն:

1. Արդէօք Միջին Ասիոյ հողային տարածքը, շատ հնագոյն օրերից, թիւրքերի բնակավայր երկիրն է եղել

Աշխարհի բոլոր պատմաբանները, ի բաց առեալ մի խումբ պանթիւրքիստներ, մէկ կէտի շուրջ միաբան են, եւ այդ այն է, որ Միջին Ասիոյ հնօրեայ ցեղերն ու բնակիչները թիւրք չեն եղել: Սովետական խոշոր թրքագէտ գիտնական, պրոֆ. Բարտոլդը Միջին Ասիոյ հինաւուրց բնակիչներ է համարում բակտրիացիներին, սակերին, խորեզմցիներին, պարթեւներին եւ սողդիացիներին[4]: Նա յիշեալ ցեղերին համարում է արիական ընտանիքին պատկանող ցեղեր եւ համոզուած է, որ նախքան Ալեքսանդր Մակեդոնացու արշաւանքը, սկզբում տիրապետութիւնը խորեզմցիներին էր վերապահուած, եւ որ խորեզմցիներից յետոյ բակտրիացիները իշխանութիւնը ձեռքը վերցրին[5]: Պրոֆ. Բարտոլդը մազդէական դաւանանքը համարում է Խորեզմի ժողովրդից եւ միջավայրից ծնունդ առած մի կրօն[6]:

Այժմ տեսնենք, թէ հին դարերից մնացած գրութիւններն ու փաստաթղթերը ինչ չափով են հաստատում վերեւում բացայայտուած տեսակէտները:

Աւեստայի մէջ բազմիցս խօսւում է «Իրանվիջ» կամ «Իրանվիջէ»ի մասին, որը արիական ժողովրդի հայրենիքի անունն է: Հանգուցեալ պրոֆ. Փուրդաւուդը համոզուած է, որ մեծ Իրանի բովանդակ տարածքը «Իրանվիջէ» կամ «Իրինվիջէ» չէր կոչւում, այլ դա անունն էր հողային մի հատուածի, ուր իրանցիք նախ այնտեղ էին բնակութիւն հաստատել ու յետոյ այնտեղից աստիճանաբար առաջացել եւ տիրացել էին Իրանի բովանդակ տարածութեան. յետագայում բոլոր այն երկրները, որ գտնւում էին նրանց տիրապետութեան տակ, Իրին կամ Իրան անուանեցին[7]:

Այս վայրի շուրջ տարակարծութիւններ կան: Ուսումնասիրողներից ոմանք, հիմնուելով պահլաւական Բունդահեշն գրքի 29րդ բաժնի 12րդ մասի մէջ գրուածների վրայ, «Իրանվիջը Ազարբայջանի կողմերում»են համարում: Ուրիշներն էլ, ելնելով Կովկասեան Ալբանիոյ վերջին շրջանի անուան, որը իրանցի եւ արաբ աշխարհագրագէտների կողմից «Առան» էր կոչւում, եւ Իրանի անուան նմանութիւնից, ենթադրում էին, թէ նա այնտեղ է եղել: Մինչդեռ Ստրաբոնը Ալբանիոյ, իմա՛ Առանի, ժողովրդի սովորոյթների եւ աւանդութիւնների մասին խօսելիս փաստել է, որ նրանք իրանական ծագում չեն ունեցել[8]:

Մի շարք արեւելագէտներ, ինչպէս՝ Կիպերտը (Kiepert), Գայգերը (Geiger), Թիլը (Tiele), Իւստին (Yusti), Անդրեասը (Andreas), Մարկուարտը (Marquart), Բարտոլդը (Bartold) եւ ուրիշներ, Միջին Ասիան, ներառեալ Խորեզմի շրջանն ու Զարաֆշան գետի շրջակայ տափաստաննե-

րը — (Աւեստայի մէջ այս գետի անուանումն է Դայիթի կամ Դայիթիա, որ նոյն Իրանվիջ գետի անունն է)[9]— Սողդը, Մարւը, Բալխը— Բաքտրիա — Նասա կամ Նիսայէ կամ Միհրդատակերտը, Հարաթը, Քաբուլը, եւ Հելմանդ — Հիրմանդ-ը համարում են անդրանիկ արիացիների երկիրը կամ Իրանվիջը[10]:

Միհր-Յաշտի մէջ, որը իրանական կրօնի հնագոյն տաղերից եւ օրհներգութիւններից է, յիշատակութիւններ կան արիացիների երկրների եւ իջեւանների մասին: Միհր-Յաշտի 13րդ եւ 14րդ հատուածների մէջ այսպէս է գրուած.

«Առաջինը երկնային աստուածն է, որ յաւերժական արեւից առաջ, սրընթաց ձիով Հերա[11] լեռնից վեր է բարձրանում, առաջին էակը, որ, ոսկեղէն զարդարանքներով պճնուած, գեղեցիկ «Գուհ» լեռնից գլուխ է բարձրացնում եւ այնտեղից ամենազօրաւոր —այն Միհրը — դիտում է արիացիների բոլոր իջեւանները, այնտեղ, ուր քաջարի արքաները բազմամարդ զօրքեր են յարդարել, այնտեղ, ուր բարձր լեռներ եւ բազմաթիւ արօտատեղեր կան չորքոտանիների համար... այնտեղ, ուր խորն ու լայնատարած ծովերն են, այնտեղ, ուր լայն ու նաւարկելի գետեր՝[12] շառաչուն ու խօլ ալիքներով, խփւում են որձաքարերին ու ապառաժ լեռներին եւ արագ հոսում դէպի Մարւ, Հարաթ, դէպի Սագդ —գու — եւ Խորեզմ[13]:

Վանդիդադի առաջին ֆարգարդի երեք հատուածների մէջ յիշատակութիւն է արուած 16 երկրների մասին: Այդ երկրների սկիզբը Իրանվիջ-Իրանվէիջէ — արիացիների առաջին բնակավայրի անունն է: Իրանվէիջի յիշատակութիւնից յետոյ, յաջորդական հատուածներում, խօսւում է Իրանի արեւելքի եւ հիւսիս-արեւելքի երկրների մասին, ինչպէս՝ Սագդ, Մարւ, Բալխ — Բաքտրիա — Նիսայէ — Մարւի եւ Բալխի միջեւ — Հարաթ, Քաբուլ, նաեւ Հիլմանդ — Հիրմանդ — գետի հունի եւ այլնի մասին[14]:

Պրոֆ. Փուրդաւուդը Խովաիրիզմ կամ Խովարեզմը համարում է արիացիների առաջին բնակավայրը, եւ շատ այլ գիտնականներ էլ նոյն կարծիքին են: Պրոֆ. Մարկուարտն էլ նոյն տեսակէտն ունի:

Աբուրեյհան Բիրունին, իր Ասար-օլ-Բակիյէ աշխատութեան մէջ, Խորեզմի մասին խօսելիս պատմում է, որ այդ երկրի ժողովուրդը Քէյքաւուսի որդի Սիաւուշի մուտքը համարում էին պատմութեան սկիզբը, որը Ալեքսանդրից 980 տարի առաջ էր[15]: Եթէ այս թուականին գումարենք մ.թ.ա. 330 թիւը, Խորեզմի քաղաքակրթութիւնը կհասնի առնուազն մ.թ.ա. 1310 թուին, սակայն հաւանաբար Խորեզմի քաղաքակրթութիւնը այդ դարերից շատ աւելի հին է:

Դիակոնովը, հիմնուելով Աւեստայի վրայ, արիացիների առաջին երկիրը համարում է Ուրգանջի եւ Չարջուի միջեւ եղած տարածութիւնը ու յաջորդաբար Մարւ, Հարաթ, Դաշտ-է Համուն, Թաջան — Հարիրուդ — Սաբզիւար, Կանդահար եւ Նիշաբուրի շրջաններն է համարել: Արիացիների այդ երկրներում բնակութիւն հաստատելու թուականը մօտաւոր կերպով հաշւում է մ.թ.ա. երրորդ կամ երկրորդ հազարամեակները[16]:

Բանդհիեշտի բովանդակութիւնից կարելի է հետեւցնել, որ Իրանվիջը Ազարբայջանի կողմերումն է եղել: Այդ գրքի մէջ խօսւում է նաեւ «Դարջէ» գետի մասին, որպէս մեծ գետի ու նաեւ «Բուդբարան»ի մասին եւ Սպիտաման Զարդուշտի — Զրադաշտ — ծննդավայրը այդ գետի ափին է նշուած, սակայն ցայժմ այդ գետի վայրը որոշակիօրէն չի ճշտուած:

Ինչեւէ, արիացիների առաջին երկիրը Միջին Ասիան եղած լինի թէ Ազարբայջանը, առնուազն մէկ կէտի շուրջ ոչ մի կասկած չի մնում, այն որ, շատ հին դարերից մեզ հասած գրութիւնների մէջ, ինչպէս Յաշտերն ու Վանդիդադը, որոնք վստահաբար գրուել են Մարերի եւ Աքեմենեան թագաւորութիւններից առաջ, Միջին Ասիան յիշւում է որպէս արիացիների հայրենիքը:

Եթէ մինչեւ անգամ տարակուսանքներ կամ կասկածներ լինեն այն մասին, թէ Ազարբայջանը Սպիտաման Զարդուշտի ծննդավայրն է, եւ կամ այն մասին, թէ Ռագա — Ռէյ-ը նրա բնիկ երկիրն է, առնուազն մէկ կէտի շուրջ չի կարելի տարակուսել, որ Վիշտասպը՝ զրադաշտականութեան ծէսերի հովանաւորն ու տարածողը, իշխում էր Միջին Ասիոյ մի բաժնի՝ հին Բախտարի — Բաքտրիա եւ Հիրգան — վրայ:

Ի. Մ. Դիակոնովը, խօսելով Աւեստայի եւ իրանական լեզուների հետ նրա ունեցած առնչութիւնների մասին, այսպէս է գրում.

«Չենք կարող վճռադատել, թէ Աւեստայի լեզուն իրանական լեզուների հր մէկ խմբին է կապուած. սակայն մէկ կէտ անվիճելի է, որ նրա ծագման վայրը Միջին Ասիան եւ Իրանի արեւելքն է եղել — ներկայի Աֆղանիստանն ու Խորասանը —[17]:

Միաժամանակ ասուեց, որ Վիշտասպը — Քէյ Կոշտասպ — իշխում էր Բաքտրիայի եւ Հիրգանի վրայ: Այս երկու տուեալները մեզ կ՛առաջնորդեն Դայիթիա գետի շրջակայ հարթավայրերը եւ այլ խօսքով Արիավիջ երկրի տարածքը յայտնաբերելու եւ զատորոշելու: Աբան Յաշտ-ի 103, 104 եւ 105րդ հատուածներում այսպէս է ասուած.

«Ո՛վ Սփենթաման Զարդուշտ, ինձ համար գովաբանիր այս Արդիսուր Նահիդին, մէկը, որին ... փառաբանեց: Անարատ Զրադաշտը Արիավիջում,



Քարտէզ Սասանեան Իրանի, մ.թ. 3-րդ դարից մինչև 7-րդ դար, արտատպուած Իրանի Պատմութիւնը գրքից, գրուած մի խումբ սովետական ուսումնասիրողների կողմից, Իվանովի խմբագրութեամբ, Մոսկուայի Պետական Համալսարանի հրատարակչութիւն, 1977թ. էջ 119:

Վանգուհի Դայիթիա գետի ափին ... նրանից խնդրեց՝ Այս յաղթանակը ինձ շնորհիր, ով դու բարի, ով դու ամենակարող, դու Արդիսուր Նահիդ, որպեսզի ես քաջարի Քէյ Կոշտասպին՝ Լոհրասպի որդուն, միշտ առաջնորդեմ, որ նա մտածի ըստ կրօնի, խօսի ըստ կրօնի եւ վարուի ըստ կրօնի[18]:

Այս գրութիւնը հաստատում է կարծիքը արեւելագէտների այն խմբի, որոնք Դայիթիա կամ Իրանվիջ գետը նոյնացնում են Զարաֆշան գետի հետ: Միաժամանակ, Աբան Յաշտի այս հատուածներից շատ դիւրութեամբ կարելի է հասկանալ, որ զրադաշտական ծէսի տարածման վայրը եղել է Միջին Ասիան, Խորեզմի լայնատարած երկրամասը, Բաքտրիան, Հիրգանը եւ այլն: Իրանական հին առասպելների մէջ նաեւ տեսնում ենք, որ այս գործունէութիւնը տարածուեց մինչեւ Հիլմանդ — Հիրմանդ — գետի աւազանը, եւ Իսֆանդիարը Ռոստամի հետ պայքարելու համար ուղեւորուեց դէպի Սիսթան:

Հերոդոտը Միջին Ասիոյ շրջանների վերաբերեալ մի զեկուցում է կատարել, որից, ուշադրութիւն դարձնելով երկրների անուանումներին եւ նրանց մէջ բնակուող ցեղերին, պարզ կերպով կարող ենք ըմբռնել, որ արիացիները բնակւում էին այդ տարածքներում: Նա այսպէս է գրել.

«Ասիոյ մէջ գոյութիւն ունի մի հարթավայր, որը բոլոր կողմերից սարերով է շրջապատուած, եւ սարերն էլ հինգ լեռնանցքներ ունեն: Այդ հարթավայրը անցեալում պատկանում էր խորեզմցիներին եւ Խորեզմից մինչեւ Հիրգան — Գորգան —, մինչեւ պարթեւների երկիրը, մինչեւ Սարանգամ — Դարանգիան — եւ Թամաններ է տարածւում: Լեռների փեշերից հոսում են ջրերը եւ թափւում Ակ (Ak) գետի մէջ — (Թաջան-Հարիրուդ գետը) —: Այս գետը հինգ ճիւղերի է բաժանւում եւ առաջին հերթին ոռոգում է յիշեալ ցեղերի հողերը[19]:

Հերոդոտի գրածից կարելի է երկու կէտեր ըմբռնել: Առաջինը այն, որ Խորեզմ երկիրը Հերոդոտի օրերից առաջ եղել է շատ աւելի լայնատարած, քան Աքեմենեանների օրօք եղած Խորեզմը: Երկրորդն էլ այն, որ յիշեալ երկրներում ապրող ցեղերը, որոնց անունները յիշում է Հերոդոտը, սերում են արիական ցեղերից, եւ որ այդ ազգերի արիական լինելու շուրջ ոչ մի կասկած չկայ:

Ի. Մ. Դիակոնովը համոզուած է, որ Միհր Յաշտի լոյս աշխարհ գալու օրերին Արիավիջը կամ արիացիների երկիրը ներառում էր Հարիրուդ գետի հովիտը, ի շարս դրանց Մարգիան — Մարու —, Մուրղաբ, Սագդ, Խորեզմ եւ Ամուդարիա, Քաշքէդարիա եւ Զարաֆշան գետերի ափերը: Շարունակելով իր խօսքը, նա այսպէս է գրում.

«Արիացիների տարածքը, Միհրի գովերգութեան յօրինման օրերին, ներառում էր Սաթագիդի — կամ Թամանների երկիր —, Հարիա, Մարգիան, Ամուդարիա գետի միջին հոսքի հարթավայրերը եւ Խորեզմ երկրները[20]:

Ի. Մ. Դիակոնովը իր «Իրանի արեւելքը Կիւրոսից առաջ» վերտառութեամբ աշխատութեան մէջ այն կարծիքն է յայտնում, թէ Միհր Յաշտի ծագման օրերին Արիավիջը կամ արիացիների երկիրը բաղկացած չէր միմիայն Խորեզմից, այլ ներառում էր շատ աւելի ընդարձակ մի տարածք: Այդ երկիրը ընդգրկում էր Միջին Ասիոյ բովանդակ հարթավայրը եւ Իրանի արեւելքը, եւ նրա բնակիչները խօսում էին իրանական լեզուով: Դիակոնովը «Իրանվիջը» նոյնն է համարում «Արիան» — Իրան — անուանումների հետ, որոնք գործածւում էին յունական հեղինակների կողմից[21]:

Այսպիսով, Դիակոնովի կարծիքով, Արիավիջը յիշեալ շրջանների հողատարածքից շատ աւելի լայնատարած ու ընդարձակ մի երկիր է եղել:

Քէյեան արքաների տիրապետութեան մասին խօսելիս Մասուդին մի շարք յիշատակութիւններ է արել, որոնք ցոյց են տալիս, որ Լոհրասպը իշխում էր Միջին Ասիոյ եւ Բալխի — Բաքտրիա — վրայ: Նա այս մասին գրում է.

«Քէյխոսրովը ....թագաւորութիւնը պարգեւեց Լոհրասպին, եւ այդ տոհմը բնակւում էր Բալխում — (Բաքտրիա) —, որ իրենց մայրաքաղաքն էր, եւ Բալխ գետը, որ նոյն Ջիհունն է եւ նրանց լեզուով Քալէֆ էին կոչում: Դեռեւս Խորասանի պարսիկներից շատերը նրան նոյն անունն են տալիս[22]:

Շարունակելով իր խօսքը, Մասուդին այսպէս է գրում.

«Լոհրասպից յետոյ թագաւորութիւնը հասաւ Յաշտասպին, որի նստավայրը Բալխում — (Բաքտրիա) — էր: Նրա թագաւորութեան 30րդ տարում Ասպիմանի որդի Զրադաշտը նրա կողմն եկաւ[23]:

Թէեւ Մասուդի-ի գրածը կասկածի տեղիք է տալիս Զրադաշտի հօր անուան շուրջ, այդուհանդերձ, նա մի շատ ուշագրաւ փաստաթուղթ է ներկայացնում Զրադաշտի կրօնի տարածման վայրի մասին Միջին Ասիոյ մէջ, ինչպէս նաեւ այդ երկրի ժողովրդի մասին:

Աստուածաշնչում, «Եսթերի» գրքում, Ախշուրաշ-ի — (Խուսշաեարշա կամ Քսերքսէս) — մասին խօսելիս, նաեւ ասուած է, որ նա «իշխում էր Հնդկաստանից մինչեւ Եթովպիա, հարիւր քսանեօթ նահանգների վրայ»[24]:

Այս 127 նահանգները, անշուշտ, ընդգրկում էին թէ՛ Իրանը եւ թէ՛ Ան-Երանը, — իմա՛ Արտ-Իրանը —: Հնադարեան պատմագրերի գրուածքներում Աքեմենեան կայսրութեան ենթակայ իրանական եւ ոչ-իրանական ցեղերի մասին շատ բան կայ գրուած, այդուհանդերձ, ամենադոյզն հետքն անգամ չկայ թիւրքերից, լինի դա Միջին Ասիոյ մէջ կամ աքեմենեանների տիրապետութեան տակ գտնուող երկրներից որեւէ այլ մի կէտում: Այսպիսով պարզւում է, որ թիւրք եւ օսմանցի պատմաբանների այն յաւակնութիւնը, ըստ որի հնադարեան Միջին Ասիոյ ցեղերը թիւրքեր են եղել, զուրկ է որեւէ փաստից ու ապացոյցից:

Ըստ առկայ փաստաթղթերի եւ ապացոյցների, ինչպէս նաեւ ըստ չինացի, իրանցի, հռովմէացի, հայ եւ արաբ պատմագիրների, թիւրքերի գաղթը, դէպի Միջին Ասիոյ շատ հեռաւոր հողային տարածքները, սկսուեց մեր թուագրութեան վեցերորդ դարում, որը համապատասխանում է Սասանեան կայսրութեան շրջանին: Այսուհանդերձ, թիւրքերը մինչեւ անգամ իսլամական շրջանի առաջին դարերին (7-8-րդ դդ.) Միջին Ասիայում չէին հաստատուել: Իբնի Հաուկալը, որ հիջրեթի 4րդ դարում (10րդ դ.) էր ապրում, իր հռչակաւոր «Սուրաթ-իլ-Արզ» գրքում պարզաբանում է մի շարք խնդիրներ, որոնք հաստատում են այս տեսակէտը: Նա արաբների «Մավարա-ուլ-Նահր» անուանուող (Trans-Oxiana) շրջանը, որն ընդգրկում էր Ֆարիաբ, Սագդ, Սամարկանդ, Խորեզմ եւ Ջիհուն գետի ափերին գտնուող տափաստանները, թիւրքերի երկիրը չի ճանաչում եւ այդ կողմերի ժողովուրդներին էլ թիւրք չի համարում: Իբնի Հաուկալի գրածներից պարզւում է, որ նրա ապրած օրերին թիւրքերը դեռեւս ապրում էին Մավարա-ուլ-Նահրից դուրս եւ բնակւում էին դրա շրջակայքում: Նա Մավարա-ուլ-Նահրի մասին խօսելիս այսպէս է գրել.

«Իսկ այնտեղի ստրուկները այն թիւրքերից են, որ ապրում են Մավարա-ուլ-Նահրի շրջակայքում[25]:

Պրոֆ. Բարտոլդը այն կարծիքին է, թէ թիւրքերը նախքան մեր թուագրութեան վեցերորդ դարը դեռեւս Միջին Ասիա մուտք չէին գործել: Նա իր տեսակէտը պարզաբանելիս գրել է.

«Վեցերորդ դարում անապատաբնակ թիւրքերի առաջին պետութիւնը ստեղծուեց Միջին Ասիոյ մէջ: Այդ երկրի գրատէները թիւրքեր էին, որոնք Ալթայից Միջին Ասիա էին եկել եւ կարճ ժամանակում Խաղաղ ովկիանոսից մինչեւ Սեւ ծովը տարածուող հսկայ մի շրջան իրենց ենթարկեցին[26]:

Պրոֆ. Գումիլեւը թիւրքերի մասին խօսելիս այսպէս է գրում.

«Արաբները Սագդի հողային տարածքում բնակուող քօչուոր բոլոր ռազմիկներին թիւրք անուանեցին: Այս իսկ պատճառով Միջին Ասիոյ բնակիչ շատ ցեղեր սխալմամբ «թիւրք» կոչուեցին, մինչդեռ այդ ցեղերը երբէք թիւրք չէին եւ Խականաթի մաս չեն կազմել: Պիտի առաւելաբար յիշել, որ որոշ ցեղեր եւ տոհմեր, ինչպէս թիւրքմէնները, Անատոլիոյ թերակղզու — ներկայիս Թիւրքիա — Կովկասեան Ալբանիոյ եւ Ազարբայջանի բնակիչները թիւրքերի եւ մոնգոլների հետ ամենադոյզն ազգակցութիւնը չեն ունեցել[27]:

Այս կարգով, պրոֆ. Գումիլեւը ոչ միայն Միջին Ասիոյ, Կովկասեան Ալբանիոյ եւ Ազարբայջանի, այլ նաեւ Անատոլիոյ թերակղզու բնակիչներին էլ թիւրք չի համարում, որովհետեւ լեզուն ցեղային եւ տոհմային միակ ազդակը չէ:

Իրանի քարտէզը Սասանեանների դարաշրջանում, արտատպուած Սասանեան Իրանի Քաղաքակրթութիւնը գրքից, հեղինակ Վլադիմիր Լուկնին, թարգմանիչ Դր. Ինայաթուլլահ Ռիզա, Բոնգահէ Թարջոմէ վա Նաշրէ Քեթաբ, 1971թ. էջ 378:

Այն կէտը, ըստ որի հին ժամանակների թիւրքերը ապրում էին Չինաստանի հիւսիսային տարածքներում, գիտնականների եւ ուսումնասիրողների միջեւ վէճի առարկայ չէ: Չինաստանի հիւսիսում բնակուող մի շարք թիւրք ցեղեր չինացիների կողմից «Հիւն-նօ» էին կոչւում, որ նշանակում է ապստամբ եւ յանցագործ ստրուկներ: Այս ցեղերից մի այլ խումբ էլ չինացիների կողմից «թոքհո» էր կոչւում, որը «թիւրգիւթ» անուան չինարէն արտասանութիւնն է, որովհետեւ հին թիւրքերը «թիւրգիւթ» էին կոչւում, որը «թուրք» կամ «թիւրք» է նշանակում:

«Հիւն-նո» ցեղերը ռազմատենչ մարդիկ էին եւ յաճախ էին ասպատակութիւն անում, եւ չինացիք ստիպուած էին լինում ամէն տարի իրենց հիւսիսային հարեւաններին հարկ վճարել: Մեր թուագրութեան երկրորդ դարի երեսնական թուականներից սկսեալ, Չինաստանի կայսրին յաջողուեց «Հիւն-նո» ցեղերի մէջ պառակտումներ ստեղծել եւ այսպիսով կարողացաւ նրանց պարտութեան մատնել[28]: Պրոֆ. Զուլալեանը այն կարծիքին է, որ այդ իրադարձութիւնից յետոյ երեւան եկաւ «Իւրիւք» անունը, որը նշանակում է հլու եւ հնազանդ[29]:

Մեր թուագրութեան հինգերորդ դարի սկզբից Միջին Ասիոյ շրջակայքում ցեղերի նոր միութիւն երեւան եկաւ: Այս ցեղերը պատմութեան մէջ հռչակուած են «հոներ» անուան տակ: Այս միութեան մէջ ի մի եկած բոլոր ցեղերն ու տոհմերը թիւրք չէին: Քահանը այն կարծիքին է, որ «յիշեալ ցեղերի մէջ կային նաեւ այլ ցեղային տարրեր եւ, ի շարս դրանց, ուգրո-ֆիններ, մաչարներ — (մաջարներ) — եւ այլն»[30]:

Քահանը հեփթաղներին էլ թիւրք չի համարում, եւ այն կարծքին է, որ «հեփթաղները հնդեւրոպական տոհմերից եւ իրանական ցեղերից էին»[31]:

Մի այլ ապացոյց, որ հաստատում է, որ Միջին Ասիոյ երկրներում բնակուող մարդիկ հին դարերում թիւրքեր չեն եղել, դա այդ վայրերի աշխարհագրական անուններն են: Որովհետեւ քաղաքների, գիւղերի, լեռների եւ գետերի բոլոր անուններն էլ ստեղծուել են տեղի բնակիչ ժողովրդի լեզուից: Ահմադ Քասրաւին, իր հռչակաւոր «Ազարի կամ Ազարբայջանի վաղեմի լեզուն» աշխատութեան մէջ, գետերի, լեռների եւ քաղաքների անուանումների մասին հետեւեալ կարծիքն է յայտնում.

«Մի բան, որ ի յայտ է բերում մի երկրի ժողովրդին եւ նրա լեզուն, գետերի, լեռների, գիւղերի, քաղաքների եւ թաղերի անուններն են, որովհետեւ իւրաքանչիւր ժողովուրդ այդ անունները ստեղծում է իր լեզուով[32]:

Եթէ ընդունենք այս տեսակէտը, այդ պարագային, քննարկելով աշխարհագրական անունները, կարող ենք պարզորոշել, թէ Միջին Ասիոյ ժողովուրդները հնադարեան շրջաններին իր տոհմին էին պատկանում եւ ինչ լեզուով էին խօսում:

Անցողակի ակնարկ նետելով Միջին Ասիոյ սարերի, ձորերի, գետերի, քաղաքների եւ բնակելի վայրերի վրայ, կտեսնենք, որ այդ երկրամասի ժողովուրդները թիւրք ցեղին չէին պատկանում ու նաեւ թիւրքական լեզուով չէին խօսում:

Այն, ինչ ներկայացտւմ է ստորեւ, հաստատում է այդ անունների իրանական լինելը:

ԼԵՌՆԵՐԻ, ՁՈՐԵՐԻ ԵՒ ԿԻՐՃԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ

Փամիր, Հինդուքուշ, Խաւաք, Բոթամ, Սորխան, Քուհաք, Քաշքէ, Շաւդար:

ԳԵՏԵՐԻ ԵՒ ՎՏԱԿՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ

Ամու — Ամուդարիա կամ Ջիհուն, կամ Գիհուն կամ «Գէյհուն» որի շատ հնադարեան անունը «Վախշու» է եղել —[33] Սիրդարիա, Վախշ — Սորխաբ —, Ջարեաբ, Վախաբ, Ռուդաք — այս անունով մի գիւղաքաղաք գոյութիւն ունի, ուր ծնուել է Ռուդաքին, նաեւ Թեհրանի մօտակայքում այս անունով մի շրջան գոյութիւն ունի —Անդարաբ, Փանջ, Ախշու, Քոլեաբ, Աբգարմ, Քումրուդ, Նահամրուդ, Խաւար-րուդ, Բուրաբ, Չարջոյ, Քաշքէդարիա, Զարաֆշան, Հաֆթրուդ, Իսքանդարքամ, Սիահաբ, Ջույբարբեքար, Ջույբար շիշէգարան, Նովքանդ, Խարկանրուդ, Փէյքան, Զար, Ֆարախշէ, Խամէ, Բարաբ, Հարիրուդ, Հիլմանդ —Հիրմանդ — Ռուդշաշ — Չաչ — Քարշաբ, Վարարուդ:

ՔԱՂԱՔՆԵՐԻ ԵՒ ԲՆԱԿԵԼԻ ՎԱՅՐԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ

Բադախշան, Թախարան, Բալխ — Բախթար —, Ռուդաք, Կանդուզ, Սամանգան, Գուրբանդ, Բամիան, Լեբքանդ, Արհան, Քարբանք, Րաշթ, Քաֆերնիգան, Վաշգարդ, Կոբադիան, Նովզար, Դեհնո, Քոհանդեզ, Չարմանգան, Րիգդաշթ, Շիրաբադ, Անդիգան — Անդիջան —, Ամոլ, Նովբահար, Բուխարա, Սամարկանդ, Մարգիան — Մարու —, Շափուրգան, Ֆարիաբ, Միանէ, Բիրուն, Աֆրասիաբ, Քաշ, Սանգդիզէ, Փանջիքաթ, Եարքաթ, Աֆարինքաթ, Րիւ, Խորազմ, Քուշք, Մուղան, Փէյքանդ —Բէյքանդ —, Նովքանդ, Ասիաբ, Րիգսթան, Մահրուզ, Խանգահ, Վիսար, Վարմանդ, Նուր, Բարդադ, Բարսան, Զարախշ, Զարգարան, Քամարէ, Քաբուտ, Մադիամաջքաթ, Մարզին, Նուզաբադ, Նոքադաք, Րաման, Րազման, Սաքան, Ֆիրուզէ, Եամգան, Մէհնէ —Միհնէ —, Քէշմիհան, Բաղաբադ, Աբիվարդ, Դրուն, Սորխքաթ, Թարաբ, Թովսան, Խարթանգ, Խոդաաբադ, Շադքան, Շաքան, Սաղդբիլ, Ուրգանջ, Գորգանաք, Սաքաքաթ, Բաղդադաք, Ռուզան, Սիբ, Ջիգարբանդ, Աբադան, Սանգաբադ, Մողքադէ, Մադավա — Մադաբադ, ներկայի Մադիի գիւղակը — Րուշթան, Քանբադամ, Զանդրամէշ, Ախսիքաթ, Խաջաստան, Դեհնո, Շաշ կամ Չաչ, Օշթորքաթ[34]:

Այսպէս, ընթերցողն անշուշտ նկատեց, որ Միջին Ասիոյ երկրամասում տեղանունները պարսկերէն են եղել, եւ մենք այդ տարածքում մինչեւ Աբասեանների տիրապետութիւնը, կամ աւելի ճիշտ ձեւով ասենք, նախքան հիջրեթի 4րդ դարի սկիզբը —(10րդ դար) — թիւրքական աշխարհագրական անուններից ոչ մի հետք չենք տեսնում: Պրոֆ. Բարտոլդը Միջին Ասիոյ թիւրքական աշխարհագրական անունների մասին այսպէս է գրում.

«Սամանեան պետութեան անկումից յետոյ թիւրքերը էլ աւելի մեծ թափով սկսեցին գաղթել եւ հաստատուել այդ երկրի մէջ. արաբական «Մավարա-ուլ-Նահր» անունը աստիճանաբար վերածուեց «Թիւրքիստան»ի, եւ այսպիսով ստեղծուեցին թիւրքական աշխարհագրական անունները: Թիւրքերէն լեզուն աստիճանաբար պարսկերէնը հրապարակից հեռացրեց, ինչպէս որ նոյն ընթացքը ռուսների տիրապետութեան օրօք էլ մեծ յառաջադիմութիւն է կատարել եւ շարունակւում է մինչեւ այսօր: Թիւրքական աշխարհագրական անունները միապաղաղ են եւ Թիւրքիստանի մէկ ծայրից միւսը մշտապէս հանդիպում ենք Աղ-գեօլ, Կարա-գեօլ, Աղ-սու, Կարա-սու անուններին, որ շարունակ կրկնւում են. երբեմն էլ գործածւում են իրանական ընդունուած անունները[35]:

Հին դարաշրջանին եւ խալիֆայութեան շրջանին պատկանող բազմաթիւ սկզբնաղբիւրներ, մեծ թուով ուսումնասիրութիւնները ու գիտնականների եւ ուսումնասիրողների բազմաթիւ պրպտումների առկայ արդիւնքները, բոլորն էլ վկայում են, որ Միջին Ասիոյ ցեղերը հին դարերում իրանցիներ են եղել. այսուամենայնիւ, քանի որ այս խնդրի շուրջ աւելի երկար ու մանրամասն խօսելը ներկայ աշխատութեան սահմաններից եւ հեղինակի ընտրած պարտականութիւնից դուրս է, ուստի համառօտ կերպով ներկայացուեց մի շարք փաստաթղթեր եւ վաւերագրեր, եւ կարծում ենք, որ ներկայացուած փաստարկումները պարզ են ու բաւարար:

Այժմ պիտի անցնենք թիւրք պատմաբանների յաւակնութիւնների առարկայ հանդիսացող Թուրանի խնդրի քննութեան:

2. Արդեօք Թուրանը թիւրքական եւ թուրանցիները թիւրք են եղել

Ինչպէս նախապէս ասուեց, «պանթուրանիզմը» հիմնականում «պանթիւրքիզմի» կարեւոր արտայայտութիւններից եւ բաղկացուցիչ մասնիկներից մէկն է: Քանի որ պանթիւրքիստները Ասիոյ եւ Եւրոպայի մեծագոյն շրջանների բնիկ ժողովուրդներին թիւրք ցեղերից էին համարում, ուստի

այդ տեսակէտը փաստելու համար ստիպուած էին Ասիոյ եւ Եւրոպայի բազմաթիւ տարածքների հնագոյն ցեղերին «թիւրք» անուանել: Այս իսկ պատճառով, «Թուր» եւ «Թիւրք» անունների միջեւ եղած նմանութիւնից օգտուելով, սկսեցին ոտնձգութիւններ անել դէպի Թուրան եւ այս կապակցութեամբ օգուտ քաղեցին նաեւ մի շարք մահմեդական հեղինակների եւ պատմագիրների սխալներից:

Վեցերորդ դարից սկսեալ, թիւրքերը սկսեցին մուտք գործել Միջին Ասիոյ տարածքները եւ հիջրեթի 4րդ (10րդ դ.) դարից սկսեալ այդ շրջաններում սկսեցին պետութիւններ ստեղծել եւ, ի հետեւումն դրան, Կենտրոնական եւ Արեւմտեան Ասիոյ մէջ կազմեցին թիւրքական մեծ պետութիւնը: Այս կէտը պատճառ եղաւ, որ մի շարք պատմագիրներ թիւրքերի երկրի մասին սխալմունքի ենթարկուեն եւ Թուրանն ու թուրանցիներին թիւրք անուանեն, մինչ նրանք Սիբիրիոյ հարաւից եւ Ալթայի տարածքներից էին մուտք գործել այդ շրջանները: Այդ հեղինակները իրենց ապրած օրերը դատողութեան հիմք ծառայեցրին, եւ քանի որ ղոզ եւ կփչակ ցեղերը բնակութիւն էին հաստատել Մավարա-ուլ-Նահրի մէջ, եւ Միջին Ասիոյ հարթավայրերում էլ տարածուել էր թիւրքական լեզուն, եւ ըստ պրոֆ. Բարտոլդի «պարսկերէնը հրապարակից հեռացրել», ուստի ստեղծուեց այն կարծիքը, ըստ որի, իբր թէ, թուրանցիները թիւրք են եղել: Այս ենթադրութեան կարելի է հանդիպել մահմեդական պատմագիրների մեծաթիւ աշխատութիւնների մէջ: Բայց եղել են նաեւ մարդիկ, որոնք այդ ենթադրութեան սխալ լինելն են բացայայտել: Մասուդին, որ ապրում էր հիջրեթի 4րդ դարի առաջին կէսին (10րդ դ. 2-րդ կէսը), այս խնդրի մասին մի դիտողութիւն է արել, որը արժանի է ուշադրութեան.

«Աֆրասիաբի ծննդավայրը թիւրքերի երկրում էր, եւ հէնց այս տեղից է ծնունդ առնում պատմութեան կամ այլ գրքերի հեղինակների գործած սխալը՝ այն, որ նրան թիւրք են համարել[36]:

Մասուդիի գրածից պարզւում է, որ մինչեւ նրա ժամանակներն էլ այս ենթադրութիւնը դեռեւս գրուածքներում տեղ էր գտնում: Պատճառն այն էր, որ Սասանեան իշխանութեան մէջ ծագած ճգնաժամի ընթացքում, Յազկերտ 3-րդի թագաւորութեան օրօք, թիւրքերը առաջացան մինչեւ Ջիհուն (Ամու-Դարիա) գետի ափերը եւ սկսեցին քիչ-քիչ բնակութիւն հաստատել այն երկրում: Գիտենք, որ Յազկերտ 3-րդը փախաւ Խորասան՝ Մահույ Սուրիի մօտ եւ սպանուեց Մարւի մէջ: Բալ'ամին թիւրք խականի մասին խօսելիս նրան անուանում է «Ջիհուն գետից այն կողմը գտնուող շրջանի տիրակալ իշխան»: Նա գրում է.

«Կար մի Արքայ, որի անունն էր Մահույ, եւ որը տիրում էր բովանդակ Խորասանին, սկսեալ Յազկերտի մօտից մինչեւ Ջիհունի ափերը. իսկ Ջիհունի այն կողմին տիրում էր Խականը, թիւրք Արքան»[37]:

Մեր նիւթից չհեռանանք: Պանթիւրքիստ պատմաբանները ոչ միայն Միջին Ասիան, այլ աշխարհի մի մեծ մասը, եւ ի շարս դրանց, Ուրարտու երկիրը Թուրան են անուանում: Թիւրք պատմաբաններից մէկը՝ Ալի Քեմալը, հերքում է հայ ցեղի եւ Հայաստան երկրի գոյութիւնը, եւ այսպէս է գրում.

«Մինչեւ մ.թ.ա. 6րդ դարը, Անատոլիա թերակղզու արեւելքում, մինչեւ անգամ մէկ հայ չկար: Այս երկրամասում թիւրքերը հիմնել էին թուրանական Ուրարտու պետութիւնը[38]:

Թիւրք մի այլ պատմաբան, Զիա Գեոկալփը գրում է. «Թիւրքերի հայրենիքը ոչ Թիւրքիան է եւ ոչ էլ Թիւրքիստանը, այլ թիւրքերի հայրենիքը մեծ եւ մշտնջենական Թուրանն է»: Նա, մի այլ տեղում աշխարհի թրքախօսներին իր խօսքն ուղղելով՝ ասում է. «Դո՛ւք, Օղուզ խանի որդիք, երբէք մտահան չանէք այն երկիրը, որ Թուրան է կոչւում[39]:

Խորհրդային պատմաբան Զուլալեանը, խօսելով «պանթիւրքիզմի» եւ «պանթուրանիզմի» մասին, որոնց ներկայացուցիչները ժխտում են հայ ազգի գոյութիւնը Հայաստանի տարածքում, հետեւեալ կարծիքն է յայտնում.

«Սա մի կեղծիք է ու մի բացարձակ խեղաթիւրում, որ կարելի է գտնել թիւրքական պատմութեան վերաբերեալ գրուած գրքերի մէջ՝ թէ հայ ժողովրդի եւ թէ հին արեւելքի այլ ցեղերի ծագման խնդրում: Այս կեղծիքն ու խեղաթիւրումը առաջին հերթին ծնունդ է առնում պանթիւրքիզմի, ինչպէս նաեւ նրա նմանակի՝ պանթուրանիզմի գաղափարախօսութիւնից: Եթէ պանթիւրքիզմի գաղափարախօսութիւնը իր ազդեցութիւնը ի գործ է դնում թիւրքական ծաւալողական քաղաքականութիւնը թրքախօս ցեղերի վրայ հաստատելու ճանապարհին, ապա պանթուրանիզմը ջատագովն է «Մեծ Թուրան» երկրի ստեղծման գաղափարի, որը տարածւում է Խաղաղ ովկիանոսից մինչեւ Սկանդինաւեան երկրներն ու Միջերկրական ծովը: Իրականութեան մէջ, պանթիւրքիզմն ու պանթուրանիզմը միեւնոյն գաղափարախօսութիւնն են[40]:

Տողերիս հեղինակը աշխատում է հնարաւորին չափ հեռու մնալ հարցի քաղաքական բնոյթից եւ միմիայն պատմական վերլուծութեան է ենթարկում Թուրանի խնդիրը: Այս իսկ պատճառով, վերի արտայայտութեան մասին դատողութիւններ անելը թողնելով ընթերցողին, վերադառնում ենք Թուրանի ծագման եւ անուան խնդիրներին:

Ըստ դիցաբանական եւ կրօնական գրուածքների, Քիան թագաւորական տոհմի հիմնադիր Ֆերեյդունը իր իշխանութեան տակ գտնուող երկիրը բաժանեց իր երեք զաւակների՝ Սալմի, Թուրի եւ Իրաջի միջեւ:

Հնադարեան գրութիւնների մէջ Սալմ անունը գործածւում է նաեւ «Սարմ» ձեւի տակ: Թաբարին, որ հիջրեթի 3րդ դարի (10րդ դ.) պատմագիր է, Ֆերեյդունի այս զաւակի անունը «Սարմ» ձեւով է ներկայացրել[41]: Ֆերեյդունի

տէրութեան իւրաքանչիւր բաժինը, ինչպէս նաեւ իւրաքանչիւր բաժնի բնակիչ ցեղերը, իրենց տիրակալների եւ թագաւորների անունով Սարման, Թուրան եւ Իրան էին կոչւում[42]: «Սարմ»ի երկիրը Աւեստայի մէջ «Սաիրիմ» Sairima ձեւով է յիշատակւում: Այդ երկրի բնակիչ ցեղերը պատմութեան մէջ «Սարմատ» անունով են ճանաչուած: Սարմատ անունը լատիներէնի մէջ «Սարմաթայ» Sarmatae ձեւն ունէր: Սարմատները իրանական լեզուի եւ արիական ցեղի ժողովուրդ էին, որ, ըստ մեր ունեցած տեղեկութիւնների, մ.թ.ա. 3-րդ դարից սկսեալ ապրում էին Դանուբ գետի ափերին: Մ.թ.ա. առաջին դարում սարմատները Սեւ ծովի հիւսիսային ափերից քշեցին սակերին (սկիւթացիներին) եւ իրենք բնակութիւն հաստատեցին այդ երկրի մէջ[43]: Այդ նոյն ցեղի մի այլ խումբը «Արեւելեան Սարմատներն» էին, որոնք Խորեզմի հետ սերտ կապեր ունէին[44]:

Եթէ Սարմանը, Թուրանը, Իրանը, արիական ցեղային խմբի հայրենիքն ու Հնդկական թերակղզին ուշադրութեամբ ուսումնասիրենք, այդ պարագային աշխարհի բազմաթիւ հետազօտողների տեսակէտը արիական (հնդեւրոպական) ցեղերի եւ նրանց բնակավայրի սահմանների մասին որոշ չափով կհամապատասխանի իրականութեան:

Աւեստայի եւ Շահնամէի մէջ Աֆրասիաբը որդին է Փաշանգի, որդին Շամի, որդին Թուրի, որդին Ֆերեյդունի: Նաեւ, Աֆրասիաբի անունից բացի, թուրանցիների այլ անունների եւ նրանց բնակավայր երկրի զանազան շրջանների անուանումների ուշադրութեամբ ուսումնասիրելը կհաստատի յիշեալ ցեղի արիական լինելու տեսակէտը: Աւեստայի մէջ Աֆրասիաբ անունը գրուած է Ֆարնգարսին, պահլաւերէնի մէջ Ֆարասիաբ, իսկ Բանդահեշնի մէջ Ֆարասիա ձեւով: Աւեստայի մէջ Աֆրասիաբի երկու եղբայրների անունները Աղրաերաս Aghraeratha եւ Քարսաւազդ Kersavazda, իսկ պարսկերէն գրուածքների մէջ Աղրեարաս եւ Գարսիւազ են յիշատակուած, որոնք արիական անուններ են[45]: Հնադարեան գրուածքների մէջ հանդիպում ենք բազմաթիւ այլ անունների, ինչպէս՝ Արջասփ (Արջաթ աստ), Գուփեթ շահ, Փաշանգ, Վիսէ (Վիյսէք), Փիրան (Ֆարիան), Հուման, Սան, Փիլասմ, Ֆարանգիս, Վարազ (Գորազ) եւ այլն, որոնք բոլորն էլ արիական անուններ են եւ թուրքերէնի կամ թիւրքական անունների հետ ոչ մի կապակցութիւն չունեն[46]: Ինչ վերաբերում է Թուր անուան, Բանդահեշնի 31րդ բաժնի 7րդ մասում գրուած է «Թուչ» եւ Իրաջ անունը որպէս «Իրիչ»: Լուրջ կերպով ենթադրւում է, որ «Թուչ»ը աւելի ճիշտ ձեւն է, եւ Թաբարին այդ անունը «Տուջ» ձեւով է ներկայացրել[47]:

Իսկ այն երկրները, ուր Իրանի եւ Թուրանի քաջերը իրար հետ բախւում էին, ունէին մի շարք հետաքրքրական անուններ: Աւեստայի մէջ Իրանի եւ

Թուրանի ռազմադաշտը կոչւում է «Խաշտարոսուք», որը մի կիրճ է Քանգդէժ (Քանգդիզ) անունով հռչակուած մի վայրի վերեւում, եւ որին ակնարկ է արուած նաեւ Շահնամէի մէջ: Խաշտար, որ է շահր, իմա՛ քաղաք, եւ վասուք, որ է սու, կամ լոյս ու ճաճանչ (ինչպէս աստղերի ճաճանչ, կամ ճրագի լոյս, կամ աչքի տեսողութեան ոյժ լոյսը), որ թէ՛ պարսկերէնի եւ թէ՛ նրա զանազան բարբառների մէջ շատ յաճախ է գործածւում: Իսկ Քանգ դէժը կամ Քանգ դէզը երբեմն Քանգէ կամ Քանգահէ է գրւում[48]: Այս քաղաքի հիմնադրումը Թուրանի մէջ վերագրւում է Սիաւուշ (Սիավախշ)ին: Բանդահեշնի 29րդ մասի 10րդ պարբերութեան մէջ Քանգ դիզի վայրը Ֆարախքարթ ծովից մի բանի փարսախ հեռու է նշանակուած, իսկ Մինուգ խրադի 69րդ բաժնի 13 եւ 14 հատուածներում Քանգ դիզի տեղը Իրանվիջի սահմանի մօտ է գրուած[49]: Աբան-յաշտի մէջ Քանգահէն վեհ ու սրբազան է անուանուել, իսկ Շահնամէի մէջ էլ յիշուել է որպէս «Բեհեշթ Քանգ» (պարսկերէն բեհեշտ, այսինքն՝ դրախտ, Ծ. Թ.): Ինչպէս երեւում է, Թուրանի այս վայրը իրանցիների աչքին սրբազան էր, եւ սա եւս մի շատ կարեւոր կէտ է, որ հաստատում է իրանցիների եւ թուրանցիների միմեանց հետ ցեղակից լինելը:

Հռչակաւոր արեւելագէտ Իւսթին յիշեալ շրջանի մասին այսպէս է գրում.

«Թւում է, թէ այս վայրը, որ չինացիներն էլ Քանգ անունով էին ճանաչում, եւ որ իրանցիների աչքին մի տեսակ դրախտ էր աշխարհիս երեսին, մի խումբ իրանցիների միջոցով կառուցուել էր Թուրանի հողի կենտրոնում, Սիր-Դարիա (Սիհուն) գետի հիւսիսում»[50]:

Ֆարախքարտ անուան հանդիպում ենք Աբան-Յաշտի 4րդ պարբերութեան մէջ: Ըստ այդ գրուածքի «Ֆարախքարթը մի շատ մեծ ծով է, որ հազար լճեր եւ հազար գետեր ունի, եւ այդ ջրի մէկ գետը հոսում է բոլոր այդ եօթ երկրների մէջ[51]:

Որոշ արեւելագետներ կարծում էին, որ Ֆարախքարթը նոյն ինքը Կասպից ծովն է: Պրոֆ. Փուրդաւուդը, յենուելով «Թաշթար Յաշտ»ի վրայ, որի մէջ յիշւում է Նոյի ջրհեղեղի նման մի փոթորիկ, համոզուած է, որ Ֆարախքարթ ծովը Հնդկական ովկիանոսն է: Հաւանաբար այս տեսակէտը ճշմարտութեան աւելի մօտ է, որովհետեւ ըստ Բանդահեշնի գրութեան, այդ մեծ փոթորկի հետեւանքով «երկիրը միակտուր էր, իսկ այդ անձրեւի շնորհիւ ստեղծուեցին ծովեր աշխարհի երեսին եւ երկիրը բաժանեցին եօթ անջատ երկրամասերի»[52]: Միաժամանակ յիշեալ փոթորիկը ստեղծեց երեք մեծ ծովեր եւ 23 փոքր լճեր[53]: Եթէ այս երեք մեծ ծովերը Միջերկրականը, Սեւ ծովը եւ Կասպից ծովը լինեն, այդ պարագային կարելի է պրոֆ. Փուրդաւուդի տեսակէտը իրական համարել, որովհետեւ հնդիկներն էլ արիական ցեղին են պատկանում:

Աւեստայի մէջ յիշւում է նաեւ Չիչասթ ծովի անունը: Սա այն ծովն է, որի միջից Աֆրասիաբը դուրս եկաւ եւ Սիաւուշին սպանած լինելու մեղքի համար սպանուեց: Այդ ծովի վայրի մասին էլ տարբեր տեսակէտներ կան: Պրոֆ. Փուրդաւուդը Ուրմիոյ լիճն է Չիչասթ կարծում[54], իսկ խորհրդային պատմաբան Ի. Մ. Դիակոնովը հակառակում է այս կարծիքին եւ Չիչասթն ու Արալի լիճն է նոյնը համարում[55]:

ինչեւէ, սրանով հանդերձ, մէկ խնդրի շուրջ ոչ մի տարակուսանք չի կարող լինել, այն որ Թուրան երկրի բոլոր աշխարհագրական անունները, ինչպէս նաեւ այնտեղի ժողովուրդների անձնանունները արիական են. մինչեւ այսօր էլ աշխարհի նշանաւոր գիտնականների եւ հետազօտողների կողմից յիշեալ անունների թիւրքական լինելու մասին ոչ մի տարակուսանք չի եղել:

Թուրանի մասին կարելի է վստահութեամբ ասել, որ թուրանցիները, սարմատների եւ իրանցիների նման, արիական ցեղին էին պատկանում: Եթէ այս կէտը փաստուի ընթերցողի մտքում, այդ պարագային Թուրանի երկրամասի հարցն էլ ինքնըստինքեան կլուծուի:

Ի. Մ. Դիակոնովը թուր ցեղերին համարում է սակերից, Թուրան երկիրը համարում է «Արեւելեան Իրան», այլ խօսքով՝ «Միջին Ասիոյ սակերի երկիրը»[56]:

Մեծ թուով գիտնականներ թուր ցեղը համարել են սակերի հետ նոյնը: Խորհրդային գիտնական պրոֆ. Աբաեւը, Ֆարիան կամ Ֆարիանէ անուան շուրջ, որը Մարւի մօտ գտնուող մի շրջանի անունն է եղել, կարծիք է յայտնում եւ թուր ցեղին սակերի ցեղի հետ նոյնն է համարում: Նա գրում է.

«Ըստ Աւեստայի, Ֆարիանէն պատկանում էր թուր ցեղին, կամ աւելի ճիշտ՝ սակերին: Այս եւ նման անունների առկայութիւնը սակերի մօտ պարզ եւ հասկանալի է»[57]:

Աւեստայի մէջ Ֆարիան անունը նաեւ թուրանական մի ընտանիքի անունն է եղել: Աբան Յաշտի մէջ, 20րդ արարի 80րդ եւ 81րդ պարբերութիւններում, այսպէս է գրուած. «Եաւս Յաշտը, ֆարիաններից (գերդաստան) Արտաւիսոր Նահիդի համար, Գոյների Ալիքները Կոտրող կղզում, 100 ձի, 1000 կով եւ 10000 ոչխար մատաղ արեց»[58]:

Գաթաների մէջ, 46րդ եասայի 12րդ հատուածում, թուրանցի Ֆարիանը ներկայացուած է որպէս այդ անունը կրող մի անձ: Պրոֆ. Աբաեւը լատինական Ֆլիանոս Flianos եւ Օլուիա Olviya անունները նոյնպէս համարում է Ֆարիան կամ Ֆարիանէ անունների հետ միեւնոյնը: Որոշ արեւելագէտներ Փիրան Վիսէ անունը, որ Աֆրասիաբի սպարապետի կոչումն էր, Ֆարիան են համարում, իսկ Թաբարին այս նոյն անունը

ներկայացրել է որպէս «Ֆիրան, որդի Վիսղանի»[59]: Միւս կողմից, Թաբարին Ֆարիաք անունը կրող մի մարդու Քայումարսի թոռն է անուանել.[60] հաւանական է, որ այս անունը նոյն Ֆարիանը լինի, քանի որ արաբական հին գրութեան մէջ «Ք», իմա՛ քաֆ տառը նման էր գրւում «Ն», իմա՛ նուն տառին: Եթէ այս կէտը ճիշտ լինի, թուրանական «Ֆարիան» անունի արիական լինելը տրամաբանօրէն ընդունելի կլինի:

Վերը ասուածներից ընդհանրապէս կարելի է եզրակացնել, որ Ֆարիան անունը թէ անձնանուն է, թէ գերդաստանի անուն եւ թէ երկրի անուն: Այս սովորութիւնը արիացիների մօտ յաճախ է նկատւում. ցեղի կամ երկրի անունը դնում էին անհատների վրայ: Այժմ էլ այս սովորոյթը ընթացիկ է մեր երկրում (իմա՛ Իրանում, Ծ. Թ.), եւ Իրան, Թուրան, Գիլան եւ նման անունները դրւում են անձնաւորութիւնների վրայ:

Շատերի ենթադրութեամբ, իրանցիների եւ թուրանցիների միջեւ տեղի ունեցող բախումները, հակառակ այն բանին, որ երկուսն էլ նոյն ցեղին եւ նոյն տոհմին էին պատկանում, երկու խնդիրներից էին ծնունդ առնում: Նախ այն, որ թուրանցիք քօչուոր էին եւ անապատաբնակ, ու այսպիսով յաճախ, ժամանակ առ ժամանակ յարձակում էին գործում հողագործ իրանցիների վրայ: Իսկ անհաշտութեան երկրորդ պատճառը, ըստ երեւոյթին, կրօնական հաւատալիքների տարբերութիւնն էր, որովհետեւ, ինչպէս պարզւում է դիցաբանական առասպելներից, զրադաշտական կրօնը չկարողացաւ թուրանական ցեղերի մէջ մուտք գործել:

Պրոֆ. Աբաեւը, որ պատկանում է Հիւսիսային Օսեթիայի շրջանի կովկասաբնակ իրանական ժողովուրդներին, սակերին եւ սարմատներին իրանական ազգերից է համարում: Անդրադառնալով Օսեթիայի ժողովրդի լեզուին, ժողովրդական բանահիւսութեան, դիցաբանական հեքիաթներին եւ կրօնական հաւատքին, այսպէս է գրում.

«Օսեթիայի լեզուի, ժողովրդական բանահիւսութեան, դիցաբանական բանահիւսութեան եւ կրօնական հաւատալիքների մէջ զրադաշտականութիւնից ոչ մի հետք չի նկատւում: Ինչպէս Հերոդոտը եւ մի շարք այլ հնադարեան հեղինակներ գրել են՝ զրադաշտական կրօնը սակերի մէջ մուտք չի գործել: Այս հանգամանքը մեզ թոյլ է տալիս այսպէս ձեւակերպել մեր տեսակէտը, որ սակերն ու սարմատները իրանական տոհմի միակ ցեղերն են, որոնք զրադաշտականութիւն չեն ընդունել[61]:

Պրոֆ. Աբաեւը, թուրանցիներին եւ սակերին նոյն ցեղից համարելով, հաստատում է նաեւ մի այլ կէտ, որը մեծ չափով արժանի է ուշադրութեան: Խօսելով ցեղական եւ տոհմական անունների գործածութեան աւանդոյթի

եւ սովորոյթի մասին, նա բացայայտել է նաեւ իրանցի եւ թուրանցի (սակեր) ցեղերի մօտ «Արիա» անուանումի ընդհանրացած լինելը, որը նոյնպէս հաստատում է նրանց ցեղային ծագման նոյնութիւնը: Պրոֆ. Աբաեւը այս խնդրի շուրջ այսպէս է գրում.

«Պէտք է յիշեցնենք, որ բազմաթիւ անձնանուններ, որոնց ուղեկցում է «Արիա» անունը — (ինչպէս՝ Արիարամանէ, Արիոբարզան, Արիարաթ Aryarat եւ սակերի Արիափիթ Aryapit, Արիաֆարն Aryafarn եւ այլն), այն կոչումներից են, որ առնչութիւն ունեն տոհմային անունների հետ, որովհետեւ «Արիա» արմատը ցեղային եւ տոհմային բառ է: Ցեղային եւ տոհմական անուններից անհատների անուանակոչութեան համար օգտուելու սովորոյթը մինչեւ այսօր էլ դեռ իրանական անունների մէջ ընդունուած եւ ընդհանրացած է»[62]:

Ինչ վերաբերում է «թուր» անուան, պրոֆ. Փուրդաւուդը, «թուր» բառը սանսկրիտական բառին համապատասխան համարելով, գտնում է, որ այն նշանակում է քաջ կամ հերոս, եւ պարսկերէն բառարանների մէջ էլ այս իմաստով է գրուած: Սակայն Գիլաքի եւ քրդերէն բարբառների մէջ «թուր» բառը խենթի, բարբարոսի եւ ըմբոստի իմաստով է գործածւում: Պրոֆ. Փուրդաւուդը այն կարծիքին է, թէ «Քանի որ թուրանցիք իրանցիների թշնամին էին, յետագային այս բառից օգտւում էին որպէս խենթ եւ վայրենի իմաստ արտայայտող[63]:

Գերմանացի գիտնական Մարկուարտը թուրանցիներին համարում էր իրանական տոհմին պատկանող ցեղերից, որոնք, թափառական եւ անապատաբնակ լինելով, քաղաքաբնակ եւ հողագործ իրանցիներից քաղաքակրթութեան տեսակէտից աւելի ցածր դիրքերի վրայ էին եւ յաճախ արշաւում էին իրանցիների վրայ եւ թալանում ու կողոպտում էին նրանց: Այս իսկ պատճառով, իրանցիները բարբարոս ու վրանաբնակ ցեղերին «թուր» էին անուանում[64]:

Եթէ ի նկատի ունենանք, որ, ինչպէս Գիլաքի եւ քրդական բարբառների մասին ակնարկեցինք, թուր անունը վայրենի է նշանակում, այդ պարագային այս մեծ գիտնականի տեսակէտը կհամապատասխանի իրականութեանը:

Աւեստայի մէջ բազմիցս Թուր երկիրը ներկայացուել է որպէս արիացիների երկրի մի մասը (Ֆերեյդունի տէրութիւն): Ֆարւարդին Յաշտի 143րդ եւ 144րդ պարբերութիւններում յիշատակութիւններ կան Իրանի, Թուրանի եւ Սաիրիմ (Սարմատ) երկրների մաքրակրօն տղամարդկանց եւ կանանց հրեշտակութեան մասին, ինչպէս նաեւ երկու այլ երկրների՝ Սայինի եւ Դահի անունը կրող երկրների մաքրակրօն տղամարդկանց եւ կանանց հրեշտակների մասին: Այս հինգ երկրներից զատ, մենք Ֆարւարդին Յաշտի մէջ

որեւէ այլ երկրի անուան չենք հանդիպում: Ֆարւարդին Յաշտի 145րդ պարբերութեան մէջ «բոլոր երկրների» տղամարդկանց եւ կանանց հրեշտակները միատեղ եւ առանց անուանումի են յիշւում, բայց Ֆարւարդին Յաշտի 143րդ պարբերութիւնում, միմիայն երեք երկրներ՝ Իրան, Թուրան եւ Սարմատը, որոնք արիացիների գլխաւոր երկրներն էին, յականէ յանուանէ են յիշատակւում: Բայց, քանի որ երկու այլ երկրներ, Սայինին եւ Դահին 143րդ պարբերութեան մէջ առանձին են խօսքի առարկայ դառնում, այստեղից կարելի է եզրակացնել, որ երեք երկրներ՝ Իրանը, Թուրանը եւ Սարմատը մասնաւոր մի դիրք ունէին, որը նրանց ժողովուրդների ցեղակից լինելու արդիւնքն էր: Ահա Ֆարւարդին Յաշտի 143րդ պարբերութեան բնագիրը.

«Փառաբանում ենք Իրանի երկրների մաքրակրօն տղամարդկանց հրեշտակներին: Փառաբանում ենք Իրանի երկրների մաքրակրօն կանանց հրեշտակներին: Փառաբանում ենք Թուրանի երկրների մաքրակրօն տղամարդկանց հրեշտակներին: Փառաբանում ենք Թուրանի երկրների մաքրակրօն կանանց հրեշտակներին: Փառաբանում ենք Սաիրիմ (Սարմատ) երկրների մաքրակրօն տղամարդկանց հրեշտակներին: Փառաբանում ենք Սաիրիմ երկրների մաքրակրօն կանանց հրեշտակներին»[65]:

Ինչպէս ընթերցողները նկատեցին, Ֆարւարդին Յաշտի 143րդ պարբերութեան մէջ միատեղ յիշատակութիւն եղաւ միայն երեք երկրների՝ Իրանի, Թուրանի եւ Սարմատի մասին: 144րդ պարբերութիւնը փառաբանում է «Սայինի» եւ «Դահի» երկրների մաքրակրօն տղամարդկանց եւ կանանց հրեշտակներին, իսկ 145րդ պարբերութիւնը յատկացուած է բոլոր երկրների մաքրակրօն տղամարդկանց եւ կանանց հրեշտակներին[66]:

Բազմաթիւ դժուարութիւնների ենք հանդիպում Իրանի եւ Թուրանի սահմանները ճշգրտելու գործում: Յոյն աշխարհագրագէտ Պտղոմէոսը «Թուր» երկիրը համարել է Խորեզմի մի շրջանը[67]: Մեծ թուով հետազօտողներ Ամուդարիա (Ջիհուն) գետի շրջակայքն են համարում Իրանի եւ Թուրանի միջեւ եղած սահմանը: Խարազմին իրանցիներին համարում էր Ջիհուն գետի տէրերը՝ «Սահիբ-ուլ-Նահր» (գետի սեփականատէրը, ծ. թ.), իսկ Ջիհուն գետի միւս կողմը կոչում էր Թուրանի մարզը[68]:

Իրանեան դիցաբանութեան մէջ Իրանի եւ Թուրանի սահմանագծի մասին մի հեքիաթ կայ, որը կապւում է Էրախշ (Erexsa) անուան հետ: Հետագայ գրութիւններից շատերի մէջ այս անունը Արաշ ձեւն ունի: Թաբարին այդ անուան կրճատուած ձեւը «Իրաշ» է ներկայացրել, որը բոլորից աւելի մօտ է «Էրախշ»ին:

Գրուածքների մէջ այսպէս է ասուած. երբ Աֆրասիաբը յաղթեց Մանուչեհրին, Իրանի եւ Թուրանի միջեւ հաշտութիւն տեղի ունեցաւ, եւ որոշուեց, որ Մանուչեհրի քաջերից մէկի նետը որտեղ որ վայր իջնի, այնտեղն էլ լինի Իրանի եւ Թուրանի սահմանագիծը: Արաշը, որ Իրանի լաւագոյն աղեղնաւորն էր, մի նետ արձակեց, որի վայր իջած տեղը ճանաչուեց որպէս Իրանի եւ Թուրանի սահմանը:

Թիր-Յաշտի 6րդ եւ 37րդ պարբերութիւններում գրուած է, որ Արաշը իր նետն արձակեց Աիրիօխշուս Airyoxsutha լեռից դէպի Խուանուանթ Xvanvant լեռը, եւ հէնց այդ վայրը ճանաչուեց որպէս Իրանի եւ Թուրանի սահմանագիծը:

Այժմ ընթերցողներին ենք ներկայացնում Թիր-Յաշտի 6րդ պարբերութեան բնագիրը.

«Փառաբանում ենք իմաստուն Րայոմանդ աստղի Անձրեւի հրեշտակին, որ սրընթաց արշաւում է դէպի Ֆարախքարթ ծովը, նման օդով սուրացող այն նետին, որ նետաձիգ Արաշը՝ արիացիների լաւագոյն աղեղնաւորը, Աիրիօխշուս սարից արձակեց դէպի Խուանուանթ լեռը[69]:

Այս երկու լեռները գիտնականների եւ հետազօտողների կողմից չեն զատորոշուած: Աբուրեյհան Բիրունին այսպէս է գրում. «Նետը Րուեան սարից (Թաբարիստան) .... հասաւ մինչեւ Ֆարղանէ[70]:

Թաբարին այդ սահմանը «Րուդ Բալխ»ն է համարում[71]: Րուդ Բալխ գետը պիտի նոյն ինքն Ամուդարիան (Ջիհուն) լինի, որի շուրջ մեծ թուով գիտնականներ համակարծիք են:

Ֆախրեդդին Ա՛ադ Գորգանին եւս նոյն տեսակէտն է արտայայտում եւ իր Վիս ο Րամին պոէմի մէջ այսպէս է գրում.

«Եթէ Արաշին են աղեղնաւոր անուանում,
Որ Սարիից մինչեւ Մարու թռցրեց իր նետը,
Դու անապատի օդատեսիլից ես ինձ ուղարկում
Ամէն մի ժամ, աւելի քան հարիւր նետեր»:

Այստեղ նպատակ չունենք այս առասպելի էութիւնը կամ Իրանի եւ Թուրանի սահմանի ստեղծումը քննել, այլ տողերիս հեղինակը միտում ունի ընթերցողի ուշադրութիւնը տանել դէպի «Ամու-Դարիա», որը բազմաթիւ պատմաբաններ եւ ուսումնասիրողներ համարել են Իրանի եւ Թուրանի սահմանը:

Պրոֆ. Փուրդաւուդն էլ նոյն կարծիքին է. նա այսպէս է գրել. «Թուրանի երկրամասը միանում էր Իրանվիջ կամ Խորեզմ երկրին եւ տարածւում էր Ջիհուն (Ամուդարիա) գետի արեւելքից մինչեւ Արալ լիճը, որ միջնադարեան աշխարհագրագէտների մօտ Խորեզմ լիճ էր կոչւում»[72]:

Շարունակելով իր խօսքը, նա գրում է.

«Իրանցիք եւ թուրանցիք, երկուսն էլ նոյն գերդաստանից են, եւ Թուրանի թագաւորների տոհմածառը հասնում էր Փիշդադեան Ֆրէյդունին: Միւս կողմից, թուրանցի բոլոր անուանի մարդկանց անունները, թէ նրանք, որ Շահնամէի մէջ յիշատակուած, եւ թէ նրանք, որ պատմութեան այլ գրքերի մէջ են հանդիպում, բոլորն էլ արիական են, եւ նրանց բառացի իմաստները պարզ ու ճանաչուած են: Այսպիսով, մեր օրերի ստուգաբանական գիտութիւնը այդ անունները կրողների արիացի լինելու վերաբերեալ կասկածի ոչ մի տեղ չի թողնում»[73]:

Պրոֆ. Բարտոլդը եւս նոյն հարցի մասին գրել է.

«Թուրան անունը յիշուած է Աւեստայի մէջ: Ինչպէս երեւում է, թուրանցիներն էլ արիական ցեղի ճիւղերից մէկն են, որ աւելի քիչ են օգուտ քաղել քաղաքակրթութիւնից: Իրանցի եւ թուրանցի երկու խմբաւորումների մէջ թշնամութիւն է տեղի ունեցել: Մ.թ. վեցերորդ դարից սկսեալ, երբ թիւրքերը մուտք գործեցին Միջին Ասիա, այս երկու անունների նմանութիւնը պատճառ եղաւ, որ շատերը Թուրան եւ թիւրքեր անունները նոյնը համարեն: Մինչդեռ այդ երկու անունների մէջ ոչ մի առնչութիւն գոյութիւն չի ունեցել»[74]:

Այս խնդիրը կփակենք Հայաստանի գիտնականներից Մանուէլ Զուլալեանի խօսքերով.

«Բոլոր այն դէպքերում, երբ եւրոպացի ուսումնասիրողները անկարող են եղել մի որեւէ ցեղ բնորոշելու, եւ անուանել են ոչ սեմական եւ ոչ հնդեւրոպական, որը երբէք չէր վերաբերում «թուրանական» ցեղերին, թիւրք պատմաբանները, առանց դոյզն չափով ուշադրութիւն դարձնելու տոհմական եւ աշխարհագրական պարագաներին, սկսեցին ոտնձգութիւններ կատարել եւ, ձեռքերը երկարացնելով, ամենայն աճպարարութեամբ եւ ճարպիկութեամբ նրանց Թիւրք կոչեցին: Այսպիսով, թէեւ «Թուրանցի» անուանումը ոչ մի ժամանակ թիւրք իմաստով չի եղել, սակայն թիւրքերը բացարձակ աճպարարութեամբ «թուրանցին» թիւրք են անուանել»[75]:

3. Արդեօք Առաջաւոր Ասիոյ ցեղերը թիւրքեր էին

Որպէսզի թիւրք պատմաբանների ցուցաբերած յաւակնութիւնների սահմանը որոշ չափով պարզուի, նրանց մի շարք գրածները ներկայացնում ենք ընթերցողների ուշադրութեան: Թիւրք պատմաբաններից մէկը, Թողան անունով, այսպէս է գրել.

«Խուռռիները, ինչպէս նաեւ շումերներն ու էլամցիները առաջին թիւրքերից են»[76]:

Ալի Քէմալը, մի այլ թիւրք պատմաբան, Ուրարտական տէրութիւնը անուանել է «թիւրք եւ թուրանական»[77]:

Իսկ մի ուրիշ թիւրք պատմաբան, Գիւնալթայ անունով, թիւրքական ցեղերի մասին խօսելիս այսպէս է գրել.

«Առաջաւոր Ասիոյ պատմութեան արշալոյսին լոյս աշխարհ եկած ցեղերը՝ շումերները, շուբարեցիները, խուռռիները, էլամցիները, կուտիները, կասսիտները, միտաննիները եւ խեթերը, այդ (իմա՛ թիւրքական) խմբերին են պատկանում: Սակայն հաւանական է, որ ակկադցիները, ասորիները, արամէացիները, հրէաները եւ սեմականները եւս այս խմբակցութեանն են պատկանում[78]:

Ինչպէս ընթերցողները նկատեցին, ըստ Գիւնալթայի, շումերները, շուբարեցիները, խուռռիները, էմալցիները, կուտիները, կասսիտները, միտաննիները եւ խեթերը «վստահօրէն եւ անտարակոյս» թիւրք են եղել, բայց խնդիրը սրանով չի վերջանում, այլ կայ նաեւ այն հաւանականութիւնը, որ ակկադցիները, ասորիները, արամէացիք եւ հրէաներն էլ թիւրք լինեն:

Եթէ չնչին չափով անգամ ուշադրութիւն դարձնենք թիւրք պատմաբանների գրածներին, կպարզուի, որ ոչ թիւրք ցեղերի հետք անգամ չկայ Արեւմտեան, Կենտրոնական եւ Հիւսիսային Ասիոյ մէջ, այլ այն, որ այդ աշխարհամասի բոլոր ժողովուրդներն էլ թիւրքական ցեղերից են եղել:

Թիւրք մի այլ պատմաբան, Արին Էնգինը, խեթերին եւ ուրարտացիներին էլ թիւրք է համարել[79]:

Կիրզիօղլուն նախ հերքում է այն, որ սակերը հնդեւրոպական ազգերի եւ մանաւանդ իրանական ցեղերին էին պատկանում, ու նաեւ, այլ պանթիւրքիստ պատմաբանների նման նրանց թիւրք է անուանում: Նրա կարծիքով, «Ուրարտական իշխանութեան տիրապետութեան տակ գտնուող բոլոր ցեղերը սակերից էին ծագում ստացել, այլ խօսքով, թիւրք են եղել»[80]:

Պանթիւրքիստ պատմաբանները մարերին, պարթեւներին եւ քիւրդերին էլ թիւրք են համարում: Կիրզիօղլուն իր գրքերից մէկում, որ կոչւում է «Որ կողմից էլ որ նայենք, քիւրդերը թիւրք են» եւ հրատարակուել է 1964 թուին Անկարայում, խօսում է քիւրդերի մասին եւ այսպէս է գրում. «Քիւրդերը ամէն տեսակէտից թիւրք են»: Հերքելով քիւրդերի արիական ծագումը եւ այդ ցեղի իրանական լեզուների խմբին պատկանելը, նա այսպէս է արտայայտուել. «Այն, որ քիւրդերը ամէն տեսակէտից թիւրք են, մի պարզ եւ անժխտելի իրականութիւն է, ինչպէս երբ ասում են՝ երկու անգամ երկու հաւասար է չորսի (2x2= 4)»[81]:

Կիրզիօղլուն, այս «տեսակէտը» արտայայտելուց յետոյ, աշխարհի թիւրքագէտներին ուղղուած մի հրահանգ էլ է արձակել, եւ, շարունակելով իր խօսքը, այսպէս է գրել.

«Մենք խօսեցինք այն հարցի մասին, թէ Անատոլիոյ թերակղզու արեւելքում, Ազարբայջանում եւ Վրաստանում նախքան Իսլամի ծագումը թիւրքեր են եղել: Նոյն ժամանակ մենք փաստեցինք, որ քիւրդերը թիւրք են: Այսուհետեւ, աշխարհի թրքագէտները, որոնք ուսումնասիրում եւ հետազօտում են թիւրքական պատմութիւնը, հարկ է, որ այս ճամփով առաջնորդուեն»[82]:

Պանթիւրքիստ պատմաբանները այսքանով չբաւարարուեցին եւ իրենց ոտնձգութիւնները տարածեցին, ներառելով Աքեմենեան տէրութեան մարզերը, ու, այսպիսով Շոշի քաղաքակրթութեան եւ կուլտուրայի ստեղծողներին էլ թիւրք համարեցին: Շէմսիդդին Գիւնալթայը, իր «Արեւելքի հին պատմութիւնը» գրքում, բացայայտօրէն գրում է. «Շոշի եւ Մոհենջո-Դարո-ի քաղաքակրթութեան ստեղծողները թիւրքական ցեղերից են եղել[83]:

Նա թիւրքերին համարում է Արեւելքի հնագոյն ցեղը, որ, իբր թէ, Քրիստոսից հինգ հազար տարի առաջ մուտք են գործել Առաջաւոր Ասիոյ շրջանները:

Այն, ինչ ընթերցողները տեսան, մի չափազանց փոքր ու չնչին մասն է պանթիւրքիստ պատմաբանների գրածներից: Հաւանաբար մինչեւ օրս դեռ պատմական գիտութիւնների մէջ այս աստիճանի մեծ կեղծիք եւ խեղաթիւրում տեղի չի ունեցել: Նախորդ բաժնում ներկայացրինք մի շարք նիւթեր, որոնք մերժում եւ ժխտում են պանթիւրքիստ պատմաբանների յաւակնութիւնները:

Կենտրոնական եւ Առաջաւոր Ասիոյ մէջ բնակուող իրանական ցեղերի մասին ցայժմ ամենադոյզն չափով տարակարծութիւն չի եղել: Մարերի եւ սակերի հնդիրանական ծագումը ոչ մի ժամանակ աշխարհի գիտնականների միջեւ վէճի առարկայ չի դարձել: Այս խնդրի շուրջ գիտնականների ունեցած տեսակէտները մէկ առ մէկ ներկայացնելու նպատակ չունենք, քանի որ մեր նիւթի շրջանակից շատ կհեռանանք: Ուստի կբաւարարուենք միայն այդ շրջանում ապրող ցեղերի մասին արտայայտուած մի քանի տեսակէտների քննութեամբ:

Նախ, իբրեւ շատ հին փաստաթուղթ, կներկայացնենք Հին կտակարանը, ուր Ֆարս եւ Մարաստան անունները կողք-կողքի են յիշատակուած, եւ ուր Աքեմենեան արքաները երբեմն մարեր են կոչւում: Դանիելի գրքի վեցերորդ գլխում այսպէս է գրուած.

«Մարաստանի Դարեհը, երբ 62 տարեկան էր, ստանձնեց թագաւորութիւնը»[84]:

Հին կտակարանում մարերի եւ փարսերի կրօնը մէկ եւ նոյնն է ներկայացուած: Այս կէտը լաւագոյնս բացայայտում է մարերի եւ փարսերի արարողութեանց նոյնութիւնը: Հին կտակարանի մէջ այսպէս է գրուած.

«Ուրեմն, ով արքայ, հաստատիր հրովարտակը եւ ստորագրիր գրութիւնը, որպէսզի մարերի եւ փարսերի կրօնքի նման, որ չի բեկանւում, փոփոխութեան չենթարկուի»[85]:

Եսթերի գրքի մէջ այսպէս է ասուած. «Այս դէպքերը ... պատահեցին Ախշուրաշի (Քսերքսէս) օրերին: Այն ժամանակ, երբ Ախշուրաշը իր մայրաքաղաք Շուշի մէջ իր արքայական գահին բազմած էր, իր թագաւորութեան երրորդ տարում, մի մեծ խնջոյք կազմակերպեց իր բոլոր վեհապետների եւ սպասաւորների ներկայութեամբ: Ներկայ էին Ֆարսի եւ Մարաստանի փառքն ու շքեղութիւնը, իշխաններն ու գաւառների մեծամեծները»[86]:

Հին կտակարանի մէջ կարելի է բազմաթիւ օրինակներ գտնել, որոնց մէջ Մադ եւ Փարս անունները միշտ միմեանց հետ են յիշատակում:

Առաջին դարի աշխարհագրագէտ Ստրաբոնը ակնարկութիւններ ունի էսկիսների (սակերի), մարերի, փարսերի եւ բաքտրիացիների լեզուների նմանութեան, մանաւանդ սակերի եւ մարերի լեզուական սերտ առնչութեան[87]:

Զուլալեանը, մարերի ցեղական ծագման մասին խօսելիս, այսպէս է գրում. «Մարերի հնդիրանական ծագումը ոչ մի ժամանակ գիտնականների կողմից տարակարծութեան չի ենթարկուել»[88]:

Պրոֆ. Փուրդաւուդը եւս, անդրադառնալով այս խնդրին, այսպէս է գրել.

«Մադը մի իրանական ցեղ է եղել, որի բնակավայրը կոչուել է իր անունով: Մարերն էին, որ մ.թ.ա. շուրջ 713 թուին Իրանի արեմուտքում անկախութիւն հաստատեցին եւ Համադանը (Էքբաթանա) իրենց մայրաքաղաքը դարձրին: Նրանք տապալեցին ասորական պետութիւնը եւ բովանդակ իրանական հողային տարածքն ու հարեւան երկրների մի մասը իրենց տիրապետութեան ենթարկեցին»[89]:

Ի. Ալիեւը մարերին համարել է արիական ցեղերից եւ իրանական լեզուի ժողովուրդներից[90]: Ֆրանսիացի գիտնական պրոֆ. Գիրշմանը եւս նոյնանման տեսակէտ է արտայայտել[91]:

Ռուս գիտնական Գրանտովսկին, մարերին իրանական ցեղերից մէկը համարելով, այս հարցի մասին խօսելիս գրում է. «Մեր թուագրութիւնից առաջ 7րդ դարում իրանական լեզուին պատկանող ժողովուրդների հասարակական եւ քաղաքական զարգացման շնորհիւ ստեղծուեց մարերի պետութիւնը»[92]:

Ի. Մ. Դիակոնովը գրել է. «Այն լեզուն, որ հին դարերի մարդիկ մարերէն էին անուանում, պատկանում էր իրանական լեզուների խմբին»[93]:

Ըստ Քասրաւու, «Պատմութեան սկզբից, որը եղել է երեք հազար տարի առաջ, մարերը բնակւում էին Ազարբայջանում եւ նրա շրջակայքում: Եթէ մէկը ծանօթ է պատմութեան, նա տեղեակ է այն բանին, որ մինչեւ երկու հազար տարի առաջ թիւրքերը այդ շրջակայքից շատ հեռու էին եւ ապրում էին Ասիոյ կենտրոնական մասերում: Ուստի շատ ռամիկ գաղափար է այն, որ մի շարք մարդիկ ասում են, թէ Ազարբայջանը սկզբից եղել է թիւրքերի երկիրը»[94]:

Իսկ ինչ վերաբերում է սակերին եւ պարթեւներին, որոնց մասին պանթիւրքիստ պատմաբանները յաւակնում են ասել, թէ նրանք թիւրքեր են եղել, մենք կդիմենք ռուս գիտնական Օշանինի գրուածքին: Օշանինը համոզուած է, որ «Կովկասեան կուլտուրայի ստեղծողները եղել են սակերը, որոնք համարւում են իրանական ցեղերից եւ ոչ մի առնչութիւն չունեն թիւրքերի հետ»: Ըստ Օշանինի, «Պարթեւները սակեր էին... իսկ Միջին Ասիոյ ցեղերի լեզուի թիւրքերէնի վերածուելը, ոչ մի պարագայում, նախ քան մեր թուագրութեան 6րդ դարը տեղի չի ունեցել»[95]:

Պարթեւների մասին ռուս գիտնական Օրանսկին հետեւեալ կարծիքն է յայտնել.

«Պարթեւները իրանցի էին, նրանց լեզուն էլ ամբողջովին եւ կատարելապէս միջին դարերի իրանական լեզուների խմբին էր պատկանում եւ ներկայի պարսից լեզուի զարգացման շրջաններից մէկն է կազմում»[96]:

Այս կէտը աշխարհի բոլոր գիտնականների համար բացայայտ է, այսուամենայնիւ, պանթիւրքիստ պատմաբանները Արշակունի պարթեւներին «Թիւրք»են անուանում:

Այլ ցեղերի մասին էլ ոչ մի տարակուսանք չկայ, քանի որ Առաջաւոր Ասիոյ մէջ բնակուող ցեղերը երբէք թրքախօս չեն եղել: Կասկածի առիթ տուող միակ պարագան էլամերէն լեզուն է եղել: Որոշ ուսումնասիրողներ էլամերէնը համարում են կցական լեզու: Այն իմաստով, որ այդ լեզուի քերականական կարգը ձեւակերպուած է նախածանցի եւ բառարմատի միացումով, ուստի յաւակնում են ասելու, որ էլամի ժողովուրդը թրքախօս է եղել եւ թրքական ցեղերին է պատկանել: Մի ժողովուրդ, որ մ.թ.ա. երրորդ հազարամեակում բնակուել է Համադանում, Խուզիստանում, Բուշիրում, Իսֆահանում եւ Քաշանի մէջ, աղի աւազուտների շրջակայքում, մի երկիր, որ հին արձանագրութիւնների մէջ Էնշան եւ Էնզան է անուանուել:

Կցական լեզուների մասին հարկ է ասել, որ աշխարհում այդպիսի լեզուները մեծ թիւ են կազմում, սակայն կցական լեզու ունեցող ազգերը երբէք իրենց թիւրքերի հետ ազգակից չեն յայտարարել: Այսուհանդերձ, պանթիւրքիստները յաւակնում են, թէ որքան էլ որ մեծ լինի նման լեզունե-

րի թիւը, այդ պարագան աւելի եւս բացայայտում է այդ ազգերի թիւրք լինելը:

Խեթերի եւ շումերների մասին էլ պանթիւրքիստ պատմաբանները նոյնանման տեսակէտ են արտայայտել: Իստամբուլում տպագրուած «Պատմութիւն» գրքի մէջ գրուած է. «Խեթերը, նման շումերներին եւ էլամցիներին, թիւրք էին»[97]:

Արեւելքի այլ հին լեզուների համեմատութեամբ, էլամերէնը աւելի քիչ եւ աւելի թեթեւ կերպով է ուսումնասիրութեան եւ հետազօտութեան ենթարկուել: Աչքառու չափով ցայժմ ձեռք են բերուել էլամերէն լեզուով գրութիւններ, սակայն դրանց ուսումնասիրութիւնը եղել է համրաքայլ ու դանդաղ, որովհետեւ հետազօտողները մեծ դժուարութիւնների հետ դէմ-յանդիման են եղել: Բուն պատճառն այն է, որ հին լեզուներից էլամերէնը ամենամութ եւ ամենադժուարներից մէկն է եւ դեռեւս այն աստիճանի ճանաչուած չէ, որպէսզի այլ լեզուների հետ համեմատելը զգալի արդիւնքների յանգեցնի: Այս իսկ պատճառով, էլամերէնի եւ այլ հին լեզուների ազգակցութիւնը դեռեւս չի բնորոշուել: Որոշ հետազօտողներ, փաստ համարելով աստուածների անունները, էլամերէնը ուրարտերէնին մօտ են կարծում: Սարգոն II-ի (մ.թ.ա. 722-705) մի արձանագրութեան մէջ հանդիպում ենք «Բաղ-Բարթեւ» կամ «Բաղ-Փարթեւ» անուան: Այս անուան առաջին մասը՝ «Բաղ»ը, իրանական մի բառ է եւ նշանակում է աստուած: «Բարթեւ»ը, որ աքքադերէնի մէջ «Փարթեւ» ձեւով է հանդիպում, նման է «Փարթի» անուան, որը էլամական մի աստուածուհու անունն է: Դեռեւս շատ դժուար է էլամերէնի եւ ուրարտերէնի նմանութեան մասին կարծիք յայտնել:

Էլամերէնի մասին ուսումնասիրութիւններ անելը սկսուեց Բեհիսթունի արձանագրութեան էլամերէն մասի հրատարակութեամբ: Բեհիսթունի արձանագրութիւնը կազմուած է երեք լեզուով՝ աքքադերէն, էլամերէն եւ հին պարսկերէն, սակայն յիշեալ արձանագրութեան երկրորդ սիւնեակի լեզուն ցայժմ բազմաթիւ անուանումներ է ստացել: Ուսումնասիրողներից ոմանք այն համարել են մարերէն, ոմանք գրեթէ մարերէն, ոմանք էսկիսերէն (սակերէն), ոմանք մարերէն-սակերէն, իսկ ուրիշներն էլ ամարդերէն (Ամարդի): Էլամական թագաւորներից արձանագրութիւններ գտնուեցին, որոնց լեզուն եւ գրութիւնը համանման է Բեհիսթունի արձանագրութեան երկրորդ սիւնեակի լեզուին ու գրութեան: Բազմաթիւ անուններ գտնուեցին, ինչպէս՝ խուզերէն (սուզերէն), էնշաներէն եւ, ի վերջոյ, էլամերէն, որովհետեւ սա համապատասխանում է այդ երկրի անուան հետ:

Համաշխարհային երկրորդ պատերազմից յետոյ այս ուղղութեամբ որոշ քայլեր կատարուեցին, եւ կազմուեց աքեմենեան դարաշրջանի էլամերէնի քերականութիւնը, սակայն, այս բոլորով հանդերձ, յիշեալ լեզուով գրուած աւելի հին բնագրերը, որոնցից հնագոյնը պատկանում է մ.թ.ա. 23րդ դարի առաջին կէսերին, դեռեւս չի պարզաբանուել: Այս պատճառով, գիտնականները էլամերէնը բաժանում են երեք շրջանի՝ հին (սկզբից մինչեւ մ.թ.ա. 13րդ դար), միջին (մ.թ.ա. 13րդ դարից մինչեւ 8րդ դար) եւ հետագայ (աքեմենեան շրջանին առնչուող):

Որոշ ուսումնասիրողներ խուզերէնը համարում են էլամերէնից մնացած մի լեզու եւ այս կապակցութեամբ հիմնուում են Իսթախրիի գրութեան վրայ: Յիշեալ գիտնականը իր «Ալմասալիք վալ Մամալիք» գրքի մէջ այսպէս է գրում. «Խուզիստանի բնակիչներից շատերը ծանօթ են պարսկերէնին եւ արաբերէնին, եւ մանաւանդ գիտեն խուզի (իմա՛ խուզերէն) լեզուն»[98]:

Իսլամի հանրագիտարանի մէջ, հիմնուելով Իսթախրիի գրութեան վրայ, այսպէս է ասուած. «Հաւանական է, որ խուզերէն լեզուն էլամերէնի բարբառներից մէկը լինի»[99]:

Էլամերէն լեզուի շուրջ տարակուսանք ստեղծող հաւանական պարագաներից մէկը Ի. Մ. Դիակոնովի գրածն է «Մարերի պատմութիւն» գրքում: Յիշեալ աշխատութեան մէջ Դիակոնովը մի շարք խնդիրներ է առաջ քաշում էլամերէնի եւ թիւրքական լեզուների ազգակցութեան հաւանականութեան շուրջ: Այս գիրքը, որ հրատարակուեց 1956 թուին, գրուել էր Ազէրբայջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան գիտութիւնների ակադեմիայի պատմութեան եւ փիլիսոփայութեան ինստիտուտի պատուէրով: Այդ գրքի պատուէրը, ամենայն հաւանականութեամբ, քաղաքական ծրագրեր եւ նպատակներ է հետապնդում: Մի քիչ խորանալով հեղինակի նախաբանի մէջ, կարելի է այս պարագան բացայայտել: Սակայն 22 տարի յետոյ, 1978 թուին հրատարակուած Սովետական մեծ Հանրագիտարանի մէջ, նոյն հեղինակը հակառակ դիրքից է խօսում: Իր հետագայ աշխատութիւններում նա հրաժարւում է «Էլամերէնի ազգակցութեան հաւանականութիւնը թիւրքական եւ մոնգոլական լեզուների հետ» տեսակէտից եւ այսպէս է գրում.

«Էլամերէն լեզուի ազգակցութիւնը, այլ հնադարեան ու պատմական լեզուների հետ, չի յայտնաբերուել: Ինչպէս երեւում է, ամենաարդիւնաւէտ ուսումնասիրութիւնները կատարուել են էլամերէն լեզուի եւ դրաւիդեան լեզուի առնչութեան շուրջ»[100]:

Գիտենք որ դրաւիդեան լեզուն հնադարեան լեզուներից է, որ ընդունուած եւ տարածուած է եղել Հնդկական թերակղզու հարաւում, Մադրասի շրջակայքում, Քերալայում, Մէյսուրում, Անդհրափրադեշում եւ այլ վայրերում:

Խորհրդային մի այլ գիտնական, պրոֆ. Իւսուֆովը իր «Էլամ» գրքում, ժխտելով էլամերէնի՝ թիւրքական, հնդկական եւ կովկասեան լեզուների հետ ազգակցութեան հարցը, այսպէս է գրում.

«Այս բնագաւառում էլ համեմատելու գործընթացը սպասուած արդիւնքը չունեցաւ... որովհետեւ այս պարագային կովկասեան լեզուների զարգացման պատմութիւնը եւ երկար դարաշրջաններում յիշեալ լեզուների մէջ տեղի ունեցող հնչիւնափոխութիւնը ուշադրութեան առարկայ չէր դարձել»[101]:

Ժամանակակից գիտութիւնը դեռեւս չի կարողացել ճշգրիտ մի պատասխան գտնել այն հարցումին, թէ Արեւելքի ամենահնագոյն ցեղերը, եւ ի շարս դրանց, շումերները, էլամցիները եւ շուբարեցիները ցեղագրական եւ լեզուական տեսակէտներից ինչպիսին են եղել: Որոշ ուսումնասիրողներ այդ ցեղերին զանազան անուանումներ են տուել, երբեմն նրանց համարել են «Յաբեթական», երբեմն «Ասիանական» եւ երբեմն էլ «Թուրանական»: Այս անուանումները դեռեւս մնում են անորոշ եւ պայմանական: Այսուհանդերձ, պանթիւրքիստ պատմաբանները, պատմական գիտութիւնների եւ հնագիտութեան հետ դէմյանդիման եղող դժուարութիւնների հանդէպ ամենադոյզն ուշադրութիւն չդարձնելով, իրենց միտումներն ու նպատակները արդարացի ներկայացնելու համար միշտ որոշ կեղծիքներ են թոյլ տալիս: Նրանք Իստամբուլում հրատարակուած Պատմութիւն գրքի մէջ գրել են. «Փոքր Ասիոյ ժողովուրդները թիւրքեր էին, որոնք զանազան անուններ ունէին»[102]:

Պրոֆ. Մինորսկին պանթիւրքիստ պատմաբանների այս վարքագծի մասին շատ գեղեցիկ մի արտայայտութիւն ունի, որի յիշատակումը, թւում է, տեղին է եւ պատշաճ.

«Ուր որ Արեւելքի հնադարեան ցեղերի կուլտուրայի բնագաւառում գիտական չլուսաբանուած խնդիրներ են յայտնաբերւում ... թիւրքերը անյապաղ իրենց ձեռքերը նոյն այդ տեղն են պարզում»[103]: Իսկ թէ ինչ է թիւրքերի այդ ձեռք երկարելու նպատակը, այդ մասին պանթիւրքիստ պատմաբանները ներկայացրել են եւ միշտ էլ քարոզչութիւն են արել, ասելով. «Աշխարհի բոլոր թիւրքալեզու ժողովուրդներին մէկ ազգի մէջ միաւորել», որը պարզ մի արտայայտութիւնն է պանթիւրքիստների միտումների եւ նպատակների:

1944 թ. փետրուարին հրատարակուեց մի գիրք՝ «Բովանդակ աշխարհի թիւրքերը» վերտառութեամբ, Հիւսէին Նամիկ Իւրգինի հեղինակութեամբ: Բաւական է միայն կարդալ գրքի բովանդակութեան ցանկը, որից յետոյ ընթերցողը կարող է հեղինակի նպատակն ու միտքը ըմբռնել: Այդ գրքի

բաժինները հետեւեալներն են. «Սիբիրիոյ թիւրքերը, Միջին Ասիոյ թիւրքերը, Էթելի (Վոլգայի ափերի) թիւրքերը, Ղրիմի թերակղզու թիւրքերը, Ազարբայջանի թիւրքերը, Արեւմուտքի թիւրքերը եւ այլն»: Գրքի հեղինակը բացայայտ կերպով կոչ է անում թիւրքերին, որ ըմբռնեն իրենց «ազգային պարտականութիւնները» եւ նրանց է ուղղում իր խօսքերը, գրելով.

«Մի՛ մոռացիր, որ դու միայն 18 միլիոն թիւրքերի ներկայացուցիչը չես: Դու պիտի քո բոլոր գիտութիւնը, իմացութիւնը եւ մտածողութիւնն ու հնարաւորութիւնները ի գործ դնես բոլոր թիւրքերի բարձրացումի համար եւ մինչեւ իսկ մէկ պահ մտահան չանես այս նշանաբանը. Ամէն ինչ թիւրքերի համար եւ վասն թիւրքերի է»[104]:

Զիա Գեօկալփը, որ պանթիւրքիզմի նշանաւոր տեսաբաններից է, իր որոշակի քաղաքական տեսակէտներին հետեւելով, այսպէս է գրում.

«Որոշ գիտնականներ ձգտում են, որպէսզի արհեստական կերպով թիւրքերին եւ սրանց շարքին Միջին Ասիոյ, Վոլգայի ափերի, Սիբիրի եւ Փոքր Ասիոյ թիւրքերին միմեանցից անջատ ներկայացնեն եւ նրանց առանձին ազգեր համարեն: Մեր նպատակը այն է, որ հարիւր միլիոն թիւրքերին միացնենք մէկ ազգի մէջ»[105]:

Արին Էնգինը Թիւրքիոյ հանրապետութեան վախճանեալ նախագահ Մուստաֆա Քեմալի մասին այսպէս է գրել.

«Աթաթիւրքը ոչ միայն Թիւրքիոյ թիւրքերի հայրն է, այլ աշխարհի բոլոր թիւրքերի հայրն է»[106]:

Տողերիս հեղինակի կարծիքով, պանթիւրքիստների գրածների շուրջ որեւէ բացատրութիւն տալը իզուր եւ աւելորդ աշխատանք է, քանի որ ընթերցողը անձամբ եւ մեծ դիւրութեամբ ի վիճակի է ճշմարտութիւնները ըմբռնելու: Սակայն թւում էր, որ խնդրի նախադրելն ու ներկայացնելը որոշ չափով անհրաժեշտ էր, ուստի համառօտ կերպով ներկայացրեցինք յարգարժան ընթերցողներին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Евгениев Д., Вопросы этногенеза турок в турецкой исторической литературе, «Этнические процесы в странах Передней Азии», Москва, 1963, стр. 71, «L'Azie Arancaise», 1917, № 171, p. 171.

[2] Ziya Gokalp, Turkculugun esaslari, Istanbul, 1952, s. 28.

[3] Ikinci Turk Tarih Kongresi, Istanbul, 1943, s. XXXII.

[4] Бартольд В. В., Сочинения, т. II, ч. 1, стр. 109.

[5] Նոյն տեղում, 109-110:

[6] Նոյն տեղում, էջ 110:

[7] «Եասնա», առաջին հատոր, մի հատուած Աւեստա երկնային երկից, զեկուցում պրոֆ. Փուրդաւուդի, խմբագրութիւն Դր. Բահրամ Ֆարահվաշի, Թեհրանի համալսարանի հրատարակչութիւն, երրորդ տպագրութիւն, Թեհրան 1977, էջ 38:

[8] Նոյն տեղում, էջ 39-40:

[9] «Եաշտհա», զեկուցում պրոֆ. Փուրդաւուդի, աշխատասիրութիւն Դր. Բահրամ Ֆարահվաշի, Թեհրանի համալսարանի հրատարակչութիւն, երրորդ տպագրութիւն, Թեհրան 1977, էջ 241, 283, 287, եւ Վանդիդադ-ի 2րդ ֆարգարդը, հատուածներ 20-31:

[10] Տես ծանօթ 7, էջ 41-42:

[11] Հերա լեռը կոչուել է նաեւ «Հերայիթի»: Այս անուան պահլաւերէն թարգմանութիւնը «Հարբորզ» (Narborz) ձեւով է արտայայտւում, որը գուցէ պարսկերէն էլբուրզ անունն է: Աւեստայի մէջ Հերա լեռը արեւելքից դէպի արեւմուտք է ձգուած: Թւում է, թէ այս լեռը Արեւելեան երկրներում է գտնւում: Միհր Յաշտի 13րդ հատուածում ասուած է, որ Լոյսի հրեշտակ Միհրը առաջին երկնային աստուածն է, որ արեւի ծագելուց առաջ Հերա լեռնից սփռւում է արիական բոլոր երկրների վրայ, ծայրից ծայր: Հիմնուելով այս կէտի վրայ, կարելի է ենթադրել, որ Հերա լեռը Արեւելքում է, որովհետեւ այնտեղից է, որ Միհր աստուածը շողում է արիական երկրների՝ Մարւի, Հերաթի, Սագդի եւ Խորեզմի վրայ:

[12] Պրոֆ. Փուրդաւուդը այս գետերի շարքին է հաշւում Զարաֆշան Հարիրուդ եւ Զիհուն կամ Ամուդարիա գետերը: Տեսնել «եաշտհա», առաջին հատոր, երրորդ տպագրութիւն, էջ 431:

[13] Տես ծանօթ. 9, էջ 429-431:

[14] Տես ծանօթ. 7, էջ 42-43:

[15] Աբու Ռէյհան Բիրունի, Ասար-ալ-Բակիյէ ան ալ-կուրուն ալ խալիէ, աշխատասիրեց Զախօ, Լայփցիգ, 1923, էջ 351:

[16] История иранской государства и культуры, автори В. Г. Гафуров, Е. А. Грандовский, М. С. Иванов, Москва, 1971, стр. 125, 127.

[17] Դիակոնով, Ի. Մ., Պատմութիւն Մարերի, թարգմ. Քարիմ Քէշաւարզ, Բոնգահէ Թարջոմէ վա Նաշրէ Քեթաբ, Թեհրան 1966, էջ 72:

[18] Տես ծանօթ. 9, էջ 281-83:

[19] Տես ծանօթ. 9, էջ 185:

[20] Նոյն տեղում, էջ 186:

[21] Նոյն տեղում, էջ 187:

[22] Մա'սուդի, Աբուլհասան Ալի բին-Հիաէյն, Մուրաւէջ ալ զահաբ վա Մա'սադէն ալ Զովհար, թարգմանեց Աբուլկասիմ Փայանդէ, առաջին հատոր, Թեհրան, Բոնգահէ Թարջոմէ վա Նաշրէ Քեթաբ, 1977, էջ 222:

[23] Նոյն տեղում, էջ 223: «Ասպիման» նոյն Սպիտամանն է, իսկ Սպիտամանը՝ մէկը այն յարգալից ու բարձրաստիճան անուններից, որ զուգահեռ յիշւում են Զրադաշտի անուան հետ: Ըստ պրոֆ. Աբաեւի, Սպիտամանը Աւեստայի «Սփիթամա»-ի պահլաւական ձեւն է, իսկ թէ ինչու Սպիտամա բառը պահլաւերէնի մէջ դարձել է Սպիտաման, ըստ երեւոյթին պատճառը պիտի գտնել «ան» (an) վերջածանցի մէջ, որ կցուել է այդ անուան

վերջին: Թիւ 13 եւ 98 Յաշտերի բովանդակութիւնից պարզւում է, որ Զրադաշտի յաջորդների անունն ու տիտղոսն էլ Սպիտամա է եղել, որովհետեւ ըստ Կտեսիասի գրածին, Ամիթիսի կողակիցը, որ Մարաստանի անուանի դէմքերից էր, մարերի արքայ Աստիակի դուստրը, ինչպէս նաեւ իրանցի զօրավար Պետեսի (Petes) որդին, Աքեմենեան արքայից արքայի առաջին Արտաշիրի օրերին կոչւում էին Սպիտամաս (Spitamas): Սակերի ցեղերում եւս Սպիտամա անունը ընդունուած էր, որպէս անձնանուն: Ի դէպ պիտի յիշել, որ արիական ցեղերի սակերի եւ սարմատների մէջ զրադաշտական կրօնը ընդունուած չէր: Յաւելեալ տեղեկութիւնների համար դիմել պրոֆ. Վ. Ի. Աբաեւի յօդուածին, «Մանրամասնութիւններ իրանական անձնանունների ստուգաբանութեան շուրջ», թարգմանութիւն Ինայաթուլլահ Ռիզայի, «Բարրասիհայէ Թարիխի հանդէս, 12րդ տարի, թիւ 3, էջ 239-243:

[24] «Հին եւ Նոր Կտակարան», թարգմանուած եբրայերէն, ասորերէն եւ յունարէն բնագրերից, հրատարակութիւն Սուրբ Գրոց Ընկերութեան, ZM, 1975 էջ 771:

[25] Իբն-ի Հաուկալ, Սուրաթ-իլ Արզ, թարգման. Դր. Զաաֆար Շոար, Բոնեադ-է Ֆարհանգ-է Իրանի հրատարակութիւն, Թեհրան, 1966, էջ 195:

[26] Տես ծանօթ. 4, էջ 31:

[27] Гулиев Л. Н., Древные тюрки, Москва, 1967, стр. 4.

[28] Cahun Leon, Introduction a l'histoir de l'Asie, P. 87.

[29] Зулалян М. К., Вопроси древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии, Ереван, 1970, стр. 50-51.

[30] Տես ծանօթ. 28, էջ 87:

[31] Տես ծանօթ. 28, էջ 135:

[32] «Քարանդ-է Քասրաւի», ժողովածու Ահմադ Քասրաւու 78 յօդուածների եւ զրոյցների, աշխատասիրեց Եահնա Զոքա, երկրորդ հրատարակութիւն, Թեհրան 1977, էջ 322:

[33] Պրոֆ. Բարտոլդը գրում է. «Ամուդարիա պատմական անունը, որ է Վախշու կամ Վաքշու, պահպանուել է Րուդվախշ (Սորխաբ) անուան մէջ»: Տեսնել Բարտոլդ, Թիւրքիստաննամէ, թարգմ. Քարիմ Քէշաւարզ, առաջին հատոր, հրատարակութիւն Բոնեադէ Ֆարհանգէ Իրանի, Թեհրան, 1973, էջ 169:

[34] Յաւելեալ ծանօթութեան համար տեսնել Աբու-Իսհակ Իբրահիմ Իսթախրի, Մասալիք վա Մամալիք, պարսկերէն թարգմանութիւն, աշխատասիրեց Իրաջ Աֆշար, Բոնգահէ Թարջոմէ վա Նաշրէ Քեթաբ, Թեհրան, 1968, էջ 225-227, եւ Վ. Բարտոլդ, Թիւրքիստաննամէ, առաջին հատոր, թարգմ. Քարիմ Քէշաւարզ, հրատարակութիւն Բոնեադէ Ֆարհանգէ Իրանի, Թեհրան, 1973, էջ 167-399, եւ Վ. Բարտոլդ, Աբիարի դար Թիւրքիստան, թարգմ. Քարիմ Քէշաւարզ, հրատարակութիւն Թեհրանի համալսարանի հասարակական ուսումնասիրութիւնների եւ հետազօտութիւնների հաստատութեան, Թիւ 76, Թեհրան, 1971:

[35] Բարտոլդ Վ., Աբիարի դար Թիւրքիստան, թարգմ. Քարիմ Քէշաւարզ, հրատարակութիւն Թեհրանի համալսարանի հասարակական ուսումնասիրութիւնների եւ հետազօտութիւնների հաստատութեան, Թիւ 76, Թեհրան 1971, էջ 28:

[36] Տես ծանօթ. 22, էջ 221:

[37] «Թարիխէ Թաբարի» թարգմ. Աբու-Ալի Մոհամմադ Բալամի, նախաբան եւ ծանոթագրութիւն Դր. Մոհամմադ Ջաւադ Մաշքուր, Թեհրան 1980, էջ 342:

[38] Ali Kemal, Erzincan, Istanbul, 1939, s. 12.

[39] «Encyclopedie de Islam», L'article Turan, Pan-turkisme= Panturanisme, par Minorsky, Livraison N. p. 224, 930.

[40] Տես ծանոթ. 29, էջ 16:

[41] Թաբարի, Մոհամմադ բին Ջարիր, Թարիխէ Թաբարի կամ «Թարիխ ալ ռասուլ վալ Մուլուք», թարգմ. Աբուլկասիմ Փայանդէ, առաջին հատոր, Բոնեադէ Ֆարհանգէ Իրանի հրատարակութիւն, Թեհրան 1973, էջ 153:

[42] Տես ծանոթ. 7, էջ 59:

[43] БСЭ, т. 22, стр. 599.

[44] Նոյն տեղում, էջ 599:

[45] Տես ծանոթ. 7, էջ 69:

[46] Տես ծանոթ. 9, էջ 218-19

[47] Տես ծանոթ. 41, էջ 153:

[48] Տես ծանոթ. 9, էջ 220:

[49] Նոյն տեղում, էջ 219-220:

[50] Justi F., Nandbuch der Zandsprache, Leipzig, 1864, Iranische Namenbuch, Marburg, 1895.

[51] Տես ծանոթ. 9, էջ 235 եւ Աբան Յաշտի 3, 4, եւ 5 պարբերութիւնները:

[52] Նոյն տեղում, էջ 330:

[53] Նոյն տեղում, էջ 330:

[54] Նոյն տեղում, էջ 210:

[55] Տես ծանոթ. 16, էջ 144:

[56] Նոյն տեղում, էջ 144-45:

[57] Նոյն տեղում, էջ 273, նաեւ տեսնել Վ. Ի. Աբբաեւի յօդուածը՝ Մանրամասնութիւններ իրանական անձանունների ստուգաբանութեան շուրջ, թարգմ. Ինայաթուլլահ Ռիզա, Բարրասիհայէ Թարիխի հանդէս, 12րդ տարի, թիւ 3, էջ 240:

[58] Տես ծանոթ. 9, էջ 269:

[59] Տես ծանոթ. 41, էջ 426:

[60] Նոյն տեղում, էջ 136:

[61] Վ. Ի. Աբաեւ, Մանրամասնութիւններ իրանական անձանունների ստուգաբանութեան շուրջ, թարգմ. Ինայաթուլլահ Ռիզա, Բարրասիհայէ Թարիխի հանդէս, 12րդ տարի, թիւ 3, էջ 239:

[62] Նոյն տեղում, էջ 239:

[63] Տես ծանոթ. 7, էջ 53:

[64] Marquart Josef, Untersuchungen zur Geschichte von Eran, Neft 2, Leipzig, 1905.

[65] Տես ծանոթ. 9, էջ 108:

[66] Նոյն տեղում, էջ 109:

[67] Marquart Josef, Eransahr. Berlin, 1901, s. 141.

[68] Խարազմի, Աբու Աբդալլահ Մոհամմադ բին Ահմադ բին Իւսուֆ Քաթիբ, Մաֆաթիհ-ուլ-Ուլում, թարգմ. Հիւսէյն Խադիւ Ջամ, Բոնեադէ Ֆարհանգէ Իրանի հրատարակութիւն, Թեհրան 1968, էջ 111:

[69] Տես ծանոթ. 9, էջ 341:

[70] Տես ծանոթ. 15, էջ 220:

[71] Տես ծանոթ. 41, էջ 294-95:

[72] Տես ծանոթ. 7, էջ 54:

[73] Նոյն տեղում, էջ 71:

[74] Տես ծանոթ. 4, էջ 661:

[75] Տես ծանոթ. 29, էջ 20-21:

[76] Tog'an Z.V., Umumi Turk tarihine giris, Ankara, 1946, s. 73-74.

[77] Տես ծանոթ. 38, էջ 12:

[78] Gunaltay Semseddin, Turk tarihinin ilk devirleriden Yakin Sark Elam ve Mezopotamya, Ankara, 1937, s. 116-117.

[79] Engin Arin, Eti tarihi, Istanbul, 1958, s. 92.

[80] Kiriziog'lu M. Fahrettin, Karstarihi, C. 1, Istanbul, 1953, s. 84,93.

[81] Kiriziog'lu M. Fahrettin, Her bakimdan Turk olan Kurtler, Ankara, 1964, s.5.

[82] Նոյն տեղում, էջ 5:

[83] Տես ծանոթ. 78, էջ 121, 128:

[84] Տես ծանոթ. 24, էջ 1296:

[85] Նոյն տեղում, էջ 1296:

[86] Նոյն տեղում, էջ 771:

[87] Strabo. X.2,8,14.

[88] Տես ծանոթ. 29, էջ 32:

[89] Տես ծանոթ. 9, էջ 218:

[90] Տես ծանոթ. 43, Հատոր 16, 1974, էջ 212:

[91] Տեսնել Գիրշման Ռ., Իրանը սկզբից մինչեւ Իսլամ, թարգմանեց Դր. Մոհամմադ Մօին, Բոնգահէ Թարջոմէ վա Նաշրէ Քեթաբ, Թեհրան 1970:

[92] Տես ծանոթ. 16, էջ 286:

[93] Տես ծանոթ. 17, էջ 85:

[94] Տես ծանոթ. 32, էջ 321:

[95] Ошанин Л., Антропологический состав неселения Средней Азии и этногенез её народов, ч. 3, Ереван, 1959, стр. 27, 75, 83-84.

[96] Оранский И., Введение в иранскую филологию, Москва, 1960. стр. 192.

[97] «Tarih». C. 1, Istanbul, 1932, s. 30, 31, 128.

[98] Իսթարխի, Աբու-Իսհակ Իբրահիմ, Մասալիք վա Մամալիք, պարսկերէն թարգմանութիւն, հիջրեթի 5-6 դարերից — 12-13 դարեր — աշխատասիրութիւն Իրաջ Աֆշարի, Թեհրան, Բոնգահէ Թարջոմէ վա Նաշրէ Քեթաբ, 1968, էջ 91:

[99] «Enzyklopaedie des Islam», «Khuzistan», II,p. 1059.

[100] БСЭ. т. 28, стр. 70-71.

[101] Иосуфов Ю.В., Элам, Москва, 1968, стр. 38-39.

[102] Տես ծանոթ. 97, էջ 127:

[103] Pan-turkism, par Minorsky, dans Encyclopedie de L'Islam, livraison N. p. 924, Акопов Г. В., Вопросы этногенеза народов Ближного Востока... «Известия АНАрм. ССР», 1956, № 7, стр. 37.

[104] Տես ծանոթ. 29, էջ 34-35:

[105] Տես ծանոթ. 2, էջ 28:

[106] Engin Arin, Ataturkculuk ve Moskofluk-Turkler savasi. Ataturk yalniz Turklein degil, butun dunya Turklerin atasidir, Istanbul, 1953.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱԼԲԱՆՈՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՑԵՂՆ ՈՒ ԼԵԶՈՒՆ

Ազերբայջան անունը Կովկասեան Ալբանիոյ հողային տարածքի վրայ դնելը, մի երկիր, որ վերջին դարերում Առան եւ Շիրւան էր կոչւում, Կովկասի այդ բաժնի պատմութեան ուսումնասիրութիւնը ենթարկեց շփոթի եւ շեղումների: Պետական շրջանակների մի շարք գերերջանիկ անձինք, ունենալով քաղաքական շարժառիթներ, որոշ հեղինակների ծառայութիւնը ապահովեցին, որպէսզի Կովկասեան Ալբանիոյ եւ Մադ Աթուրփաթգանի (Ազարբայջան) ժողովուրդների համար ընդհանուր ծագման եղծուած կարծիք ներկայացնեն: Այս դրդապատճառները, իրենց հերթին, շփոթութիւնն ու շեղումները եւս առաւել սաստկացրին: Տողերիս հեղինակը պիտի ջանայ, ինչքան որ հնարաւոր է, Կովկասեան Ալբանիոյ եւ Ազարբայջանի ժողովուրդների ցեղական եւ լեզուական խնդիրը պարզաբանել:

Կովկասեան Ալբանիոյ բնակիչների նախապատմական շրջանի ցեղային եւ տոհմական կազմատրման շուրջ բաւարար տեղեկութիւններ չունենք: Մեծ թուով պատմագիրների տեսակէտն այն է, որ Կովկասը շատ ցեղերի անցուղին է եղել, որտեղից նրանք հիւսիսից դէպի հարաւ չուեցին, ոմանք, ինչպէս օրինակ սակերը, գնացին մինչեւ մարերի երկիրը, իսկ ուրիշները տարածուեցին դէպի Փոքր Ասիոյ կողմերը եւ արշաւեցին մինչեւ Եգիպտոս:

Կովկասեան տարածքը հին դարերում «Ալբանիա» էր կոչւում: Ալբանիան բաղկացած էր մի քանի երկրներից, որոնց մէջ ապրում էին բազմաթիւ ցեղեր: Հեկատէոս Միլետացին, մ.թ.ա. 6րդ դարի վերջի եւ 5րդ դարի սկզբների պատմագիրը, խօսելով Ալբանիոյ մէջ բնակուող ցեղերի մասին, յիշատակում է «Միք» կոչուող մի ցեղ, որը հաստատուած էր Արաքս գետի ափերին գտնուող հարթավայրերում[1]:

Հռչակաւոր պատմագիր Հերոդոտոսը նաեւ նշել է յիշեալ ցեղի անունը: Հերոդոտոսի մօտ «Միք» ցեղի անունը դարձել է «Mukhoi» * (Մուխոյ) [2]: Որոշ ուսումնասիրողներ «Մող» (իմա՛ մոգ, ծ. թ.) բառը համարում են այդ ցեղի անուանումից ծնունդ առած մի բառ: Ինչպէս երեւում է, «Միքերը» կամ «Մողերը» ապրում էին կասպեան տարածքներում, ու թերեւս նրանք կասպերից էին[3]: Հերոդոտոսն էլ յիշել է մի ցեղ, որը «Կասպեան» (Կասպեր) է կոչւում[4]:

---

* Յունական տառերը լատիներէնի փոխելիս kh զոյգ տառերը համապատասխանում են յունական x տառին, որը (խ) է արտասանւում:

Կասպերը մ.թ.ա. 6րդ եւ 5րդ դարերում ենթակայ էին Աքեմենեան կայսրութեան[5], սակայն յետագայում, յիշեալ կայսրութեան անկումից յետոյ, «Փոքր Մարաստան» կամ «Մադ Աթուրփաթգան»ին հպատակ դարձան:

Մեր թուագրութիւնից առաջ, առաջին դարում, կասպերի երկիրը դարձաւ բնակավայրը մի շարք ցեղերի, որոնցից կարեւորագոյնը «Ալբանիացիք» (իմա՛ աղուաններ, ծ. թ.) էին[6]: Ըստ գոյութիւն ունեցող աղբիւրների, կասպերը բնակւում էին Կուր եւ Արաքս գետերի միացման վայրը ճանաչուած հողային տարածքում[7]: Որոշ ուսումնասիրողներ կասպերին համարել են կասեր-էլամցիներ կոչուող ցեղային խմբին պատկանող մի ժողովուրդ, սակայն այս տեսակէտի շուրջ մեծ տարակուսանք գոյութիւն ունի, որովհետեւ էլամագէտները ցայժմ էլամի հիւսիսային սահմանը «Էքբաթանայի» (Համադան) շրջանից աւելի հեռու չեն համարել: Մի շարք գիտնականներ, որոնց շարքին նաեւ Եամպոլսկին եւ Դիակոնովը, հիմնուելով որոշ անունների նմանութեան վրայ, ներկայացրել են նման մի տեսակէտ: Որոշ գիտնականներ կասեր-էլամցիներ ցեղախմբի մէջ էին համարում լուլուբէյներին, կասերին, էլամցիներին, գուտիներին եւ ուրիշներին[8]: Գուտիների անունն է պատճառ դարձել, որ այս կապակցութեամբ նման մի կասկած տարածուի եւ նման մի տեսակէտ ստեղծուի: Հերոդոտոսը, Կովկասի արեւելեան շրջանում բնակուող ցեղերի մասին գրելիս, յիշատակութիւն է անում Միքերի, Կասպերի եւ Ուտի (Uti) ցեղերի մասին[9]: Ըստ երեւոյթին, այս երեք ցեղերը հնադարեան Ալբանիոյ բնակիչների հիմնական կորիզն էին կազմում: Ըստ Եամպոլսկու, «Ուտի» անունը գրուել է նաեւ «Ուիտի» (Uiti), «Ուդին» (Udin) եւ «Օթէն» (Oten) ձեւերով: Ըստ երեւոյթին, «Ուտի»ն այն անունն էր, որով Կովկասեան Ալբանիոյ բնակիչները անուանում էին իրենք իրենց: Եամպոլսկին, յենուելով որոշ առերեւոյթ արտասանական նմանութիւնների վրայ, ենթադրում է, որ «Ուտիները» նոյն «Գուտիներն» են: Ի. Մ. Դիակոնովը եւս, հիմնուելով Եամպոլսկու ենթադրութեան վրայ, իր «Մարերի պատմութիւնը» գրքի մէջ գրել է.

«Զ. Ի. Եամպոլսկին իր շատ հաւանական ենթադրութիւնը յայտնեց տողերիս հեղինակին, ըստ որի «Գուտիներ» անունը նոյն այն ցեղին է վերաբերում, որը վերջին շրջաններում «Ուտիներ», «Ուիտիներ», «Ուդիներ», «Ուտինեաններ» եւ «Օթէնեաններ» ձեւերով են արձանագրուած, եւ, ըստ երեւոյթին, ինչպէս նա է ասում, սա այն անունն է, որով Ալբանացիք իրենք իրենց այդ անունով էին կոչում»[10]:

Չգիտենք, թէ ինչ փաստեր են գոյութիւն ունեցել նման մի ենթադրութիւն անելու եւ նման եզրակացութեան գալու համար, թէ ինչու պրոֆ. Դիակոնովը յենւում է այս ենթադրութեան վրայ: Մինչդեռ նա, հիմնուելով

շումերական եւ աքքադական աղբիւրների վրայ, եւ ի նկատի առնելով շումերական եւ աքքադական արքաների մղած կռիւներում տեղի ունեցած դէպքերը, անձամբ գուտիների եւ նրանց հարեւաններ լուլուբէյների մասին գրել է, որ նրանք բնակւում էին Մարաստանի լեռներում[11]: Այս նիւթի շուրջ խօսելիս Դիակոնովը արտայայտել է Եամպոլսկու տեսակէտին հակադիր մի տեսակէտ եւ այսպէս է գրել.

« Բնագրերի ուսումնասիրութիւնը ու վերլուծութիւնը ցոյց են տալիս, որ «Գուտի» բառը միայն մ.թ.ա. երրորդ եւ երկրորդ հազարամեակներում է իմաստ եւ նշանակութիւն ունեցել՝ ցոյց տալով ցեղային մի որոշ խումբ, որը, հաւանաբար, ապրում էր իրանական Ազարբայջանի եւ Քիւրդիստանի տարածքներում: Մ.թ.ա. առաջին հազարամեակում բոլոր ուրարտացիները եւ Մանայի ու Մարաստանի ժողովուրդները «Գուտի» էին կոչւում[12]:

Ինչպէս ընթերցողը նկատեց, դեռեւս ոչ մի ապացոյց կամ փաստ, որ ցոյց տայ՝ գուտիները Կովկասում բնակուող ուտիներն են, գոյութիւն չունի, եւ ուստի Եամպոլսկու տեսակէտը ցայժմ ենթադրութեան եւ գուշակութեան սահմաններից դուրս չի եկել:

Պիտի աւելացնել նաեւ այն, որ Կովկասը շատ հին ժամանակներից հանդիսանում էր մի անցք զանազան ցեղերի քօչուորութեան համար: Կովկասեան Ալբանիոյ երկիրն էլ նոյնպիսի հանգամանք ունէր: Այնպէս է երեւում, որ զանազան ազգերի եւ ցեղերի գաղթը, Կովկասեան լեռների հիւսիսից դէպի Ալբանիոյ տարածքը, շատ մեծ ազդեցութիւն է ունեցել այդ երկրում բնակուող ցեղերի իրավիճակի վրայ: Մ.թ.ա. առաջին դարի շեմին կասպերից ոչ մի հետք չէր մնացել[13]: Ենթադրւում է, որ կասպերը ձուլուել էին ալբանացիների մէջ, որովհետեւ այդ շրջանից յետոյ պատմութեան մէջ կասպերից միայն նրանց անունն է մնացել:

Ալբանացիների անունը առաջին անգամ յիշատակուել է մ.թ.ա. չորրորդ դարի դէպքերի եւ Աքեմենեան կայսրութեան անկման պատահարի առնչութեամբ: Ըստ Արիանի, Աքեմենեան վերջին արքայ Դարեհ III-ի — մ. թ. ա. 336-330 — բանակի մէջ կային նաեւ ալբանական ցեղերի խմբաւորումներ[14]: Հնադարեան պատմագիրների գրուածքներից պարզւում է, որ Աքեմենեան ժամանակաշրջանում մարերի երկիրը, Ալբանիան, Սակասենէ — Շակաշէն — եւ Կադուսի երկրները ենթակայ էին մէկ խաշթրափի — սատրապ —: Յետագայում նրանք բոլորն էլ հպատակուեցին Աթուրփաթին— Ատրուպատ — Փոքր Մեդիա կամ Մադ Ատրուպատենի սատրապին[15]:

Այս շրջանից յետոյ աղուանները Կովկասեան տարածքի ժողովուրդների պատմութեան մէջ կարեւոր դեր կատարեցին: Աղուաններին յաջողուեց

բազմաթիւ ցեղեր իրենց միացնել, եւ այսպիսով ստեղծուեց ազգերի ու ցեղերի մի մեծ միութիւն: Հէնց այս ցեղային ու տոհմական միութիւնը սկիզբը եղաւ Կովկասեան Ալբանիոյ պետութեան հիմնադրման:

Աղուանները բնակւում էին Կուր գետի հիւսիսում գտնուող տափաստաններում, որը, ըստ հին դարերի պատմագիրների, հասնում էր մինչեւ Ալազան գետը[16]: Կամբիսեն (Kambisen) ցեղերից մի մասն էլ Կուր գետի հիւսիսում էր բնակւում[17]: Նրանք ապրում էին Ալազան եւ Իօրի (Iori) գետերի շրջաններում եւ տարածւում էին մինչեւ Կովկասեան փոքր լեռնաշղթայի ստորոտները[18]: Այսպիսով աղուանները արեւմտեան կողմից հարեւան դարձան Իբերիոյ (Վրաստան) հետ: Աղուանների երկիրը արեւելքում հասնում էր մինչեւ Կասպից ծովը, նրա հիւսիսը սահմանափակւում էր Կովկասեան լեռնաշղթայով, հարաւը՝ Փոքր Մարաստանով — Մադ Աթրուփաթէն, եւ հիւսիս-արեւմտեան կողմը սահմանափակւում էր Հայաստանի հողային տարածքով[19]:

Հնադարեան պատմագիրները, եւ ի շարս դրանց Ամիանոս Մարկելլինոսը, մեզ տեղեկացնում են այդ շրջաններում գոյութիւն ունեցող աղուանների մասին[20]: Ստրաբոնը եւ Պտղոմէոսը մեզ յայտնում են ներկայի Դաղստանի հարաւային մասերում ապրող որոշ ցեղերի, ինչպէս օրինակ «Լեգ»երի (Legs) մասին[21]: Դաղստանի հարաւում եւ Կովկասեան Ալբանիոյ մէջ ապրող այլ ցեղերից էին նաեւ «Գել»երը (Gels)[22] եւ Սիլւ (Silv) ցեղը[23]: Ոմանք սիլւերին համարում են Կովկասեան Ալբանիոյ տարածքի հիւսիս-արեւմտեան շրջանում բնակուող ցեղերից, սակայն այդ ցեղի բնակավայրի շուրջ որոշ տարակարծութիւններ գոյութիւն ունեն: Ոմանք նրանց համարում են Կովկասեան Ալբանիոյ հիւսիսի, իսկ ոմանք էլ Ալազանի տափաստանի շրջանի բնակիչներ[24]:

Բացի յիշեալ ցեղերից, սակասէնները եւս բնակւում էին այդ երկրում, Գանձակի նահանգի շրջաններում: Թէ՛ Հերոդոտը եւ թէ՛ Ստրաբոնը յիշում են այս ցեղի անունը[25]: Հայկական գրութիւնների մէջ «Սակասէն»ը տառադարձուած է «Շակաշէն»[26]:

Կովկասեան Ալբանիոյ հողային տարածքում բնակուող այլ ցեղերից մէկն էլ «Գարգար»ներն են, որոնց յիշել են Ստրաբոնը եւ նրան յաջորդող պատմագիրներն ու աշխարհագիրները[27]:

Հայկական աղբիւրներում գարգարներին, ուտիներին եւ մի շարք այլ ցեղերի համարել են սերուած դիցաբանական «Արան» ցեղից: Մովսէս Խորենացին, Սասանեան դարաշրջանի հայ պատմագիրն ու աշխարհագիրը, «Արան»ը ներկայացնում է որպէս «Սիսակ» (Sisak) ցեղին պատկանող եւ

Ալբանիոյ իշխանը եղող իմաստուն մի մարդու անունը: Նա նաեւ գրում է, որ ուտիները, գարդմանացիք (Gardman) եւ գարգարացիները Արանի սերունդներից են[28]:

Հաւանաբար Առան անունը, որ պարսիկ եւ արաբ պատմիչներն ու աշխարհագրագէտները Աբասեան խալիֆայութեան շրջանում յիշատակել են իրենց գրքերի մէջ, ծնունդ է առել Մովսէս Խորենացու այս գրուածքից, որովհետեւ հայերը Կովկասեան Ալբանիոյ տարածքը անուանել են Աղուան, Աղուանք կամ Ալուան եւ Ալուանք ձեւերով, որոնցից Ալուան եւ Ալուանքը շատ մօտ են Ալբանիոյ անուան:

Ահմադ Քասրաւին համոզուած էր, որ Առանը «Ար» անունից է ծնունդ առել, որը իր հերթին «Իյր» ցեղի մի այլ անուանումն էր: Նա Արանը յիշատակել է նաեւ որպէս տաք եւ արեւադարձային եղանակ ունեցող գօտու իմաստով[29]:

Ճիշտ ինչպէս Իսֆահանի եւ Խորասանի մէջ գոյութիւն ունի Շիրւան անունը կրող մի շրջան, Քաշանի կողմերում էլ գոյութիւն ունի Արան կոչուող մի վայր: Արդեօք այս անունները Առանից եւ Շիրւանից եկած քօչուորները չե՞ն բերել այս շրջաններին: Ինչեւէ, խնդիրը դեռ որոշակի պարզաբանութիւն չի ստացել: Յուսալի է, որ պատմաբանները, լեզուաբանները, աշխարհագրագէտները եւ ազգագրագէտները յաջողեն լոյս սփռել այս մութ կէտի վրայ եւ դուրս բերեն անորոշութիւնից ու մթութեան ստուերից:

Մովսէս Խորենացին այն կարծիքին էր, որ մ. թ. ա. հինգերորդ դարում գարգարների լեզուն հիմքն ու ատաղձը եղաւ աղուանների գրական լեզուի ստեղծման համար[30]: Ինչ վերաբերում է գարգարների բնակավայրին, կարծում է, թէ նրանք ապրում էին Կուր գետի հարաւային հարթավայրերում, Գարգար գետի ոլորտում: Այս գետը Կուր գետի ճիւղերից մէկն է, որ ներկայիս ճանաչուած է «Գարգար չայ» անունով:

Ծագումով կովկասցի ուսումնասիրողներից մէկը՝ Ա. Ալիեւը, համոզուած է, որ «Միքերը եւ կասպերը յետագայում աղուանների եւ Կովկասի արեւելքում ապրող մի շարք այլ ցեղերի հետ միախառնուեցին[31]»:

Հնադարեան գրութիւններից եւ այլ աղբիւրներից պարզւում է, որ Կովկասեան Ալբանիոյ հիւսիսային մարզը երբէք Կովկասի Դերբենդից աւելի հեռուն չի գնացել: Արեւմուտքում էլ այդ երկրի հողային տարածքը վերջանում էր Ալազան եւ Իօրի գետերով:

Կովկասեան Ալբանիոյ արեւելեան սահմանը Կասպից ծովի արեւմտեան ափն էր, իսկ հարաւում նրա սահմանը հասնում էր մինչեւ Հայաստան եւ Փոքր Միդիա (Մադ Աթրուփաթէն, Մադ Ատուրփաթգան): Նշուած բոլոր

ցել, երբ Խոսրով II-րդ Ապրվէզի (Փարւիզ) օրով թիւրքերն ու խազարները արշաւեցին Ալբանիոյ վրայ եւ շատ մեծ կոտորած կատարեցին, որի մասին շատ մանրամասն խօսւում է հայ պատմիչների աշխատութիւններում: Մովսէս Կաղանկատուացին՝ Աղուանից Պատմութիւն գրքի հեղինակը եւ Կովկասեան Ալբանիոյ պատմագիրը, որ մ. թ. 10րդ դարի պատմագիրներից է, թիւրքերի Դերբենդի վրայ կատարած յարձակումի մասին այսպէս է գրել.

«Գայշաքը[42] տեսաւ, թէ ինչ աղէտների ենթարկուեցին Չոր մեծ քաղաքի պահապանները եւ գոմարտակները սքանչելի պարիսպների, որոնց համար պարսկական թագաւորները հսկայական ծախքերով փակել էին իրենց երկիրը՝ հաւաքելով ճարտարապետներ, հնարելով տեսակ-տեսակ շինանիւթեր մեծասքանչ կառուցման համար, որ ներփակեցին Կովկաս լեռան եւ Արեւելեան մեծ ծովի միջեւ[43]:

Տեսնելով սաստկացած սարսափը ժանտատեսք, յանդուգն երեսով, լայնադէմ, անարտեւանունք բազմութեան, որոնք կանացի կերպարանքով, գիսարձակ վրայ էին տալիս յարձակուողների դէմ-դիմաց, սարսափը պատեց նրանց: Մանաւանդ երբ տեսան ուժեղ քաշուած աղեղների նետերը, որոնք կարկուտի նման տեղում էին նրանց վրայ:

Իբրեւ լկտիացած գիշակեր գայլեր յարձակուեցին նրանց վրայ եւ առանց խնայելու կոտորեցին քաղաքի անցուդիներում ու փողոցներում. նրանց աչքը մինչեւ անգամ չէր խնայում գեղեցկատես, պայծառագեղ, պատանի տղայի կամ աղջկայ եւ ոչ էլ անպէտքներին ու անօգտակարներին»[44]:

Մեր թուագրութեան 7րդ դ. սկզբներին Ալբանիոյ մէջ գործի անցաւ տեղական մի պետութիւն, որի իշխանը իրանական «Միհրան» տոհմից էր[45]: Այդ իշխանութեան տոհմապետը ուզում էր մ. թ. 590 թուին արշաւել դէպի Կասպից ծովի հիւսիսում բնակուող խազարների երկիրը, սակայն յետոյ հրաժարուեց այդ մտքից[46]: Ըստ պրոֆ. Բարտոլդի՝ Ալբանիոյ իշխանը, թէեւ ինքը Սասանեան տոհմին էր պատկանում, սակայն ընդունել էր Քրիստոսի դաւանանքը[47]:

Որոշ պատմագիրներ քրիստոնեայ կրօնի տարածումը Կովկասեան Ալբանիոյ մէջ համարում են մ. թ. 4րդ դարում իրագործուած[48]: Սակայն պրոֆ. Բարտոլդը համոզուած է, որ Ալբանիոյ մէջ Քրիստոսի դաւանանքի տարածումը համընկնում է Յազկերտ առաջինի (մ. թ. 399-420) թագաւորութեան շրջանին[49]:

Կովկասեան Ալբանիոյ տեղական իշխանների մասին պրոֆ. Բարտոլդը գրում է, որ Սասանեանների ժամանակաշրջանում Միհրանի գերդաստանից

սերող մարդիկ իշխում էին Առանի վրայ, որոնք աղբիւրներում յիշւում են «Առանշահ» անունով: Եւակուբին Առանի պատրիարքին (պատրիքիոս) կամ մեծ եպիսկոպոսին եւս Առանշահ է անուանել[50]:

Կարծում ենք, որ ճշմարտութեան աւելի մօտ է Եւակուբիի վկայութիւնը, որովհետեւ Դերբենդը (Ճոր) եղել է Կովկասեան Ալբանիոյ քրիստոնէական կենտրոններից մէկը եւ նրա գլխաւոր առաջնորդանիստ քաղաքը: Յետագայում յիշեալ առաջնորդանիստ վայրը փոխադրուեց Պարտաւ (Բարդա՛) քաղաքը:

Մ. թ. 7րդ դարում արաբները յարձակուեցին Հայաստանի եւ Ալբանիոյ վրայ: Հայ պատմագիր Սեբէոս եպիսկոպոսը Հայաստանի եւ Ալբանիոյ վրայ եղած արաբական արշաւանքը անուանել է ահարկու եւ ատելութեամբ լեցուն: Նա գրել է.

«Իսմաելի զաւակները — իմա՛ արաբները, ծ. ի. — շրջապատեցին Կարին քաղաքը, մտան քաղաք, կողոպտեցին ու տարան արծաթները, ոսկիները եւ ժողովրդի ունեցուածքը: Նրանք հայերի եւ աղուանների հարստութիւնը յափշտակեցին եւ եկեղեցիները աւերեցին[51]:

Ժամանակի այս նոյն հատուածում, ըստ Մովսէս Կաղանկատուացու գրածի, աղուանների երկրի հարաւային սահմանը Արաքս գետն էր:

Նախքան արաբների յարձակումը, հոները արշաւեցին Ալբանիոյ վրա, եւ Ջիւանշիրը, այն կողմերի տիրակալ իշխանը, որ իրանական ծագում ունէր եւ Միհրանի (մ. թ. 638-670) գերդաստանից էր, պարտաւորուեց մի աղէտալի դաշինք կնքելու, սակայն արաբները նոյն ձեւով շարունակում էին իրենց կողոպուտը: Ջիւանշիրը ճարահատեալ երկու անգամ գնաց մինչեւ Դամասկոս, Մուաւիէի մօտ եւ արաբների հարկատուն դարձաւ: Նրա եղբայր «Վարազ-Տրդատ»ը եւս Օմայեան խալիֆաների հարկատուն էր:

Օմայեանների խալիֆայութեան շրջանում Կովկասը վերածուեց մի առանձին վարչական կենտրոնի, որը ներառում էր Հայաստանն ու Ալբանիան, որին արաբները «Առան» էին անուանում: Այդ վարչական շրջանի գլխաւոր դիրքում գտնուում էր խալիֆայի ներկայացուցիչը[52]:

Խալիֆայութեան շրջանում Կովկասեան Ալբանիոյ ժողովրդի ցեղագրական դրոյթը շատ խառնաշփոթ էր: Այդ ժամանակներում, աբորիգէնները,— իմա՛ բնիկները — արաբները, հայերը հրէաները, խազարները, թաթերը եւ շատ այլ ցեղերի եւ զանազան ազգերի պատկանող զանգուածներ, աղուանների հետ միասին, ապրում էին Ալբանիոյ հողային տարածքում: Այս դրութիւնը նոյնութեամբ շարունակուեց մինչեւ թիւրքերի գաղթը:

Ինչպէս նախապէս ասուեց, հին ժամանակներից սկսեալ, յաճախ Ալբանիոյ երկրամասում ապրում էին զանազան ու բազմապիսի ցեղեր: Այս նոյն

խնդիրը պատճառ եղաւ նաեւ բնակչութեան լեզուի եւ մշակոյթի խառնաշփոթութեան: Մ. թ. ա. առաջին դարի աշխարհագիր Ստրաբոնը, Կովկասեան Ալբանիոյ ժողովուրդների լեզուի մասին խօսելիս, գրել է. «Կովկասեան Ալբանիոյ տարածքում բնակուող ցեղերը խօսում են 26 բարբառներով[53]:

Գուցէ եւ լեզուների բազմաթիւ լինելը պատճառ է եղել Ալբանիոյ ժողովրդի տեղական լեզուի ոչնչացման եւ արգելք է եղել այդ երկրում ազգային գրի եւ գրականութեան զարգացման: Հնագէտները, իրենց պրպտումների ընթացքում, ցայժմ այդ ժողովուրդների հին դարաշրջաններին պատկանող ոչ մի գիր կամ գրուածք չեն յայտնաբերել: Մինչդեռ, գրեթէ մ. թ. ա. առաջին հազարամեակում, Ազարբայջանի տարածքում գրի եւ գրականութեան ուշագրաւ օրինակներ կան:

Երբ Ազարբայջանում, մարերի եւ աքեմենեանների դարաշրջաններում, շրջանառութեան մէջ էին զանազան տեսակի մետաղէ դրամներ, որն ապացոյց էր «դրամը հաւասար է ապրանքին» հասկացութեանը, Կովկասեան Ալբանիոյ մէջ դրամահատման մասին վկայեալ ոչ մի տուեալ չկայ: Սա ինքնին ապացոյց է Կովկասեան Ալբանիոյ յետամնաց տնտեսական պայմանների: Անուանի դրամագէտ պրոֆ. Պախոմովը իր ուսումնասիրութիւններից մէկում գրել է.

«Կովկասեան Ալբանիոյ տարածքում մեր թուագրութիւնից առաջ 3րդ դարից վաղ շրջանին պատկանող ոչ մի դրամանիշ չի գտնուել[54]:

Ըստ Պախոմովի՝ «Կովկասեան Ալբանիոյ տարածքում յայտնաբերուած հնագոյն դրամը Ալեքսանդր Մակեդոնացու (մ. թ. ա. 336-323) շրջանին է վերաբերում[55]: Այս փաստը գալիս է հաստատելու, որ աղուանները մինչեւ այդ ժամանակաշրջանը անծանօթ էին դրամ կտրելու արուեստին:

Շարունակելով իր խօսքը, նա գրում է. «Կովկասեան Ալբանիոյ տարածքում գտնուել են մ. թ. ա. երկրորդ դարի դրամներ, որոնք պատկանում են սելեւկեաններին եւ պարթեւներին: Յետագայում այդ երկրում գտնուեցին նաեւ հռովմէական դրամներ»[56]:

Ինչ վերաբերում է պարթեւների դրամներին, Արշակունեաց արքայ Ֆարհադ III-ին (մ. թ. ա. 70-57) պատկանող պարթեւական դրամներ, համեմատաբար աչքառու քանակով, գտնուել են Ալբանիոյ տարածքում[57]:

Այս գրութիւններից շատ դիւրութեամբ կարելի է եզրակացնել, թէ իրենց հարեւանների՝ հայերի, վրացիների եւ իրանցիների համեմատութեամբ, Կովկասեան Ալբանիոյ ժողովուրդները ինչպիսի տնտեսական յետամնաց պայմաններում էին ապրում: Անտարակոյս, յետամնաց տնտեսութիւնն էլ,

իր հերթին, աղուանական հասարակութեան մշակութային յառաջադիմութեան արգելք էր հանդիսանում:

Այն ժամանակ, երբ մեր թուագրութիւնից առաջուայ երկար ու ձիգ դարերում Փոքր Միդիայի (Աթուրփաթգան) ժողովուրդը գիր եւ գրագրութիւն ունէր, Կովկասեան Ալբանիոյ գրութիւնից ոչ մի հետք չկար: Ազարբայջանի ժողովրդի մշակոյթի եւ գրութեան դէպք Կովկասեան Ալբանիա չթափանցելը, ինքնին ապացոյց է, որ այս երկու երկրների ժողովուրդները լեզուով ու կրօնով միմեանցից անջատ էին: Որովհետեւ, եթէ նոյն լեզուն տարածուած լինէր Ազարբայջանում եւ Կովկասեան Ալբանիոյ մէջ, անտարակոյս Աթուրփաթգանում ընդհանրացած հին պարսկերէն եւ միջին պարսկերէն գիրն ու գրութիւնը մուտք կգործէին նաեւ Ալբանիոյ ժողովուրդների մէջ: Պատմական ուսումնասիրութիւնները հաստատում են, որ Կովկասեան Ալբանիոյ լեզուն ոչ միայն տարբեր էր Ազարբայջանի ժողովրդի լեզուից, այլ նաեւ Հայաստանի եւ Վրաստանի ժողովուրդների լեզուներից:

Ինչպէս մատնանշուեց, քրիստոնէութիւնը մ. թ. չորրորդ դարի վերջերին եւ հինգերորդ դարի սկզբին մուտք գործեց Կովկասեան Ալբանիա, եւ այս պարագան պատճառ դարձաւ Հայաստանի եւ Ալբանիոյ մերձեցման: Հայ հոգեւորականները ջանում էին Կովկասեան Ալբանիոյ ժողովրդի համար գիր եւ գրականութիւն ստեղծել: Այս առնչութեամբ պրոֆ. Բարտոլդը գրել է.

«Մեր թուագրութեան հինգերորդ դարում հայ հոգեւորականների միջոցով ստեղծուեց աղուանական լեզուի այբուբենը, որովհետեւ աղուանական լեզուի մէջ գոյութիւն ունէին մի շարք հնչիւններ, որոնք հայոց լեզուի մէջ չկային: Այբուբենի ստեղծումից անմիջապէս յետոյ Սուրբ Գիրքը հայերէնից թարգմանուեց աղուաներէնի»[58]:

Այլ պատմաբաններ եւս աղուաներէնի այբուբենի ստեղծումը համարում են իրագործուած հինգերորդ դարում: Ինչպէս երեւում է, յիշեալ այբուբենը բաղկացած էր 52 հնչիւններից[59]:

Որոշ պատմաբաններ համոզուած են, որ գարգարների լեզուն այն լեզուն էր, որի համար աղուանական այբուբենը ծրագրուել եւ հնարուել էր: Թւում է, թէ գարգար ցեղերը մ. թ. հինգերորդ դարում Կովկասեան Ալբանիոյ հողային տարածքում ապրող ցեղերի կարեւորագոյնն էին: Սասանեան շրջանի հայ պատմագիր Մովսէս Խորենացին գարգար ցեղերի լեզուն համարել է Ալբանիոյ երկրամասի կարեւորագոյն լեզուն, եւ այդ առնչութեամբ գրել է.

«Գարգարների լեզուն (Կովկասեան Ալբանիոյ երկրամասում բնակուող ցեղերից մէկը) հիմքն ու նիւթը եղաւ աղուանների գրական լեզուի երեւան գալու համար[60]:

Կովկասեան Ալբանիոյ գիրն ու գրականութիւնը դեռ հարկ եղած չափով չէր ձեւաւորուել, երբ սկսուեց արաբների արշաւանքը դէպի այդ երկիրը, եւ, հպատակ դարձած այլ երկրների նման, արաբ գիրն ու գրականութիւնը փոխարինեց բնիկ լեզուի գրին ու գրականութեանը: Որոշ ազգեր, ինչպէս իրանցիները, հայերը եւ ուրիշներ, որոնք ունէին բարձր մակարդակի մշակոյթ, կարողացան հնարաւորին չափ իրենց լեզուի գոյութիւնը եւ իրենց մշակոյթն ու բարքերը պահպանել: Սակայն այն ցեղերը, որոնք մշակոյթի բարձր մակարդակ չունէին, ձուլուեցին նուաճող ազգերի մշակոյթի մէջ: Այս իսկ պատճառով, Կովկասեան Ալբանիոյ ժողովրդի գրից, գրականութիւնից եւ նրանց գրածներից ոչ մի հետք չմնաց, այլ նախ արաբերէնի եւ ապա թուրքերէնի միջոցով ձեւաւորուեց:

Կովկասեան Ալբանիոյ պատմութիւնը եւս տեղացի պատմագիրների եւ հեղինակների կողմից չգրուեց. այն գրի են առել հայ պատմագիրներն ու հեղինակները: Ըստ պրոֆ. Բարտոլդի՝ «Ալբանիոյ ժողովրդի այբուբենը մօտ էր հայկական այբուբենին, սակայն այդ երկուսը միանման չէին: Աղուաներէնի մէջ կային որոշ հնչիւններ, որոնք հայերէնի մէջ չկային»[61]:

Պրոֆ. Բարտոլդը ոչ միայն համոզուած էր Կովկասեան Ալբանիոյ ժողովուրդների եւ ազարբայջանցիների միջեւ եղած լեզուական տարբերութեան, այլ նաեւ ցեղական ու տոհմական զանազանութիւններին: Նա այն կարծիքին էր, որ մինչեւ իսկ արաբների ներխուժումից յետոյ եւ նրանց տիրապետութեան շրջանում էլ այդ տարբերութիւնները չվերացան:

«Ազարբայջանի եւ Կովկասեան Ալբանիոյ միջեւ եղած ցեղական եւ տոհմային տարբերութիւնները,— գրում է Բարտոլդը,— մինչեւ իսկ իսլամական դարաշրջանում էլ չվերացուեցին: Ազարբայջանի ժողովրդի իրանական բարբառը (Ազարի) Առանի ժողովրդի լեզուից (Առաներէն, իմա՛ աղուաներէն, ծ. թ.), որը յաբեթական լեզուների խմբին է պատկանում, անջատ եւ տարբեր էր: Միաժամանակ Ազարբայջանի ժողովրդի կրօնն էլ Ալբանիոյ ժողովրդի կրօնից տարբեր էր, Ազարբայջանի ժողովուրդը զրադաշտական կրօնին էր դաւանում, իսկ Ալբանիոյ մէջ, ինչպէս Իրանի սահմանամերձ այլ երկրների մէջ, տարածուած էր քրիստոնէական դաւանանքը: Ալբանիոյ տեղական տիրակալ իշխաններն էլ քրիստոնեայ էին»[62]:

Ընթերցողին ներկայացուած այս նիւթերից շատ դիւրութեամբ կարելի է եզրակացներ հետեւեալ երկու հիմնական կէտերը: Նախ այն, որ Կովկասեան Ալբանիոյ ժողովուրդները, ցեղական եւ տոհմային տեսակէտից, անջատ էին Փոքր Միդիայի (Աթուրփաթգան) ժողովուրդներից: Երկրորդը այն, որ Կովկասեան Ալբանիոյ ժողովուրդների լեզուն էլ տարբեր էր Ադարբայգանի ժողովուրդների լեզուից:

Տողերից հեղինակը նաեւ անհրաժեշտ է համարում մի քանի խօսք ասել նախկին Կովկասեան Ալբանիոյ, ներկայիս Ազերբայջանի տարածքում ապրող «Թաթ»երի մասին: Չգիտենք, թէ թաթերը, որոնք իրանական լեզուին պատկանող ժողովուրդ են, ո՞ր թուականից են բնակուել այդ երկրում: Ինչեւէ, Ապշերոնի թերակղզում եւ Դաղստանում թաթերի գոյութիւնը անվիճելի մի իրականութիւն է: Հակառակ թիւրքերի միմեանց յաջորդող ներխուժումներին, Կովկասի որոշ շրջաններում թաթերի լեզուն դեռեւս չի վերացել: Հաւանաբար Ապշերոնի թերակղզու անմշակելի լինելու պատճառով է, որ արաբներն ու թիւրքերը այդ շրջանի ժողովրդին չեն տեղաշարժել: Այս նոյն գործոնը կարող է թաթերէնի գոյատեւման պատճառ եղած լինի յիշեալ թերակղզում: Կասպից ծովի հարաւ-արեւմտեան ափերին (Աստարա եւ Լենքորան) ապրում են նաեւ որոշ թուով թալիշներ: Այդ շրջանի բնիկ ժողովրդի լեզուն եւս իրանական լեզուների ճիւղերից մէկն է, սակայն այս երկու լեզուներն էլ — թաթերէն եւ թալիշերէն — օրից օր տկարանում են: Այդ ժողովուրդները զուրկ են դպրոցներից, ուր պիտի կարողանան սովորել բնիկ լեզուն կամ փարսին, ուստի հարկադրուած են իրենց ուսումը ստանալ ռուսերէնով կամ թիւրքերէնով: Այս իսկ պատճառով, յիշեալ բնիկ լեզուները ապրում են իրենց աստիճանական վերացման շրջանը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Hecataei, fragmenta, FHG, edit.K.Muller, V. I. fig. 170-183.

2 Herodoti, Historiae. Ad. recensionem suam recognovit Henricus Stein, Berol. 1884, III, 93, VII, 68.

3 Minorsky, Mukan. EI, III. P. 758.

4 Տես ծանօթ. 2, III, 92, VII, 67.

5 Hermann, Kaspioi. RE, Stuttgart, 1929, s. 2274.

6 Strabonis, Geographica, rec. Commentario srit. instr. G. Kramer, Vol. 1, 1884, XI 4,5.

7 Исследования по истории культуры Востока, Москва-Ленинград, 1960, стр. 16.

8 Ի. Մ. Դիակոնով, Մարերի պատմութիւնը, պարսկ. թարգմ. Քարիմ Քեշաւարզ, Թեհրան, Բոնգահէ Թարջոմէ վա Նաշրէ Քեթաբ, 1966, էջ 143-144:

9 Տես ծանօթ. 2, VII, 68:

10 Տես ծանօթ. 8, էջ 144:

11 Նոյն տեղում, էջ 13-14:

12 Նոյն տեղում, էջ 138:

[13] Տես ծանոթ. 6, XI, 4, 5:
[14] Arriani, anabasis, recognovit C. Abicht, Leipsig, 1886-III, 8, 4.
[15] Նոյն տեղում:
[16] Plinii C. Secundi, Naturalis Historia, D. Detelfsen recens. uit, vol. 1, Berol. 1866, VI, 29., Ptolemaei, V. 10, 2.
[17] Տես ծանոթ. 6, vol. I-III, Berol. 1884-1852, XI, 4, 1:
[18] Նոյն տեղում, 7, 1:
[19] Նոյն տեղում, 4,1:
[20] Ammiani Mercellini, rec. C. U. Clark, XIII, 6,61.
[21] Տես ծանոթ. 6, vol. I-III, Berol. 1844-1852, XI, 7,1, 8,1 5,1.
[22] Նոյն տեղում:
[23] Տես ծանոթ. 16, VI, 29, 36, 38.
[24] Barkhudarian M., Strana Agvanov i ikh sosedy, Tbilisi 1893, str. 76.
[25] Տես ծանոթ. 2, III, 93 եւ ծանոթ. 6, vol. I-III,II 1,14 XI 8,4. 14,4.
[26] Анания Ширакаци, Армянская история, СПБ, 1877, стр. 57.
[27] Моисей Хоренский, История Армении, Москва, 1893, стр. 58.
[28] Նոյն տեղում, էջ 58:
[29] «Քարանդէ Քասրաւի» ժողովածու Ահմադ Քասրաւու 78 յօդուածների եւ զրոյցների, աշխատասիրեց Եահեա Զոքա, Թեհրան 1977, էջ 368-69:
[30] Տես ծանոթ. 27, էջ 193:
[31] Տես ծանոթ. 7, էջ 17:
[32] Տես ծանոթ. 6, vol. I-III, Berol. 1844-1852, XI. 4,5.
[33] Տես ծանոթ. 16, VI. 29, 38, 39, 42.
[34] Cl. Ptolemaei, Geograaphie libri octo Graece et latine ad condicum, ed. Dr. Frid. G. Wibberg, V. 11,1. 10,1. 12,1, 8, 7, 11.
[35] Տես ծանոթ. 6, vol. I-III, Berol. 1844-1852, XI, 4, 5.
[36] Бартольд В. В., Сочинения, т. II., ч. 1, Москва, 1963, стр. 662.
[37] Նոյն տեղում, էջ 661-662:
[38] Նոյն տեղում, էջ 661-662:
[39] Նոյն տեղում, էջ 667:
[40] Նոյն տեղում, էջ 668:
[41] Քրիսթէնսէն, Արթուր, Իրանը Սասանեանների Շրջանում, պարսկ. թարգմ. Ռաշիդ Եասամի, երրորդ տպագրութիւն, Թեհրան 1966, էջ 311-12:
[42] Գայշաքը պարսից Խոսրով թագաւորի կողմից նշանակուած էր Աղուանքի մարզպան:
[43] Արեւելքի մեծ ծովը, որն ակնարկում է «Պատմութիւն Աղուանից» գրքի հեղինակը, նոյն Կասպից ծովն է, քանի որ Դերբենդի պարիսպը գտնւում էր Կովկասի եւ Կասպից ծովի միջեւ:
[44] Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխարհաբար թարգմ. Վ. Առաքելեանի, Երեւան, 1969, էջ 103-104:
[45] Տես ծանոթ. 36, էջ 673:
[46] Նոյն տեղում, էջ 673:

[48] Նոյն տեղում, էջ 673:
[48] БСЭ, т. I, Москва, 1970, стр. 250.
[49] Տես ծանոթ. 36, էջ 672:
[50] Տես ծանոթ. 36, tom III, Moskva, izdatelstvo «Nauka» 1965, str. 334-335.
[51] Պատմութիւն Սեբէոսի, աշխ. Գ. Վ. Աբգարեանի, Երեւան, 1979, էջ 174:
[52] Вопросы истории Кавказской Албании, ред. И. Алиев, Баку, 1962, стр. 168.
[53] Տես ծանոթ. 7, էջ 18
[54] Տես ծանոթ. 52, էջ 106-107:
[55] Նոյն տեղում, էջ 107:
[56] Նոյն տեղում, էջ 107:
[57] Նոյն տեղում, էջ 109:
[58] Տես ծանոթ. 36, էջ 672:
[59] Տես ծանոթ. 48, էջ 250:
[60] Տես ծանոթ. 27, էջ 85:
[61] Տես ծանոթ. 36, էջ 663:
[62] Նոյն տեղում, էջ 777:

ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ

ԱԶԱՐԲԱՅՋԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՑԵՂՆ ՈՒ ԼԵԶՈՒՆ

1 — Ազարբայջանի ժողովրդի ցեղը

Իրանեան բարձրաւանդակի նախապատմական շրջանի բնակիչների մասին դեռեւս բաւական չափով ծանօթութիւններ ձեռք չեն բերուել: Թէեւ հնագէտները շատ գնահատելի աշխատանքներ են տարել այդ ուղղութեամբ, սակայն, այդուհանդերձ, առկայ տեղեկութիւնները բաւարար չեն թւում:

Գիտնականների եւ ուսումնասիրողների միջեւ տեսակէտների զանազանութիւն գոյութիւն ունի նաեւ րիացիների դէպի իրանական բարձրաւանդակը քօչելու շուրջ: Ոմանք այն կարծիքին են, թէ արիացիները Կովկասի ճանապարհով իջել են դէպի Ազարբայջան եւ ապա շարունակել իրենց երթը դէպի Իրանի այլ շրջաններ, իսկ ոմանք կարծում են, թէ արիացիների ուղին անցել է Կասպից ծովի հիւսիս-արեւելքից եւ Միջին Ասիայից: Իսկ մի այլ խումբ գտնում է, որ արիացիները իջել են Կասպից ծովի թէ՛ արեւելքից եւ թէ՛ արեւմուտքից: Ռուս գիտնական պրոֆ. Գրանտովսկին այն կարծիքին է, թէ մ. թ. ա. 2րդ հազարամեակի երկրորդ կէսին արիացիները Կասպից ծովի երկու կողմերից շարժուեցին դէպի իրանական բարձրաւանդակ: Նա գրում է.

«Հնագիտական եւ լեզուաբանական որոշ սկզբնաղբիւրներ կարող են բնորոշել եւ ցոյց տալ Իրանի արեւմուտքում հաստատուած ցեղերի տեղաշարժերի ուղին Կովկասի ճանապարհով: Հաւանական է, որ արիացիները Կասպից ծովի երկու կողմերից դէպի Իրան ճանապարհ ելած լինեն: Սրանք մ.թ.ա. 2րդ հազարամեակի երկրորդ կէսի շուրջ եւ գրեթէ միաժամանակ իրենց բնակավայրերը ընտրել են միմեանց մօտիկ տարածքներում»[1]:

Գրանտովսկին գտնում է, որ Իրանի հիւսիս-արեւմտեան շրջաններում արիացիների բոյնը հաստատուել է նախքան ասորիների արշաւանքը եւ նախքան Ուրարտական իշխանութեան հաստատումը: Այս առնչութեամբ նա հետեւեալ կարծիքն է յայտնել.

«Նախքան ասորիների արշաւանքը եւ Ուրարտական իշխանութեան հաստատումից առաջ, իրանական լեզուներին պատկանող մարդիկ իրենց բնակութիւնը հաստատեցին Իրանի հիւսիս-արեւմուտքում: Մենք գիտենք, որ մ.թ.ա. իններորդ դարում Ուրմիոյ լճի շրջակայ վայրերում եւ Դիալայի հիւսիսային հոսքի ափերին տարածուող հարթավայրերում եւ Արեւմտեան Մարաստանում իրանցիներ կային: Յետագայում, մ.թ.ա. եօթներորդ եւ ութերորդ դարերում, իրանցիները բոյն դրեցին Մարաստանի հողային տարածքի արեւելեան շրջաններում»[2]:

Մի շարք այլ հետազօտողներ եւս մարական տոհմի առաջին բնակավայրը համարում են հիւսիս-արեւմտեան Իրանը: Ըստ պրոֆ. Պիգուլեւսկայայի գրածի, «Իրանական ցեղերի ամենազօրաւոր տոհմը մարերն էին, որոնք աստիճանաբար Իրանի հիւսիս-արեւմուտքում ընտրեցին իրենց բնակավայրը»[3]: «Հինաւուրց դարերից ի վեր Իրանի բարձրաւանդակում բնակուող ցեղերը, տոհմային ծագման տեսակէտից, պատկանում էին իրանական խմբին, եւ այդ խմբի լեզուներն էլ հնդեւրոպական լեզուների արեւելեան ճիւղի մասն էին կազմում»[4]:

Եթէ հաստատուի արիացիների ճանապարհի ընկնելն ու գաղթը, այդ դէպքում պիտի ընդունել, որ, անտարակոյս, նախքան արիացիների ժամանումը, այդ տարածքում ապրող այլ ժողովուրդներ էլ գոյութիւն են ունեցել: Պրոֆ. Գրանտովսկին համոզուած է, որ «մ.թ.ա. առաջին հազարամեակի սկզբնական դարերում բնիկ ցեղերի մեծ խմբաւորումներ կային, որոնք իրանական լեզուին պատկանող ժողովուրդների հարեւանութեան մէջ էին ապրում: Երկարատեւ գոյակցութիւնը պատճառ եղաւ, որ բնիկները կերպափոխուեն եւ իրանական լեզուի ժողովուրդների հետ նոյնանան»[5]:

Ասորական եւ ուրարտական գրութիւններից պարզւում է, որ մարերը բնակւում էին Ուրմիոյ լճի շրջակայքում: Նրանք մանաեցիների, ուրարտացիների եւ ուրիշների հետ միասին սկզբում իրենց բնակավայրը ընտրել էին Ազարբայջանում եւ Քիւրդիստանում: Անշուշտ յիշեալ ցեղախմբերի միջեւ տարակարծութիւններ եւ ընդհարումներ եւս տեղի են ունեցել: Ուրարտական իշխան, Իշպուինի արքայի որդու՝ Մենուայի թագաւորութեան օրօք (մ.թ.ա. 778-810) տեղի ունեցաւ մի պատերազմ նրա եւ մանաեցիների միջեւ: Ուրարտական բեւեռագիր արձանագրութիւններից պարզւում է, որ մանաեցիները բնակւում էին Ուրմիոյ լճի արեւմտեան եւ հարաւային շրջաններում»[6]: Մ.թ.ա. ութերորդ դարի կէսերի եւ Թգլատպալասար III-ի շրջանի ասորական արձանագրութիւններից պարզւում է, որ մարերը իրենց բնակավայրը հաստատել էին Ուրմիոյ լճի հարաւում, եւ որ «Թգլատպալասարը իր տիրապետութիւնը վերահաստատելով Պարուսաի (իմա՛ Պարսուա) եւ մարերի վրայ Ուրմիոյ լճի հարաւում, իր զօրքը տարաւ դէպի հիւսիսային Սուրիա»[7]:

Ասարհադոնին պատկանող ասորական մի գուշակագրութեան մէջ նա ասորական չաստուած «Շամշ»ին հարցումներ է տալիս, որոնց ընթացքում յիշւում են կիմերների երկիրը Ուրմիոյ լճի արեւմուտքում, մանաեցիներինը՝ հիւսիսում, եւ մարերինը՝ հարաւում եւ հարաւ-արեւմուտքում»[8]:

Պէտք է մտաբերենք, որ կիմերներին ուսումնասիրող հետազօտողները նրանց համարում են արիական ցեղերից մէկը: Այդ ցեղը Ասորեստանի արքայ Աշուրբանիպալի օրօք քշուեց դէպի Փոքր Ասիա: Աշուրբանիպալի տարեգրութեան մէջ խօսւում է Լիդիայի իշխան Գուգուի —(Գիգէս)— (Gugu եւ Gyges ըստ Ն. Ադոնցի, ծ.թ.) կիմերների վրայ տարած յաղթանակի մասին[9]:

Թգլատպալասար III-ի օրօք, ասորիները, մ.թ.ա. 824-859 թուականների ժամանակաշրջանում, արշաւեցին դէպի Արեւելք: Առաջին անգամը լինելով, դէպքերի ասորական ժամանակագրութիւնների մէջ, մ.թ.ա. 834 թուին Փարս երկիրը յիշւում է «Փարսուա» անունով, մ.թ.ա. 827-828 տարիներին Մարաստանը կոչուել է «Մադայ»:

Մ.թ.ա. 616 թուին ասորիներն ու մանաեցիները պարտութեան մատնուեցին Բաբելոնի իշխանութեան կողմից: Այդ թուականից յետոյ Մանան դարձաւ Մարաստանին հպատակ: Մանա անուանումը վերջին անգամ յիշւում է Հին կտակարանի մէջ, Երեմիայի գրքում: Հին կտակարանի այս բաժնում Ուրարտու, Մանա եւ Սակա երկրները հերթականօրէն կոչւում են. «Արարատ երկիր, Մեննի[10] եւ Աշքինազ[11]» ձեւերով[12]: Որոշ պատմաբաններ համոզուած են, որ Հին կտակարանում «Մանա» անուան յիշատակումը եղել է մ.թ.ա. 593 թուին[13]:

Հին կտակարանում բազմիցս խօսւում է մարերի թագաւորների մասին, իսկ ուրարտացի, մանաեցի եւ սակ ցեղերը յիշատակւում են որպէս Մարաստանի արքաների հպատակներ[14]:

Մեծն Դարեհի Բեհիստունի արձանագրութեան մէջ ոչ մի յիշատակութիւն չկայ Մանայի մասին: Ենթադրւում է, որ մինչ այդ յիշեալ ցեղը ձուլուել էր Իրանի արեւմուտքի իրանալեզու ցեղերի մէջ:

Ինչպէս երեւում է, իրանական իշխանութիւնները երեւան են եկել մ.թ.ա. եօթերորդ դարում: Այդ պետութիւնները սկզբում ենթակայ էին տեղական իշխանութիւններին, սակայն ասորիների տկարանալուց յետոյ առաջին իրանական անկախ պետութիւնը (Մարաստանի թագաւորութիւնը) ծնունդ առաւ: Մարերի ապստամբութիւնը ասորիների դէմ մ.թ.ա. եօթերորդ դարի գուշակագրութեան մէջ յիշատակուած է: Յիշեալ ապստամբութեան մէջ սակերը, կիմերները եւ մանաեցիները դաշնակից էին մարերի հետ[15]: Մ.թ.ա. շուրջ 669 թուականին Մարաստանը Ասորական պետութեան կողմից ճանաչուեց որպէս անկախ երկիր[16]: Ուրարտու երկիրը, Մանան եւ սակերի երկրի մի մասը, որոնք մինչեւ մ.թ.ա. 593 թուականը մօտաւորապէս ինքնավար էին, այդ թուականից սկսեալ համարուեցին Մարաստանի մի մասը: Կիմերները, Փոքր Ասիոյ հիւսիս-արեւելքում, ինչպէս նաեւ Փարսի իշխանութիւն-

ները, Մարաստանի թագաւորութեան ենթակայ շրջաններից էին, երբ Մարաստանի կենտրոնը յաջորդիւ Ազարբայջանից փոխադրուեց Էքբաթանա (Համադան): Այսպիսով, իրանալեզու ժողովրդի առաջին մեծ պետութիւնը ստեղծուեց Իրանի հիւսիս-արեւմուտքում, ուր մարդիկ զբաղւում էին երկրագործութեամբ եւ անասնապահութեամբ[17]:

Մ.թ.ա. ութերորդ դարի վերջերից մինչեւ վեցերորդ դարի սկիզբը, կիմերներն ու սակերը ցեղերին գաղթեցնելու եւ բնակեցնելու գործում, ինչպէս նաեւ միջցեղային կռիւների մէջ կարեւոր դեր ունէին: Իրանական այս ցեղերը իրենց համար բնակավայրեր ընտրեցին Ազարբայջանում եւ Քիւրդիստանում, եւ այդ շրջանների անասնապահութեան մէջ մեծ ազդեցութիւն ունեցան: Հին աղբիւրներում խօսւում է Ազարբայջանում, Քիւրդիստանում, Կասպից ծովի ափերին եւ Զագրոս լեռնաշղթայի շրջաններում ապրող մի ցեղի գոյութեան մասին, որը կոչւում էր ամարդներ (մարդեր): Պրոֆ. Գրանտովսկին այդ խումբը եւս համարել է իրանական լեզուի ցեղերից[18]:

Հին կտակարանի մէջ Փարս եւ Մադ անունները յաճախ միասին են յիշատակւում: Աքեմենեան արքայից արքայ Դարեհն էլ Հին կտակարանի մէջ կոչուել է «Մարական Դարեհ»[19]: Դանիելի գրքում Իրանի օրէնքն ու կրօնը գրուած են «Մարերի եւ Ֆարսերի կրօնը»[20] եւ «Մարերի եւ Ֆարսերի օրէնքը»[21]: Բեհիստունի ժայռի արձանագրութեան մէջ եւս, շուրջ 30 անգամ, յիշւում է Մադ անունը, եւ շատ անգամներ Ֆարս անուան հետ միատեղ[22]: Հին կտակարանի մէջ, Եսթերի գրքում, Իրանի առաջնակարգ անձնաւորութիւնները յիշուած են որպէս «մարական եւ փարսի» անձինք: Յիշեալ գրքի մէջ այսպէս է ասուած.

«Եօթն պարսիկ եւ մարական պետեր կային, որոնք տեսնում էին Արքայի (Քսերքսէս, ծ.թ.) դէմքը եւ երկրում առաջին կարգում էին նստում»[23]:

Երեմիայի գրքի մէջ խօսւում է հիւսիսային ցեղերի եւ տոհմերի յարձակումից Բաբելոնի վրայ, որոնց կարեւորագոյնը մարերի տոհմն էր, որովհետեւ, ըստ Հին կտակարանի՝ «Աստուած դրդել է մարական արքաների ոգիները եւ նրա մտադրութիւնը Բաբելոնի դէմ է»[24]:

Մեծն Դարեհի Բեհիստունի ժայռի արձանագրութեան մէջ կայ մի կէտ, ըստ որի երեւում է, որ Ազարբայջանը Մարաստանի տարածքում էր գտնւում: Բեհիստունի արձանագրութիւնից պարզւում է, որ Մարաստանը Հայաստանին մերձակայ մի երկրամաս է եղել եւ տարածուած է եղել նրա կողքին: Այդ երկրի սահմանները համապատասխանում են Ազարբայջանի սահմանների հետ:

Բեհիստունի արձանագրութեան մէջ Դարեհը այսպէս է ասում.

«Իմ ծառաներից մի հայ մարդ, որ կոչւում էր Դադարշիշ, առաքեցի Հայաստան եւ նրան այսպէս ասացի. 'Գնա եւ յաղթիր այն ապստամբների

բանակը, որոնք իրենք իրենց ինձ ենթակայ չեն համարում:' Դրանից յետոյ Դադարշիշը ճամփայ ելաւ... Հայաստանում Դադարշիշը ինձ էր սպասում, երբ ես Մարաստան մտայ»[25]:

Դարեհի այս գրութիւնից պարզ կերպով կարելի է հասկանալ, որ Մարաստանը մերձակայ էր Հայաստանին եւ գտնւում էր նրա կողքին:

Ինչպէս նախապէս ասուեց, հին պատմագիրներն ու աշխարհագրագէտները, եւ ի շարս դրանց Ստրաբոնը, Արիանը, Յովսէփ Պլաւիոսը եւ ուրիշներ, Ազարբայջանը համարել են Մարաստանի մի բաժինը եւ անուանել են «Մեդիա-Աթրուփաթեն»: Պրոֆ. Բարտոլդը եւս Ազարբայջանը համարել է Մարաստանի հողային տարածքի անբաժանելի մէկ մասը[26]: Որոշ պահլաւերէն բնագրերի մէջ, ի միջի այլոց նաեւ Արտաշիր Բաբականի Կարնամակ-ի մէջ, այս անունը պահուել է իր մարական ձեւով: Ենթադրւում է, որ Սասանեանների օրօք Փոքր Մեդիա կամ Մեդիա-Աթուրփաթգան անունները գրուեցին միմիայն «Աթուրփաթգան» ձեւով, իսկ Մարաստան անունն էլ տրուեց նրա հարաւային շրջաններին —քրդերի երկիրը —: Մենք այս պարագան տեսնում ենք Արտաշիր Բաբականի Կարնամակ-ի մէջ, ուր քրդերի արքան կոչուել է «Մարական»: Կարնամակի մէջ, Արտաշիրի եւ «Քորդանշահ»ի միջեւ եղած կռուի մասին խօսելիս, այսպէս է գրուած.

«Դրանից յետոյ բազում զօրք եւ գնդեր Զաբոլից մէկտեղ հաւաքեց եւ գնաց մարերի Քորդանշահի հետ պատերազմելու»[27]: Կարնամակի մի այլ տեղում մարական Քորդանշահի բանակը յիշատակուել է որպէս «Սպահ Մադիգան» — մարերի բանակ —[28]:

Նոյն գրքում Հայաստանի անուանումը եղել է «Արման», եւ Ազարբայջանը յիշուել է առանձին կերպով, որպէս «Աթուրփաթգան»[29]: Ինչպէս երեւում է, «Մադ» բառը «Աթուրփաթգան» բառի առջեւից վերցուել է կամ պակաս չափով է գործածուել[30]: Սակայն պրոֆ. Փուրդաւուդը համոզուած է, որ պահլաւական հին Մադ անունը փոփոխութեան է ենթարկուել եւ գրուել է «Մահ» ձեւով[31]: Իսլամական շրջանի առաջին դարերի պատմագիրների, աշխարհագրագէտների եւ բանաստեղծների գրուածքներում յաճախակի կերպով հանդիպում ենք «Մահ» անուան: Ֆախրէդդին Աս'ադ Գորգան-ի «Վիս-օ-Ռամին» գրքի մէջ, որը պահլաւերէնից չափածոյ թարգմանուել է պարսկականի, խօսւում է Մահ պետութեան մասին, ինչպէս «Մեծ ու անուանի աշխարհն Մահ-ի», կամ Մահ երկրից, ինչպէս նաեւ «Թէ չէ Մահ երկիրը քէնից կ'աւերուի», կամ Մահ հողից, ինչպէս «Թող ծայրից ծայր աւերուի Մահ-ի հողը», կամ Մահ-աբադ երկրից, ինչպէս «նրան մի պահիր Մահ-աբադ երկրում», եւ բոլոր այս արտայայտութիւնների նպատակը

«Մահ» կամ «Մադ» երկիրն է: Վիս-օ-Ռամին պատմուածքից պարզւում է, որ Մարաստան երկրի վրայ թագաւորում էր Կարէն արքան:

Թաբարին Բահրամ Գուրի որսատեղին եւ նրա անյայտանալու վայրը համարում է «Մահ» երկիրը եւ այս մասին այսպէս է գրում.

«Բահրամը իր ժամանակների վերջին գնաց դէպի Մահ ու մի օր որոշեց որսի գնալ: Արշաւեց դէպի մի ցիռ ու, հետեւելով նրան, հեռացաւ ու ընկաւ մի հորի մէջ ու ընկղմուեց»[32]:

Բահրամի նախասիրած որսատեղի մասին Թաբարիի գրածից պարզւում է, որ «Մահ»ը Ազարբայջանում էր եւ կամ այդ տարածքի մի բաժինն էր, որովհետեւ նա այս նոյն գրքում, ակնարկելով Բահրամի որսատեղին, այսպէս է գրել.

«Բահրամը... գնաց դէպի Ազարբայջան, որպէսզի այնտեղի ատրուշանում երկրպագութիւն կատարի ու այնտեղից գնաց դէպի Էրմիյյէ, որպէսզի այնտեղի անտառներում որս անի»[33]:

Այս գրուածքից յայտնւում է, որ Էրմիյյէի անտառները «Մահ» կամ «Մադ» երկրում էին գտնւում:

Ահմադ բին Եահեա Բալազարին իր Ֆութուհ-իլ-Բոլդան գրքի մէջ գրել է, որ «Սա'ադ բին Աբի Վակկասը, երբ Օսման բին Աֆֆանի կողմից նշանակուեց Քուֆէ-ի նահանգապետ, Մահի եւ Համադանի հարկահաւաք նշանակեց Ալա բին Վահբ բին Աբդ բին Վահեանին, որը Բանու Ամէր բին Լեօվի գերդաստանից էր»[34]:

«Բանու Ամիր» կամ «Բանի Ամիր» կոչումը այն անունն էր, որով իսլամական որոշ հեղինակներ անուանել են քրդերին, իսկ իրանցիներին ու արաբներին նոյն ծագումից են համարել: Սակայն այս գրութիւնները չեն համապատասխանում իրականութեան հետ. Ահմադ Քասրաւին, ժխտելով իսլամական պատմագիրների այդ գրուածքները, այսպէս է մեկնաբանել.

«Անցեալում մարդկանց ծագման եւ ազգութեան մասին ամէն մէկը գրում էր այն, ինչ ենթադրում էր. Հին կտակարանում իրանցիներին եւ արաբներին համարել են նոյն ծագման տէր. Մա'սուդին եւ ուրիշներ քրդերին ներկայացրել են որպէս «Բանի Ամէր»: Սակայն սրանք, բոլորն էլ ժողովրդական արտայայտութիւններ են, եւ ոչ մի արժէք չեն ներկայացնում: Այսօր, ժողովրդի մէկ զանգուածի ազգութեան ճանաչման համար լաւագոյն միջոցը համարում ենք նրանց լեզուն»[35]:

Բալազորիի գրածից պարզւում է, որ Մահն ու Համադանը, գէթ մինչեւ երրորդ Խալիֆայի օրերը, ունեցել են մէկ նահանգապետ: Դա այդպէս չէր լինի, եթէ այդ երկու երկրները մերձաւոր եւ հարակից չլինէին: Ենթադրւում է, որ Մադը հին դարերում ընդգրկում էր Մեծ Մարաստանը — Իրանի

արեմտեան եւ կենտրոնական շրջանները, ի շարս դրանց Ռէյը եւ Իսֆահանը, մինչեւ Քաւիրի եզրը — եւ Փոքր Մարաստանը — Աթուրփաթգան եւ Քիւրդիստան — իսլամական շրջանի առաջին դարերում դեռեւս նոյնութեամբ պահել էր իր անունը: Ահմադ Քասրաւին այս խնդրի շուրջ իր կարծիքը այսպէս է յայտնել.

«Իր-երը կամ Իր ժողովուրդը, երբ եկան Իրանի լեռնաշխարհը, նրանցից մի մեծ խմբակ, որոնք Մադ էին կոչւում, հաստատուեց Իրանի հիւսիս-արեւմուտքում, ուր ներկայիս գտնւում են Ազարբայջանը եւ Համադան, Քերմանշահ, Ղազւին, Իսպահան եւ Թեհրան քաղաքները: Այդ տարածքները նրանց անունով կոչուեց Մարաստան, որից Ազարբայջանը «Փոքր Մարաստանն» էր, իսկ մնացած շրջանները «Մեծ Մարաստանն» էր»[36]:

Մենք նաեւ հանդիպում ենք երկու Մահեր «Մահէյն» արտայայտութեան, Նահաւանդի Մահը Իսֆահանի մօտակայքում, եւ Դինէւարի Մահը Համադանի շրջակայքում՝ յիշատակուած իսլամական շրջանի պատմիչների եւ աշխարհագիրների գրուածքներում: Աբուհանիֆէ, Ահմադ բին Դաւտւդ Դինէւարին, Ախբար-ուլ-Թաւալ գրքի հեղինակը գրել է, թէ «Բասրայի Մահ»ի վայրը, որ նոյնն է ինչ «Նահաւանդի Մահ»ը, գտնւում էր Իսֆահանի մօտակայքում[37]:

Իսլամական շրջանի պատմագիրների եւ աշխարհագրագէտների գրքերում, բացի «Բասրայի Մահ» անունից, հանդիպում ենք նաեւ մի այլ անուան, որը «Քուֆէյի Մահ»ն է: «Ալբոլդան» գրքի հեղինակ Իբնիֆակիհը, որը անձամբ Մարաստան երկրի ժողովրդից էր, «Բասրայի Մահ» եւ «Քուֆէի Մահ» անուանումների մասին այսպէս է գրել.

«Նահաւանդը այն երկրներից է, որ Քուֆէի մարդկանց ձեռքով է գրաւուել, իսկ Դինէւարն էլ մի երկիր է, որ գրաւուեց Բասրացիների ձեռքով: Այս իսկ պատճառով, երբ մահմեդականները Քուֆէում բազմացան, պէտք եղաւ, որ իր բնակիչների կարիքները բաւարարելու համար եւս մի հարկատու շրջան ունենան, որի բնակիչներից գանձուող հարկի դիմաց խաղաղութիւն էր հաստատուել նրանց միջեւ: Այսպէս եղաւ, որ Դինէւարը տուին Քուֆէին եւ դրա դիմաց Նահաւանդը յանձնեցին Բասրայի ժողովրդին, որովհետեւ Նահաւանդը մօտ էր Իսֆահանին: Այսպիսով, Դինէւարի տուրքի այն մասը, որ առաւել էր Նահաւանդի տուրքից, յատկացուեց Քուֆէին: Այս իսկ պատճառով Նահաւանդը անուանեցին «Մահ-ու-Բասրա», իսկ Դինէւարը անուանեցին «Մահ-ու-Քուֆէ». եւ այս կատարուեց Մուաւիյէ բին աբի Սաֆեանի օրով[38]:

Բալազարին եւս, հիմնուելով Աբու Մասուդ Քուֆիի խօսքի վրայ, ակնարկում է այս կէտին եւ այսպէս է գրում.

«Նահաւանդը Քուֆէի ժողովրդի նուաճածն էր, իսկ Դինէւարը Բասրայի ժողովրդի ձեռքով էր գրաւուել: Երբ Քուֆէի մուսուլմանների թիւը շատացաւ, կարիք ունեցան այլ տարածքների, որպէսզի նրանց վճարած հարկերը բաժանեն իրենց մէջ: Դինէւարը յանձնեցին նրանց, եւ դրա դիմաց բասրացիք Նահաւանդը վերցրեցին, որովհետեւ այդ քաղաքը Իսֆահանի գործակալութեան մաս էր կազմում: Դինէւարի վճարած հարկի այն մասը, որ աւելի էր Նահաւանդի վճարած հարկից, տրուեց քուֆէցիներին, եւ այդ պատճառով Նահաւանդը կոչուեց Բասրայի Մահ, իսկ Դինէւարը՝ Քուֆէի Մահ: Եւ սա կատարուեց Մուաւիյէի օրով[39]»:

Ինչպէս երեւում է, արաբների Իրանի վրայ հաստատած տիրապետութեան շրջանում Մարաստանի կամ «Մահ»ի տարածքի շրջագիծը զգալի կերպով փոքրացաւ: Այս ժամանակաշրջանում հանդիպում ենք նաեւ մի այլ դարձուածքի, որը վերաբերում է «Ջիբալ» անուան եւ որը ներառում էր հին Մարաստանի հողային տարածքի մի ընդարձակ մասը եւ որը, հաւանաբար, արեւմտեան Մարաստանի անուան փոխարէն էր գործածւում: Որոշ գրուածքների մէջ «Ջաբալ» կամ «Ջիբալ» նահանգը գտնւում էր Ազարբայջանի կողքին: Համզաթ բին-Հասան Իսֆահանին «Սիննի Մուլուք ալ-Արզ-վալ-Անբիա» գրքի մէջ այսպէս է գրում.

«Աբդուլլաի բին Թահերին Մա'մուն-ը նշանակել էր Բաբաքի եւ Ազարբայջանի ու Ջիբալի զօրաւարների հետ ճակատամարտելու[40]:

Նա գրում է նաեւ, թէ Մա'մունը իր մի նամակով Աբդուլլաի բին-Թահերին «Ազարբայջանի եւ Ջիբալի նահանգապետութիւնից» պաշտօնանկ արեց[41]:

Այս գրութիւնից պարզւում է, որ Ազարբայջանի եւ Ջիբալի — Մարաստան — իշխանութիւնը տրւում էր մէկ նահանգապետի: Աբուրեյհան Բիրունին իր «Ալջամահիր» գրքի մէջ յիշատակում է Ջաբալի հողը եւ «Մահէյն»ը — երկու Մահ-եր—: Համզէ Իսֆահանին եւս իր գրքի մէջ բերում է «Մահէյն» անունը[42]: Իսլամական դարաշրջանի հեղինակների գրութիւններում հանդիպում է նաեւ «Մահաթ» դարձուածքը, որը իրականում «Մահ»ի յոգնակին է եւ նոյնն է ինչ «Մարեր»[43]:

Հանգուցեալ Ալի-Աքբար Դեհխոդան համոզուած է, որ «Մահ» անուանումը մնացորդն է «Մադ»ի եւ հին «Մայ» անուան, որը Մարական երկրի կենտրոնն է եղել եւ որը պահլաւերէնի եւ պարսկերէնի մէջ փոխուել ու «Մահ» է դարձել[44]:

Ի. Մ. Դիակոնովը Մարաստանը համարում է մի երկրամաս, որ, բառիս լայն իմաստով, հին դարերում տարածւում էր հիւսիսում մինչեւ Արաքս գետը եւ Էլբուրզ լեռները, արեւելքում մինչեւ Դաշտէ Քաւիր, արեւմուտքում եւ հարաւում մինչեւ Զագրոս լեռները, եւ բաղկացած էր երկու մասերից:

Առաջին կամ արեւմտեան բաժինը «Մադ Աթրուփաթէն» երկիրն էր, որ Արաքս գետից ձգւում էր մինչեւ Ալւանդ լեռը: Երկրորդ կամ Ստորին Մարաստանը, որ գտնւում էր Էլբուրզ լեռների եւ Զագրոսի բարձունքների միջեւ[45]:

Այն բոլորից, որ անցեալ էջերում ընթերցողի ուշադրութեան յանձնուեց, կարելի է երկու եզրակացութիւն անել: Առաջինը այն, որ Ազարբայջանը ըստ էութեան Մեծ Մարաստանի մի մասն էր եւ նոյն ինքը «Մադ Ատուրպադգան»ն էր: Երկրորդը այն, որ մարերը իրանական ցեղերից էին: Շատ գիտնականներ եւ ուսումնասիրողներ համաձայն են այն խնդրի շուրջ, որ մարերը փարսերի, սակերի, պարթեւների, սարմատների եւ այլ ցեղերի նման պատկանում էին իրանական տոհմին, եւ որ Մարաստանի եւ Փարսի պետութիւններն էլ համարւում էին շարունակութիւնը իրանական ցեղերի այն երկարատեւ պատմական շրջանի, որը յաջորդել է նրանց Իրանի բարձրաւանդակը մուտք գործելուն: Պրոֆ. Գրանտովսկին, այս կէտը լուսաբանելիս, մարերին, փարսերին, գիլանցիներին, մազանդարանցիներին, լոռերին եւ բելուչներին ներկայացնում է որպէս Իրանի բարձրաւանդակի արեւմուտքում բնակուող իրանական ցեղեր[46]: Նա, իր խօսքը շարունակելով, այսպէս է գրում.

«Մարական պետութեան հաստատումը, ուր պաշտօնական լեզուն իրաներէնն էր, իրանական լեզուի Իրանի զանազան ոստաններում լայն տարածում ստանալու խնդրում մասնաւոր կարեւորութիւն է ունեցել»[47]:

Այն, ինչ բացայայտուեց ընթերցողներին, ցոյց է տալիս, որ «Մադ Ատուրպատգան»ը Իրանի բարձրաւանդակում արիացիների հաստատած առաջին բնակավայրերից է եղել:

Շատ պատմագիրներ Ազարբայջանը համարում են արիացիների մեծ մարգարէ Սպիտաման Զրադաշտի ծննդավայրը եւ համոզուած են, որ նա Ազարբայջանից գնաց մինչեւ Իրանի արեւելքը, Քէյ Գոշտասպի մօտ, եւ տարածեց իր կրօնը նրա երկրում: Պահլաւական գրականութեան աւանդութիւնն էլ Ազարբայջանը ճանաչում է որպէս Սպիտաման Զրադաշտի ծննդավայրը: Համզէ Իսֆահանին այս մասին գրում է.

«Քէյ Գոշտասպը իր թագաւորութեան երեսնամեակին յիսուն տարեկան էր: Զրադաշտը, որ Ազարբայջանից էր գլուխ բարձրացրել, նրա մօտ եկաւ, եւ Քէյ Գոշտասպը նրա կրօնը ընդունեց[48]:

Իբնի Ֆակիհը գրում է. «Իսկ Ուրմիան մի հին քաղաք է: Մոգերը կարծում են, որ իրենց մեծագարէն՝ Զրադաշտը, այդ քաղաքից է[49]:

Մա'սուդին գրում է. «Լոհրասպից յետոյ նրա որդին Բէշտասպը թագաւոր դարձաւ եւ նրա արքայանիստ քաղաքը Բալխն էր: Նրա թագաւորութեան

երեսուներորդ տարում Սպիմանի որդի Զրադաշտը [illegible]ս մօտ եկաւ... Նա Ազարբայջանի բնիկներից էր եւ նրա ծագման մասին ամենաընդունուածը այն է, որ Զրադաշտը Սպիմանի տղան է[50]:

Թաբարին այս տեսակէտի հակառակն է արտայայտել եւ գրել է, որ ըստ «Սուրբ գրքի ժողովրդի ենթադրութեան» Զրադաշտը պաղեստինցի էր, որ «գնաց Ազարբայջան երկիրը եւ հիմնեց մոգերի կրօնը»[51]:

Ամէն պարագային, Սպիտաման Զրադաշտի, որի տեղացի լինելու եւ նրա ծննդավայրի շուրջ տեսակէտների զանազանութիւն գոյութիւն ունի: Պրոֆ. Փուրդաւուդը Իրանի մեծագոյն եւ կարեւորագոյն նահանգ Ազարբայջանն է համարում Զրադաշտի իրական հայրենիքը[52]:

Մի այլ կէտ, որ յիշատակութեան արժանի է, «Ատրպատ» կամ «Աթուրփաթ» անունն է, որից ծագել է «Աթուրփաթգան» կամ Ազարբայջան անունը: Ֆարւարդին Յաշտ-ի 102րդ պարբերութեան մէջ հանդիպում ենք արիական մի շարք սրբերի անունների, որոնց հրեշտակներին ողջոյն է ուղարկուել: Այդ սրբերից մէկը «Ատրպատ»ն է եւ այդ պարբերութեան մէջ այսպէս է ասուած.

«Մաքրակրօն Ատրպատի հրեշտակին ենք փառաբանում...»[53]:

Չգիտենք, թէ սա նոյն «Աթուրփաթ»ն է, որի անունով Փոքր Մարաստանը «Աթուրփաթգան», կամ հին պատմագիրների գրածի համաձայն «Մադ Աթրուփաթէն» կոչուեց, թէ սա մի ուրիշ «Աթուրփաթ» է: Եթէ «Յաշտերի» հնութիւնը ճշգրտօրէն Աքեմենեան դարաշրջանից առաջ լինելը յայտնաբերուի, այդ պարագային հաւանակ է, որ «Յաշտերի» մէջ յիշուած «Ատրպատ»ը մեզ հետաքրքրող «Աթուրփաթ»ից տարբեր լինի: Հաւանական է, որ «Աթուրփաթ»ը մի տիտղոս է եղել, որը յետագայում մէկ գերդաստանի անդամներին է պատկանել: Ամէն պարագային, Փոքր Մարաստանի մէջ «Աթուրփաթ»ի գոյութիւն ունենալը եւ «Աթուրփաթգան» անունը մեր ուշադրութիւնը առաջնորդում են դէպի այն երկիրը, որ Ազարբայջան է կոչւում:

Տողերիս հեղինակը աշխատում է հեռու մնալ ենթադրութիւններից, սակայն բոլոր ասուածներից բացի, կայ նաեւ մէկ կէտ, որի շուրջ չկայ ոչ մի տարակոյս, եւ դա արիական տարրի գերակայութիւնն էր Ազարբայջանում, որի շնորհիւ յիշեալ տարածքը վերածուել էր իրանական ցեղերի կայուն եւ մեծ յենակէտերից մէկին: Մենք նման մի վիճակի չենք հանդիպում Հայաստանում, Իբերիայում (Վրաստան) եւ Կովկասեան Ալբանիայում: Այդ երկրներում իրանական դաւանանքից հրաժարուելը եւ ինքնագլուխ լինելու տրամադրութիւնը բացայայտ էին: Աղուանքում քրիստոնէութիւնն էր տարածուած, մինչ Ազարբայջանը Զրադաշտի դաւանանքի օրրանն էր ու

սրբազան վայրերից էր համարւում: Պրոֆ. Բարտոլդը համոզուած է, որ Ազարբայջանի եւ Կովկասեան Ալբանիոյ ժողովուրդների միջեւ թէ ցեղական, թէ տոհմական եւ թէ կրօնական հակառակութիւններ գոյութիւն են ունեցել եւ նշում է, որ այդ տարաձայնութիւնները մինչեւ անգամ մահմեդականութեան շրջանում էլ չեն վերացել: Շարունակելով իր խօսքը, նա անդրադառնում է Ազարբայջանի ժողովրդի եւ աղուանների կրօնների զանազանութեան հարցին եւ այսպէս է գրում.

Ազարբայջանի ժողովրդի կրօնը տարբեր էր աղուանների կրօնից: Ազարբայջանցիք զրադաշտական էին, իսկ Աղուանքում, սահմանամերձ այլ երկրների նման, քրիստոնէութիւնը մեծ տարածում էր ստացել: Աղուանքի իշխաններն էլ քրիստոնեայ էին[54]:

Պրոֆ. Լուկոնինը, Սասանեան արքայից արքայ Շապուհ I-ի արշաւանքի շուրջ խօսելիս, ակնարկելով եղած վիմագրութիւններին, այսպէս է գրում.

«Զրադաշտական մոգպետները արքայից արքայի զօրքերի հետ գնացին մինչեւ Անտիոք, Ֆարս, Կեսարիա — դէպի հիւսիս մինչեւ Յունաստան —, Հայաստան, Իբերիա ... Բաղասական երկիրը եւ Աղուանքի Դերբենդը, եւ իրենց դաւանանքը ուժով տարածեցին այդ երկրներում[55]:

Իսկ ինչ վերաբերում է Կովկասեան Ալբանիոյ զրադաշտական չլինելուն, Սասանեանների շրջանից մի վաւերագիր է մնացել, որը միաժամանակ փաստում է, որ Աղուանքը Իրանի հիմնական տարածքներից չէր, եւ որ մի շարք այլ երկրների նման «Ան-Էրան» էր համարւում: Մինչ Ազարբայջանը ուղղակի Իրանի մէկ մասն էր կազմում: Մոգպետ Կարտիրի արձանագրութեան մէջ, որ Սասանեան շրջանի սկզբին է պատկանում, այս խնդիրը շատ պարզ կերպով յիշատակուած է: Յիշեալ արձանագրութեան մէջ Կարտիրը յիշատակում է «Էրանում» եւ «Ան-Էրան»ում հուրը վառելու մասին եւ այսպէս է գրում.

«Իմ ջանքերի եւ չարչարանքների շնորհիւ, երկրի մէկ ծայրից միւսը. ... Միշանում, Աթուրփաթգանում (Ազարբայջան), Սպահանում (Իսֆահան), Ռէյում, Քերմանում, Սակաստանում (Սիստան), եւ Գորգանից մինչեւ Փէշաւար, շատ կրակներ եւ ատրուշաններ սկսեցին փայլատակել. նաեւ Իրանից դուրս (Ան-Էրան) չափազանց շատ էին կրակներն ու ատրուշանները, այնտեղ, ուր արքայից արքայ Շապուհի ձիերն ու մարդիկ առաջացան մինչեւ Անտիոք, Սուրիա երկիրն ու քաղաքը, Սուրիայի ոստաններում, Թրակիայում, Կիլիկիայ երկրում ու քաղաքում, Կեսարիայում, Կապադովկիա երկրում եւ քաղաքում, եւ վերը (հիւսիսում) մինչեւ Յունաստան, Հայաստանի, Վրաստանի, եւ Բաղասական երկրի հողային տարածքները, ու յետոյ մինչեւ Աղուանքի դարպասը, այնտեղ, որ Շապուհ արքայից արքան իր ձիերով ու

իր մարդկանցով ... հրդեհեց ու ի սպառ աւերեց: Այդ վայրերում, արքայից արքայի հրամանով — այն ատրուշանները, որ գտնւում էին այդ մասերում — ես կարգի բերեցի»[56]: Քրմապետ Կարտիրի արձանագրութիւնից պարզ երեւում է, որ Ազարբայջանը Իրանի մի մասն էր, իսկ Կովկասեան Ալբանիան Իրանից դուրս գտնուող (Ան-Էրան) երկրամասերից էր համարւում: Պրոֆ. Լուկոնինը, վկայակոչելով Արտաշիր Բաբականի թագաւորութեան օրերից մնացած արձանագրութիւնները, գրում է.

«Հայաստանը, Վրաստան եւ Ադիաբենէ ոստանները արեւմուտքում, մինչեւ Արտաշիրի մահուան օրերը դեռեւս Իրանշահրի մաս չէին համարւում: Ճիշտ է, որ երկրի արեւելքում, լայնատարած նահանգներում, եւ դրանց շարքին Աբարշահրում, Մարտում, Սակաստանում եւ Քերմանում պաշտօնական կերպով ճանաչել էին արքայից արքային, սակայն տեղական թագաւորների գերդաստանները շարունակում էին իշխել այդ երկրների վրայ: Թւում է, թէ կենտրոնական պետութիւնը Սուրէնեանների, Կարէնեանների, Վարազեանների իշխանութեան տակ գտնուող երկրներում շատ էլ միջամտութիւն չունէր: Միմիայն Խուզիստանը եւ Ադարբայգանը արքայից արքայի դաստակերտն էին — Դասթքերթ նշանակում է արքայական հողեր եւ կալուածներ, Ծ. Հ. —»[57]:

Կովկասեան Ալբանիայում իշխանները նոյն ինքը քրիստոնեայ եկեղեցու եպիսկոպոսներից էին: Մինչդեռ արքայական կրակը կամ հռչակաւոր «Ազար Գուշասպ» ատրուշանը գտնւում էր Ազարբայջանում եւ այդ երկրամասը վերածում էր Իրանի սրբազան վայրերից մէկին: Իրանի ոչ մէկ ատրուշանը «Ազար Գուշասպ»ի փառքն ու մեծութիւնը չունէր, որովհետեւ Ազար Գուշասպը արքաների հուրն էր, եւ Իրանի արքայից արքաները թագադրութիւնից յետոյ, եւ յաճախ ոտքով, գալիս էին այդ ատրուշանը ուխտագնացութեան: Այս կէտը, ինքն ըստ ինքեան, հաստատում է այն, որ Ազարբայջանը Իրանի ազնուազարմ եւ սրբազան տարածքներից էր: Զադ Սեփարմ-ի 11րդ գլխի 9րդ հատուածում Ազար Գուշասպի վայրը յիշուած է «Աթրուփաթգան»ում[58]:

Բազմաթիւ իսլամական հեղինակներ եւս մեզ տեղեկացնում են, որ Ազար Գուշասպի ատրուշանը գտնւում էր Ազարբայջանում, շեշտում էր նաեւ նրա կարեւորութիւնը: Թաբարին խօսել է Բահրամ Գուրի Ազարբայջանի ատրուշանում կատարած երկրպագութիւնից[59]: Իսկ Իբնի Ֆակիհը Ազար Գուշասպ ատրուշանի մասին այսպէս է գրել.

«Ազարբայջանում են Զանզէ (Գանձակ), Զաբերւան, Ուրմիա (Զրադաշտի քաղաքը) եւ Շիզ քաղաքները: Այնտեղ էր Ազար Գուշասպ ատրուշանը, որը զրադաշտականների մօտ շատ յարգուած էր[60]:

Պրոֆ. Փուրդաւուդը Ազար Գուշասպ ատրուշանի դիրքը աւելի բարձր է դասում, քան երկու այլ հռչակաւոր ատրուշաններ՝ Ազար Ֆարանբագը Ֆարսում եւ Ազար Բարզին Միհրը Խորասանում, եւ այս մասին գրում է.

«Ազար Գուշասպը երկնային երեք կայծերից մէկն է, որ երկրայիններին նպաստելու համար իջել է այս երկրային աշխարհը եւ տեղ գտել Ազարբայջանում... Սասանեանների շրջանում Ազար Ֆարուբա ատրուշանը Քարեանում (Ֆարս) եւ Ազար Բարզին Միհր ատրուշանը Ռիւանդում (Խորասան) համեմատութեամբ Ազարբայջանի Ազար Գուշասպին, թէեւ շատ հռչակաւոր էին եւ ուխտագնացութեան վայր էին համարւում, սակայն, ըստ երեւոյթին, Ազար Գուշասպի փառքն ու շքեղութիւնը չունէին, որովհետեւ Ազար Գուշասպը արքայի եւ զօրքի հուրն էր, Ազար Ֆարրուբան կամ Ազար Ֆարուբագը կրօնական առաջնորդներին եւ Ազար Բարզին Միհրը հողագործներին էին[61]:

Ընթերցողների ուշադրութեան յանձնուած բոլոր նիւթերից կարելի է դիւրութեամբ եզրակացնել հետեւեալ երեք կէտերը: Առաջինը այն, որ Ազարբայջանը միշտ եղել է Իրանի հողային տարածքի մի մասը: Երկրորդը այն, որ Ազարբայջանը Կովկասեան Ալբանիայից անջատ է եղել: Երրորդն էլ այն, որ Ազարբայջանի ժողովուրդը իրանական ցեղին ու տոհմին են պատկանում:

Տողերիս հեղինակը անհրաժեշտ է համարում յիշել այն խնդիրը, որ արիացիները թէ Ազարբայջանում եւ թէ իրենց ազդեցութեան տակ գտնուող այլ երկրամասերում խառնուեցին տեղացի եւ բնիկ ժողովուրդների հետ եւ քիչ-քիչ ոչ-իրանցի տարրերին ձուլեցին իրանցի տարրերի մէջ: Ոչ- իրանցի տարրերի փոխակերպութիւնը իրանական տարրերի մէջ ոչ մի կերպ չի նշանակում, թէ իրանական ցեղն ու տոհմը անաղարտ է: Աշխարհում շատ քիչ ցեղեր կարելի է գտնել, որ զերծ մնացած լինեն այլ ցեղերի հետ խառնուելուց եւ նրանց հետ միաձուլուելուց: Իրանի այլ շրջանի ժողովուրդներն էլ այս խառնումից հեռու չեն մնացել: Այստեղ բուն խնդիրը այդ միաձուլման էութիւնը չէ, այլ ցեղային մէկ տարրի մի այլ ցեղային տարրի վրայ գերակայելն է: Ա. Քասրաւին իր հռչակաւոր աշխատութեան մէջ, որ կոչւում է «Ազարին կամ Ազարբայջանի հին լեզուն», անդրադառնում է այս խնդրին եւ այսպէս է գրում.

«Նախքան Իր-երը (արիացիները, ծ. հ.), Ազարբայջանում ապրում էին այլ բնիկ ժողովուրդներ, եւ երբ Իր-երը (արիացիները) այնտեղ հասան եւ յաղթեցին բնիկներին, երկու ցեղերը իրար խառնուեցին: Սակայն այս երեւոյթը ամէն տեղ է եղել, եւ մենք նպատակ չունենք ասելու, թէ Ազարբայջանի ժողովուրդը կամ Իրանի ժողովուրդը միմիայն Իր-երի տոհմից են սերում, եւ որ նրանք ուրիշների հետ ոչ մի ձեւով չեն խառնուել[62]:

Շարունակելով իր խօսքը, նա գրում է.

«Երբ հասնենք Աքեմենեանների, ինչպէս նաեւ Ալեքսանդրի, Սելեւկեանների, Արշակունիների եւ Սասանեանների ժամանակներին եւ աչքի անցկացնենք նրանց մէկ առ մէկ, կտեսնենք, որ դրանցից ոչ մէկի օրօք Ազարբայջանում որեւէ պատահար տեղի չի ունեցել, որը կարող էր յանգել այնտեղի ժողովրդի այլափոխութեան[63]:

Այսպիսով, մեր նպատակն է ասել, որ իրանական տարրը գերակայեց ոչ իրանցի տարրերի վրայ: Ազարբայջանի ժողովրդի լեզուն, ինչպէս նաեւ այդ երկրի քաղաքների, գիւղերի, լեռների եւ գետերի անունները ինքն ըստ ինքեան փաստում են, որ Ազարբայջանում իրանական տարրը յաղթել եւ գերակայել է ոչ-իրանցի տարրերի վրայ:

2 - Ազարբայջանի ժողովրդի լեզուն

Տողերիս հեղինակը մասնագիտութեամբ լեզուաբան չէ, ուստի չպիտի փորձի հարցը տեսական առումով քննել, պիտի փորձենք, սակայն, Ազարբայջանի ժողովրդի լեզուն միմիայն պատմական տեսակէտից ուսումնասիրութեան ենթարկել, կանգ առնելով յատկապէս արիացիների լեզուի այլափոխութեան հարցի վրայ:

Եթէ ընդունենք, որ արիացիները գաղթել են դէպի Կենտրոնական Ասիա եւ դէպի Իրանի լեռները, որից յետոյ անշուշտ այդ ցեղի եւ բնիկ ցեղերի միախառնում է կատարուել, հապա առնուազն պատճառ է եղել, որ պարտուած տարրի որոշ բառեր մուտք գործեն գերակայող տարրի լեզուի մէջ, եւ ընդհակառակը: Արաբների՝ Իրան ներխուժելուց յետոյ, հակառակ շատ սաստիկ մշակութային ճնշման, որ գործ էր դրւում յաղթող ցեղի կողմից, պարսկական բառերը գտան իրենց ճամփան մինչեւ Արաբական թերակղզին, եւ այսօր պարսկերէն լեզուին պատկանող մեծաթիւ բառեր կան արաբերէնի մէջ: Իրանցիներն էլ մեծ թուով արաբական բառեր ընդունեցին:

Թիւրքերի՝ Իրան գրոհելուց յետոյ եւս նոյն երեւոյթը տեղի ունեցաւ: Իրանցիք թիւրքերից շատ բառեր վերցրեցին, թիւրքերն էլ պարսկերէնից շատ բառեր մտցրեցին իրենց լեզուի մէջ: Եթէ մի ակնարկ նետեք արաբերէն, պարսկերէն եւ թիւրքերէն բառարանների վրայ, կպարզուի այս տեսակէտի ճշտութիւնը:

Զանազան ճանապարհներ կան, որպէսզի մենք հասկանանք, թէ այսինչ ցեղը, որի լեզուն փոփոխութեան է ենթարկուել, անցեալ շրջաններում ինչ լեզուով է խօսել: Յիշեալ միջոցներից մէկը գետերի, լեռների, ծովերի,

լճերի, գիւղերի եւ քաղաքների անունների ճանաչումն ու ուսումնասիրութիւնն է, որովհետեւ իւրաքանչիւր երկրի ժողովուրդ այդ անունները ստեղծում է իր լեզուով: Մի այլ միջոց էլ կայ, որը տուեալ ժողովրդի բարբառի ուսումնասիրութիւնն է, ժողովուրդ, որի զբաղեցրած տարածքները կամ չոր ու ցամաք են եղել, կամ բնակութեան անյարմար եւ կամ էլ, ժայռերի ու լեռների սրտի մէջ տեղաւորուած լինելով, օտարների ներխուժումից եւ բնակութիւն հաստատելու վտանգից զերծ են մնացել: Երրորդ միջոցն էլ պատմական արձանագրութիւնների ուսումնասիրութիւնն է, որ կարող է խոշոր ուղեցոյց լինել այս գործում:

Առաջին պարագայի կապակցութեամբ, Ա. Քասրաւին Ազարբայջանի գետերի, լեռների եւ աւանների անունները բաժանել է երեք խմբի: Առաջին խումբը այն անուններն են, որ պարզորոշ իմաստ չունեն: Երկրորդ խումբը այն անուններն են, որոնց իմաստը հնարաւոր է եղել գտնել: Իսկ երրորդ խումբը այն անուններն են, որոնց իմաստը պարզ է ու յայտնի[64]: նա, ի միջի այլոց, արծարծում է մի շատ կարեւոր հարց, եւ այդ պարսկերէն եւ թիւրքերէն համանման անունների գոյութիւնն է: Նա համոզուած է, որ այդ անունները պարսկերէնից են վերածուել թիւրքերէնի. մենք դրան յետոյ կանդրադառնանք:

Առաջին խմբի մասին, այն անունների, որոնց իմաստը չի գտնուել, տողերիս հեղինակը կարծում է, որ յիշեալ անունները պատկանում են շատ հին ժամանակների եւ առնչւում են Ազարբայջանի բնիկ լեզուին, արիացիների մուտք գործելուց առաջ: Պէտք է հաշուի առնել նաեւ, որ չպարզաբանուած անունների մէջ կան նաեւ այնպիսիք, որոնք պատմական ոչ մի հնութիւն չեն ներկայացնում: Ա. Քասրաւին Թաւրիզ, Խոյ, Սալմաստ եւ մի շարք այլ անուններ համարում է այն խմբից, որի անունները որեւէ իմաստ չունեն[65]:

Ինչ վերաբերում է երկրորդ խմբին, քանի որ խնդիրը վերաբերում է լեզուաբանական ուսումնասիրութեանց, ապա տողերիս գրողը այդ առնչութեամբ անելիք չունի եւ, բնականաբար, այդ անունների շուրջ չպիտի խօսենք:

Երրորդ խումբը բաղկացած է այն անուններից, որոնք պարզ իմաստ ունեն, եւ հէնց այս կէտը հաստատում է, թէ նախքան թիւրքերէն լեզուի Ազարբայջան թափանցելը, տեղի ժողովուրդը ինչ լեզուով էր խօսում: Ներքեւում յիշուած բոլոր անունները պարսկերէն են, եւ ընթերցողները պարզ կերպով կարող են անդրադառնալ նրանց պարսկերէն լինելուն: Այդ անունները հետեւեալներն են. Գարմարուդ, Սարդրուդ, Լահրուդ, Աբհարրուդ, Իջրուդ, Գարմրուդ, Թանգէաբ, Դոաբ, Աբգարմ, Միանդոաբ, Արասբարան, Փոլդաշտ, Շահաբադ, Դասթջերդ (Դաստակերդ), Դարէդիզ, Սիահչեշմէ, Շաբեսթար, Դինար, Թազէքանդ, Բահարիստան, Գիլանդեհ, Քարւան, Չեհրգան, Դիզաջ, Դիզէ, Գերդաբադ, Ռաշգան, Մահաբադ (Մահ աբադ), Մադ աբադ), Բոստանաբադ, Իրանշահ, Խոշմական, Բաբասորխէ, Կալէսորխէ, Հաշթադջոֆթ, Քաջուր, Խորխորէ, Բորէշ, Անգուրան, Մահնշան, Շերւանդեհ, Բահրեման, Շիրին, Զարրինբադ, Նիմանւար, Խորրամդարէ, Միանէ, Խոդաաֆարին, Բիլէսաւար, Արդաբիլ, Դեհխարկան (Դեհխարգան, Դեհխորգան), Սոհրէվարդ, Զաղէ, Խոշէդարրէ, Զանջիրան, Դինէւար, Լահիջան, Մէյմանդ, Բանեսթան, Դիլմական (Դիլմագան), Գարմադուզ, Գիլանդուզ, Զանջան, Մաեան (Մադան), Մահան), Հաշթէսար (Հաշթադսար), Չիչասթ լիճ (Կապուտան, Ուրմիա), Աշգ կղզի, Արզու կղզի, եւ շատ ուրիշներ:

Ինչ վերաբերում է պարսկերէն եւ թիւրքերէն համանման անուններին, Քասրաւին այն կարծիքին է, որ Կըզըլօզան գետի անունը նախապէս եղել է Զարրինրուդ, եւ Քարարուդ կամ Կարարուդը անցեալում կոչուել է Քալանրուդ, եւ այլ այսպիսիք[66]:

Իսկ թրքական անուններ Իշգասու, Եալկուզաղաջ, Իստիբուլաղ, Սոգուդլու, Գիրդաքանլու, Կուզլու եւ Կզլջա-ի մասին Քասրաւին այն կարծիքին է, թէ դրանց նախկին հնադարեան անունները հերթականօրէն եղել են Աբբարիք, Եքքէդար, Գարմխանի, Բիդաք, Գիրդաքանաք, Զովզդան եւ Սորխէ[67]:

Այս կապակցութեամբ նա գրում է. «Երբ թիւրքերը բնակութիւն հաստատեցին գիւղերում, եթէ մի աւանի անունը պարզ իմաստ ունէր, թարգմանեցին թիւրքերէնի (ինչպէս նրանցից առաջ այդպէս էին վարուել նաեւ արաբները): Այդ է պատճառը, որ այսօր Ազարբայջանում ունենք մի շարք աւանների անուններ, որոնց նոյնիմաստ պարսկերէն անունները կան նոյն տեղում եւ կամ այլ վայրերում, ինչպէս՝ Իշգասու, Եալկուզաղաջ, Իստիբուլաղ, Սաքդի (Սաքադլու), Գիրդաքանլու, Կուզլու եւ Կզլջա եւ նման անուններ, որոնց դիմաց ունենք Աբբարիք, Եքքէդար, Գարմխանի, Բիդաք, Գիրդաքանաք, Զովզդան, Սորխէ անունները[68]:

Տողերիս հեղինակը անհրաժեշտ է համարում յիշեցնել այն խնդիրը, որ ներխուժողների եւ կամ գաղթականների կողմից անուշադրութեան մատնուած կամ նրանց համար անձեռնմխելի եղած վայրերում գոյութիւն ունեն հինաւուրց լեզուի մնացորդները. այսպէս՝ ազարի լեզուից եւ տեղական բարբառներից օրինակներ գտնում ենք Հարզանդում, Գալինկիէում, Զոնուզում, Հանանուում եւ Խալխալում, որոնք, ըստ Դր. Մոհամմադ Զաւադ Մաշքուրի, «շարունակում են իրենց նուազ գոյութիւնը»[69]:

Ոմանք Ազարբայջանի ժողովրդի ներկայ լեզուն, որ թիւրքերէն է, սխալմամբ անուանում են «Ազարի թիւրքերէն»: Ազարի լեզուն իրանական լեզուներից է եւ ոչ մի առնչութիւն չունի թիւրքերէն լեզուի հետ[70]: Սակայն

թիւրքերը կամ, աւելի ճիշտ կլինի ասել, թրքալեզու խառն ցեղերը, որոնք ապրում էին Միջին Ասիոյ շրջանում եւ որոնք հաւանաբար մի ընդհանուր բարբառ էլ չունէին, երբ սկսեցին քօչել դէպի զանազան երկրամասեր, նրանց լեզուն միախառնուեց տեղական լեզուների հետ: Կիրգիզերէնը, ուզբեկերէնը, թիւրքմէներէնը, ազարբայջաներէնը, արաներէնը եւ Փոքր Ասիոյ (ներկայիս Թիւրքիա) ռոմերէնը, բացայայտ օրինակներն են թիւրքերէնի եւ տեղական լեզուների միախառնումի, եւ, ինչպէս գիտենք, այդ լեզուները շատ բազմազան են եւ շատ տեսակներ ունեն: Լուրջ կերպով ենթադրւում է, որ գոյութիւն ունեցող թիւրքերէն բարբառների մէջ եղած զանազանութիւնը առաջին հերթին կախում ունի թիւրքերէն լեզուն ընդունող տեղական բարբառների մէջ գոյութիւն ունեցող տարբերութիւններից, եւ երկրորդ հերթին թիւրքերի, կամ աւելի ճիշտ Սիրդարիայից այն կողմի եւ Միջին Ասիոյ թրքալեզուների տիրապետութեան տակ գտնուող երկրամասերում տարածում գտած թրքերէն բարբառների անմիատեսակութիւնից: Մենք նոյնանման մի դրութիւն նկատում ենք նաեւ Իրանի ներսում: Ոչ միայն տարբերութիւններ կան Ղազւինի, Համադանի, Սաւէի շրջակայքի, Ղոմի, Թեհրանի, Քեւիրի եզրի եւ Շիրազի թիւրքական բարբառների եւ Ազարբայջանի թիւրքերէն բարբառների միջեւ, այլ նաեւ Ազարբայջանի զանազան շրջանների թիւրքերէն բարբառների մէջ էլ տարբերութիւններ կան: Միաժամանակ պէտք չէ մոռանալ, որ թրքալեզու ցեղերը, ի շարս դրանց, ղոզերը, կփչակները եւ այլն, մի ընդհանուր բարբառ չունէին: Իսկ եթէ «Ազարի թիւրքերէն» ասելով ուզում են թիւրքերէնի եւ ազարի լեզուների միախառնումից առաջացած լեզուին ակնարկել, այդ պարագային Ազարբայջանի շրջակայքի, Համադանի, Ղազւինի, Սաւէի, Զարանդի, Թեհրանի եւ Քեւիրի եզրի թրքական բարբառները պիտի անջատել «Ազարի թիւրքերէն»ից:

Քանի որ մեր նպատակը Ազարբայջանի հինաւուրց լեզուի ճանաչումն ու յայտնաբերումն է, ուստի բաւարարուենք այս համառօտ ակնարկով:

Ազարբայջանի ժողովրդի հին լեզուի մասին կան տարբեր տեսակէտներ: Ոմանք կարծում են, որ Աւեստան ստեղծուել է Ազարբայջանում եւ ուստի Աւեստայի լեզուն համարում են Ազարբայջանի ժողովրդի հինաւուրց լեզուն: Սակայն այս խնդրի շուրջ տարակարծութիւններ կան ուսումնասիրողների միջեւ: Մեծ թուով հետազօտողներ Աւեստան համարում են Իրանի հիւսիս-արեւելքի եւ արեւելքի տարածքում ստեղծուած: Տողերիս հեղինակի կարծիքով, այս տեսակէտը աւելի մօտ է իրականութեան: Եթէ ընդունենք, որ Աւեստայի լեզուն արեւելքին է պատկանում, այդ պարագային Իրանի արեմտեան շրջանի լեզուի մասին դժուարութիւններ կունենանք: Որովհետեւ մենք Իրանում հանդիպում ենք երկու արիական բարբառների, որոնք

յետագայում, զարգացում ստանալուց յետոյ, ստացան առանձին անուններ, եւ որոնք պատմագիրների մի շարք գրուածներում յիշատակուած են որպէս Փարսի Դարտ եւ Արշակունեաց պահլաւերէն լեզուներ: Իսլամական շրջանի որոշ հեղինակներ Ազարբայջանի ժողովրդի լեզուն համարել են պահլաւերէն եւ երբեմն կոչել են «Ֆահլաւի մաղրեբի», իմա՛ արեմտեան պահլաւերէն:

Իբն-իլ-Նադիմը իր «Ալֆեհրեսթ» գրքի մէջ Իրանի ժողովրդի լեզուն բաժանել է հինգ խմբի եւ իր գրածի մէջ պահլաւերէնը, դարի լեզուն, պարսկերէնը, խովզին (Խուզիստանի ժողովրդի լեզուն) եւ ասորական լեզուն առանձին է յիշել: Հիմնուելով Ռուզբեհի (Աբդուլլահ բին-Մոկաֆֆա) ասածի վրայ, նա դարի լեզուն համարում է արքունիքի եւ Խորասանի ու արեւելքի, Բաքթրիա (Բալխ)ի ժողովրդի լեզուն, պարսկերէնը՝ մոգպետների, իմաստունների եւ Ֆարս երկրի ժողովրդի լեզուն, խովզին՝ արքաների եւ աւագանի խաւի մեկուսի խրախճանքի լեզուն, ասորերէնը՝ (սորեանի) Իրաքի ժողովրդի լեզուն, եւ պահլաւերէնը՝ Իսֆահանի, Ռէյի, Համադանի, Մահի (Մադ), Նահաւանդի եւ Ազարբայջանի լեզուն, որը իրականութեան մէջ Մեծ Մեդիա եւ Փոքր Մեդիա շրջանների ժողովրդի լեզուն է: Այսու տալիս ենք Իբն-իլ-Նադիմի գրածի պարսկերէն թարգմանութիւնը եւ սրա խիստ կարեւորութեան պատճառով արաբերէն բնագիրն էլ ներկայացնում ենք որպէս ծանօթագրութիւն.

«Աբդուլլահ բին Մոկաֆֆան ասաց. Իրանական լեզուները հետեւեալներն են. պահլաւերէն, դարի, խովզի, ֆարսի եւ սորեանի (ասորերէն): Պահլաւերէնը վերագրում են Փահլէ-ին, որը իր հերթին ներառում է հինգ շրջաններ՝ Իսֆահան, Ռէյ, Համադան, Մահնահաւանդ եւ Ազարբայջան. Դարին Տիզբոնի քաղաքների լեզուն է եւ թագաւորների արքունիքում այդ լեզուով են խօսում: Դարին նոյնպէս առնչւում է Դարբար (արքունիք) բառին: Դարին աւելի շատ Խորասանի, Բաքթրիայի եւ արեւելեան շրջանների ժողովրդի լեզուն է: Պարսկերէնը (ֆարսի) մոգպետների, իմաստունների եւ նման մարդկանց լեզուն է. պարսկերէնը ֆարսի ժողովրդի լեզուն է: Խովզին մի լեզու է, որով արքաներն ու աւագանին առանձնութեան մէջ եւ խրախճանքի ու խնճոյքի եւ նման արարքների ժամանակ այդ լեզուով են խօսում: Իսկ սորեանին (ասորերէն) Իրաքի ժողովրդի լեզուն է»[71]:

Սորեաներէն լեզուն, խովզի բարբառը եւ մոգպետների, գիտունների ու նման մարդկանց յատուկ խօսուածքները տողերիս հեղինակի ուշադրութեան առարկան չեն: Այսպիսով, ընդհանուր հինգ լեզուներից, որոնք Իբն-ի Նադիմը Իբն-ի Մոկաֆֆա-ի անունից յիշատակել է, միայն երկու լեզուներն են մնում, որոնցից մէկը դարի լեզուն կամ Իրանի արեւելքի եւ Խորասանի ժողովրդի լեզուն է, իսկ միւսը պահլաւերէնն է, որը Իսֆահանի, Ռէյի,

Համադանի, Նահաւանդի եւ Ազարբայջանի լեզուն է, որով իրականութեան մէջ խօսում էին Մեծ Մեդիա եւ Փոքր Մեդիա երկրներում:

Եթէ ընդունենք պրոֆ. Գրանտովսկու այն տեսակէտը, ըստ որի արիացիները մ.թ.ա. 2րդ հազարամեակի երկրորդ կէսում հաւանաբար Կասպից ծովի երկու կողմերից ճանապարհ են ելել դէպի ներկայի Իրանի հողային տարածքը եւ գրեթէ միաժամանակ Իրանում բնակութիւն են հաստատել[72], այդ դէպքում Իրանի արեւելքի եւ արեւմուտքի զոյգ լեզուների խնդիրը որոշ չափով կպարզաբանուի:

Ինչպէս երեւում է, Իրանի արեւելեան եւ արեւմտեան շրջանների բնիկ ցեղերը, նախքան արիացիների գաղթը, տարբեր լեզուներով էին խօսում: Հաւանական է, որ Կասպից ծովի երկու կողմերից դէպի Իրան քօչող արիացիները ընդհանուր մի բարբառի տէր չէին: Այս արիացիները խառնուեցին տեղի բնիկ ժողովուրդների հետ, ու թէեւ իրանական տարրը գերակայեց ոչ իրանական տարրի վրայ, այդուհանդերձ ի վիճակի չէր լրիւ կերպով ձերբազատուել տեղական լեզուների ազդեցութիւնից: Այս իսկ պատճառով, հաւանական է, որ արիական լեզուի միախառնումը Իրանի արեւելքում բնակուողների լեզուի հետ արեւելեան բարբառների ստեղծման պատճառ է եղել, եւ արիացիների լեզուի միախառնումը Իրանի արեւմտեան եւ կենտրոնական շրջանների բնակիչների լեզուի հետ պատճառ է եղել, որ առաջանան եւ ձեւ ստանան արեւմտեան բարբառները: Անշուշտ տողերիս հեղինակի ներկայ տեսակէտը դեռեւս ենթադրութեան եւ կարծիքի շրջագծից չի անցել:

Մի այլ կէտ, որի յիշատակումը անհրաժեշտ է թւում, լեզուի տարաբաշխումն է ըստ Արշակունեաց եւ Սասանեան թագաւորական գերդաստանների հետ ունեցած կապակցութեան, մի բան, որ բանականութեան համար անընդունելի է: Որովհետեւ լեզուն պատկանում է մարդկանց եւ հասարակութեան եւ ոչ թէ արքաներին ու իշխաններին: Գրութեան վերաբերեալ գուցէ կարելի լինի մի ինչ-որ չափով նման մի տեսակէտ ընդունելի համարել, իսկ լեզուի կապակցութեամբ, որով խօսում է ժողովուրդը, նման մի տարաբաժանում անընդունելի է:

Նիւթից չշեղուենք. ամէն պարագային, ըստ հեղինակների գրածների, Ազարբայջանի կամ «Փոքր Մեդիա»-ի լեզուն Իրանի արեւմտեան շրջանների եւ կենտրոնական Իրանի, այլ խօսքով «Մեծ Մեդիա»-ի բնակիչների լեզուի նման, պահլաւերէնն է եղել: Իսլամի յայտնութեան առաջին դարաշրջանի հեղինակները Ազարբայջանի ժողովրդի լեզուն երբեմն անուանել են «Ազարի պահլաւերէն» եւ երբեմն էլ «Ազարի», եւ համոզուած են եղել, որ յիշեալ լեզուն Իրանի արեւելեան շրջանների լեզուի հետ զանազանութիւններ է ունեցել: Սակայն այս տարբերութիւնները այնքան կարեւոր չեն եղել, որ արգելք լինեն միմեանց միտքը ըմբռնելուն: Այս տարբերութիւնների գոյութիւնը կարելի է ըմբռնել Իրանի մեծ բանաստեղծ եւ մտաւորական Նասիր Խոսրով Ալաւի Կոբադիանիի, որ անձամբ Բաքթրիայի Կոբադեան ժողովրդից էր, «Ճանապարհորդական տպաւորութիւններ» գրքից: Նա յիշեալ գրքում այսպէս է գրում.

«Հորս հարիւր երեսունութ թուի Սաֆար ամսին (1046 թ. օգ. 7 - սեպ.9) հասայ Թաւրիզ, եւ այդ հին Շահրիւար ամսի հինգն էր... Թաւրիզում Կաթրան անունով մի բանաստեղծ կար: Նա լաւ ոտանաւորներ էր գրում, սակայն պարսկերէն լեզուն լաւ չգիտէր: Եկաւ ինձ մօտ եւ իր հետ բերեց Մանջիկի եւ Դակիկի-ի ժողովածուները, եւ իմ ներկայութեան կարդաց, եւ իր համար դժուար հասկացուող իմաստները ինձանից հարցրեց. ես նրան ասացի, եւ նա գրեց այդ բացատրութիւնները եւ իր բանաստեղծութիւնները կարդաց ինձ համար»[73]:

Լրջօրէն ենթադրւում է, որ ֆարսի (պարսկերէն) լեզուն ակնարկելիս Նասիր Խոսրովը մտքում ունէր ֆարսի դարի լեզուն, որի բառերն ու նրանց իմաստները քաջ ծանօթ էին խորասանցի բանաստեղծին, բայց նրա որոշ բառերը թաւրիզեցի բանաստեղծի աչքին թւում էին հնացած: Այլապէս, Կաթրանի երգած գաղտրիկ տաղերից շատ պարզ կերպով կարելի է ըմբռնել, որ նա մեծապէս տիրապետում էր պարսկերէն լեզուին:

Հռչակաւոր գիտնական եւ անուանի իրանագէտ Մարկուարտը համոզուած է, որ «իրական պահլաւերէնը հէնց Ազարբայջանի լեզուն է»[74]:

Եա'կուբին, որ ապրել է հիջրեթի երրորդ դարում (մ.թ.9-րդ դ.), իր «Ալբոլդան» գրքի մէջ Ազարբայջանի ժողովրդի լեզուն անուանել է «Ազարի պահլաւերէն» եւ Ազարբայջանի ժողովրդին անուանել է իրանցի: Նա իր յիշեալ գրքում այսպէս է գրել.

«Ազարբայջանի քաղաքների մարդիկ եւ նրա նահանգների ժողովուրդը մի խառնուրդ է Ազար իրանցիների եւ հին յաւերժականների, «Բատ» քաղաքի տէրերը, որը Բաբակի (Խորրամի) նստավայրն էր»[75]:

Այն, որ Ազարբայջանի ժողովրդի լեզուն իրանական է եղել, ոչ մի տարակուսանքի առարկայ չի կարող լինել: Անտարակոյս «Ազարի»ն իրանական մի բարբառ է համարուել: Հիջրեթի առաջին դարերի իսլամական բոլոր հեղինակները այս կէտի շուրջ համաձայն են: Հիջրեթի 4րդ դարի (10րդ դար) գիտնական եւ անուանի աշխարհաշրջիկ Աբու Աբդուլլահ Բաշշարի Մուկադդասին իր «Ահսան ալ թակասիմ ֆի մա'արէֆաթ իլ ակալիմ» վերտառութիւնը ունեցող գրքի մէջ Իրանը բաժանել է ութ երկրամասի եւ Իրանի ժողովրդի լեզուի մասին այսպէս է գրել.

«Այս ութ երկրամասերի մարդկանց լեզուն պարսկերէնն է (իրաներէն)։ Միմիայն ոմանցը դարի է, իսկ ոմանցն էլ աղաւաղուած (խրթին), բայց բոլորն էլ կոչւում են պարսկերէն (փարսի)»[76]։ Յետոյ, խօսելով Ազարբայջանի մասին, այսպէս է ասել. «Նրանց լեզուն լաւը չէ։ Հայաստանում խօսում են հայերէն, Առանում աղուաներէն. Նրանց պարսկերէնը հասկանալի է եւ որոշ բառերում մօտենում եւ նմանւում է Խորասանի բարբառին»[77]։ Մա'սուդին պահլաւերէն, դարի եւ ազարի բարբառները համարում է նոյն արմատից եւ նրանց բառակազմութիւնը գտնում է նոյնը։ Նա բոլորին էլ դասում է պարսկական (ֆարսի) լեզուների շարքը[78]։

Այս վկայութիւնները նոյնանում են Նասիր Խոսրովի խօսքերի հետ եւ հաստատում են «Ազարի պահլաւերէն»ի իրանական լեզու լինելը։

Աբու Աբդուլլահ Մոհամմադ բին Ահմադ Խորեզմին, որ հիջրեթի 4րդ (10րդ) դարում էր ապրում, իր «Մաֆաթիհ-օլ-Օլում» աշխատութեան մէջ համարեա առաջադրում է Իբն-ի Մուկաֆֆա-ի խօսքը, որ Իբն-իլ-Նադիմը «Ալֆեհրեսթ» գրքի մէջ է բերել։ Նա պարսկերէն լեզուն համարում է Ֆարս նահանգի ժողովրդի եւ մոգպետների լեզուն։ Նա է, որ դարի լեզուն համարում էր արքունիքի լեզու, որի «բառերի մասը Արեւելքի ժողովուրդների լեզուներից եւ Բաքթրիայի մարդկանց լեզուից էր»[79]։ Նա նաեւ պահլաւերէն լեզուի մասին այսպիսի կարծիք է յայտնել.

«Ֆահլաւիյյէ — պահլաւերէն —. իրանական լեզուներից մէկն է, որով խօսում էին թագաւորները իրենց հանդէսների ժամանակ։ Այս բառը առնչւում է Փահլէ-ին, եւ Փահլէն մի անուն է, որ տրւում էր հինգ քաղաքների (երկրներ, ծ.Հ.) իմա՛ Իսֆահան, Ռէյ, Համադան, Մահնահաւանդ, Ազարբէյջան»[80]։

Իսթախրին «Ալմասալէք վալ Մամալէք» գրքում Ազարբայջանի ժողովրդի լեզուն ներկայացրել է «արաբերէն եւ պարսկերէն»[81]։

Տողերիս հեղինակի կարծիքով, արաբական տարրը, հակառակ իր խիստ ճնշումին, չյաղթահարեց իրանական տարրին եւ նախ Խորասանում ու յետոյ բովանդակ Իրանում մերժուեց, եւ միմիայն մի շարք բառեր, երկուստեք, թափանցեցին այդ երկու լեզուների մէջ։

Խորհրդային գիտնական պրոֆ. Օրանսկին, այս խնդրի շուրջ իր մանրամասն տեսութեան մէջ, այսպէս է գրել. «Պարսկերէն գրական լեզուն,

Խորասանում եւ Տրանս-Օքսիանայում — Մաւարա-ու-Նահր — քիչ-քիչ արաբերէնին նահանջել տալուց յետոյ, աստիճանաբար Իրանի այլ շրջաններում — բառիս ամենալայն իմաստով — եւս արաբերէն լեզուին փախուստի դատապարտեց»[82]։

Այս պարտութեան կապակցութեամբ, հարկ է մեր աչքից չհեռացնենք հետեւեալ երկու սկզբունքները։ Առաջինը այն, որ արաբները իրենց տրամադրութեան տակ ունէին մի լայնատարած երկիր, Սիրդարիայից մինչեւ Իսպանիա, ու, հակառակ արաբերէնի կրօնական բնոյթին, արաբների գաղթը դէպի Իրան այնպիսին չէր, որ կարողանար իրանական տարրի վրայ, առնուազն որոշ շրջաններում, գերակայող լինել։ Երկրորդը այն, որ իրանցիների պայքարը արաբների դէմ, մասնաւորաբար երկու ճակատներում՝ քաղաքական-զինուորական եւ գրականութեան ճանապարհով, շատ սաստիկ էր։ Պայքարի վայրերից մէկը Ազարբայջանն էր, որի ժողովուրդը, Խորասանից յետոյ, ոտքի կանգնեց՝ եւ՛ Մա'ամունի, եւ՛ Մո'օթասիմի օրօք, Բաբակ Խորրամիի առաջնորդութեամբ, Աբասեանների խալիֆայութեան սիւները ցնցեց։

Ազարբայջանցիներից յետոյ Թաբարիստանի ժողովուրդը եւս ըմբոստացաւ Մազիարի առաջնորդութեամբ, եւ նրանց ապստամբութեան ալիքը այնպէս սփռուեց Իրանի մէկ ծայրից միւսը, որ Մո'օթասիմը պարտաւորուեց ձեռք պարզել դէպի թիւրքերը։

Այսպիսով, արաբները չկարողացան բաւականաչափ թափանցում ապահովել եւ իրանական տարրին յաղթահարել։ Այս իսկ պատճառով, արաբերէն լեզուն չթափանցեց սովորական մարդկանց մէջ, միմիայն առեւտրականներն ու հարուստներն էին արաբերէն խօսում։ Իբնի Հաուկալը, այս առնչութեամբ, խնդիրը պարզաբանելով՝ այսպէս է գրել.

«Ազարբայջանի ժողովրդի եւ Արմինիայի մարդկանց մեծ մասի լեզուն պարսկերէն է, եւ արաբերէնն էլ տարածուած է նրանց մէջ. առեւտրականներից եւ կալուածատէրերից քչերն են, որ, պարսկերէն խօսելով մէկտեղ, արաբերէնը չըմբռնեն»[83]։

Այստեղ երկու կէտեր ուշադրութեան արժանի են. առաջինը այն, որ Ազարբայջանի մարդկանց լեզուն պարսկերէնն է եւ երկրորդն էլ այն, որ արաբերէնը ընդհանրացում չունէր գիւղերում եւ հասարակ ժողովրդի մէջ։ Հասարակութեան անդամներից սահմանափակ մի շերտ միայն ծանօթ էր արաբերէնին։

Իբնի Հաուկալը, շարունակելով իր խօսքը, ակնարկում է նաեւ Հայաստանի եւ Աղուանքի մարդկանց լեզուներին եւ նրանց լեզուները պարսկերէնից տարբեր է համարում, եւ այս առնչութեամբ այսպէս է գրում.

«... Արմինիայի որոշ ցեղեր եւ սրանց նմանները հայերէնի նմանող մի այլ լեզուով են խօսում, նոյնն է նաեւ պարագան Դաբիլ-ի, Նաշաւա (Նախջեւան) եւ այդ շրջանների մարդկանց, իսկ Բարզաւի (Պարտաւ) մարդկանց լեզուն աղուաներէնն է. յայտնի Կաբակ (Կովկաս) լեռը, որի մասին նախապէս խօսել ենք, նրանցն է, եւ նրա շրջակայքում ապրում են անհաւատներ, որոնք խօսում են զանազան լեզուներով»[84]:

Եակութ Համաւին, որ հիջրեթի 6րդ եւ 7րդ դարերում (13-14 դդ.) էր ապրում, Ազարբայջանի ժողովրդի լեզուի մասին խօսելիս այսպէս է գրում.

«Նրանք մի լեզու ունեն, որը Ազարի է կոչւում, եւ որ իրենցից բացի ուրիշ մէկի համար անըմբռնելի է»[85]:

Մեր ուսումնասիրութեան մէջ կարեւոր խնդիրը Ազարի լեզուի արմատն է: Չնայած Իրանում գոյութիւն ունեն բազմաթիւ բարբառներ, որոնք այլ բարբառով խօսողների համար անհասկանալի են թւում, սակայն նրանց բոլորի արմատը նոյնն է՝ իրանական է: Որպէս օրինակ ասենք, որ Գիլանում Թալիշի բարբառը Գիլաքի բարբառով խօսողի համար անըմբռնելի է թւում:

Համդուլլահ Մուսթոֆին, որ հիջրեթի 7րդ եւ 8րդ դարերում (13-14 դ.) էր ապրում, Մարաղայի ժողովրդի լեզուի մասին խօսելիս այսպէս է գրում. «Նրանց լեզուն աղաւաղուած պահլաւերէնն է»[86]: Աղաւաղուած ասելով պիտի հասկանալ փոփոխութեան ենթարկուած:

Սրանով պարզւում է, որ մի շարք հեղինակների համար Ազարբայջանի ժողովրդի լեզուն մինչեւ հիջրեթի 8րդ դարը (մ.թ. 14րդ դդ.) պահլաւերէն էր կոչւում:

Համդուլլահ Մուսթոֆին Գիլանի ժողովրդի լեզուի մասին եւ պահլաւերէնի հետ նրա ունեցած մերձաւորութեան մասին էլ ակնարկ է արել: Նկարագրելով Թալիշի ժողովրդին, նա այսպէս է ասել.

«Մարդիկ սպիտակամորթ են եւ Իմամ Շաֆէի-ի դաւանանքի հետեւորդ. նրանց լեզուն պահլաւերէնն է, որ գիլաներէնին է կապուած[87]:

Տողերիս հեղինակը այն տեսակէտից է Համհուլլահ Մուսթոֆու այս գրութեան մէջբերումը անհրաժեշտ համարում, որ Ազարի բարբառի եւ Գիլաքի բարբառի միջեւ կարելի է նմանութիւններ գտնել: Ազարի լեզուի եւ քրդերէնի միջեւ եւս նմանութիւններ գոյութիւն ունեն: Զարմանալին այն է, որ Գիլանում Ազարբայջանի արեւելեան եւ հարաւ-արեւելեան եւ Արդաբիլի շրջանից կանայք էին գալիս Գիլան, որոնց Ազարբայջանի թրքական բարբառով «բաջի» էին կոչում, որ քոյր է նշանակում: Գիլանում այդպիսի կանանց Գիլաքի բարբառով «քիւրդ բաջի» էին կոչում, որ «քիւրդ քոյր» է նշանակում: Ռեշտում կայ մի թաղ, որը անցեալում Ազարբայջանցի թրքախօսների բնակութեան վայրն է եղել: Գիլանի մարդիկ այդ թաղը «Քիւրդ մահալլէ» (Քրդերի թաղ) են անուանում: Ներկայումս էլ այդ անունը Ռեշտ քաղաքում պահպանուել է: Նաեւ Գիլաքի բարբառում հանդիպում ենք «Խալխալի քիւրդ», «Արդաբիլի քիւրդ» եւ նման անուանումների: Այս բոլորը Ազարբայջանի եւ Քիւրդիստանի ժողովրդի, այլ խօսքով Մարաստան երկրի ժողովուրդների մերձաւորութեան նշաններն են:

«Ազարի» լեզուի մասին խօսելը այս գրքի նիւթից դուրս է, ուստի կբաւարարուենք միայն մի քանի օրինակների յիշատակումով[88]:

«Ռովզաթ-իլ Ջինան վա Ջինաթ-իլ Ջինան» գրքում, հեղինակութեամբ Հաֆիզ Հիւսէյն Քարբալայի Թաբրիզի-ի, այսպէս է ասուած, որ հիջրեթի 832 թ. (1429 թ.) Միրզա Շահրուխը Կարա Իւսուֆ Կարակոյունլու-ի որդի Միրզա Իսկանդարին պատժելու նպատակով իր զօրքը տարաւ դէպի Թաւրիզ: Թաւրիզում ուխտի գնաց Հազրաթ Փիր (հոգեւոր առաջնորդ, ծ. թ.) Հաջի Հասան Զեհաբիին, որը այդ օրերի մեծ սուֆիներից էր, եւ նրանից զօրութիւն աղերսեց: Շահրուխի վերադարձից յետոյ Իսկանդարը Թաւրիզ վերադարձաւ եւ Փիր Հաջի Հասանի Շահրուխին հանդիպելու որպէս վրեժ, հրամայեց, որ նրա որդի Աբուբաքրին կախաղան բարձրացնեն: Դահիճները նրա հրամանը գործադրեցին եւ այդ անմեղ մարդուն կախեցին ու յետոյ դիակը ուղարկեցին նրա հօր մենաստանը (խանկահ): Երբ Փիր Հաջի Հասան Զեհաբիի աչքը ընկաւ իր որդու անշունչ մարմնին, ասաց.

«Իսկանդար, րուդամ րա քոշթի, րուդաթ քոշադ[89]»:

Որի իմաստն է. Ո՛վ Իսկանդար, որդուս սպանեցիր, որդիդ քեզ սպանի:

Ինչպէս ընթերցողը նկատեց, Փիր Հաջի Հասան Զեհաբիի ասածը ոչ մի առնչութիւն չունի թիւրքերէն լեզուի հետ, եւ անտարակոյս նրա արտայայտութիւնը պարսկերէնի ընդհանրացած բարբառներից է:

Ազարբայջանի անուանի բանաստեղծ Հոմամ Թաբրիզին, որ հիջրեթի 7րդ եւ 8րդ դարերում էր ապրում (մ.թ. 13-14 դդ.), ունի մի շարք ոտանաւորներ, Ազարի պահլաւերէնով գրուած, որոնցից մի քանի օրինակներ պիտի բերենք ստորեւ.

«Վահար օ վիլ օ դիմ-է եար խոշ բի,
Աւի եարան մէհ վիլ բի մէհ օ հարան»:

Որի իմաստն է.

«Գարունն ու վարդը լաւ են սիրուհու դէմքի հետ,
Առանց սիրուհու ոչ վարդ կը լինի, ոչ էլ գարուն»[90]:

Այստեղ «դիմ» բառը շատ է մեր ուշադրութիւնը գրաւում: Այս բառը դեռեւս Գիլաքի բարբառում «երես», «կերպարանք» եւ «դէմք» իմաստով պահուել է:

Հոմամը մի այլ տեղում այսպէս է ասում.

«Բէ մեհրաթ համ բեշի խոշ գիանամ ազ դասթ,
Լաւանաթ լաւ օ ջէման դիլ օ գիան բասթ[91]»:

Որի իմաստն է.

«Քո սիրո համար հոգիս էլ ձեռքից տուի,
Շուրթերիդ խաբկանքը տարաւ իմ սիրտն ու հոգին»:

Այստեղ «գիան» բառը ուշադրութեան արժանի է: Դեռեւս քրդական բարբառի մէջ **ջան** բառը **գիան** է արտասանւում: Միւս կարեւոր կէտը «ազ» (իզաֆաթ) կապակցութիւնն է, որ թէ՛ Ազարի եւ թէ՛ Գիլաքի բարբառներում «ջ» կամ «ջէ» ձեւով է արտայայտւում:

Իզզիդին Ադիլ բին Իւսէֆ Թաբրիզին, որ ապրում էր հիջրեթի 8րդ եւ 9-րդ դարերում (մ.թ. շուրջ 14-15 դդ.), Ազարի պահլաւերէն բարբառով գրուած ոտանաւորներ ունի, որոնցից մէկ օրինակը հետեւեալն է.

«Սահար գահան քէ դիլամ թաւէ գիրի,
Ջէ ահամ հաֆթ չարխ ալաւէ գիրի[92]»:

Որի իմաստն է.

«Լուսաբացին, երբ սիրտս բռնուած է,
Իմ ախ քաշելուց եօթ երկինքներն էլ կրակ ու բոց են դառնում»:

Պարզ երեւում է, որ այս բանաստեղծութիւնների մէջ թիւրքերէնի ամենաչնչին հետքն անգամ չկայ: Երբեմն նրանց մէջ հանդիպում ենք «Ալաւէ»ի նման հաճելի բառերի, որոնք պարսկական ռամիկ արտայայտութիւնների մէջ պահուել են «ալով» ձեւի տակ, որ նշանակում է բոց ու կրակ:

Անտարակոյս, Ազարի պահլաւերէնը մինչեւ Սեֆեւիների դարաշրջանը Ազարբայջանում գոյութիւն է ունեցել, սակայն Սեֆեւիների շրջանի կէսից քիչ-քիչ գիւղերից ու քաղաքներից ջնջուել ու միայն դժուարանացանելի վայրերում ու նահանգներում է քիչ թէ շատ պահպանուել: Այդ եւս ժամանակի հետ եւ մանաւանդ յարաբերութիւնների եւ հաղորդակցութեան կապերի զարգացումով պիտի վերանայ եւ միմիայն նրա յուշը պիտի մնայ: Այս իսկ պատճառով արժի, որ լեզուաբանները, որոնք մասնագիտացած են իրանական լեզուների մէջ եւ լաւատեղեակ են տեղական բարբառներին, յարատեւ կերպով շարունակեն իրենց ուսումնասիրութիւններն ու պրպտումները այս ասպարէզում եւ այդ երկրի հինաւուրց պատմութեան եւ մշակոյթի մարզում իրենցից մի մեծ ու արժէքաւոր աւանդ ու գանձարան թողնեն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] Иванов М. С., История Ирана, 1977, стр.37.

[2] Նոյն տեղում, էջ 37:

[3] Ն. Վ. Պիգուլեւսկայա, Ա. Իւ. Եակոբովսկի, Ի. Պ. Պետրուշեւսկի, եւ ուրիշներ, «Իրանի պատմութիւնը հնագոյն ժամանակներից մինչեւ 18րդ դարի վերջը» պարսկ. թարգմ. Քարիմ Քեշաւարզ, առաջին հատոր, Թեհրան, 1967, էջ 7:

[4] Նոյն տեղում, էջ 8:

[5] Տես ծանօթ. 1, էջ 38:

[6] Բ. Բ. Պիոտրովսկի, Ուրարտու, պարսկ. թարգմ. Ինայաթուլլահ Ռիզա, Բոնեադէ Ֆարհանգէ Իրանի հրատարակութիւն, թեհրան 1969, էջ 33:

[7] Նոյն տեղում, էջ 38:

[8] Նոյն տեղում, էջ 54:

[9] Նոյն տեղում, էջ 54:

[10] Գրութիւններում Մանա անունը երբեմն գրւում է Մաննա (Manna), իսկ Աւետարանում՝ Միննի (Minni):

[11] Ըստ ակադեմիկոս Պիոտրովսկու, սեպագիր աղբիւրներում Ասքանազը — Աշկենազ — գրուած է Աշգուզ — Աշգուզա — ձեւով: Վինկլերը բաւարար փաստերով հաստատել է, որ «Աշգուզա» եւ «Իշկուզա» անունները նշանակում են «Սկիթ» (Սկիւթ Scythians, Ծ. Թ.), որը նոյն «Սակա»ն է, իմա՛ Սակեր: Տեսնել նաեւ ծանօթ. 6, էջ 55 եւ 57:

[12] «Սուրբ գիրք», Հին կտակարան եւ Նոր կտակարան, թարգմանուած եբրայերէն, ասորերէն եւ յունարէն բնագրերից, 1975, էջ 1183:

[13] Տես ծանօթ. 1, էջ 35:

[14] Տես ծանօթ. 12, էջ 1183:

[15] Տես ծանօթ. 6, էջ 54:

[16] Տես ծանօթ. 1, էջ 42:

[17] Նոյն տեղում, էջ 45:

[18] Նոյն տեղում, էջ 42:

[19] Տես ծանօթ. 12, էջ 1296:

[20] Նոյն տեղում, էջ 1296-97:

[21] Նոյն տեղում, էջ 1297:

[22] Дандамаев М. А., Иран при первых Ахеменидах. Москва, 1963, стр. 262-270:

[23] Տես ծանօթ. 12, էջ 772:

[24] Նոյն տեղում, էջ 1182:

[25] Տես ծանօթ. 22, էջ 264-65:

[26] Бартольд В. В., Сочинения, т. II, ч. 1, Москва, 1963, стр. 776.

[27] Դր. Բահրամ Ֆարահուշի, «Քարնամէյէ Արդաշիր Բաբաքան» պահլաւերէն բնագրով եւ հնչիւնագրութեամբ, պարսկերէն թարգմանութիւն եւ բառարան, Թեհրանի համալսարանի հրատարակութիւն, 1966, էջ 51: (Ծ. Թ. Այս նոյն նախադասութիւնը այսպէս է թարգմանուած Տօքթ. Յ. Թիրեաքեանի «Արտաշիր Բաբական - Կարնամակ»ի մէջ,

տպագրուած Փարիզ, 1907, էջ 15. «Յետ այնորիկ բազում զօրք Ջաբուլիստանէ ժողովելով Կորդուաց Մարտիկ թագաւորին դէմ պատերազմի ելաւ»:

[28] Նոյն տեղում, էջ 53:

[29] Նոյն տեղում, էջ 55:

[30] Նոյն տեղում, էջ 51:

[31] «Եաշտիա» երկրորդ հատոր, զեկուցում պրոֆ. Փուրդաւուդի, աշխատասիրութիւն Դր. Բահրամ Ֆարահուշի, Թեհրանի համալսարանի հրատարակութիւն, երրորդ տպագրութիւն, Թեհրան 1977, էջ 216:

[32] Թաբարի Մոհամմադ բին Ջարիր, Թարիխ-է Թաբարի կամ «Թարիխ ալ Ռասոլ վալ Մոլուք», թարգմ. Աբուլղասիմ Փայանդէ, հ. II, Թեհրան, Բոնեադէ Ֆարհանգէ Իրան-ի հրատարակութիւն, էջ 622:

[33] Նոյն տեղում, էջ 621:

[34] Ալ-բալազարի, Ահմադ բին Եահեա, Ֆութուհ օլ Բոլդան, Իրանին վերաբերող մասը, թարգմ. Դր. Ազարթաշ, Բոնեադէ Ֆարհանգէ Իրան-ի հրատարակութիւն, Թեհրան 1967, էջ 131:

[35] «Քարանդ-է Քասրափ» ժողովածու Ահմադ Քասրաւու 78 յօդուածների եւ զեկոյցների, աշխատասիրեց Եահեա Զոքա, երկրորդ տպագրութիւն, Թեհրան 1977, էջ 32

[36] Նոյն տեղում, էջ 321:

[37] Դինէարի, Աբու Հանիֆէ Ահմադ բին Դաւուդ, Ախբար-օլ Թաւալ, թարգմ. Սադիղ-Նէշ'աթ, Բոնեադէ Ֆարհանգէ Իրան-ի հրատարակութիւն, Թեհրան 1967, էջ 354:

[38] Իբնի Ֆակիհ, Աբուբաքր Ահմադ, բին Մուհամմադ, բին Իսհակ, Համադան Ալբոլդանի համառօտ թարգմանութիւն, Իրանին վերաբերող մասը, թարգմանեց Հ.Մա'սուդ, Բոնեադէ Ֆարհանգէ Իրան-ի հրատարակութիւն, Թեհրան 1970, էջ 93-94.

[39] Տես ծանօթ. 34, էջ 120:

[40] Համզաթ բին Հասան Իսֆահանի, Արքաների եւ Մարգարէների Պատմութիւն - Սիննի Մուլուք իլ Արզ վալ Անբիա - թարգմ. Դր. Զա'ֆարշոար, Բոնեադէ Ֆարհանգէ Իրան-ի հրատարակութիւն, Թեհրան 1967, էջ 207:

[41] Նոյն տեղում, էջ 207:

[42] Նոյն տեղում, էջ 204:

[43] Տես ծանօթ. 38, էջ 201:

[44] Դեհխոդա, Ալի Աքբար, Լողաթնամէ, տես Մահ բառը:

[45] Դիակոնով Ա.Մ., Մարերի պատմութիւնը, պրսկ. թարգմ. Քարիմ Քէշաւարզ, Բոնգահէ Թարջոմէ վա Նաշրէ Քէթաբ, Թեհրան 1966, էջ 107 եւ 110:

[46] История иранского государства и культуры, изд. Б. Г. Гафуров.

[47] Նոյն տեղում, էջ 287:

[48] Տես ծանօթ. 40, էջ 37:

[49] Տես ծանօթ. 38, էջ 127:

[50] Մասուդի, Աբուլհասան Ալի բին Հիաէյն, Մուրաւէջ ալ զահաբ վա Մա'ադէն ալ Զովհար, թարգմ. Աբուլկասիմ Փայանդէ, առաջին հատոր, Բոնգահէ Թարջոմէ վա Նաշրէ Քէթաբ, Թեհրան 1977, էջ 223-24:

[51] Տես ծանօթ. 32, էջ 456:

[52] Տես ծանօթ. 31, առաջին հատոր, էջ 507:

[53] Նոյն տեղում, երկրորդ հատոր, էջ 85:

[54] Տես ծանօթ. 26, էջ 777:

[55] Լուկոնին, Վ. Գ., «Սասանեան Իրանի քաղաքակրթութիւնը», պրսկ. թարգմ. Ինայաթուլլահ Ռիզա, Բոնգահէ Թարջոմէ վա Նաշրէ Քէթաբ, Թեհրան, 1971, էջ 131:

[56] Նոյն տեղում, էջ131:

[57] Նոյն տեղում, էջ 79:

[58] Տես ծանօթ. 31, երկրորդ հատոր, էջ 241:

[59] Տես ծանօթ. 32, էջ 621:

[60] Տես ծանօթ. 38, էջ 128:

[61] Տես ծանօթ. 31, երկրորդ հատոր, էջ 240:

[62] Տես ծանօթ. 35, էջ 321:

[63] Նոյն տեղում, էջ 322:

[64] Տես ծանօթ. 35, էջ 323:

[65] Նոյն տեղում, էջ 323:

[66] Նոյն տեղում, էջ 371:

[67] Նոյն տեղում, էջ 373-74:

[68] Նոյն տեղում, էջ 329-380:

[69] Դր. Մուհամմադ Զաւադ Մաշքուր, Մի ակնարկ Ազարբայջանի պատմութեան եւ նրա պատմական կոթողների եւ ժողովրդի ճանաչումին, Անջոմանէ Ասարէ Մելլի Հրատարակութիւն, Թեհրան 1970, էջ 224-237:

[70] Յաւելեալ տեղեկութիւնների համար տեսնել Ահմադ Քասրաւու՝ «Ազարին, կամ Ազարբայջանի հինաւուրց լեզուն». Դր. Մուհամմադ Զաւադ Մաշքուր, «Մի ակնարկ Ազարբայջանի պատմութեան եւ նրա պատմական կոթողներին եւ ժողովրդի ճանաչումին». Աբդոլալի Քարանգ «Թաթերէն եւ հարզաներէն». Եահեա Զոքա «Գալին Կիյէ-ի խօսուածքը», եւ «Քարնիգան-ի բարբառը». Նասիհ Նաթիկ «Ազարբայջանի լեզուն եւ Իրանի միասնութիւնը»: Ինչպէս նաեւ Թաւրիզի Գրականութեան ֆակուլտետի Հանդէսի մէջ Դր. Մահեար Նաւաբի եւ Ադիբ Թուսի-ի յօդուածները, Թամաշա պարբերականի մէջ Ֆրեյդուն Զոնէյդի-ի յօդուածը, գրուած 1356 (1977), «Ազարբայջանցիների լեզուն - մի ուսումնասիրութիւն Մովլանա Րումիի Անարջանի-ի անծանօթ գրքի շուրջ» վերտառութեամբ. Ռահիմզադէ Մալէքի «Ազարի բարբառը, Ռումիի Անարջանի-ի գրքոյկի բնագիրը, թարգմանութիւնը եւ բառգիրքը». Դր. Մահեար Նաւաբ-ի «Ազարբայջանի ներկայ լեզուն» եւ Դր. Սադէկ Քիա-ի «Ազարիգան» յօդուածները:

[71] Իբն-ալ-Նադիմ, Մուհամմադ բին Իսհակ Ալվարրակ, Քիթաբ-իլ Ֆիհրիսթ լիլ-Նադիմ, սրբագրեց Ռիզա Թաջադդուդ, աշխատասիրեց Մոջթաբա Մինաւի, արաբերէն տեքստ, Թեհրան 1971, էջ 15:

Նոյնի արաբերէն տեքստը.

[72] Տես ծանոթ. 1, էջ 37:

[73] Նասիր Խոսրով - Հաքիմ Նասիր բին Խոսրով Կոբադիանի Մարւազի - ճանապարհորդական տպաւորութիւններ Նասիր Խոսրովիի, աշխատասիրեց Դր. Նադիր Վազինփուր, երրորդ տպագրութիւն, Թեհրան 1977, էջ 7-8:

[74] Marquart J., Eranshahr nach der Geographie des ps. Moses Xorenac'i, Berlin, 1901, s. 132.

[75] Ալ եա'ակուբի, Ահմադ բին Աբի-եա'ակուբ, Քիթաբ օլ Բոլդան, Լէյդեն, 1897, էջ 38:

[76] Ալ-Մուկադդասի, Շամս-իդ-դին Աբու-Աբդալլահ, Մուհամմադ բին Ահմադ ... Ալ-մա'րուֆ բիլ-Բաշշարի, Ահսան ալ Թակասիմ ֆի Մա'րիֆաթ իլ Աղալիմ, Լէյդեն, 1906, էջ 259 եւ 375:

[77] Նոյն տեղում, էջ 378:

[78] Մա'սուդի, Աբուլհասան Ալի բին Հիւսէյն, Ալթանբիհ վալ Աշրաֆ, պրսկ. թարգմ. Աբուլկասիմ Փայանդէ, Թեհրան Բոնգահէ Թարջոմէ վա Նաշրէ Քէթաբ, 1970, էջ 73-74:

[79] Խարազմի, Աբու Աբդալլահ Մոհամմադ բին Ահմադ բին Իւսուֆ Քաթիբ, Մաֆաթիհ ուլ-Ուլում, պրսկ. թարգմ. Հիւսէյն Խադիւ Ջամ, Բոնեադէ Ֆարհանգէ Իրան-ի հրատարակութիւն, Թեհրան 1968, էջ 112:

[80] Նոյն տեղում, էջ 112:

[81] Իսթարխի, Աբու Իսհակ Իբրահիմ, Մասալէք վա Մամալէք, «Ալ-Մասալիք վալ Մամալիք»ի պարսկերէն թարգմանութիւնը, հիջրեթի 5-6րդ դդ. (12-13րդ դդ.), աշխատասիրեց Իրաջ Աֆշար, Թեհրան Բոնգահէ Թարջոմէ վա Նաշրէ Քեթաբ, 1968, էջ 160:

[82] Օրանսկի Ի. Մ., Մուկադդամէյէ Ֆիկհ ուլ-լողէյէ Իրանի, պարսկ. թարգմ. Քարիմ Քեշաւարզ, Փիամ հրատարակութիւն, Թեհրան 1979, էջ 267:

[83] Իբն-ի Հաուկալ, Սուրաթ-իլ Արզ, պրսկ. թարգմ. Դր. Ջա'ֆար Շոար, Բոնեադէ Ֆարհանգէ Իրան-ի հրատարակութիւն, Թեհրան էջ 96:

[84] Նոյն տեղում, էջ 96:

[85] Եակութ Համաւի, Աբու Աբդալլահ Եակութ բին Աբդալլահ, Մո'ջամալ-Բոլդան, առաջին հատոր, Լայպցիգ 1866, էջ 172:

[86] Համդուլլահ Մուսթոֆի, Նիւզհաթ-ուլ Ղուլուբ, աշխատասիրեց Դր. Մոհամմադ Դաբիր-Սիակի, Թեհրան 1957, էջ 100:

[87] Նոյն տեղում, էջ 107:

[88] Տես ծանոթ. 70:

[89] Հաֆիզ, Հիաէյն Քարբալայի, Ռովզաթ-իլ Ջինան վա Ջինաթ-իլ Ջինան, աշխատասիրութեամբ Ջա'ֆար Սուլթան-իլ Կարայի, առաջին հատոր, Թեհրան, 1965, էջ 390:

[90] Տես ծանոթ. 69, էջ 213:

[91] Նոյն տեղում, էջ 214:

[92] Նոյն տեղում, էջ 217:

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՄԱՍ

ԹԻՒՐՔԵՐԻ ԳԱՂԹԸ ԵՎ ԹԻՒՐՔԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԱԶԱՐԲԱՅՋԱՆ ԹԱՓԱՆՑՈՒՄԸ

Աշխարհի պատմաբանները թիւրքերի պատմութեան սկիզբը համարում են մ.թ. 545 թիւը, որովհետեւ այդ տարուայ շեմին չինացիների եւ Չինաստանի հիւսիսային տարածութիւններում բնակուող թիւրքերի միջեւ ծաւալուող կռիւները սաստկացան[1]:

Մեր թուագրութեան 552 թուին թիւրք քօչուորները Չինաստանի հիւսիսում բնակուող «Ժուժան»ների վրայ յարձակուեցին եւ մի տարի յետոյ նրանց պարտութեան մատնեցին: Այդ թուականից թիւրքերը իրենց ձեռքն անցկացրին Չինաստանի հիւսիս-արեւելքում տարածուող տափաստանները, մինչեւ Կորէայի սահմանները, եւ, 554 թուին «թաթաբ» եւ «քիդան» ցեղերին էլ պարտութեան մատնելով, տիրացան Չինաստանի հիւսիսային սահմանների մէկ ծայրից միւսը[2]:

Դրանից յետոյ թիւրքերը ուղեւորուեցին դէպի արեմտեան տափաստանները, այլ խօսքով Իրանի հիւսիս-արեմտեան եւ հիւսիսային սահմանների, Արալ լճի ափերի եւ Սիր-Դարիա — Սեյհուն — գետի շրջակայքում եղած դաշտերը:

Թիւրքերից մնացած հնագոյն գրութիւնը մ.թ. 8րդ դարին պատկանող «Օրխոն» Orkhon արձանագրութիւնն է: Այդ արձանագրութիւնը պատկանում է այն ցեղին, որը ինքն իրեն «թիրք» է անուանում: Մ. թ. 6րդ դարում թիւրքերը գրաւեցին Չինաստանի հիւսիսային սահմանների եւ Իրանի հիւսիսից մինչեւ Արեւելեան Բիւզանդիոյ սահմանները տարածուող բովանդակ տափաստանները[3]: Մ.թ. 567-571 տարիներին թիւրքերը գրաւեցին Կասպից ծովի հիւսիսային տարածքները եւ շարժուեցին դէպի Սեւ ծովի հիւսիսային ափերը:

Մ.թ. 558 թ. Կովկասի հիւսիսային շրջանում բնակուող աւարները թիւրքերի կողմից պարտուեցին: Նուաճողները այս յաղթանակից յետոյ հասան մինչեւ Վոլգա գետի ափերը: Նոյն տարում Խոսրով Անուշիրւանը աւարների հետ դաշինք կնքեց: Այդ դաշինքը տեւեց մինչեւ մ.թ. 628 թիւը: Աւարների եւ Իրանի դաշինքը թիւրքերի մտահոգութեան պատճառ դարձաւ, եւ Իստմի խանը՝ թիւրքերի իշխանը, հարկադրուած էր Սասանեան արքայի հետ բարեկամանալ: Թուսի մեծ իմաստասէր եւ մեծահամբաւ բանաստեղծ Ֆիրդուսին եւս ակնարկում է այս խնդրին, եւ այսպէս է գրում.

Այդ օրերին, Խականի իմաստունը,
Միշտ փնտրում էր Արքայի բարեկամութիւնը.
Քանիցս մեծամեծները եկան ժողովի,
Բարեկամութեան ճամփաները որոնեց,
Խորհուրդ հայցեց քաջերից ու մոգերից[4]:

Խոսրով Անուշիրւանն էլ, օգտուելով ստեղծուած խաղաղութիւնից, իր պապ՝ Սասանեան արքայից արքայ Պերոզ-ի արեան վրէժը լուծելու համար հեփթաղների հետ պատերազմ սկսեց: 562 թ. հեփթաղների առաջին պարտութիւնը տեղի ունեցաւ[5]: Ըստ Թաբարի-ի, Խոսրով Անուշիրւանը «այն նահանգները, որ պարսից երկրի տիրապետութեան տակ էին եղել ... ինչպէս Սինդն ու Բասթը եւ Րախջը, Զաբուլիստանը, Թախարիստանը, Դեհիստանն ու Քաբուլիստանը», յետ վերցրեց[6]:

Այս իրադարձութիւններից յետոյ թիւրքերը հիւսիսից յարձակման անցան եւ առաջացան մինչեւ Դերբենդի ամրութիւնները: Սակայն Դերբենդի բերդերն ու ամրոցները շատ կայուն էին, ուստի թիւրքերը յուսահատուեցին եւ ճարահատեալ նահանջեցին: Գորգանի դէմյանդիման էլ բերդեր կային, ուստի այնտեղ եւս թիւրքերը չկարողացան մուտք գործել եւ վերադարձան[7]:

Խոսրով Անուշիրւանի թագաւորութեան բովանդակ շրջանում Կովկասում եւ Իրանի արքայից արքայի տիրապետութեան տակ եղող տարածքներում թիւրքերից ոչ մի հետք չենք տեսնում:

584 թուին թիւրք ցեղերի միջեւ սկսուեց ներքին կռիւներ: Հռովմէացիք էլ 588 թուին Բոսֆորի նեղուցի շրջակայքից թիւրքերին հեռու մղեցին: Թիւրք ցեղերի միջեւ տեղի ունեցող ներքին կռիւները շարունակուեցին մինչեւ 593[8]:

Խոսրով Անուշիրւանին յաջորդող Հորմիզդ IV-ի թագաւորութեան օրօք թիւրքերը արեւելքից սկսեցին իրենց յարձակումը, բայց Վահրամ Չուբինի հրամանատարութեան տակ գտնուող իրանեան բանակից խիստ պարտութիւն կրելով՝ փախուստ տուեցին[9]: Այս դէպքից յետոյ Չինական կայսերական պետութիւնը, օգտուելով թիւրքերի պարտութիւնից ու նրանց տկարութիւնից, մի քանի անգամ յարձակուեց փախստական այդ ցեղի մնացորդի վրայ եւ, ի վերջոյ, 690թ. այդ կռիւներն աւարտուեցին Չինաց կայսերական բանակի յաղթանակով եւ թիւրքերի չարաչար պարտութեամբ[10]:

Թիւրքերը, համալրելով եւ ի մի բերելով իրենց ուժերը, մ. թ. 7րդ դ. երրորդ տասնամեակին ճանապարհուեցին դէպի Եւրոպայի հարաւ-արեւելեան դաշտերը: 626 թուին սկսուեց թիւրքերի, խազարների եւ հռովմէացիների միացեալ յարձակումը Իրանի վրայ: Հռովմէացիք Փոքր Ասիայից յարձակուեցին Հայաստանի եւ Ազարբայջանի վրայ: Թիւրքերն ու խազարները սկսեցին իրենց յարձակումը հիւսիսից դէպի Կովկասեան Ալբանիայ եւ

դէպի Վրաստան: Յետագայում, Արեւելեան Բիւզանդիոյ կայսր Հերակլիոսի զօրքերը միացան իրենց դաշնակից թիւրքերին եւ խազարներին, շրջապատեցին Թիֆլիս քաղաքը եւ շատ սոսկալի կոտորածներ կատարեցին[11]:

629 եւ 630 թուերին Արեւելեան խականութեան երկրամասի թիւրքերի եւ Չինական կայսրութեան միջեւ երկու անգամ կռիւ ծագեց, որը աւարտուեց Արեւելեան Խականութեան անկումով: Այս անկումը պատճառ դարձաւ, որ Չինական կայսրութիւնը Արեւմտեան խականութեան հետ սահմանակից դառնայ, այսպիսով պատճառ հանդիսանալով թէ՛ թիւրքերի արագ կերպով տկարանալուն եւ թէ՛ տեղական իշխանների վերստին զօրանալուն[12]:

631-634 տարիների ընթացքում, թէեւ Սասանեան թագաւորութիւնը սկսել էր տկարանալ, Արեւմտեան խականութիւնն էլ, ներքին անհամաձայնութիւնների ծագումով եւ սաստկացումով, օրից օր թուլացաւ, եւ ի վերջոյ աւարտուեց թիւրքերի պետութեան անկումով եւ ոչնչացումով: Այնպէս որ 648 թուին թրքական երեք մեծ ցեղախմբեր հանդուրժեցին Չինական կայսրութեան հպատակ դառնալուն, իսկ մի այլ մեծ ցեղախումբ, որ «Տողան» էր կոչւում, Թիբեթի բանակի կողմից յարձակման ենթարկուեց եւ իսպառ բնաջնջուեց: Թիւրքական ցեղերից մի այլ խումբ էլ կիրգիզների կողմից յարձակման եւ բնաջնջման ենթարկուեց[13]:

Այդ ժամանակաշրջանում ոչ միայն Սասանեան թագաւորութիւնը, այլ նաեւ թիւրքերի պետութիւնն էլ անկման ու կործանումի ենթարկուեցին: Խազարներն էլ մ.թ. 7րդ դարի երկրորդ կէսին թիւրքերին իրենց երկրից դուրս մղեցին եւ վերականգնեցին իրենց նախկին անկախութիւնը[14]: Այսպիսով, ճանապարհը հարթուեց արաբների իշխանութեան եւ տիրապետութեան համար:

654 թուին, Յազկերտ III-ի սպանութիւնից շուրջ երեք տարի յետոյ, Չինաստանի կայսրը ոչնչացրեց թիւրքերի բանակի վերջին մնացորդները: 656 թ. որոշ թիւրքական խմբաւորումներ յարձակուեցին Խորասանի սահմանների վրայ, սակայն այդ յարձակումը յաջողութիւն չունեցաւ Արեմտեան խականութեան արեւելեան սահմանների շրջանում ծագած խռովութիւնների պատճառով[15]:

Դրանից յետոյ թիւրքերից եւ տեղական իշխաններից կազմուած խառն եւ փոքր պետութիւններ ստեղծուեցին Միջին Ասիոյ տափաստաններում, որոնք շուտով պիտի ենթարկուէին արաբների տիրապետութեան:

660 թ. սկսեալ, Արեւմտեան խականութիւնը իր անկախութիւնը լրիւ ու բացարձակ կերպով կորցրեց ու դրանից յետոյ երբէք չկարողացաւ վերագտնել: Արեւմտեան խականութեան մէջ թիւրքերի գրաւած հողերն էլ բաժանուեցին փոքր կտորների: 662 թուին Քաբուլը, եւ երկու տարի յետոյ Փուջաբը արաբների կողմից գրաւուեցին, եւ, Իրանից բացի, արաբները տիրացան նաեւ Հնդկաստանի մի մեծ մասին[16]:

Այս բոլորը, որ հերթականօրէն ներկայացուեց ընթերցողի ուշադրութեան, պարզօրէն բացայայտում են, որ թիւրքերը, հակառակ իրանցիների դէմ մղած կռիւների, բացի Միջին Ասիոյ մի քանի տեղերից, ինչպէս Սագդն ու Թախարիստանը, չկարողացան ձեռք բերել Իրանի թագաւորութեան ենթակայ տարածքները, ի շարս դրանց Կովկասը, այնպէս որ մինչեւ Սասանեան թագաւորութեան վախճանը, թիւրքերի ոտքը դեռ Ազարբայջան մուտք չէր գործել: Նրանց միայն յաջողուեց կարճ ժամանակով հռովմէացիների ու խազարների գործակցութեամբ, Կովկասեան Ալբանիոյ մի քանի նահանգներ, Վրաստանը եւ Հայաստանը յարձակման ենթարկել, կողոպտել եւ կոտորածներ կատարել, ու յետոյ ներքին դժուարութիւնների պատճառով յետ վերադառնալ: Արաբների՝ այդ երկրների վրայ խուժելուց յետոյ, թիւրքերը շատ երկար ժամանակ չէին համարձակւում յարձակման անցնել: Թէեւ Միջին Ասիոյ մէջ մի քանի փոքրիկ բախումներ տեղի ունեցան թիւրքական որոշ ուժերի եւ արաբների միջեւ, սակայն ի վերջոյ Օմայեանների խալիֆայութեան օրօք նրանք ջախջախուեցին Կութայբաթ բին-Մուսլիմ Բահելի-ի ձեռքով եւ ենթարկուեցին արաբների գերակայութեան:

Որոշ բիւզանդական պատմագիրներ մեզ տեղեկութիւններ են տալիս Փռիւգիայում եւ Միջին Ասիայում հոների երեւալու մասին մ.թ. 4րդ եւ 5րդ դարերում[17]: Վեցերորդ դարից սկսեալ, խազարների անունն է յիշւում[18]: Սակայն երբեք Միջին Ասիայում, Ազարբայջանում եւ Կովկասում ոչ մի հետք չի եղել թիւրքերի բնակավայրի եւ կամ բնակութիւն հաստատելու մասին:

Հաւանական է, որ ոմանք հոների գոյութիւնը Միջին Ասիոյ մէջ շաղկապուած համարեն թիւրքերի գաղթի հետ: Գիտենք, որ մ.թ. 5րդ դարի սկզբում անապատաբնակ ցեղերի ու տոհմերի մի նոր խմբաւորում ստեղծուեց Միջին Ասիոյ մէջ, որը պատմութեան մէջ ճանաչուած է «հոներ» անունով: Այդ խմբակցութեան մէջ ի մի եկած բոլոր ցեղերն ու տոհմերը թիւրքեր չէին: Քահանը համոզուած է, որ յիշեալ ցեղերի մէջ» կային նաեւ այլ ցեղային տարրեր, ինչպէս ուգրո-ֆիններ, մաչարներ (մաջարներ) եւ այլն»[19]: Նա հեփթաղներին երբէք թրքական ցեղերից չի համարում: Քահանը այն կարծիքին է, որ «հեփթաղները հնդեւրոպական ցեղախմբերից էին եւ իրանական տոհմին էին պատկանում»[20]:

Մանաւանդ որ թիւրքերից գրաւոր ոչինչ չկայ, որպէսզի կարելի լինի դրա հիման վրայ դատել: Թիւրքերի մշակոյթի մասին Քահանը գրում է, որ մինչեւ մ.թ. 10րդ եւ 11րդ դարերը, «ոչ փիլիսոփայական ուսուցմունքներ ունէին եւ ոչ էլ գրական կամ գեղարուեստական որեւէ ուշագրաւ գործ ի յայտ բերեցին»[21]:

Ըստ պրոֆ. Զուլալեանի, «Ցայժմ թիւրքերի պատմութիւնը առաջադրուել է չինական, պարսկական, հայկական եւ բիւզանդական աղբիւրների հիման վրայ, իսկ թիւրքերից ոչ մի գործ չի մնացել: Սա մի իրականութիւն է, որ մինչեւ անգամ թիւրք պատմաբաններն էլ պարտաւորուած են եղել խոստովանել»[22]:

Իսլամական շրջանի աղբիւրներից էլ կարելի է պարզ կերպով եզրակացնել, որ Իսլամի յայտնութիւնից դեռ մի քանի դար յետոյ էլ թիւրքերը Միջին Ասիոյ մէջ, Ազարբայջանում եւ Կովկասում բնակավայր չեն ունեցել: Մինչեփսկ հիջրեթի 3րդ դ. (մ.թ. 9րդ դար) եւ Մո'օթասիմի խալիֆայութեան շրջանից յետոյ, երբ նա իրանական տարրի հանդէպ ունեցած իր ոխի եւ թշնամութեան պատճառով թիւրքերին զօրութիւն շնորհեց, եւ քիչ-քիչ Աբասեանների խալիֆայութիւնը սկսեց թիւրքերի ծառայութեան լծուել, այսուամենայնիւ թիւրքերի ներթափանցումն ու բնակութիւն հաստատելը դանդաղ կերպով եւ աստիճանական կարգով կատարուեց: Թիւրք ամիրաների մասնակցութիւնը խալիֆայութեան վարչակարգում դեռ չի նշանակում, որ կար նաեւ թուրք բնակչութիւն: Սա մի ճշմարտութիւն է, որ մինչեւ անգամ մոլեռանդ թիւրք պատմաբան Թողանը եւս խոստովանել եւ այսպէս է գրել.

«Ինչպէս յայտնի է, մի շարք թիւրք ամիրաներ ծառայում էին Ազարբայջանում եւ Անատոլիայում, եւ բանակի հրամանատարութիւնը նրանց էր յանձնուած: Սակայն մեր տեղեկութիւնները թիւրքերի այդ վայրերում բնակութիւն հաստատելու մասին շատ չնչին են»[23]

«Միայն ու միայն սելջուկ թիւրքերի տիրապետութեան ժամանակ էր, որ առաջին անգամ թիւրքերը այս երկրում սկսեցին բնակուել»[24]:

Պրոֆ. Քուլալեանը թիւրքերի դէպի Իրան քօչելու սկիզբը համարում է մ. թ. 11րդ դարից սկսեալ, եւ համոզուած է, որ նախքան մ.թ. 11րդ դարը «Արեւելեան Կովկասի[25] թրքացման մասին ոչ մի խօսք չի կարող լինել»[26]:

Մ.թ. 11րդ դարից սկսեալ, դէպի Իրան եւ Փոքր Ասիա ներխուժող թիւրքական էթնիկական զանգուածների մասին խօսելիս անհրաժեշտ է նշել, որ Սասանեան թագաւորութեան վերջին տասնամեակներին էր, որ թիւրք ցեղախմբերը Չինական կայսրութեան բանակների կողմից բնաջնջուեցին եւ ոչնչացան: Սակայն երբ նրանք տարածուեցին Արեւելեան խականութեան եւ Արեմտեան խականութեան տարածքներում, նրանք միախառնուեցին Հիւսիսային Չինաստանի եւ Միջին Ասիոյ այլ ցեղերի հետ: Այս խառնումից ստեղծուեցին նոր խմբաւորումներ, որոնք այլեւս նախկին թիւրքերը չէին: Այդ խմբաւորումները տեղական ցեղերի եւ ներխուժող թիւրքերի համաձուլումի եւ միախառնումի արդիւնքն էին, սակայն պատմութեան մէջ յիշեալ ցեղերը «թիւրք» են կոչուել: Այս խնդրին անդրադարձել է Րաշիդ-Էդդին Ֆազլուլլահ Համադանին իր Ջամէ-ուլ-Թաւարիխ գրքի մէջ:

Խօսելով թիւրքմէն ցեղի մասին, որը Ղուզերի սերունդին է պատկանում, այսպէս է գրել.

«Օղուզի զաւակներից 24 ճիւղ առաջացաւ, ինչպէս որ գրուել է մանրամասն ցուցակի մէջ: Իւրանքաչիւրը ունեցաւ իր անունն ու տիտղոսը, եւ աշխարհում գտնուող բոլոր թիւրքմէնները այդ ցեղի սերունդն են եւ Օղուզի 24 որդիներից են սերում: Անցեալում թիւրքմէն անունը գոյութիւն չի ունեցել եւ անապատաբնակ թրքանման բոլոր ցեղերին պարզապէս թիւրք էին կոչում»[27]:

Յետագայում այդ խառնուած ցեղերն էլ խառնուեցին այլ ցեղերի հետ, եւ այդ խառնումից նոր ցեղախմբեր առաջացան, որոնք թիւրք անունով ճանաչուեցին: Սակայն իրականութեան մէջ չի կարելի նրանց թիւրք անուանել: Տողերիս հեղինակն էլ թիւրք արտայայտութիւնը գործածել է նրանց նկատմամբ, բայց դրա պատճառն այն է, որ յիշեալ ցեղերը այդ անունով են հռչակուած: Իրականութեան մէջ, այն խմբերը, որ ուղղուեցին դէպի Իրան, Փոքր Ասիա եւ Կովկաս, եւ բնակութիւն հաստատեցին այդ երկրներում, ղուզ կամ օղուզ ցեղերից էին:

Ղուզերը մի ցեղ էին, որ արաբական խալիֆայութեան ենթակայ երկրամասի հարեւանութեան մէջ էին ապրում, եւ ղուզերի երկրի հարաւային սահմանը «Չիմ քենդ»ի շրջակայքում էր: Իբն-ի Ֆազլանը, որ ապրում էր հիջրեթի 3րդ դարի վերջերին եւ 4րդ դարի սկզբներին (10րդ դ.), Խորեզմից դէպի Բալքարների (Բուլղար) երկիրը կատարած ճամփորդութեան ժամանակ «Ուսթ իւրթ» նահանգում հանդիպել է ղուզերին[28]:

Ղուզերը բնակւում էին Սիր-Դարիայի — Սեյհուն գետ — ափերից մինչեւ Արալ լիճն ու Կասպից ծովը տարածուող հողերում: Ղուզերը եւ նրանց դաշնակիցներն ու ազգականները իրենց մէջ ներառում էին բազմաթիւ ցեղեր, որոնց շարքին էին՝ Ույղուրները, Կպչակները, Կարլուկները, Կէլէջները, Բայեաթ, Բիգդելի, Բայեանդուր, Սալուր եւ այլն, որոնք էլ իրենց հերթին բաժանւում էին առանձին տոհմերի[29]. ներկայումս էլ յիշեալ ցեղերի մնացորդներից մեր երկրում գոյութիւն ունեն:

Ղուզերը, հակառակ թիւրքերին եւ խազարներին, խաներ կամ խականներ չունէին: Ըստ Իբն-ի Ֆազլանի գրածի, ղուզերի իշխանները «եաբաղու» էին կոչւում[30]:

«Եաբաղու»ն նոյն ինքը «Ջաբաղու» տիտղոսն է, որով թիւրք պարագլուխներն էլ երբեմն կոչւում էին: Թիւրքական զանազան բարբառների մէջ շատ յաճախ է նկատւում, որ «ջ» տառը «ե» ի փոխուի: Մենք այս փոփոխութեան այլ նմանակը տեսնում ենք թիւրքերէն «եադէ» եւ «ջադէ» բառերի մէջ, որը պարսկերէն գրուածքների մէջ էլ հանդիպում է «եադէ քարդան»» (եադէ անել իմ՛ կախարդել, ծ. թ.) ձեւով, որ մի ինչ-որ տեսակի կախարդութեան եւ հմայութեան իմաստն ունի:

Նարշախին Բուխարայի Պատմութիւնը գրքի մէջ այս տիտղոսը «բիաղու» ձեւի տակ է գործածել, բայց չենք կարծում, որ կասկածից զերծ լինի[31]:

Ղուզերի իշխանների — եաբաղու — ձմեռանոցը Սիր-Դարիայի հունի վերին հոսանքի մի շրջանում էր գտնւում, որ «Սուրան» էր կոչւում, որը նոյնպէս պարսկական անուն է:

Մ. թ. 10րդ դարում, ղուզերը, առանց Սամանեան իշխանների կողմից որեւէ դիմադրութեան հանդիպելու, տարածուեցին Սիրդարիայի երկու կողմերում եւ այդ երկրամասի մի քանի վայրերում բնակութիւն հաստատեցին, որոնցից կարեւորագոյնը «Դեհ Նով»ն էր (իմ՛ Նոր Գիւղ, ծ. թ.), որի անունը թիւրքերէնի դարձնելով՝ «Ենգի Քեաթ» կամ Ենի Քենթ (իմ՛ Նոր Գիւղ, ծ. թ.) կոչեցին: Այդ շրջանից մինչեւ Արալ լիճը երկու օրուայ ճանապարհ էր, մինչեւ Խորեզմ՝ 10 օրուայ եւ մինչեւ Ֆարիաբ՝ 20 օրուայ: Այդ շրջանը ղուզերի իշխանների՝ եաբաղու-ի ձմեռանոցն էր:

Սամանեանների ազդեցութեան գօտում թիւրքեր էլ կային, որոնք Սամանեանների հպատակութիւնը ընդունել եւ մահմեդական էին դարձել: Սակայն այնպէս է թւում, որ մինչեւ մ.թ. 10րդ դարը մահմեդականութիւնը չթափանցեց ղուզերի մէջ, միմիայն 10րդ դարից սկսեալ էր, որ նրանք ծանօթացան Իսլամի հետ: Իբն-ի Ֆազլանը թիւրքերին կռապաշտ է անուանել եւ նրանց կրօնի ու դաւանանքի մասին ուշագրաւ խնդիրներ է արծարծել[32]:

Պրոֆ. Բարտոլդը գրում է, որ «Սիրդարիայի երկու կողմերում թիւրքերի հազար վրաններ եւ տաղաւարներ (իւրդեր) էին հաստատուած[33]:

Ենթակայութիւն ընդունած թիւրքերը արօտավայրերից օգտուելու նպատակով էին մահմեդական դարձել եւ յանձնառու էին եղել, որ Սամանեանների տիրապետութեան ներքոյ գտնուող երկրամասը զերծ պահեն այլ ցեղերի յարձակումներից: Այն օրերին Սիրդարիայի հարաւում գտնուող քաղաքների մասին կան որոշ տեղեկութիւններ: Ինչպէս պարզւում է, ղուզերի մի մասը գերադասում էր քաղաքում բնակուել: Որքան որ քաղաքակրթութիւնն ու մշակոյթը հարաւից դէպի հիւսիս էր թափանցում, քօչուորների դէմ տարուող պայքարը էլ աւելի էր տարածւում:

Արաբները սկզբում հիւսիսի քօչուորների հանդէպ ինքնապաշտպանութեան քաղաքականութիւն էին վարում եւ իրենց կայազօրը հաստատել էին Չաչ-ի (ներկայի Թաշքենդը) շրջակայքում: Սեյհունի ափերից մինչեւ լեռների փէշերը կար մի հաստատուն պատ՝ քօչուորների դիմաց պաշտպանուելու համար: Պարզւում է, որ քօչուորները համախոմբ չէին, այլ իւրաքանչիւր ցեղախումբ մասնաւոր մի իշխան ունէր: Ղուզերը անհամար ոչխարների եւ չորքոտանիների տէր էին, եւ դրա պատճառով էր, որ հարաւի մահմեդա-

կաններով բնակուած շրջանների կանաչագեղ ու փարթամ արօտատեղիներին շատ խիստ կարիք ունէին:

Ղուզերը երբեմն, իրենց ոչխարները այլ ապրանքների հետ փոխանակելու նպատակով, գնում էին Ամու-Դարիայի մօտակայքում գտնուող Ուրգանջ (քաղաք), ու այսպիսով քօչուտրների եւ քաղաքաբնակների միջեւ առեւտուրը տարածւում էր: Այս շփումները պատճառ եղան, որ մահմեդականութիւնը քիչ-քիչ թափանցի ղուզերի մէջ: Սակայն մինչեւ մ. թ. 10րդ դարը ղուզերը դեռեւս կռապաշտ էին:

Իբն-ի Ֆազլանը պատմել է թիւրքերի թաղման արարողութիւնների մասին, որը ցոյց է տալիս, որ Մոնգոլիայի հիւսիսում ապրող թիւրքերի թաղման ծէսերը դեռեւս ընդհանրացած էին ղուզերի մօտ: Ղուզերի թաղման արարողութիւնների մասին Իբն-ի Ֆազլանը այսպէս է գրել.

«Եթէ նա իր կենդանութեան ժամանակ մարդ էր սպանել, եւ արի մարդ էր եղել, նրա ձեռքով սպանուած մարդկանց թուին հաւասար փայտէ ինչ-որ ձեւեր էին տաշում եւ դնում էին նրա գերեզմանի մէջ եւ ասում. Սրանք նրա ծառաներն են եւ արքայութիւնում պիտի ծառայութիւն մատուցեն նրան»[34]:

Թիւրքերը հիւանդին չէին մօտենում եւ հարուստ հիւանդների համար մասնաւոր տեղեր եւ վրաններ էին պատրաստում ու հիւանդին փոխադրում էին այնտեղ, ուր կամ կմեռնէր եւ կամ կ'ապաքինուէր: Ծառաներին եւ չքաւորներին ազատ արձակում էին անապատում[35]:

Իբն-ի Ֆազլանը ականարկել է նաեւ ղուզերի թագաւորներից մէկի՝ «Եաննալ Քուչիք», իմ՛ Փոքր Եաննալ կամ Քիւչիւք Եաննալի մասին, որը սկզբում ընդունեց Իսլամը, բայց յետագայում վերադարձաւ իր հին դաւանանքին[36]:

Սելջուկը ղուզերի իշխաններից էր, որ իշխում էր նրանց մի ճիւղի վրայ: Նրա հայրը՝ «Թակակ» կամ «Դակակ»ը, մահմեդականութիւն ընդունած ղուզերից էր: Նա մի անգամ պայքարի մէջ մտաւ եաբաղու-ի հետ, բայց կռւում պարտուեց եւ կրկին անգամ ընդունեց հպատակ լինել եաբաղու-ին, եւ իր որդի Սելջուկին ուղարկեց նրա մօտ: Մի առ ժամանակ յետոյ Սելջուկը իր ընկերների եւ զօրքի հետ միասին գնաց դէպի իսլամական աշխարհը եւ մահմեդականութիւն ընդունեց: Որոշ ժամանակից յետոյ Իսլամի դաշնակիցների շարքում նա էլ յարձակուեց եաբաղու-ի բանակի վրայ, եւ մահմեդականները եաբաղուին տուրք վճարելուց ազատ արձակուեցին: Այդ շրջանում Իլաք-ի որդի Բաղրախանը ներխուժեց Սամանեանների երկիրը եւ գրաւեց նրա մի մասը: Սամանեանները Սելջուկից օգնութիւն խնդրեցին, Սելջուկը իր որդի Ալփասլանին նրանց մօտ ուղարկեց եւ Սամանեաններին յաջողուեց Ալփասլանի օգնութեամբ կորցրած հողերը յետ վերցնել: Այս իրադարձու-

թիւններից յետոյ Ալփասլանը վերադարձաւ իր հօր մօտ[37]: Բաղրախանի յարձակման եւ Բուխարայի թիւրքերի ձեռքով գրաւուելը տեղի է ունեցել Սամանեան թագաւոր Նուհ բին-Մանսուրի օրով[38]:

Սամանեանների անկումից յետոյ նրանց երկրամասի մի բաժինը ընկաւ թիւրքերի մի խմբի տիրապետութեան տակ, որոնք պատմութեան մէջ ճանաչուած են Կարախանեաններ անունով: Կարախանեանների իշխանի ընտանեկան ծագումը, որի ծառայութեան մէջ կար Սելջուկի սերնդից մէկը՝ Ալի Թագինը, այնքան էլ պարզ ու որոշ չէ:

Սամանեանների շրջանի վերջերին երկրի կառավարման գործը աստիճանաբար դուրս էր եկել այդ գերդաստանի իշխանաւորների ձեռքից: Ինչպէս պարզւում է, Ղուզ ցեղերից որոշ խմբակցութիւններ թափանցեցին Սամանեանների արքունիք: Պատմագիրների գրութիւններում ղազնաւիները յիշատակուել են որպէս կպչակ ծառաներ: Սրանք, Ալ-Բույէ թագաւորների Խորասանի վրայ ներգործած շարունակական ճնշումների եւ երբեմն էլ Սամանեան իշխանների մանուկ կամ անչափահաս լինելու պատճառով, օրից օր աւելի զօրաւոր էին դառնում, այնպէս որ Ալփ-Թագինը հասաւ Խորասանի սպարապետի դիրքին:

Հիջրեթի 4րդ դարի կէսերին (10րդ դարի վերջերը) Մանսուր բին-Նուհ Սաման-ի եւ Ալփ-Թագինի յարաբերութիւնը սառեց, եւ նա, ճարահատեալ, վերցնելով իր բանակի մի մասը, լքեց Խորասանը, եւ, հիջրեթի 351 թ. (962 թ.) Սամանեանների տիրապետութիւնից դուրս գտնուող Ղազնի քաղաքում հիմնեց մի նոր իշխանութիւն: Քիչ ժամանակ յետոյ վախճանուեց Ալփ-Թագինը, եւ նրա փեսան՝ Սաբուկ-Թագինը, դարձաւ Ղազնի-ի իշխան: Ալ-Սիմջուրտ եւ Ֆայիկի Խորասանում ստեղծած խռովութեան ժամանակ նա Մանսուր բին-Նուհի խնդրանքով գնաց նրան օգնելու եւ Խորասանը գրաւելուց յետոյ այդ երկրամասի սպարապետութիւնը Սամանեան իշխանից ստացաւ իր որդու՝ Մահմուդի համար: Հիջրեթի շուրջ 389 թ. (990 թ.) Ալ-Աֆրասիաբի իշխանները Մակարա-օլ-Նահրում տապալեցին Սամանեան իշխանութիւնը: Մահմուդն էլ այդ տարուայ ընթացքում մերժեց ենթարկուել Սամանեան իշխաններին եւ Խորասանն ու Խորեզմը ենթարկեց իրեն: Խորեզմի գրաւման համար մղուած կռուի մէջ Մահմուդը դէմ դուրս եկաւ Ալի Թագինի գլխավորութեան տակ գտնուող ղուզերի բանակին, որի հրամանատարութիւնը Սելջուկի որդի Ալփասլանին էր յանձնուած: Ալփասլանը այդ կռուի ընթացքին գերի ընկաւ Մահմուդի ձեռքը եւ արտաքսուեց Հնդկաստան[39]: Այս յաղթանակից յետոյ Մահմուդը ղուզերի մի մեծ բաժինը գրաւեց եւ ղուզերից մի մասին բնակեցրեց Խորասանի զանազան շրջաններում[40]: Այս ժամանակից սկսեալ, ղուզերը սկսեցին թափանցել դէպի Իրանի խորքե-

րը, իրենց վրաններն ու տաղաւարները (իւրդ) հաստատեցին Սարախսում, Աբիվարդում եւ Ֆարիաբում[41]:Ինչպէս պարզւում է, այդ ղուզերի խումբը թուով շուրջ յիսուն հազար հոգուց էր բաղկացած, եւ դրանք այն առաջին խմբերն էին, որ թափանցեցին մինչեւ Ազարբայջան: Այս մասին Քասրաւին գրում է.

«Երբ սուլթան Մահմուդը գնաց Մաւարա-ուլ-Նահր, թիւրքերից մի խումբ էլ, մօտաւորապէս յիսուն հազար հոգի, իր հետ Իրան բերեց եւ նրանց բնակեցրեց Խորասանում: Սրանք մի առ ժամանակ այնտեղ մնացին, եւ յետոյ մի խումբ բաժանուեց նրանցից եւ Քիրմանի ճանապարհով գնաց դէպի Իսպահան: Քանի որ Մահմուդը Իսպահանի տիրոջ Ալա-ուլ-դովլէին նամակ էր գրել եւ պահանջել, որ նրանց կամ վերադարձնի, կամ սպանի, եւ գլուխները ուղարկի, իսկ Ալն-ուլ-դովլէն միտում ունէր դաւադրութեամբ այդ խնդրանքը իրագործել, թիւրքերը հասկացան եւ իրենք իրենց թակարդից փրկեցին: Նրանք Իսպահանից դուրս եկան եւ, իրենց ճամփի վրայ ամէն տեղ կողոպուտ անելով, իրենց հասցրին Ազարբայջան. կարելի է ասել, որ սա թիւրքերի առաջին խումբն էր, որ այդ երկիրը մուտք գործեց: Այս իրադարձութիւնները հիջրեթի 411 թուից առաջ (1020 թ.) տեղի ունեցան, եւ թիւրքերը կամ ղուզերը մօտաւորապէս երկու հազար տաղաւար ունէին: Իւրաքանչիւր տաղաւարը միջին հաշուով եօթ կամ ութ հոգի կարելի է հաշուել: Ազարբայջանի այդ օրերի տիրակալը Մուհամմադ Ռաւադի-ի որդի Վեհսուդանն էր, որը, իրեն մօտիկ երկրների իշխանների եւ Առանի Շադդադեանների եւ այլոց հանդէպ թշնամանք եւ մրցակցութիւն ունենալով, տեսաւ սրանց գալը ու, քանի որ բոլորն էլ կռուող տղամարդիկ եւ լաւ նէտաձիգներ էին, շատ ուրախացաւ եւ նրանց բնակավայր տուեց Ազարբայջանում: Բայց սրանք հանգիստ չնստեցին, շարունակաբար խուժեցին եւ ասպատակեցին Հայաստանն ու այլ վայրեր եւ չզլացան կողոպուտներ եւ աւերներ կատարելուց[42]:

Իբն-ի Ասիրի եւ Գարդիզիի գրքերում ղուզերը նաեւ կոչւում են թիւրքմէններ: Գրեթէ հէնց այս գրութիւններից է տարածուել «թիւրքմէն» անունը, որովհետեւ դրանից առաջ նախընթաց չկար ղուզերին թիւրքմէն կոչելու: Անտարակոյս, «թիւրքմէն»ը աւելի ուշ շրջանի անուանում է, որ զուրկ է պատմական անցեալից:

Ղուզերի երկրորդ խմբակը հիջրեթի շուրջ 429 թ. (1038 թ.), երբ սուլթան Մա,սուդ Ղազնեւին թագաւորում էր Խորասանում, իսկ Ազարբայջանում տիրում էր Վեհսուդանը, գաղթեց այդ երկիրը, եւ Վեհսուդանն էլ ընդունեց նրանց: Բայց ղուզերը, իրենց բնութեան ու վարքի համաձայն, թալանից ու կողոպուտից չհրաժարուեցին եւ շարունակում էին կողոպտել ու կոտորել Ազարբայջանի ժողովրդին եւ Հայաստանի բնակիչներին: Նոյն թուականին նրանք մտան Մարաղա ու մեծ թուով քրդերի կոտորեցին եւ

քաղաքի ուրբաթօրեայ մզկիթը հրկիզեցին: Ուրմիայում գտնուող ղուզերի մի խումբ էլ արշաւեց Քիւրդիստան եւ Հայաստան՝ շարունակելով կողոպտել եւ կոտորել բնակչութեանը[43]:

Նոյն տարիներին ղուզերը նաեւ տիրացան Ռէյ-ին, եւ նրանց իշխանը, որ «Ղուզերի Ամիր» կոչումով էր հռչակուած[44], Կրզըլ էր կոչւում: Հիջրեթի 432թ. (1040-1041 թթ.) Կրզըլը վախճանուեց, եւ Թուղրուլի եղբայր Իբրահիմ Եանալը ուղեւորուեց դէպի Ռէյ: Ղուզերը վախից լքեցին Ռէյը եւ շարժուեցին դէպի Ազարբայջան եւ, մէկ տարի յետոյ, Հայաստանի վրայով անցան մինչեւ Դիարբեքիր եւ Փոքր Ասիա[45]: Սա թիւրքերի երրորդ գաղթն էր դէպի Ազարբայջան, որը զուգադիպում է Մա'սուդ Ղազնեւեանի սպանութեան տարուան:

Ազարբայջանի հռչակաւոր բանաստեղծ Կաթրան Թաբրիզին պատմում է թիւրքերի դաւերից եւ նենգութիւններից, Զանջանի, Գորգանի, Ամօլի եւ Սարիի մարդկանց ցիրուցան լինելուց եւ Սարաբում ղուզերի կատարած կոտորածների եւ չարիքների մասին: Նա մի ցաւալի պատկերով է ներկայացնում ղուզերի արշաւանքը, որ մէկ ժամում մինչեւ երկինք հասնող բերդը այնպէս էին աւերում եւ հողին հաւասարեցնում, որ ասես երբէք չի եղել: Ահա մի քանի տուն Կաթրանի չափածոյ նկարագրութիւնից.

«Վրէժի մտադրութեամբ Շահի քէնից, ռազմատենչ թիւրքերը,
Բոլորն էլ արիւնարբու, բոլորն էլ լաւ զինուած.
Ո՛վ Աստուած, միմեանցից անջատեցին ու ցրեցին մարդկանց,
Թէ Զանգանից, թէ Գորգանից, թէ Ամօլից, թէ Սարիից,
Սարաբի դաշտում նրանց դիակներից բլուրներ կերտեցին,
Բլուրների միջեւ նրանց արիւնից գետակներ հոսեցրին,
Երկնքին հասնող բերդը այնպէս հողին հաւասարեցրին,
Որ մէկ ժամ յետոյ կասէիր, թէ երբէք չի եղել,
Բերդի ամիրը այս աշխարհում, դեւերի պէս, թափառական դարձաւ, մերթ լեռներում է, մերթ քարանձաւներում»[46]:

Հիջրեթի 435թ. (1043-1044 թթ.) ղուզերը, չորրորդ անգամը լինելով, խուժեցին դէպի Ազարբայջան, եւ ոչ միայն գրաւեցին Ազարբայջանը, այլ նաեւ Հայաստանում ու բովանդակ Փոքր Ասիայում կոտորածներ ու կողոպուտներ կատարեցին եւ, առաջանալով մինչեւ Մուսուլ, այնտեղ եւս շատ ջարդեր եւ թալաններ կազմակերպեցին[47]:

Շատ պատմաբաններ այն կարծիքին են, որ թիւրքերի մուտքը Ազարբայջան եւ Կովկաս հիջրեթի 5րդ դարից (11րդ դար) առաջ տեղի չի ունեցել: Պրոֆ. Զուլալեանը դէպի Կովկաս թիւրքական գաղթը համարում է 11րդ դարում, եւ ղուզ ցեղերի գաղթի մասին հետեւեալ կարծիքն է յայտնում.



Ազարբայջանի, Առանի, Հայաստանի, Սարիրի եւ Խազարի քաղաքների քարտէզը, արտատպուած Նիւզհատ ուլ-Մուշթաք գրքից, հեղինակ Աբու Աբդուլլահ Մուհամմադ Ալ-Իդրիսի, Հիջրեթի 6-րդ դար (մ.թ. 12-րդ դար), վերցուած Աենինգրադի Սալթիկով Շչեդրին գրադարանում գտնուող ձեռագրից:

«Թիւրք քօչուոր ցեղերը, որոնք կոչւում էին ղուզ կամ օղուզ անուններով, հին դարերից ապրում էին Սէյհուն գետի ափերին եւ սրա ու Արալ լճի ու Կասպից ծովի միջեւ ընկած տարածութիւնում: Մեր թուագրութեան 10րդ դարի երկրորդ կէսին ղուզերը դաշն կնքեցին Միջին Ասիոյ քօչուոր այլ ցեղերի հետ եւ ստեղծեցին մի իշխանութիւն: Այս միութեան մէջ սելջուկ ղուզերը կարեւորագոյններն էին, որ սելջուկ ցեղից «Քինին Օղուզ» անունը դրեցին իրենց վրայ: 10րդ դարի երկրորդ կէսին ղոզերը մահմեդական դարձան ու քանի որ ղոզերը բաւականաչափ արօտատեղիներ չունէին իրենց տրամադրութեան տակ, ուստի սկսեցին ոտնձգութիւններ անել հարեւան երկրներում, մանաւանդ այն երկրներում, ուր արօտատեղիներ կային[48]:

Քասրաւին, իր հռչակատր աշխատութիւն «Ազարին կամ Ազարբայջանի հինաւուրց լեզուն» գրքում, նոյնանման մի տեսակէտ է արտայայտել: Քասրաւին, խօսելով սելջուկների, Թուղրուլ բէկի իշխանութեան եւ Վեհսուդանի վախճանի մասին, այսպէս է գրում.

«Սրանք երկար չդիմացան, եւ Ազարբայջանը ամբողջովին ընկաւ սելջուկների ձեռքը, եւ, ինչպէս ասել ենք, սրանց զօրքն էլ լիովին թիւրքերից էր կազմուած, ու երբ մէկին մի քաղաքի տիրակալ էին նշանակում, նրանցից մի քանի խմբակներ էլ դնում էին որպէս ուղեկից: Ազարբայջանի հետ էլ նոյն ձեւով վարուեցին: Բացի սելջուկների յետեւից Թիւրքիստանից եկող ցեղախմբերից, որոնք տարածուեցին ամէն տեղ, քանի որ Ազարբայջանը շատ առատ արօտատեղեր ու մարգագետիններ ունէր եւ այլ տեղերից աւելի յարմար էր խաշնարածութեան կենցաղի համար, թիւրք ցեղախմբերը այստեղ աւելի շատ ու առաւել մեծաթիւ դարձան»[49]:

Ինչ վերաբերում է ղուզերի ներթափանցումին, հարկ է ասել, որ այն կատարուեց երկու ուղղութեամբ, որովհետեւ, ինչպէս տեսնում ենք, ղուզերը Բոսֆորի նեղուցի կողմից էլ դէպի Կովկաս ուղեւորուեցին եւ, Ալփասլանի իշխանութեան օրով, որը Թուղրուլի եղբայր Չաղիր բէկի որդին էր, Կովկասի հողային տարածքները, Հայաստանի հիւսիսային եւ կենտրոնական մասերը եւ Փոքր Ասիոյ նահանգները իրենց ենթարկեցին: Զուլալեանը ղուզերի Կովկասի վրայ յարձակուելու մասին այսպէս է գրում.

«1048 թ. (Հիջրեթի 440 թ.) սելջուկ թիւրքերի իշխան Թուղրուլ բէկը, Իրանը գրաւելուց յետոյ, սկսեց իր մեծ յարձակումները դէպի այլ երկրամասեր եւ դրանց շարքին Հայաստան: Նոյն այդ տարում, այլ սելջուկ իշխաններ, ինչպէս Իբրահիմ Եաննալը եւ Գթլիմիշը, Բոսֆորի ճանապարհով յարձակուեցին Կովկասի եւ Հայաստանի վրայ ու դրանից յետոյ խուժեցին դէպի Էրզրում»[50]:

Հայաստանի գրաման մասին նա այսպէս է գրում.

«Հայաստանի կենտրոնական եւ հիւսիսային հողերի գրաւումը թիւրքերի կողմից առաջին անգամ տեղի ունեցաւ Ալփասլանի իշխանութեան օրով (1063-1073)։ 1064 թուին «Անի» քաղաքը գրաւուեց Ալփասլանի կողմից եւ հողին հաւասարեցուեց[51]:

Այս գրուածքից պարզւում է, որ թիւրքերը երկու կողմից են թափանցել: Նոյն ժամանակ Մեծ Խորասանը, Մաւարա-ուլ-Նահրը, Բալխը, Գորգանը, Թաբարիստանը, Խորեզմը, Զաբալը — Մեծ Մարաստան երկիրը — Համադանը, Դինէւարը, Հալւանը, Ռէյը, Իսֆահանը, Ազարբայջանը, Փոքր Ասիան եւ դրանից յետոյ Իրաքը, Ռումը (Բիւզանդիան, Ծ. Թ.) եւ Շամը (Սուրիան, Ծ. Թ.), Քիրմանը եւ Ֆարսը սելջուկ ղուզերի ձեռքով գրաւուեցին, եւ նրանք, կարճ ժամանակամիջոցում, իրենց տիրապետութեան տակ ունեցան մի լայնատարած բնակավայր՝ Աֆղանիստանից մինչեւ Միջերկրականի ափերը, Սէյհունի ափերից եւ Կովկասի հիւսիսից մինչեւ Բասրա եւ Պարսից ծոցի շրջանները:

Այդ թուից յետոյ թիւրքական ցեղախմբերը էլ աւելի զօրութեամբ էին գաղթում դէպի իրենց նախընտրած վայրերը: Որովհետեւ երկրի գործերը վարելու եւ իշխանութեան ոյժը այլեւս թիւրքերի ձեռքերում էր: Թիւրքերը իրենց տաղաւարները նախ հաստատեցին գիւղերում եւ այն ջրառատ շրջաններում, ուր ընդարձակ արօտավայրեր կային: Եւ որովհետեւ գիւղերում, քաղաքների համեմատութեամբ, աւելի փոքրաթիւ մարդիկ էին ապրում, եւ գիւղացիները բաւականաչափ բարձր մշակոյթ չունէին, որպէսզի իրենց լեզուն պաշտպանեն, ու յաճախ գուցէ միայն իրենց տեղական բարբառներով էին խօսում, այս իսկ պատճառով քաղաքներից աւելի շուտ ձուլուեցին յաղթողների մէջ եւ աստիճանաբար մոռացան իրենց լեզուն ու բարբառը: Այս ընթացքը աւելի արագացաւ յաղթողների եւ պարտուածների շփումներով ու խառն ամուսնութիւններով:

Տողերիս հեղինակը այն կարծիքին է, որ թիւրքերէն լեզուն նախ գիւղերում է գերիշխել տեղական լեզուի վրայ եւ յետոյ միայն տարածուել դէպի քաղաքներն ու առեւտրական կենտրոնները: Անշուշտ այս խնդրում բացառութիւն են կազմում դժուարանցանելի վայրերը, քանի որ, կամ ճանապարհի դժուարութեան եւ կամ ջրի ու կենցաղի նպաստաւոր պայմանների չգոյութեան պատճառով, թիւրքերը չգնացին դէպի այդ վայրերը եւ հէնց այդ տեղերում է, որ դեռեւս կարելի է տեսնել տեղական լեզուի կամ բարբառների մնացորդները:

Քասրաւին այն կարծիքին էր, որ հիջրեթի 5րդ դարում (11րդ դ.) եւ սելջուկների օրով, «Որոշ շէների ու աւանների անունները թիւրքերէնի

վերածուեցին եւ այն գիւղերում, ուր թիւրքերը բնակավայր էին ընտրել, եթէ աւանի անունը պարզ իմաստ ունէր, թարգմանում եւ թիւրքական անունն էին դնում վրան»[52]:

Խորեզմշահեաններից ստացած պարտութիւնից յետոյ սելջուկները բաւարարուեցին միայն Փոքր Ասիոյ եւ Ռումի (Բիւզանդիոյ, Ծ. Թ.) տարածքներով, եւ հիմնեցին Ռումի Սելջուկեան իշխանութիւնը, որը կայուն մնաց մինչեւ Օսմանեան կայսրութեան սկիզբը:

Խորեզմշահեաններից յետոյ Իրանը դարձաւ մոնղոլների ասպատականութիւնների եւ արշաւանքների ասպարէզ, եւ մոնղոլներին ուղեկցում էին նաեւ անապատաբնակ ցեղերից թաթարական տոհմին պատկանող խմբեր:

Հիջրեթի 6րդ դ. (12րդ դար) պատմութիւնը ականատես եղաւ Ազարբայջանում եւ Կովկասում Աթաբեկների իշխանութեան, որոնք կպչակ ցեղերին էին պատկանում: Հիջրեթի 7րդ դարի սկզբներից (13րդ դ.) մոնղոլները արշաւեցին դէպի Ազարբայջան եւ հիջրեթի 628 (1231) թ. գրաւեցին այդ երկիրը ծայրից ծայր: Մի քանի տարի Մարաղան Հուլաւուի պետութեան մայրաքաղաքն էր:

Դրանից յետոյ էլ Թաւրիզը դարձաւ Իլխանների մայրաքաղաքը, որոնք իշխում էին Ազարբայջանում եւ Առանում: Իլխանների վերջին զօրաւոր թագաւորը Աբու-Սաիդն էր, որ հիջրեթի 736 (1335-1336) թ. Առանում հիւանդացաւ եւ Շիրւանի շրջակայքում վախճանուեց: Այդ իրադարձութիւնից յետոյ, մինչեւ քսան տարի Ազարբայջանը վերածուեց երկու գերդաստանների՝ Ջելայիրեան եւ Չոբանեան էմիրների պայքարի ասպարէզի:

Որոշ ժամանակ էլ Թեմուրն իշխեց Իրանի, ինչպէս նաեւ Ազարբայջանի ու Կովկասի վրայ, որից յետոյ Կարակոյունլուները եւ Ակկոյունլուները, որոնք բոլորն էլ թիւրքմէն ղուզեր էին, իշխեցին Ազարբայջանի վրայ: Կարելի է ասել, որ ղուզերի հետ խառնուած թիւրքերի, կամ աւելի ճիշտ ասած թիւրքերի հետ խառնուած ղուզերի տիրապետութիւնը Ազարբայջանի եւ Կովկասի վրայ, ինչպէս նաեւ Ռումի սելջուկների տիրապետութիւնը Փոքր Ասիոյ վրայ, շարունակուեց հետագայ դարերում[53]:

Թիւրքերի մի քանի դար տիրապետութիւնը, ինչպէս նաեւ այդ ընթացքում թիւրք ցեղախմբերի պարբերական նոր գաղթերը քիչ-քիչ պատճառ դարձան, որ թիւրքերէնը մուտք գործի նաեւ քաղաքների մէջ: Քանի որ հարստութիւնն ու զօրութիւնը թիւրքերի ձեռքում էին կենտրոնացած, հարկադրաբար նրանց թիւն էլ շատ աւելի բազմացաւ քաղաքների մէջ: Վաճառականները, առեւտրականները եւ ուրիշները նոյնպէս պարտաւորուեցին սովորել թիւրքերէն լեզուն: Իբն-ի Բաթութան իր Ուղեգրութեան մէջ մի պարզ պատկեր է ներկայացնում Թաւրիզի շուկայից եւ թիւրքերի հարստութիւնից ու փառքից, որը ինքնին ուշադրութեան արժանի է:

«Դրան յաջորդող օրը,— գրում է նա,— Բաղդադի դարպասից մուտք գործեցինք Թաւրիզ քաղաքը եւ հասանք մի մեծ շուկայ, որ Ղազանի բազար էր կոչւում: Դա շուկաներից լաւագոյնն էր, որ ես տեսել եմ աշխարհի բոլոր քաղաքների մէջ: Արհեստաւորների իւրաքանչիւր դասը այդ շուկայում իր մասնաւոր տեղն ունէր, ու երբ ես գնացի ակնավաճառների շուկան, այնքան բազմատեսակ գոհարեղէն տեսայ, որ աչքերս ապշած մնացին: Գեղեցիկ ծառաներ, շքեղ հագուստներ հագած, մետաքսէ թաշկինակներ մէջքին կապած, կանգնած էին տէրերի դիմաց եւ զարդեղէնները ցոյց էին տալիս թիւրք կանանց: Այդ կանայք գոհարեղէնի գնումի մէջ մրցակցում էին միմեանց հետ եւ մեծ չափով էին առնում: Ես վայելչութեան եւ գեղեցկութեան պատճառած այնպիսի սադրանքների ականատես եղայ այդ ընթացքում, որի համար միայն պիտի Աստծուն ապաւինել: Յետոյ գնացինք մուշկի եւ անուշահոտութիւնների շուկան, ու այդ շուկայում էլ տեսանք նոյն դրութիւնը, գուցէ մի բան էլ աւելին»[54]:

Այդ օրերին, թիւրքերը այնքան բազմացան, որ մի շարք քաղաքներում, ինչպէս Լայլանում, ժողովրդի մեծամասնութիւնը թիւրք էր, իսկ Թասուջում թիւրքն ու թաջիկը միախառնուած էր[55]:

Իրանի այլ շրջաններում, ի բաց առեալ Ազարբայջանից, քանի որ թիւրքերը այնքան էլ մեծաթիւ չէին, այս իսկ պատճառով մարդկանց լեզուն թիւրքերէնի հետ խառնուելու եւ նրա մէջ փոխակերպուելու վտանգից զերծ մնաց: Միմիայն գիւղերում մարդիկ թիւրքերէն էին խօսում: Այս իսկ պատճառով, գիւղերի բնակիչների մօտ ստեղծուեց երկու լեզու, որոնցից մէկի մէջ թիւրքերէնն էր գերակայում, իսկ միւսի մէջ պարսկերէնն էր գերիշխում: Այդ ընթացքում որոշ քաղաքներ, ինչպէս Ղազւինը, երկլեզուեան դարձան: Այժմ էլ Սաւէի, Կոմի եւ Քարաջի շրջակայքի որոշ գիւղերում մարդիկ թիւրքերէն են խօսում, բայց քաղաքների մէջ պարսկերէնն է տիրակայում: Ազարբայջանում դրութիւնը այսպիսին չէր: Սեֆեւիների օրօք արդէն մենք տեսնում ենք թիւրքերէն լեզուի գերակայութիւնը Ազարի բարբառի վրայ: Թիւրքերէն լեզուի մասին Քասրաւին այսպէս է գրում.

«Ամէն տեսակէտից անվիճելի է, որ հիջրեթի 10րդ դարից սկսեալ (16րդ դ.), երբ Սեֆեան թագաւորութիւնը ստեղծուեց, Ազարբայջանում թիւրքերէնի տարածումը թէ՛ քաղաքներում եւ թէ՛ դրսերում իր լրումին էր հասել եւ համարւում էր ընդհանրական լեզու»[56]:

Սեֆեւիների շրջանում արդէն Ազարի լեզուի վրայ թիւրքերէնի էլ աւելի գերակայելու համար հողը պատրաստ էր: Երբ շահ Իսմայիլը թագաւորութեան հասաւ, թիւրքական որոշ ցեղեր ծառայում էին նրան, եւ գործերի ղեկը նրանց ձեռքում էր գտնւում: Նադիր շահի թագաւորութեան շրջանում, քանի

որ ինքն էլ թրքական ցեղախմբերին էր պատկանում, տիրում էր նոյն դրութիւնը: Քասրաւին ակնարկել է Սեֆեանների արքունիքի մէջ թիւրքերի ազդեցութեան եւ Ուսթաջլու, Շամլու, Թաքալու, Վարսաղ, Ռումլու, Զուլկադր, Աֆշար եւ Կաջար ցեղերի պարագլուխներին համարում է շահ Իսմայիլին օժանդակող գործակիցներ[57]: Շարունակելով իր խօսքը՝ նա այսպէս է գրում.

«Սեֆեւիների բոլոր գործերը թիւրքերի ձեռքում էր եւ նրանց արքունիքում, լինի Թաւրիզում, Ղազւինում եւ կամ Իսֆահանում, խօսւում էր թիւրքերէն լեզուով, նաեւ տիտղոսների եւ անունների մեծ մասը թիւրքերէն էր, ինչպէս՝ Կարդաշ, Եօլդաշ, Սարդաշ, Ամօղլի, Կափուջի, Էշիգ-աղասի, Իչ-աղասի, Իսմայիլ-կուլի, Թահմասպ-կուլի, Իլ-բէկի, Իլ-խանի, Բէկլարբէկի, Խանլար խանի, Կարնջէ բէկ, Կորխմաս-խան, Շէյխ-օղլի, Հալւաջի-օղլի, եւ նման շատ այլ ձեւեր»[58]:

Օսմանեան բանակներն էլ քանիցս խուժեցին դէպի Ազարբայջան եւ առաջացան մինչեւ Թաւրիզ: Այն պահին, երբ Սեֆեւիների թագաւորութեան վախճանին Աֆղանները գրաւեցին Իսֆահանը, օսմանեան թիւրքերն էլ յարձակուեցին Ազարբայջանի եւ Իրանի արեւմտեան քաղաքների վրայ եւ մինչեւ մի քանի տարի այդ շրջանները պահեցին իրենց տիրապետութեան տակ: Ըստ Քասրաւիի՝ «Այդ կռիւներն ու բանակի արշաւանքները, բոլորն էլ, վերջանում էին Ազարի լեզուի վնասով»[59]:

Դրութիւնը նոյնպիսին էր նաեւ Կովկասեան Ալբանիոյ (Առան եւ Շիրւան) մէջ, մանաւանդ երբ Ռուսաստանի եւ Իրանի միջեւ եղած կռիւներից եւ Կովկասի անջատումից յետոյ, Առանի եւ Շիրւանի ժողովուրդը, Իրանի հովանաւորութիւնից եւ պաշտպանութիւնից յուսահատուելուց յետոյ, դիմեց օսմանցիներին, եւ այս ճանապարհով թիւրքերէն լեզուի ազդեցութիւնը Կովկասում էլ աւելի ուժեղացաւ: Այս պարագան նաեւ պատճառ դարձաւ, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Առանի եւ Շիրւանի ժողովուրդը ընդունեց օսմանեան թիւրքերին:

Որոշ ընթերցողներ կարող են խորհել, թէ թիւրքերի թափանցումը Ազարբայջանում ունէր ճիշտ նոյն ձեւը, որ ունեցաւ արիացիների եւ մարերի թափանցումը այդ երկրի մէջ: Եթէ արիական տարրի գերակայութիւնը տեղական եւ ոչ-արիական տարրի վրայ պատճառ դարձաւ լեռնաշխարհի ժողովրդի տոհմիկ խառնուածքի այլափոխութեան, եւ սրանք այս փոխակերպութեան պատճառով աստիճանաբար իրանցի դարձան, ինչո՞ւ թիւրքական տարրի թափանցումը պիտի այս կարգից տարբեր լինէր եւ բացառութիւն կազմէր:

Այս հարցումին որպէս պատասխան պիտի ի նկատի առնել հետեւեալ խնդիրը: Համեմատութեամբ բնիկ ժողովուրդների, արիացիները աւելի բարձր քաղաքակրթութեան եւ մշակոյթի տէր էին, այս իսկ պատճառով բնիկների փոխակերպութիւնը արիացիների մէջ տեղի էր ունենում արիական մշակոյթի կամաւոր կերպով ընդունելու հետ միաժամանակ: Այս կարծիքի ամենապարզ փաստն այն է, որ արիական մշակոյթը արագ կերպով ընդգրկեց Իրանի լեռնաշխարհի մէկ ծայրից միւսը: Այսպիսով, ոչ միայն տեղական լեզուները, այլ նաեւ բնիկ մշակոյթն էլ ձուլուեց արիական քաղաքակրթութեան ու մշակոյթի մէջ: Անշուշտ պէտք չէ մոռանալ, որ արիացիներն էլ բնիկ մշակոյթի որոշ կողմերն ու ուղղութիւնները ընդօրինակեցին, եւ այդ երկու մշակոյթները միախառնուեցին: Թէեւ գերակայող մշակոյթը արիական մշակոյթն էր, սակայն այդ մշակոյթի գերակայութիւնը կարելի է տեսնել կրօնի, դաւանանքի ծէսերի, վարք ու բարքի, արուեստի, կենցաղավարութեան եւ բազմաթիւ այլ կողմերից եւ տեսանկիւններից: Մինչդեռ թիւրքերը, որ իրենց գրաւած շատ երկրների ժողովուրդների համեմատութեամբ աւելի յետամնաց էին, այդ իսկ պատճառով չկարողացան պարտուած բնիկ ցեղերի մշակոյթը ձուլել յաղթող տարրի մէջ: Ինչպէս տեսնում եք, Փոքր Ասիոյ, Կովկասի, Ազարբայջանի եւ Իրանի այլ շրջանների մէջ պարտուած ազգերի մշակոյթն ու քաղաքակրթութիւնը ոչ միայն նոյն ձեւով կայուն մնացին, այլ նաեւ իրենց մէջ ձուլեցին գերակայող տարրի մշակոյթը, որը վրանաբնակ քօչուորների մշակոյթն էր: Յաղթող ցեղերի մշակոյթի ենթակայութիւնը պարտուած ցեղերին՝ մի այլ պատճառ էլ ունի, եւ սա այն է, որ յաղթական թիւրք ցեղերը արիացիների պէս չէին եւ մէկ տոհմից չէին սերում: Որպէս օրինակ կարելի է յիշատակել մոնղոլների, թիւրքերի, թաթարների եւ այլոց մշակութային բազմապիսութիւնը: Միաժամանակ պիտի ի նկատի ունենալ, որ ներխուժող ցեղախմբերն էլ միատարր եւ միանման չէին, այլ արշաւող բանակն էլ բաղկացած էր զանազան ցեղերից եւ նրանցից իւրաքանչիւրն էլ, ժամանակի ընթացքում, փոփոխութիւնների էր ենթարկուել, այնպէս որ ղուզերին չի կարելի բառիս բուն իմաստով թիւրք անուանել: Այսպէս էր եղել նաեւ Առաջատար Ասիոյ եւ Իրանի վրայ յարձակուող թիւրքանման այլ ցեղերի դրութիւնը: Մոնղոլներն էլ իրենց գրոհը սկսեցին այլ ցեղերի, եւ ի շարս դրանց, թաթար ցեղի ընկերակցութեամբ: Այս պարագան պարզ կերպով եւ մանրամասնութեամբ գրուած է մոնղոլական շրջանի պատմութեան, մասնաւորաբար Ռաշիդ-Էդ-Դին Ֆազլուլլահ Համադանիի Ջամէ-ուլ-Թաւարիխ գրքի մէջ: Խօսքը չերկարացնելու համար, խուսափում ենք դրանք այստեղ վերստին կրկնելուց:

Այսպիսով, այն, ինչ ղուզերի կողմից պարտադրուեց Ազարբայջանի ժողովրդին, միմիայն լեզուն էր, որը իր հերթին օղուզների լեզուի ու հին թիւրքերէնի մի խառնուրդն էր համարւում:

Մի ցեղի փոխակերպութիւնը չի կարելի դատել միմիայն լեզուի չափանիշով: Լեզուն պայմաններից մէկն է, բայց միակ պայմանը չէ: Կան բազմաթիւ այլ նախապայմաններ, որոնց շարքին են տնտեսական յարաբերութիւնները, կենցաղավարութիւնը եւ քաղաքակրթութեան եւ մշակոյթի այլ դրսեւորումները: Այս ազդակները Ազարբայջանում եւ Իրանի այլ շրջաններում շարունակեցին կայուն մնալ ու, ի վերջոյ, ժամանակի հետ ղուզ եւ կփչակ ցեղերին ամէն մի անկիւնում ու ամէն վայրում մեկուսացման պարտադրեցին, եւ յաղթողները պարտատրուեցին իրենց տաղաւարները հաստատել, ամէն մէկը մի վայրում, եւ հեռու քաշուել քաղաքի կեանքից: Ազարբայջանի զանազան վայրերում տեղական ձեւով գոյութիւն ունեցող ցեղախմբերը, ըստ ինքեան, այս կարծիքը հաստատող ամենաբացայայտ փաստերն են:

Միաժամանակ պիտի ասել, որ թէեւ ներխուժողները իրենց լեզուն պարտադրեցին յաղթուած ժողովուրդներին, այդուհանդերձ, չկարողացան նրանք նախապայմաններ առաջացնել նրանց մէջ միասնութիւն ստեղծելու համար: Թէեւ թիւրքերէն լեզուն տիրապետող դարձաւ Փոքր Ասիոյ, Ազարբայջանի եւ Կովկասի մէջ, այդ բոլորով հանդերձ լեզուն չկարողացաւ միջոցը դառնալ այդ միասնութեան, կամ ստեղծել պահանջուող միութիւնը: Սրա պատճառն էլ այն էր, որ Փոքր Ասիոյ, Ազարբայջանի եւ Կովկասի ժողովուրդների քաղաքակրթութիւնն ու մշակոյթը միատեսակ եւ միանման չէին:

Կային մարդիկ, թէ Թիւրքիոյ կառավարութեան կողմից եւ թէ Կովկասի կառավարութեան կողմից, որոնք, պատրուակ ծառայեցնելով լեզուական նմանութիւնները, անցեալում աշխատեցին այդ շրջանի թրքալեզու ժողովուրդների միասնականութեան համար մի հիմք ստեղծել,՝ երբեմն էլ կռուի մէջ մտնել, եւ քարոզչական ու գրգռիչ ջանքեր թափեցին, սակայն, այդ բոլորով հանդերձ, քաղաքակրթական եւ մշակութային տարբերութիւնները, ինքն ըստ ինքեան, այդ ջանքերի դիմաց վերածուեցին մի բնական պատնէշի:

Այժմ եւս կարող են լինել մարդիկ, որոնք նման քայլերի կձեռնարկեն պարզապէս լեզուական զգայնութեան հիմունքների վրայ, եւ, կեղծ հասարակական կարծիք ստեղծելով, անգիտակից խմբակցութիւնների կողմից կամ օտար ուժերի հովանու տակ կարող է յաջողեն եւ, ի վերջոյ, իրենց արհեստական պահանջները ձեռք բերեն: Սակայն, անտարակոյս, տեղական մշակոյթները երկար ժամանակ պիտի դիմադրեն եւ ցեղային անհամաձայնութիւնների ու ոխակալութիւնների պատճառ դառնան: Մինչեւ իսկ, եթէ այդ

«Միութիւնը» կամաւոր կերպով կատարուի, նորից այսպէս կլինի, եւ թոյլ տոհմը աստիճանաբար միասնականութիւն կ'ստեղծի եւ աղանդի կամ կաստաների ձեւով իր ներհակութեան ճամփան պիտի գտնի եւ ամէն մի յարմար առիթով գլուխ պիտի բարձրացնի եւ ինքնագլխութեան ուղին պիտի ընտրի: Այս դրութիւնը կշարունակուի մինչեւ այն ժամանակ, որ յաղթանակի, եւ կամ լրիւ ու կատարելապէս ուժասպառ դառնայ: Այս դրութիւնը կարելի է տեսնել հէնց այսօր, Կովկասում ապրող շատ ազգերի մօտ, Միջին Ասիայում, Ուկրաինայում եւ Բալթեան ծովի ափերին տարածուող հանրապետութիւններում: Ոմանք, ինչպէս թաթարները, կազակները, կիրգիզները, նենեցները, Ղրիմի թաթարները, չեչենները եւ ուրիշներ իրենց ոյժը կորցնելու վրայ են: Ուրիշներ, ինչպէս Բալթեան ծովի հանրապետութիւնների ազգերը, Ուկրաինայի, Հայաստանի, Վրաստանի եւ Կովկասում բնակուող թրքախօս ժողովուրդները դեռեւս դիմադրում են ու, չնայած տնտեսական փոխակերպութեան, ամէն մի նպաստաւոր առիթով գերիշխող ռուսական մշակոյթի դիմաց ծառանում են, եւ յայտնի չէ, թէ ինչով կվերջանայ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Cordier H., «Histoire generale de Chine», Vol. 1, Paris 1920, p. 356.

2 Bichurin (Iakinf) N. Ia, Sobranie svedenii O narodakh Obytavshikh v Srednei Azii v drevnie vremena, t. 2, Moskva-Leningrad, 1952, str. 75.

3 Бартольд В. В., Сочинения, т. V, стр. 20.

4 Ֆիրդուսի, Շահնամէ, քննական բնագիր, աշխատասիրեց Ռուստամ Ալիեւ, խմբագիր Ա. Ազար, 8րդ հատոր, Մոսկուա, 1970, էջ 156:

5 Менандр, Византийские историки, перев. с Дестуниса, СПБ, 1860, с. 377.

6 Թաբարի, Մուհամմադ բին-Ջարիր, Թարիխ-է Թաբարի, կամ «Թարիխ ալ Ռասոլ վալ Մուլուք» երկրորդ հատոր, թարգմ. Աբուլկասիմ Փայանդէ, Բոնեադէ Ֆարհանգէ Իրան-ի հրատարակութիւն, Թեհրան 1973, էջ 648:

7 Նոյն տեղում, էջ 648:

8 Гумилев Л. Н.., Древные тюрки, Москва, 1967, стр. 145.

9 Տես ծանօթ. 6, էջ 726-27:

10 Տես ծանօթ. 8, էջ 145:

11 Моисей Каганкатваци, История Агван, пер. К. Патканова, СПБ, 1861, с. 107.

12 Տես ծանօթ. 2, էջ 255:

13 Տես ծանօթ. 2, էջ 264:

14 Տես ծանօթ. 8, էջ 238:

15 Նոյն տեղում, էջ 241:

16 Նոյն տեղում, էջ 246:

17 Moravcsik G., Byzantinoturica, Berlin, 1958, s. 36.

18 Նոյն տեղում, էջ 44, 105, 122, 355:

19 Cahun L., Introduction a l'histoire de l'Asie, Paris 1896, p. 87.

20 Նոյն տեղում, էջ 155:

21 Նոյն տեղում, էջ 6:

22 Зулалян М. К., Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии, Ереван 1970, стр. 51-52.

23 Togan Zeki Velidi, Umumi Turk tarihine giris, C. 1, Ankara, 1946. s. 168.

24 Նոյն տեղում, էջ 186-87:

25 Կովկասի արեւելեան տարածքները պիտի հասկանալ Առան երկիրը եւ Շիրւանը, որոնց ժողովուրդները ներկայիս խօսում են թիւրքերէն լեզուով: Միաժամանակ պիտի յիշել, որ Կովկասի արեմուտքում - Վրաստան եւ Հայաստան - թիւրքական տարրը գերակայութիւն չունեցաւ:

26 Տես ծանօթ. 22, էջ 57:

27 Ռաշիդ-էդ-Դին Ֆազլուլլահ, Ջամէ-ուլ-Թաւարիխ, առաջին հատոր, աշխատասիրեց Դր. Բահման Քարիմի, Թեհրան 1959, էջ 35:

28 Ահմադ բին Ֆազլան, Սաֆարնամէ, թարգմ. Աբուլֆազլ Թաբաթաբայիի, Բոնեադէ Ֆարհանգէ Իրան-ի հրատարակութիւն, Թեհրան 1946, էջ 69:

29 Տես ծանօթ. 27, էջ 29-45:

30 Տես ծանօթ. 28, էջ 75:

31 Նարշախի, Աբու Բաքր Մուհամմադ բին Ջա'ֆար, «Թարիխէ Բուխարա» թարգմ. Աբու Նասր Ահմադ բին-Մուհամմադ բին Նասր ալ Կաբաւի, կրճատում Մոհամմադ բին Զաֆր բին Օմար, սրբագրութիւն եւ ծանօթագրութիւն Մուդառիս Ռազաւի, Բոնեադէ Ֆարհանգէ Իրան-ի հրատարակութիւն, Թեհրան 1972, էջ 9:

32 Տես ծանօթ. 28, էջ 69-80:

33 Бартольд В. В., Сочинения, т. II ч. 1, стр. 561.

34 Տես ծանօթ. 28, էջ 74-75:

35 Նոյն տեղում, էջ 74:

36 Նոյն տեղում, էջ 73:

37 Տես ծանօթ. 33, էջ 561:

38 Տես ծանօթ. 31, էջ 338:

39 Տես ծանօթ. 33, էջ 569:

40 Նոյն տեղում, էջ 569-570:

41 Նոյն տեղում, էջ 570:

42 «Քարաանդ-է Քասրաի» ժողովածու Ահմադ Քասրաւու 78 յօդուածների եւ զեկոյցների, աշխատասիրեց Եահեա Զոքա, Թեհրան 1977, էջ 328: Յաւելեալ տեղեկութիւնների համար տեսնել «Ալ-Քամիլ» գործ Իբնի Ասիր-ի, եւ «Զէյն-ուլ-Ախբար» գործ Գարդիզի-ի:

43 Քասրաւի, Ահմադ, Շահրիարան-է Գոմնամ, առաջին եւ երկրորդ բաժիններ, երկրորդ մաս, երկրորդ զրոյց, Ադարբայգանի թագաւորները, երկրորդ տպագրութիւն, Թեհրան, Ամիր Քաբիր հրատարակչութիւն, 1965, էջ 191-92:

[44] Նոյն տեղում, էջ 195:
[45] Նոյն տեղում, էջ 195-96:
[46] Նոյն տեղում, էջ 196-97:
[47] Նոյն տեղում, էջ 199:
[48] Տես ծանօթ. 22, էջ 102:
[49] Տես ծանօթ. 42, էջ 102:
[50] Տես ծանօթ. 22, էջ 102:
[51] Նոյն տեղում, էջ 103:
[52] Տես ծանօթ. 42, էջ 329:
[53] Յաւելեալ տեղեկութիւնների համար տեսնել. Քասրաւի, Ահմադ, Շահրիարան-է Գոմնամ, առաջին եւ երկրորդ բաժիններ, երկրորդ տպագրութիւն, Ամիր Քաբիր հրատարակչութիւն, 1956 եւ Դր. Մոհամմադ Ջաւադ Մաշքուր, Մի ակնարկ Ազարբայջանի պատմութեան եւ նրա պատմական կոթողների եւ ժողովրդի ճանաչումին, Թեհրան, Անջոմանէ Ասար-է Մելլի, 1970:
[54] Ռեհլաթ բին-Բաթութա, Իբնի Բաթութա-ի ճանապարհորդութեան գիրքը, թարգմ. Դր. Մուհամմադ Ալի Մովահհէդ, Թեհրան, Բոնգահէ Թարջոմէ վա Նաշրէ Քեթաբ, 1969, էջ 253:
[55] Համդուլլահ Մուսթոֆի, Նիւզհաթ-ուլ-Կուլուբ, աշխատասիրեց Դր. Մոհամմադ Դաբիր-Սիակի, Թեհրան 1957:
[56] Տես ծանօթ. 42, էջ 333:
[57] Նոյն տեղում, էջ 334:
[58] Նոյն տեղում, էջ 334:
[59] Նոյն տեղում, էջ 335:

ՈՒԹԵՐՈՐԴ ՄԱՍ

ԻՆՉՊԵՍ ԱԶԷՐԲԵՅՋԱՆ ԱՆՈՒՆԸ ԴՐՈՒԵՑ ԱՌԱՆԻ ՎՐԱՅ

Կաջար արքայ Ֆաթհ-Ալի շահի թագատրութեան օրով տեղի ունեցավ ռուս-պարսկական կռիւներից եւ հանրայայտ Թիւրքմէնչայի պայմանագրից յետոյ Արաքս գետը ճանաչուեց որպէս սահման Իրանի եւ Ռուսաստանի միջեւ, եւ բովանդակ Կովկասը Ռուսական կայսրութեան տիրապետութեան ենթարկուեց: Կովկասի մահմեդական թրքախօս ժողովուրդները, որ ռուս-պարսկական կռիւների արդիւնքներից դժգոհ էին եւ Իրանի պետութեան տկարութեան պատճառով նրա հովանաւորութիւնից յուսահատ էին եղել, դիմեցին Օսմանեան կայսրութեան, որը այն ժամանակներում դեռեւս զօրաւոր պետութիւն էր:

Տասնիններորդ դարի վերջերում եւ քսաներորդ դարի սկզբներում Օսմանեան կայսրութեան մէջ երկու հոսանքներ զօրացան: Դրանցից մէկը «Իսլամական Միութիւն» ստեղծելու գաղափարն էր, իսկ միւսը «Թիւրքերի Միութիւն»ն էր, որի քարոզիչներն ու տարածողները յայտնի «Երիտասարդ Թիւրքեր» խմբակցութիւնն էր: Այս խմբակը, որ պահանջում էր աշխարհի բոլոր թրքախօս ժողովուրդների միութիւնը, 1907 թուին հիմնեց մի կուսակցութիւն, որը «Իթթիհադ վէ Թարակկի» կոչուեց:

Օսմանեան կայսրութեան պետութիւնը, որ թէ՛ թրքախօս էր եւ թէ՛ յաւակնում էր աշխարհի բոլոր մահմեդականների առաջնորդը լինելու, միախառնեց այս երկու հոսանքներն ու գաղափարները եւ նրանց իրեն ծառայելու կոչեց: Կովկասի թրքախօսներն էլ, որ կրօնական պատճառներով Ռուսական կայսրութեան տիրապետութիւնից դժգոհ էին, փնտրում էին մի յենարան եւ այդ յենակը գտան Փոքր Ասիոյ թրքախօսների մէջ:

Իրանի պարտութիւնից յետոյ, երբ բովանդակ Կովկասը կցուեց Ռուսական կայսրութեան, Կովկասի հիւսիս-արեւելքի Դաղստանի ժողովուրդը Շէյխ Շամիլի առաջնորդութեամբ ապստամբութեան դիմեց: Դաղստանի մահմեդականների կռիւը ռուսական բանակի դէմ տեւեց տասնեակ տարիներ եւ լի է հերոսութիւններով: Ռուս մեծ գրող Լեւ Տոլստոյը այդ քաջութիւնների եւ սխրագործութիւնների մի մասը նկարագրել է իր յայտնի «Հաջի Մուրադ» գրքի մէջ: Շէյխ Շամիլը ի վերջոյ հարկադրուեց թողնել իր հայրենիքը, գաղթել Արաբիա եւ Մեքքայում մենակեաց դառնալ: Նա 1871 թուին վախճանուեց Մեդինա քաղաքում[1]:

Շէյխ Շամիլի ապստամբութիւնը, որ ջախջախուեց Ռուսական կայսրութեան բանակի կողմից, աւելի շատ կրօնական բնոյթ ունէր: Սակայն դրանից յետոյ Կովկասի ժողովուրդների ապստամբութիւնները կրօնաքաղաքական երանգ ստացան: Այդ ապստամբութիւններին հովանաւորում եւ նեցուկ էին հանդիսանում թէ՛ Օսմանեան պետութիւնը եւ թէ՛ «Երիտասարդ Թիւրքերի» խմբակը, որը «պանթիւրքիզմ» շարժման հիմնադիրն էր:

1911 թուին, Բագու քաղաքում, մի կուսակցութիւն հիմնուեց «Մահմեդական Դեմոկրատական Մուսաւաթ Կուսակցութիւն» անունով, որը իր մէջ մէկտեղում էր այդ երկու քաղաքական եւ կրօնական գաղափարները: Յիշեալ կուսակցութեան հիմնադիրները Ռասուլզադէ, Շարիֆզադէ, Քազիմզադէ եւ մի քանի այլ անձինք էին, որոնք հովանաւորւում էին թիւրքերի կողմից: Ըստ Սովետական մեծ Հանրագիտարանի «Յիշեալ կուսակցութեան ծրագիրը իսլամական երկրների միութիւնն էր Թիւրքիոյ առաջնորդութեան ներքոյ»[2]:

1917 թուի փետրուարին, Ռուսաստանի առաջին յեղափոխութեան յաղթանակի եւ ցարական իրաւակարգի անկումից յետոյ, Մուսաւաթ կուսակցութեան պարագլուխները իրենց համաձայնութիւնը յայտնեցին Նիկոլայ II ցարի հեռացումից յետոյ ստեղծուած «Ռուսաստանի Դեմոկրատական Հանրապետութեան»[3]:

Նաեւ 1917-ին կազմակերպուեց «Մահմեդական Դեմոկրատական Մուսաւաթ Կուսակցութեան» եւ «Ֆեդերալիստների Թիւրքական Կուսակցութեան» միացեալ համագումարը: Այդ համագումարում յիշեալ երկու կուսակցութիւնները միացան եւ մի նոր անուն ընտրեցին եւ այնուհետեւ «Ֆեդերալիստ-Մուսաւաթականների Թիւրքական Դեմոկրատական Կուսակցութիւն» կոչուեցին[4]:

Յիշեալ կուսակցութիւնը այնուհետեւ ինքնավարութեան եւ անկախութեան պահանջը մէջտեղ դրեց: Համագումարում Ռասուլզադէն, Գուջինսկին, Ուսուբբէգովը, Աղաեւը եւ մի քանի ուրիշներ ընտրուեցին կենտրոնական կոմիտէի անդամ: Այդ կուսակցութեան մամուլի օրգանը «Իսթիկլալ» (իմա՛ Անկախութիւն, ծ. թ.) օրաթերթն էր[5]:

1917 թուի Հոկտեմբերեան մեծ յեղափոխութիւնից եւ Ռուսիոյ Համաշխարհային առաջին պատերազմից դուրս գալուց յետոյ թուրքերը էլ աւելի տարածեցին իրենց ազդեցութիւնը: Մուսաւաթ կուսակցութեան պարագլուխները նախ մօտեցան Կովկասի բոլշեւիկներին, բայց, ի վերջոյ, նրանց մէջ անհամաձայնութիւն առաջացաւ, եւ մուսաւաթականները 1918 թ. մայիս 27ին Թիֆլիսում կազմեցին իրենց կառավարութիւնը եւ «Ազերբայջանի Հանրապետութիւն» անուան տակ անկախութիւն յայտարարեցին[6]: Յիշեալ կառավարութիւնը նոյն տարուայ յունիս ամսին իր կենտրոնը փոխադրեց Գանձակ քաղաքը[7]:

1918 թուի սեպտեմբերի 15ին թիւրք բանակները, Նուրի Փաշայի հրամանատարութեան ներքոյ, գրաւեցին Բագու քաղաքը: Այս իրադարձութիւնից յետոյ Մուսաւաթականների պետութիւնը, որ հովանաւորւում էր թիւրքերի կողմից, փոխադրուեց Բագու:

Թեեւ մուսաւաթականները իրենք էլ կազմակերպուած եւ միատարր չէին, այդուհանդերձ մեծ էր թիւրքերի ազդեցութիւնը նրանց վրայ: Սովետական փոքր Հանրագիտարանի մէջ, որ տպագրուել է Մոսկուայում 1954 թուին, այսպէս է գրուած.

«Մուսաւաթականները հետեւում էին թիւրքերին եւ պանթիւրքիստական պետութիւն էին»[8]:

Ենթադրւում է, որ Առանի եւ Շիրւանի վրայ Կովկասում Ազերբայջան անուն դնելը կատարուել է ըստ թիւրքերի քաղաքականութեան եւ պահանջի: Որովհետեւ, հակառակ այն բանին, որ թիւրքերը մի քանի անգամ յարձակուել էին Իրանի Ազարբայջանի վրայ, ու թէեւ շատ կոտորածներ էին կատարել, սակայն միշտ էլ իրենց դիմաց տեսել էին Ազարբայջանի ժողովրդի խիստ դիմադրութիւնը, եւ այս իսկ պատճառով ի վիճակի չէին ուղղակի միջոցներով Ազարբայջանի ժողովրդին իրենց կողմը գրաւելու: Այս պատճառով էլ ընտրեցին անուղղակի ճանապարհը եւ որոշեցին նախ Կովկասը եւ Ազարբայջանը միացնել «Ազերբայջան» անուան տակ ու այնուհետեւ այդ երկու երկրամասերը կցել իրենց:

1918 թուի հոկտեմբերի 30ին անգլիական բանակը, գեներալ Թոմսոնի հրամանատարութեամբ, գրաւեց Բագու քաղաքը եւ առաջին համաշխարհային պատերազմի մէջ պարտուած թիւրքական բանակին դուրս հանեց այդ երկրից, սակայն մուսաւաթականների կողմից ստեղծուած «Ազերբայջանի Հանրապետութիւնը» նոյն ձեւով պաշտօնական ճանաչում ստացաւ:

Մուսաւաթական պետութիւնը շուրջ երկու տարի «Ազերբայջանի Հանրապետութեան Կառավարութիւն» անունով իշխեց Առանի եւ Շիրւանի վրայ, եւ այս դրութիւնը շարունակուեց մինչեւ 1920 թուի ապրիլ 28ը, երբ Կարմիր բանակի միաւորները գրաւեցին Բագու քաղաքը[9] եւ Մուսաւաթական կառավարութիւնը տապալեցին եւ այդ կուսակցութեան եւ կառավարութեան պարագլուխներից շատերին ձերբակալեցին ու գնդակահարեցին:

Այդ թուից ի վեր, Բագւում եւ նրա շրջակայքում յայտարարուեց խորհրդային պետութիւն, սակայն նոր կառավարութիւնն էլ «Ազերբայջան» անունը, որ պանթիւրքիստներն էին դրել Առան եւ Շիրւան երկրների վրայ, նոյն ձեւով պահեցին:

Այսպիսով, «Ազերբայջան» անունը նախ մուսաւաթականների կողմից

դրուեց Կովկասի մի բաժնի վրայ, ու այնուհետեւ Խորհրդային Միութեան կողմից հաստատուեց եւ կայուն դարձուեց:

Այն, որ Կովկասի թրքախօսների երկիրը ոչ մի ժամանակ Ազէրբայջան անուանումը չի ունեցել, ոչ մի կասկածի կամ տարակուսանքի տեղ չունի: Այդ մասին մանրամասն խօսուեց նախորդ էջերում: Անցեալում հեղինակներն ու պատմաբանները չէին քաշւում այս ճշմարտութիւնը դրսեւորելուց, սակայն յետագայում, քաղաքական նկատառումներով, այս խնդիրը թաքցրեցին աշխարհից: Այնպէս որ, նոր սերնդից եւ մինչեւ անգամ անցնող սերնդից քչերն են ծանօթ այս հարցին: Խորհրդային հեղինակներն ու պատմաբանները, որոնք գրել եւ այս մասին կարծիք են յայտնել նախքան այն, որ արտաքին քաղաքականութեան խնդիրներում որոշ ծաւալողական տեսակէտներից ելնելով՝ սկսեն բարձունքներ նուաճել, գիտակից էին այս ճշմարտութեան նկատմամբ եւ ընդունում էին այդ իրականութիւնը: Խորհրդային գիտնական պրոֆ. Բարտոլդը բացայայտ կերպով արտայայտել է այս խնդիրը եւ յայտարարել.«Կովկասեան Ազէրբայջան անունն ու անուանումը գործածուել է միմիայն յեղափոխութիւնից յետոյ»: (Նկատի ունի 1917 թուի Ռուսական յեղափոխութիւնը, ծ. հ.) [10]

Պրոֆ. Բարտոլդը, որ իր կեանքի վերջերին շատ խիստ խուսափում էր քաղաքական խնդիրների մէջ մտնել, ռուսների՝ Կովկասին տիրանալու շուրջ ոչինչ չի գրել, որովհետեւ կարող էր ճշմարտութեան բացայայտումը հակասէր եւ հակադրուէր քաղաքագէտների ցանկութիւնների եւ նպատակների հետ: Այս պատճառով, ճշմարտութիւնը արտայայտելու իր մերժումը այսպէս է դրսեւորել.

«Քանի որ խուսափում եմ քաղաքական խնդիրների մէջ մտնելուց, ուստի ռուսների՝ Կովկասին տիրանալու մասին ոչինչ չեմ գրում»[11]:

Մինչդեռ պրոֆ. Բարտոլդը ինքն էլ քաղաքագէտ էր եւ իր կեանքի մի մասը անց էր կացրել Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարութեան մէջ եւ ծառայել էր քաղաքական աշխատանքներին: Այդուհանդերձ, մի այլ տեղում, պրոֆեսորը, գաղտնիքը քօղարկելով, վարպետօրէն բացայայտում է ճշմարտութիւնը եւ, բացատրելով «Ազէրբայջան» անուանումը, գրում է.

«Ազէրբայջան անունը Ազէրբայջանի Հանրապետութեան համար այն նպատակով ընտրուեց, որ կարծում էր, թէ Ազէրբայջանի Հանրապետութեան հաստատումով Իրանի Ազարբայջանն ու Ազէրբայջանի Հանրապետութիւնը կմիաձուլուեն... Ահա այս նպատակով ընտրուեց Ազէրբայջան անունը»[12]:

Արդեօք Խորհրդային մի գիտնական կարող էր կամ կարող է այն երկրում գոյութիւն ունեցած եւ այժմ էլ առկայ կացութեան եւ պայմանների մէջ

սրանից աւելի պարզ ու բացայայտ կերպով խօսել, գաղտնիքները քօղազրկել ու իր երկրի պետական ու քաղաքական դէմքերի միտումն ու նպատակը՝ Առանի եւ Շիրանի վրայ «Ազէրբայջան» անունը դնելու եւ կամ անփոփոխ պահելու նկատմամբ դրսեւորել:

Այս անուանի գիտնականը, որ գիտութեան ու իմաստութեան բոլոր մեծերի նման իրաւունքի եւ ճշմարտութեան բարեկամն էր, համոզուած էր, որ Առանը չպէտք է «Ազէրբայջանի Հանրապետութիւն» անուանուի: Ակադեմիկոս Բարտոլդը գիտնականին վայել վարպետութեամբ եւ ճարտարօրէն յայտնում է իր կարծիքը այս նիւթի շուրջ եւ հետեւեալ յանձնարարութիւնն է անում.

«Եթէ հարկ լինի մի անուն ընտրել, որ ընդգրկի Ազէրբայջանի մէկ ծայրից միւսը, այդ պարագային կարելի է Առան անունը ընտրել»[13]:

Ազարբայջանի ժողովուրդը, որ անցեալում իրենց հողի եւ հայրենիքի պաշտպանութեան համար քանիցս պատերազմել էին օսմանեան բանակների դէմ, եւ թէ մարդ, թէ կին եւ թէ երեխայ, Թաւրիզից սկսեալ մինչեւ հեռաւոր գիւղերն ու աւանները, ոտքի էին կանգնել օտար զաւթիչների դէմ, համաձայն չէին, որ Ազարբայջան անունը, իրենց երկրից ու հայրենիքից բացի, մի այլ երկրի վրայ դրուի: Այն օրերին , երբ «Ազէրբայջան» անունը դրուեց Կովկասի մի մասի վրայ, հանգուցեալ Շեյխ Մուհամմադ Խիաբանին եւ իր ընկերները, որպէս բողոք այս անճիշտ անուանումի դէմ, առաջարկեցին, որ Ազարբայջան անունը փոփոխութեան ենթարկուի: «Ազարբայջանի 18 տարուայ պատմութիւնը» գրքի մէջ լուսահոգի Ահմադ Քասրաւի Թաբրիզին Ազարբայջան անուան փոփոխութեան մասին այսպէս է գրում.

«Ընդվզումի հէնց առաջին օրերից, Հաջի Իսմայիլ աղա Ամիրխիզին, որ հին ժամանակների ազատատենչներից էր եւ Խիաբանիի մօտիկ գործակիցներից մէկը, առաջարկում էր՝ ի նկատի ունենալով այն, որ Ազարբայջանը Իրանի սահմանադրութեան ճանապարհին շատ ջանքեր է ի գործ դրել, եւ նա է, որ ազատութիւնը ձեռք է բերել Իրանի համար, նրա անունը դնենք «Ազատիստան»: Այդ շրջանում Ազարբայջան անունը մի դժուարութեան առաջ էր կանգնած, որովհետեւ Ռուսական կայսրութեան տապալումից յետոյ Կովկասի թրքախօսները Բագւում եւ նրա շրջակայքում ստեղծել էին մի փոքր հանրապետութիւն եւ կոչել էին «Ազէրբայջանի Հանրապետութիւն»: Գրքերում այդ երկրի անունը «Առան» է, բայց քանի որ այդ անունը այլեւս չէր գործածւում, եւ միւս կողմից էլ այդ հանրապետութեան հիմնադիրները այն յոյսն ու ակնկալութիւնն ունէին, որ միանան Ազարբայջանի հետ, այդ իսկ պատճառով իրենց հանրապետութեան ու երկրի համար այդ անունն էին ընտրել: Ազարբայջանցիները, որ ուրախ չէին նման մի միութիւն ստեղծելու

համար, եւ իրենց իրանցիութիւնից չէին ուզում հրաժարուել, կովկասցիների այդ անուանադրութիւնից խիստ վրդովուած էին: Ու քանի որ այդ անունը արդէն դրուել էր եւ անցեալ դարձել, մի շարք մարդիկ ասում էին, թէ աւելի լաւ է, որ մենք փոխենք մեր ոստանի անունը: Այսպէս ահա, «Ազատիստան» առաջարկն էլ հէնց այդ նպատակով էր կատարուել»[14]:

Հանգուցեալ Քասրաւին իր այս գրուածքի մէջ պրոֆ. Բարտոլդի տեսակէտներին նմանող մի կարծիք է յայտնել եւ «Ազարբայջանի Հանրապետութեան» իսկական անունը Առանն է համարել: Ազարբայջանի մեծանուն գիտնականը իր ուսումնասիրական գլուխգործոց «Շահրիարան-է Գոմնամ», (իմմ Անծանօթ արքաներ, Ծ. Թ.) գրքի մէջ, որը գրել էր իրանական թուագրութեան 1305-1306 թթ. (1926-1927), կամ գուցէ դեռ էլ աւելի առաջ, եւ որը հրատարակեց 1307 (1928) թ., զարմանքով է արտայայտում այս արարքի վերաբերյալ: Ինչպէս երեւում է, Քասրաւին «Անծանօթ արքաներ» գիրքը շարադրելու ժամանակ դեռեւս անծանօթ էր Առանի վրայ «Ազէրբայջան» անունը դնելու բուն դրդապատճառին, եւ, պրոֆ. Բարտոլդի նման, խորհրդային քաղաքագէտների նպատակը, այդ երկու երկրամասերի միացման շուրջ, չի բացայայտել: Սակայն երբ նա գրում էր «Ազարբայջանի 18 տարուայ պատմութիւն»ը, «Իրանի սահմանադրութեան պատմութիւնը», նա ձեռք բերեց մի շարք տուեալներ, որոնք նման էին պրոֆ. Բարտոլդի տուեալներին, թէեւ վերջինս ապրում էր Ռուսաստանում, եւ մենք այդ տուեալները ներկայացրինք ընթերցողներին:

Թէեւ Քասրաւին դրական կարծիք ունէր Ռուսական յեղափոխութեան եւ Կովկասում խորհրդային կարգերի հաստատման նկատմամբ, այդուհանդերձ նա չտարակուսեց իր զարմանքը արտայայտելու: Նա իր «Անծանօթ արքաներ» գրքում այս խնդրի վերաբերեալ մի ակնարկ է արել, որն արժանի է ուշադրութեան.

«Զարմանալի է, որ այժմ Առանը կոչւում է Ազէրբայջան: Թէեւ Ազարբայջան կամ Ադարբայգան անունն է մի այլ երկրի, որը գտնւում է Առանի կողքին եւ նրանից աւելի մեծ եւ աւելի ճանաչուած է, եւ ամենահին ժամանակներից սկսեալ, մեր տրամադրութեան տակ եղած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ այդ երկու երկրները միմեանցից անջատ են եղել, եւ երբեք Առանը Ադարբայգան չի կոչուել: Ցայժմ չենք հասկացել, թէ ինչու մեր Առանցի եղբայրները, որ ազատութեան կարգերն էին հաստատել իրենց երկրում եւ ուզում էին նրա համար մի անուն ընտրել, ինչո՞ւ մէկ կողմ թողեցին իրենց պատմական եւ հինաւուրց անունը եւ կողոպուտի ձեռքը երկարեցին դէպի Ազարբայջան: Եւ ինչ օգուտ էին ուզում քաղել իրենց այս զարմանալի արարքից: Այս բծախնդրութիւնը այն պատճառով չէ, որ ես Ադարբայգանից եմ սերում եւ իմ երկրի ու հայրենիքի նկատմամբ նախանձախնդրութիւն ունեմ: Որովհետեւ այդ արարքից Ադարբայգանին ոչ մի վնաս չի հասնում: Այլ այն պատճառով, որ մեր Առանցի եղբայրները իրենց ազգային ու ազատ կեանքի սկզբին, իրենց պատմութեան եւ հայրենիքի անցեալին աքացի են տալիս, եւ սա ինքը մի մեծ վնաս է, իսկ միւս կողմից, պատմութեան մէջ նման զարմանալի արարք երբէք անցեալ չի ունեցել»[15]:

Հանգ. Քասրաւին այն օրերին կարծում էր, թէ «այդ արարքից Ադարբայգանին ոչ մի վնաս չի հասնում», սակայն յետագայում «Ազարբայջանի 18 տարուայ պատմութիւն» եւ «Իրանի սահմանադրութեան պատմութիւն» գրքերը գրելիս անդրադարձաւ խնդրի էութեան, եւ սկսեց գրել այդ մասին: Նա նաեւ արծարծեց որոշ հարցեր, թէեւ դրանք դեռեւս մարդկանցից շատերի եւ հաւանաբար մեր քաղաքական գործիչների մի մասի համար դեռ ըմբռնելի չէին: Քասրաւին 1320-ի Շահրիւարից քիչ յետոյ (1941 օգոստոս ամիսը, Իրանի դաշնակիցների կողմից գրաման ենթարկուելու թուականը, Ծ. Թ.) «Փարչամ» թերթի մէջ այսպէս է գրել.

«Երբ անցեալ Շահրիւարին (օգոստոս) խորհրդային զօրքերը մտան Ազարբայջան, եւ փոփոխութիւններ տեղի ունեցան, Թաւրիզում մի կուսակցութիւն ի յայտ եկաւ՝ «Հիզբի Ազարբայջան» (Ազարբայջանի Կուսակցութիւն) անունով, որը կազմուել է մի խումբ քմահաճ մարդկանց կողմից: Թաւրիզում, այդ շրջանին, նման խմբակցութիւններ շատ էին կազմւում, եւ, ի շարս դրանց, մի քանի անհատներ էլ այդ խումբն էին ստեղծել, եւ իրենք իրենց «Ազարբայջան կուսակցութիւն» անուանել: Եւ քանի որ դրանք շատ տգէտ եւ չարակամ մարդիկ էին, խորհրդային զօրքերի Ազարբայջանում գտնուելուց եզրակացրել էին, որ եթէ կոմունիզմի մասին շաղակրատեն, խորհրդային իշխանութիւնները նրանց կիովանաւորեն: Այս պատճառով էր, որ նրանք սկսեցին կոմունիստական ցոյցեր անել, մինչդեռ նրանցից շատերը համայնավարութեան իմաստն անգամ չգիտէին: Եւ քանի որ նրանց նպատակը իրենց ցանկութիւններին հասնելն ու ինքնացուցադրումն էր, այդ գործի համար միջոցներ էին փնտրում. նախ Ազարբայջանի անկախութիւնը իրենց բաղձանքը դարձրին եւ գտան, որ իրենց ցուցամոլութեան համար դա լաւ միջոց է: Այս պատճառով է, որ թիւրքերէն լեզուի կողմնակցութիւնը իրենց համար նպատակ դարձրին եւ մի շարք քայլերի ձեռնարկեցին: Ներքնապէս նրանց նպատակը Իրանից անջատուելն էր, եւ միայն իրենց քմահաճ բնոյթի բերումով էր, որ նման շատ սխալ գաղափարին հետեւելու համարձակութիւնն էին ունեցել: Սակայն բացայայտ կերպով հետեւում էին իրենց «պարսկերէնին ընդդէմ՝ թիւրքերէն» պայքարին: Նրանք հիմնել էին նաեւ Ազարբայջան անունով մի թերթ, որտեղ ամէն օր այդ բնոյթի գրոյցներ էին տպագրում: Յետոյ, այլեւս այսքանով էլ չբաւարարուեցին եւ այլ

ստորութիւնների էլ ձեռնարկեցին: Օրինակ, ի նկատի ունենալով որ կողոպտիչների եւ չարագործների սերունդը Ազարբայջանից լիովին արմատախիլ չի եղել եւ դրանցից շատերին այս կամ այն կողմում կարելի է գտնել, ուստի նրանք ներկայացուցիչներ ուղարկեցին նման անձանց մօտ եւ նրանց խրախուսեցին խառնակութիւններ եւ կողոպուտներ կազմակերպել: Միաժամանակ, քանի որ վերջին տարիներին Ազարբայջանում Կովկասից եկած գաղթականներ կային, որոնք ցրուած էին նաեւ գիւղերում, այդպիսիների ձեռքով գիւղերում էլ կողոպտիչ եւ ահաբեկիչ կոմիտէներ ստեղծեցին»[16]:

Ինչպէս սկզբում ասուեց, տողերիս հեղինակը աշխատում է հնարավորին չափ խուսափել քաղաքական խնդիրների մէջ մտնելուց եւ իրաւարարութեան գործը թողնել ընթերցողին: Սակայն այս կեցուածքը հնարաւոր է շարունակել մինչեւ այն ժամանակ, որ պատմական խնդիրների մէջ խեղաթիւրումների եւ բարդութիւնների առիթ չի դարձել: Չի կարելի իրականութիւնը զոհել ճաշակին, ուստի, այս իսկ պատճառով, անհրաժեշտ է մի շատ համառօտ ակնարկով անդրադառնալ Ազարբայջանի խնդրին:

Ինչպէս ընթերցողները տեղեակ են, 1344 թուի Շահրիւարի 12ին (սեպտ. 3, 1945 թ.) մի կուսակցութիւն հիմնադրուեց «Ֆիրկէ-է Դմոքրաթ-է Ազարբայջան» (Ազարբայջանի Դեմոկրատական Կուսակցութիւն) անունով, որի պարագլուխները սկզբում պահանջում էին Սահմանադրական օրէնքի գործադրութիւնը եւ «Նահանգային ու գաւառային խորհուրդների» կազմութիւնը: Յիշեալ կուսակցութեան պատասխանատուները սկզբում խօսում էին Իրանի անկախութեան եւ հողային ամբողջութեան մասին, եւ իրենց անջատողականութեան համար մեղադրողներին թշնամիներ եւ յետին միտումների տէր մարդիկ էին անուանում:

Հեղինակը նպատակ չունի անդրադառնալ այն խնդիրներին, որոնք վէճերի ու կասկածանքների առարկայ են, այլ պիտի յիշատակի պատմական փաստաթղթերից մի քանի օրինակներ, այլ խօսքով՝ միմիայն մի քանի նմոյշներ այն նիւթերից, որոնք հրատարակուել են «Ազարբայջանի դեմոկրատական կուսակցութեան» պաշտօնաթերթի մէջ, ու յետոյ պիտի թողնի, որ ընթերցողները իրենց դատողութիւնն անեն այդ խնդրի շուրջ:

1325 թուի Ազար ամսի 21ից յետոյ (դեկտ. 12,1946) «Ազարբայջանի Դեմոկրատական Կուսակցութեան» մի խումբ պատասխանատուներ եւ անհատներ, ինչպէս նաեւ Ազարբայջանի դեմոկրատների իշխանութիւնը ապաստանեց Խորհրդային Միութիւն, սրանց շարքին էր նաեւ տողերիս հեղինակը: Այն խնդիրները, որ «Ազարբայջանի Դեմոկրատական Կուսակցութեան» տիրապետութեան օրով գաղտնի բնոյթ ունէին, Խորհրդային Միութիւն գաղթելուց յետոյ բացայայտ դարձան ու այլեւս որեւէ ենթադրութեան ու տարակուսանքի տեղ չմնաց: Թէեւ Խորհրդային իշխանութեան

պատասխանատուները մեծ ջանք էին անում, որպէսզի, ինչքան որ հնարաւոր էր, իրանեան Ազարբայջանի Խորհրդային Միութեան կցելու նպատակն ու մտադրութիւնը չբացայայտուի ու չքօղազրկուի, եւ Խորհրդային Միութեան հակառակորդների եւ մրցակիցների կողմից որպէս պատրուակ չօգտագործուի, բայց, այդ բոլորով հանդերձ, երբեմն որոշ նիւթեր էին հրատարակւում, որոնք ցոյց էին տալիս, թէ նպատակն ու աշխատանքի ծրագիրը որպիսին է:

1329 թ. Ազարի 21ին (1950 թ. դեկտ.12) «Ազարբայջանի Դեմոկրատական Կուսակցութեան» պարագլուխները «Ազէրբայջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան» Կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի առաջին քարտուղար Միր Ջա'ֆար Բաղիրովին մի հեռագիր ուղարկեցին, որի բովանդակութիւնը «Ազարբայջանի Դեմոկրատական Կուսակցութեան» կենտրոնական կոմիտէի պաշտօնաթերթ «Ազարբայջան»ի մէջ տպագրուեց: Յիշեալ հեռագրի մէջ այսպէս է ասուած.

«Գորովագութ եւ սիրելի Հայր, Միր Ջա'ֆար Բաղիրով,

Հարաւային Ազարբայջանի ժողովուրդը, որ անանջատելի մասն է Հիւսիսային Ազարբայջանի[17], աշխարհի բոլոր ժողովուրդների նման, իր յոյսը դրել է Խորհրդային մեծ ժողովրդի եւ Խորհրդային պետութեան վրայ»[18]:

Հեռագրի պարունակութիւնից դիւրութեամբ կարելի է այս անուանումի գաղտնիքը բացայայտել եւ ըմբռնել, որ այդ անունը դնողների եւ նրանց ձեռնասուն անհատների նպատակն ու ծրագիրը Ազարբայջանին Իրանից անջատելն ու Խորհրդային Միութեան կցելն էր:

«Ազարբայջանի Դեմոկրատական Կուսակցութեան» գործունեայ անդամների ընդհանուր ժողովում, յիշեալ կուսակցութեան հիմնադրման 5րդ տարեդարձի առթիւ, հաստատուեց մի բանաձեւ, որի մէջ այսպէս է ասուած.

«Կուսակցութեան կենտրոնական կոմիտէից խնդրում ենք, որ շնորհակալութիւն յայտնի այն բոլոր ուշադրութեան եւ օժանդակութիւնների համար, որ մեր արիւնակից եղբայրները եւ մասնաւորաբար Ազէրբայջանի Կոմունիստական կուսակցութեան առաջնորդ ընկեր Միր Ջա'ֆար Բաղիրովը ցուցաբերել են մեր հանդէպ, մեր հայրենիք Հիւսիսային Ազէրբայջան գաղթելուց յետոյ»[19]:

Ինչպէս բանաձեւից պարզւում է, Կովկասի Առան եւ Շիրւան շրջանները, որ կոչուել են «Հիւսիսային Ազէրբայջան», դարձել են Իրանի Ազարբայջանի ժողովրդի «Հայրենիքը», իսկ նրանց բնակիչները Ազարբայջանի ժողովրդի հետ «արիւնակից եղբայրներ» են դարձել:

Արդեօք Ազարբայջանի խնդրի անյայտը գտնելու համար սրանից աւելի պարզ փաստ կարելի է գտնել: Արդեօք այս փաստաթուղթը թաքուն գաղտնիքների վրայից վարագոյրը չի վերցնում:

Մի այլ հեռագրի մէջ, ուղարկուած «Ազարբայջանի Դեմոկրատական Կուսակցութեան» կենտրոնական կոմիտէի կողմից Ազէրբայջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան Կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի առաջին քարտուղար Միր Ջա'ֆար Բաղիրովին[20], այսպէս է ասուած.

«Սիրելի Առաջնորդ եւ սիրալիր Հայր, ընկեր Միր Ջա'ֆար Բաղիրով, Երեք լրիւ տարի է անցել «Ազարբայջանի Դեմոկրատական Կուսակցութեան» հիմնադրումից, կուսակցութիւն, որ առաջնորդում է Ազարբայջանի ժողովրդի սրբազան պայքարը ազգային ազատութեան եւ մեր հարազատ ու սիրելի հայրենիք Ազէրբայջանի հարաւային մասի փրկութեան համար, ուր տարիներ է, որ [նրանք] մաքառում են ֆարս ցեղապաշտների սեւ ճիրանների մէջ: Այս մարտնչող կուսակցութեան հիմնադրման երրորդ տարեդարձին շնորհաւորում ենք Ազարբայջանի ժողովրդի բոլոր բարեկամներին եւ Ձեզ, որ մեր սիրելի Առաջնորդն ու մեր սիրելի Հայրն էք: Կուսակցութեան, ազգային պետութեան եւ անձնուրացների կազմակերպութեան մի շարք անդամներ ... գաղթեցին իրենց հայրենիքի հիւսիսային եւ ազատ մասը»[21]:

Այս փաստաթղթի մէջ Ազարբայջանը կոչուել է «պապենական երկրի ու սիրելի հայրենիքի հարաւային մասը», ուր, իբր թէ, տեղի ժողովուրդը «մաքառում է ցեղապաշտ ֆարսերի սեւ ճիրաններում», եւ, իբր թէ, կուսակցութեան պատասխանատուները «գաղթել են իրենց հայրենիքի ազատ հիւսիսային մասը»:

Ինչպէս որ նախապէս ընթերցողների ուշադրութեանը յանձնուեց, գրքիս հեղինակը ջանք է արել, որքան որ հնարաւոր է, հեռու մնալ քաղաքական հարցերի մէջ մտնելուց, վերլուծումներ անելուց եւ կարծիքներ յայտնելուց, դատողութիւն անելը թողնելով ընթերցողին: Բայց այս մօտեցումը չպիտի տանէր այն բանին, որ պատմական փաստաթղթերի եւ վաւերագրերի ջնջման գնով վերջանար: Այս իսկ պատճառով, անհրաժեշտ էր թուում, որ առնուազն մի քանի համառօտ փաստաթղթեր, որոնք պատմութեան տեսակէտից կարեւոր արժէք են ներկայացնում, այստեղ մէջ բերուէին: Դատաստանը թողնում ենք ընթերցողին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 БСЭ, т. 29, стр. 278.
2 Նոյն տեղում, հատոր 17, 1974, էջ 128-29:
3 Նոյն տեղում, էջ 128-29:
4 Նոյն տեղում, էջ 128-29:
5 Նոյն տեղում, էջ 128-29:
6 Նոյն տեղում, էջ 128-29:
7 Նոյն տեղում, էջ 128-29:
8 Энциклопедический словарь, т. 2, Москва, 1954, стр. 445.
9 Տես ծանօթ 1, հատոր 1, 1970, էջ 254:
10 Бартольд В. В., Сочинения, т. II, ч. 1, стр. 775.
11 Նոյն տեղում, էջ 782:
12 Նոյն տեղում, էջ 703:
13 Նոյն տեղում, էջ 703:
14 Քասրաւի, Ահմադ, Ազարբայջանի 18 տարուայ պատմութիւնը, Իրանի սահմանադրութեան պատմութեան մնացորդը, երկրորդ հատոր, իններորդ տպագրութիւն, Թեհրան, Ամիր Քաբիր հրատարակչութիւն, 1978, էջ 873:
15 Քասրաւի, Ահմադ, Շահրիարան-է Գոմնամ, երկրորդ տպագրութիւն, Թեհրան, Ամիր Քաբիր հրատարակչութիւն, 1956, էջ 265:
16 «Փարչամ» թերթ, թիւ 120, Խորդադ 1321 (Յունիս 1942):
17 «Հարաւային Ազարբայջան» եւ «Հիւսիսային Ազարբայջան» անուանումների մասին տես գրքիս նախաբանը եւ հեղինակի յօդուածը «Միթէ հայրենասէր իրանցիները մեռել են» եւ մի այլ յօդուած՝ «Խօսք Ադարբայգանի մասին», հրատարակուած 1348 թ. (1969) «Բարրասիհայէ Թարիխի» հանդէսի մէջ:
18 «Ազարբայջան» թերթի թիւ 213, Բագու, 23 Ազար 1329 (1950 Դեկտ. 14) Հեռագրի թիւրքերէն բովանդակութիւնը հետեւեալն է.

"عزیز و مهربان آتامیز میر جعفر باقراف! شمالیندن آیریلمازدان بیر حصه اولان جنوبی آذربایجان خلقی دنیانین بوتون خلق لری کیمی امید گوزونی بویوک سووتخلقینه دیکمیشدیر."

19 «Ազարբայջան» թերթ, թիւ 186, Բագու, 19 Շահրիւար 1328 — Սեպտ. 10, 1949 — Բանաձեւի թիւրքերէն տեքստը այսպէս է.

"ئوز یوردومیز شمالی آذربایجانا مهاجرت ایتدیکدن صونرا فاندارداشلاریمیز خصوصی ایله آذربایجان کمونیست فرقهسینین رهبری میر جعفر باقراف یولداشین گوستردیگی قایغوسیندان تشکر ایتمگی فرقه نین مرکزی کمیته سیندن خواهش ایدیریك".

20 Միր Ջա'ֆար Բաղիրով. վարչապետ, առաջին քարտուղար Ազէրբայջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան Կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի եւ Սովետական Միութեան Կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի քաղբիւրոյի անդամ, Ստալինի մահից յետոյ Խորհրդային գաղտնի

սպասարկութեան (КГБ) պետ Բերիայի հետ գործակցելու եւ մեղսակցութեան համար դատուեց եւ մահապատժի ենթարկուեց:

[21] Հեռագրի թիւրքերէն տեքստը այսպէս է.

"عزیز رهبر و مهربان آتامیز میر جعفر باقراف یولداش! بوگون اوچ ایل تمام دور کی دوغما یوردومیز و عزیز وطنمیز اولان آذربایجانین جنوب قسمتینده ایل لردن بری فارس شووینیست لرینین قارا پنجه سی آلتیندا اینلهین خلقیمیزین ملی آزادلیق اوغروندا آپاردیغی مقدس مبارزه سینه رهبرلیك ایتمك ایچون آذربایجان دموکرات فرقه سی تشکیل اولونموشدور. بو مبارزه فرقه نین تشکیلینین اوچونجی ایل دونومی مناسبتیله بوتون علاقمندلری آذربایجان خلقینی و عزیز رهبرو مهربان آتامیز اولان سیزی تبریك ایدیریك. نتیجه اعتباری ایله فرقه ملی حکومت و فدائی تشکیلاتیندان بیر عده ... وطنمیزین آزاد شمالی قسمتینه مهاجرت ایتدیلر".

«Ազարբայջան» թերթ, թիւ 81, Բագու, 17 Շահրիւար 1327 (Սեպտ. 8, 1948):